<sup>93</sup> Л. А. Семенова, Орден Кармелитов как орудие проникновения европейцев в Иран) по материалам «хроники Кармелитов»), «Ближний и Средний Восток», сборник статей, М., 1962, էջ 94—109. Տ. Հ. Հակոբյան, Հայերի պայքարը կաթոլիկական միսիոներների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (17—18-րդ դդ.), «Արևելագիտական ժողովածու», հ. I, Երևան 1960, էջ 266—270:

<sup>94</sup> М. Г. Панахиян, О режиме капитуляций в Иране (1568—1715), Автореферат канд диссертаций, М., 1962, էջ 15.

<sup>95</sup> Ն.-Ն Ռճեղոճեան, տե՛ս շղեթեան, Ծ. I, էջ 195.

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 196—197:

<sup>97</sup> Նույն տեղում, էջ 197 (ընդգծ. մերն է—Պ. Չ.):

Երկրորդ վանքի մասին Սուլխան-Սաբան գրում է. «Օգոստոսի 9-ին գնացինք: Կարդինալներից մեկը մի վանք էր կառուցել տվել: Եկեղեցին փոքր էր, երկու հոգևորական էր սպասարկում: Ինչ աղքատ և անտուն լութերան, թե հայ, թե ասորի, անհավատներից ով էլ գար, այնտեղ պահում էին, խմացնում, կերակրում, հագուստ, օթևան տալիս: Սովորեցնում են հավատը և արձակում: Քառասունմեկ տարի էր, ինչ կառուցված էր: Երեք հազար շորս հարյուր իննսուներկու հոգի դարձի էին բերել և Քրիստոսի հավատին նվիրաբերել, իմ ժամանակ մոտ վաթսուն էր, սակայն բոլորին շկարողացա տեսնել: Ոմանք դրսում էին»<sup>98</sup>:

Հռոմում շորրորդ վայրը, որտեղ Սուլխան-Սաբան հանդիպել է հայերի, Մարիամ Եգիպտացու եկեղեցին էր: Այս եկեղեցին Պիոս IV պապի կողմից Հռոմում հատկացված էր հայերին 1560-ական թթ.<sup>99</sup>: Սուլխան-Սաբան այստեղ է այցելել 1714 թ. օգոստոսի շորսին. «...եկանք Մարիամ Եգիպտացու եկեղեցին: Նեղվածությունն ղգացվում էր, սակայն հին և լավ կառույց էր: Հայերից ովքեր գնում են, այնտեղ են իջևանում: Այստեղ են կերակրվում: Ով որ մահանում է, այնտեղ են թաղում: Գրիգոր Պարթևն է պատկերված և նրա տանջանքները»<sup>100</sup>: Հռոմում այս եկեղեցին հայերին էր պատկանում մինչև 1830 թվականը<sup>101</sup>:

Ինչպես նշվեց, Սուլխան-Սաբան Իտալիայից Կոստանդնուպոլիս ժամանեց 1715 թ. հունվարի 19-ին և այնտեղ մնաց մինչև 1716 թ. մայիսի 13-ը: Անկասկած է, որ նա այստեղ շատ բան է տեսել ու լսել: Այդ մասին նա իր «Ուղևորության» մեջ մի շարք ուշադրության արժանի տեղեկություններ ունի: Հատուկ հիշատակման արժանի է Կոստանդնուպոլսի ու նրա արվարձանների բնակչության թվի ցանկը, մասնավորապես հարկատու բնակչության թվի, հարկատու տարիքային ցենզի և ազգային պատկանելության ցուցումով: Հավանական է, որ Սուլխան-Սաբան այդ տվյալները վերցրել է Ֆրանսիայի դեսպանատնից, ուստի և դրանք ավելի հավանական ու վստահելի պետք է լինեն: Ահա Սուլխան-Սաբայի հաղորդումը.

«Կոստանդնուպոլսում, Ղալաթիայում, Պերայում և Սկյուտարում հարկատու են տասնհինգ տարեկանից մինչև վաթսուն տարեկանը»<sup>102</sup>.

<sup>98</sup> Նույն տեղում:

<sup>99</sup> Մ. Ուղուրյան, նշվ. աշխ., էջ 223: Ալ. Պալեյան, «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ հռոմեական եկեղեցւոյ», Վիեննա, 1878, էջ 158:

<sup>100</sup> Ե.-Ե ՌճձՅԼՈՒՅՈՒՆ, ԹԵՅՅՄԼԵՅԾԱՆՈՒ, I, էջ 195:

<sup>101</sup> Մ. Ուղուրյան, նշվ. աշխ., էջ 225:

<sup>102</sup> XVIII դարի 80-ական թթ. հարկատու հասակը կազմում էր 17 տարեկանից մինչև

հույներ 43 հազար հոգի,  
 հայեր—17 հազար,  
 հրեա—12 հազար,  
 ֆրանկներ—2 հազար հոգի,  
 քրիստոնյա հյուրեր—4 հազար,  
 նավերից գերյալներ և այլ—2 հազար,  
 թաթարներ—475 հազար,  
 ֆրանկներն ու թաթարները հարկ են վճարում<sup>103</sup>»։

Այստեղից կարող ենք հետևցնել, որ ֆրանկների և թաթարների քանակը լրիվ է արձանագրված, իսկ հարկատու ժողովուրդների քանակը ընդգրկում է բնակչության միայն 15—60 տարեկան հասակը, և նրանց ընդհանուր թիվը շատ ավելի պետք է լիներ (մոտավորապես եռակի)։ Հետևաբար, 1710-ական թթ. Կոստանդնուպոլսում և նրա արվարձաններում հայերի թիվը պետք է լիներ ավելի քան 50 հազար հոգի և եթե ծխերով (տներով) հաշվելու լինենք (ծխում հաշվում ենք մոտ 5—6 հոգի)՝ մոտ 9000 ծուխ<sup>104</sup>։ XV դարի վերջերին Կոստանդնուպոլսի հայկական բնակչության քանակն արդեն 1000 ծխի էր հասել<sup>105</sup>։ XVII դարի ճանապարհորդ Սիմեոն Լեհացու հաղորդումով, որը Կոստանդնուպոլսում էր 1608 թվականին «...եւ ութսուն տուն՝ տեղացի հազիւ գտանէր. բայց եկն եւ դարիպն աւելի քան դքառասուն հազար տուն ի Ստամպոլ, Ղալաթիա եւ Սկուտարն։ Քանզի յօթաեախան ճելալիքն աւիրել էին. եւ ամենեքեան հալածեալք եւ փախուցեալք անդ էին հանգուցեալք»<sup>106</sup>։ Մի այլ տեղ նա գրում է. «Եւ ասին թէ կայ ի Ստամպոլ ԽՆԻ (40000) Հրէի տուն եւ ԽՆԻ (40000 տուն Հոռմի. ԺՆԻ (10000) տուն Հայի, բայց Տաճկաց հաշիւ եւ համար չկայ»<sup>107</sup>։

60 տարեկանը։ Հարկ վճարում էին, ինչպես և XVIII դարի առաջին քառորդում, միայն արական սեռի քրիստոնյաները (տես A History of the Revolt of Ali Bey, Against the Ottoman Porte, by S. L., London, MDCCLXXXIII (1783), էջ 221—222։ Նմանահանությունը և վրացերեն թարգմանությունը տե՛ս Ե. Լուսինյան, օսմալեոս քորգաս ֆինալմեդեզ օլու՛ճեյիս օչանյեյիս օստորիա, օնցլօստրօ շեյքստս շեյսազալօ ֆօլմօլզարա, յարօտլօ տարգմանօ ըս շեյնիշեյեյիս ըստրօտօ Եեյնօմօն սօլազաժեյե, տԵ., 1973, էջ 378։

<sup>103</sup> Ե. Լուսինյան, օսմալեոս, տե՛ս Ե. Լուսինյան, I, էջ 242—243։

<sup>104</sup> Այստեղ նկատի են առնված միայն քաղաքայինները, քանի որ ցանկում առանձնացված են «քրիստոնյա հյուրերն» ու «նավերից գերյալները» և այլն։

<sup>105</sup> Հայկ Պերպերյան, Իսթանպուլի հայ բնակչությունը քաղաքին գրավում են մինչև Ֆաթիհ Մեհմետ Բ-ի մահը (1453—1481), «Հանդես ամսօրեայ», 1960, էջ 420)։

<sup>106</sup> Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, էջ 8։ Հմմտ. «Հանդես ամսօրեայ», 1932, էջ 468։

<sup>107</sup> «Սիմեոն դարի Լեհացույ ուղեգրություն, տարեգրություն եւ Յիշատակարանք», ուսումնասիրեց եւ հրատարակեց Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 26։

Սիմեոն Լեհացին ճիշտ է բացատրում Կոստանդնուպոլսում հավաքված բնակչության հայրենիքից տեղափոխվելու պատճառները, սակայն նրա կողմից բերված թվերը ակնհայտորեն չափազանցված են: Պ. դը Լա Գոուայի տեղեկությամբ Կոստանդնուպոլսում XVII դարի երկրորդ կեսին (1673 թ.) ապրում էր 8000 տուն տեղացի (բնիկ) և 50000 ոչ բնիկ հայ<sup>108</sup>: Գաղթած բնակչությունը հետագայում կամ վերադառնում էր իր հայրենիքը կամ շարունակում իր ճանապարհը դեպի Եվրոպա: Կոստանդնուպոլսի բնակչության և մասնավորապես հայերի աճը նույնպես տեղի էր ունենում գլխավորապես գաղթական բնակչության հաշվին: Իսկ այս արդեն պայմանավորված էր թուրքական փաշայություններում քրիստոնեության հայածման ուժեղացմամբ:

XVII դ. վերջերին միայն Սամաթիայում, ըստ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի, կար «հազար տունք յաւել աստ հայք...»<sup>109</sup>: Գումգափուի մեջ Ե. Քյոմուրճյանը հաշվում է 5000 տուն հայ<sup>110</sup>: Այս ամենը վկայում է այն մասին, որ իրոք XVII դ. վերջերին և XVIII դ. սկզբներին Կոստանդնուպոլսի հայերի քանակը կարելի է հաշվել մոտավորապես 9000 տուն<sup>111</sup>:

<sup>108</sup> Տե՛ս Հրանտ Ասատուր, Կ. Պոլսոյ հայերն ու իրենց պատրիարքները: Տե՛ս «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1901, էջ 111: Հմմտ. Հ. Սիրունի, Պոլիս և իր դերը հատ. 1, (1453—1800), Պեյրութ, 1965, էջ 354:

<sup>109</sup> Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, Ստամպուլոյ պատմութիւն, հրատարակեց եւ ծանոթագրեց տոքտ. Վահրամ Թորգոմեան, հատ. 1, Վիեննա, 1913, էջ 7, 208:

<sup>110</sup> Նույն տեղում, էջ 8, 273—274:

<sup>111</sup> Սրբազրելի է. հետևապես, «Հայ ժողովրդի պատմության» բաղմահատորյակի այն նշումը, թե «XVIII դարի կեսերին Կոստանդնուպոլսում արդեն 8000 տուն տեղացի և 50 հազար էլ պանդուխտ հայեր կային», որի համար հղված է Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրությունը», (էջ 461—463), որտեղ նման տեղեկություն չկա և չէր էլ կարող լինել (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 4, Երևան, 1972, էջ 302):



«წიგნავალი»

სიმონიშვილი ვაჟა-ფშაველას XVIII դարის վրաց նշանավոր քաղաքական-հասարակական ու գրական գործիչներից մեկն է: Մինչև 1730-ական թթ. նա ապրել է Կախեթում՝ Դավիթ-Գարեջայի անապատի Հովհան Մկրտչի վանքում<sup>1</sup>, ապա տեղափոխվել է Արևմտյան Վրաստան, նշանակվել Քուլթայիսի արքեպիսկոպոս, իսկ 1737 թ. աշնանը Իմերեթի թագավոր Ալեքսանդր V-ի կողմից նշանակվել բանակցությունների համար Պետերբուրգ ուղարկվող դեսպանության ղեկավար<sup>2</sup>: Դեսպանության հիմնական նպատակի մասին տեղեկանում ենք Ալեքսանդր V-ի՝ ռուսական արքունիքին ուղղած նամակից, այն էր՝ ընթացող ռուս-թուրքական պատերազմի (1735—1739 թթ.) ժամանակ դաշինք կնքել Ռուսաստանի հետ, ռուսական 20000-անոց զորք հրավիրել Արևմտյան Վրաստան և Վրաստանը, ըստ այդ նախագծի, 6 օրում ազատագրելուց հետո, ռուս-թուրքական պատերազմի հիմնական ճակատը տեղափոխել Արևելյան Թուրքիա, և այնուհետև «Можно перейти будет в Анатолию, также легко покорить оную, и потом, заключить мирный трактат, которым утвердить Имеретию в подданстве России»<sup>3</sup>:

S. Գաբաշვიլի ճանապարհվում է Ռուսաստան 1737 թ. հոկտեմբերին,

<sup>1</sup> Գ. Գաբաշვილი, მიმოსლვა, ტექსტი გამოცემად მოამზადა, გამოკვლევა, ლექსიკონი და საძიებლები დაურთო ელ. მეტრეველმა, თბ., 1956, էջ 079; Ф. Жордания, Описание рукописей Тифлисского Церковного Музея, кн. I, Тб., 1902, էջ 129, № 119.

<sup>2</sup> S. Գաբաշვილი փոխարեն Քուլթայիսի արքեպիսկոպոսի պաշտոնում 1740—1743 թթ. նշանակվում է 20-ամյա Անտոնը (1744 թվականից Անտոն իսթողիկոս): S. Կ. Կეკელიძე, ქართული ლიტერატურის ისტორია, ტომი პირველი, ძველი მწერლობა, თბ., 1960, էջ 373:

<sup>3</sup> Переписка на иностранных языках грузинских царей с Российскими государями от 1639 г. по 1770 г., СПб., 1861, էջ XC, 226.

1738 թ. մարտի 9-ին հասնում է Մոսկվա և նույն թվականի ապրիլին իրավունք ստանում ճանապարհը շարունակելու Պետերբուրգ<sup>4</sup>:

Նա իր հետ տարել էր նաև օգտակար հանածոների նմուշներ և Արևմտյան Վրաստանի քարտեզը, որի հեղինակը, ըստ հետազոտողների կարծիքի, ինքը՝ Տիմոթեոս Գաբաշվիլին է<sup>5</sup>:

Ռուսական արքունիքը Ալեքսանդր V-ի առաջարկը չի ընդունում: Գ. Պայճաձենն ռուսական արքունիքի կողմից Ալեքսանդր V-ի առաջարկի չընդունելը բացատրում է նրանով, որ «Խմերեթի թագավորի առաջարկության հիմքում հենց այն ստրատեգիական ուղղությունն էր ընկած (ռազմական գործողությունների համարձակ տեղափոխում Թուրքիայի բուն տարածք, ռազմական ստորաբաժանումների շարժունակություն, նավատորմի ակտիվ մասնակցություն և այլն), որոնք էլ հենց ռուսական բանակի գերմանական հրամանատարները մերժում էին»<sup>6</sup>:

1739 թ. Բելգրադի հաշտության մեջ Ռուսաստանը Սև ծովում նավատորմ ունենալու իրավունք շատացավ, իսկ վերագրավված Աղովը մնաց Ռուսաստանին՝ այնտեղ կառուցված ռազմական ամրությունների վերացման ու նոր ամրությունների կառուցումից հրաժարվելու պայմանով:

Բելգրադի հաշտությունից (1739 թ. սեպտեմբերի 18/29) հետո, 1740 թ. վրացական դեսպանությունը պետք է վերադառնար Արևմտյան

<sup>4</sup> Գ. Զախարով, Գիմոտե Գաբաշվիլի յելիոբա ռուսեթի (1737—1740 թթ.) «Ջարտուլի Տամեթո Տամթաթրոթի Տագարո Քոլլոտիկի իՏորիոլան», I, 1970, էջ 153: Տոլ. Կրեմլինսկի, Գիմոտե Գաբաշվիլի ռուսեթի, «Տալուբիլեո Կրեթուլի Կ. Կեթելոթի լաձալե Յի ՏլեթիՏաթթե», տձ., 1959, էջ 340:

<sup>5</sup> Գ. Զախարով, ՄիմոՏլեթ, էջ 084—094: Ե. Մեթրեթելի, լաՏալեթ ՏաՋարտեթոլո Տ 1737 թ. ռուսի յեթորի, յեթ. Տ. Զախարովի ՏաՏ. ՏաՋ. Տաճեթմթիթո Մթթեթի Տաճեթնիթո Տեթիթ, տձ., 1955:

Օգտակար հանածոների նմուշներ ներկայացնելը հետաքրքիր երևույթ է դիվանագիտական հարաբերությունների ոլորտում: Այդ փաստը շատ խոսուն է հատկապես այս դեպքում. դրանք խիստ գաղտնի էին պահվում թուրքական կառավարությունից և միաժամանակ՝ մատնացուցում է վրաց կառավարող շրջանների կողմից Ռուսաստանի նկատմամբ տաձած անկեղծ ու աներկմիտ վերաբերմունք: Այդ մասին արժեքավոր վկայություն ենք գտնում Արքանջելո Լամբերտիի ուղեգրության մեջ. «...Что касается рудников, .. все это держат в тайне из боязни турок, которые из жадности к золоту могли бы покорить Колхиду. И так как они предпочитают свободу богатству, то они охотнее отказываются от золота, чем от свободы...» (Арканджело Ламберти, Описание Колхиды называемой теперь Мингрелией, перевел с итальянского К. Ф. Ган, տե՛ս «Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 43, Тифлис, 1913, էջ 220):

<sup>6</sup> Գ. Զախարով, Գիմոտե Գաբաշվիլի յելիոբա ռուսեթի, էջ 167, 180, հմմտ. «Очерки истории СССР», вторая четверть XVIII века, М., 1957, էջ 393—394:

Վրաստան: Տ. Գաբաշվիլին, որ, ինչպես ասվեց, դեսպանության ղեկավարն էր, նախ փորձեց մնալ Ռուսաստանում և ապաստան խնդրեց իշխանություններից՝ ռուսական կառավարությանը բացատրելով, թե վտանգավոր է իր վերադարձը Իմերեթ<sup>7</sup>, քանի որ թուրքերը կարող են հաշվեհարդար տեսնել իր հետ, սակայն հետո որոշում է, այնուամենայնիվ, վերադառնալ և 1740 թ., վերցնելով իր հետ ռուսական արքունիքի պատասխան նվերները Ալեքսանդր V-ին, ճանապարհվում է հայրենիք<sup>8</sup>:

Վերադարձի ճանապարհին նա Մոսկվայում ապրիլի 28-ին մասնակցում է հայոց Մինաս արքեպիսկոպոսի ուղղափառ դավանանքի անցնելու արարողությանը<sup>9</sup>: 1740 թ. սեպտեմբերին Մոսկվայից ճանապարհվում է Ղզլար: Այնուհետև նա ինչպես է անցնում Արևմտյան Վրաստան, հայտնի չէ: Մի քանի տասնամյակ անց (1762 թ.) ռուսական իշխանություններին ներկայացրած իր խնդրագրում անդրադառնալով 1740 թ. իրադարձություններին, նա թաքցնում է իր՝ Վրաստանում լինելու փաստը՝ գրելով, թե Ղզլարից «отправился с четырьмя моими служителями

<sup>7</sup> Գ. Գաբաշվիլի, *Միմոսլեզա*, էջ 098—099, ց. Յոյժոք, Գ. Գաբաշվիլի յլհոժա, էջ 163: «Описание документов и дел, хранящихся в архиве святейшего правительствующего Синода», т. XVIII (1738 г.), Петроград, 1915, стр. 194—195, *որտեղ ասված է*. В следующем году [1739], в июле месяце, как сообщил Кабинет Ея Императорского Величества, митрополит Тимофей докладывал Кабинету, что ему ныне отсюда возвратиться и в Милитинию [проезжать от турок весьма опасно и что ему Высочайше разрешено было остаться в Российской империи, жить в Московском Донском монастыре и указано отвести пристойные кельи, а пищу и прочее к содержанию давать ему против архимандрита. Св. Синод решил объявить об этом указами и выдать митрополиту Тимофею паспорт до Москвы, но он отказался выслушать объявление, в виду нежелания его жить в Донском монастыре и уже возбужденного ходатайства от отпуске в отечество—в Милитинию; по сообщении просителю копий отношения Кабинета и определения св. Синода и после получения от митрополита Тимофея письменного заявления о возвращении его в отечество, согласно новому определению, сообщено Кабинету, что он, митрополит, оною Ея Императорского Величества Высочайшею милостию (разрешением жить в Донском монастыре) доволен, однако ж де по некоторым обстоятельствам (о чем в коллегію иностранных дел доношение от него подано) в Российской империи пребывание иметь будет ли, неизвестно».

<sup>8</sup> Переписка ..., էջ XC. Գ. Գաբաշվիլի, *Միմոսլեզա*, էջ 099:

<sup>9</sup> Լ. Մելիքետ-Յեցի, *Քրտադեղ Գիմոդե Գաբաշվիլի Յուզգրաֆիստոյիս, ՍՏԿ ՅեցԵ. օյառ. Տախարտ. Գիլոլիս մոսթե*, Գ. I, 1940, № 8, էջ 638. *Լ. Մելիքետ-Բեկ, Կ. Բիոգրաֆի սփոճիյնիկա Իսրաէլյա Օրի-Մինասա վարձափետա, „Известия“ АН Арм. ССР, 1946, № 1, էջ 78—80:*

в Мелетию, но иноверными противниками христианам на дороге моими людьми пойман и содержался шесть месяцев в их руках...  
...А потом, ночным временем ушед, через трои суток помощью божескою дошед до уезда Хреита, откуда врученное мне от двора его императорского величества к его высочеству царю милитинскому уведомляя и словесны мне приказания с надежным переслал, а сам несколько время во оном месте прожил и не имея надежного проезду обратно в Россию, поехал ко святому граду Иерусалиму...»<sup>10</sup>.

Պրոֆ. Ե. Մետրեկին, սակայն, հակառակ այդ հավաստիացմանը, պարզել է, որ իրականում Տ. Գաբաշվիլին վերադարձել է Իմերեթ և կառավարել իր թեմը մինչև 1740-ական թվականների վերջը<sup>11</sup>: Տ. Գաբաշվիլու վերոհիշյալ հայտարարությունը նպատակ ուներ Ռուսաստանում բնակություն հաստատելու իր ցանկությունը հիմնավորելու՝ ներկայացնելով իրերի վիճակն այնպես, իբր ինքը, իր ռուսական դեսպանագնացության պատճառով, զրկված է ընդհանրապես Վրաստանի վերադարձի հնարավորությունից, որի համար էլ խնդրում է. «при остатке жизни моей, с находящеюся при мне свитою, здесь (այսինքն՝ Ռուսաստանում Պ. Զ.) пропитания иметь...»<sup>12</sup>.

1748—1749 թթ. Գաբաշվիլին տեղափոխվում է Արևելյան Վրաստան (Քարթլի), որից հետո սկսվում է նրա գործունեության մի նոր շրջան, պայմանավորված ինչպես Վրաստանի զարգացման ներքին խնդիրներով, այնպես էլ ժամանակի միջազգային հարաբերությունների վրաստանում գտած արձագանքներով: Նա 1753—54 թթ. վարում էր Գորիի և Սամթավրոյի թեմը<sup>13</sup>: 1750-ական թթ. առաջին կեսում Տ. Գաբաշվիլին Անտոն Ա կաթողիկոսի օժանդակությամբ Քարթլիում ակտիվ մշակութային-մանկավարժական գործունեություն էր ծավալել: Այդ ժամանակ էլ նա գրել է իր մանկավարժական-ուսուցողական «մարմար» («Աքցան») աշխատությունը: Քարթլիում գրավելով բավականին բարձր դիրք (երկրորդ դեմ-

<sup>10</sup> ЦГИАЛ, ф. 796, 1762, № 88, л. 2. հղումը ըստ Գ. Գաբաշვილი, მიმოსლვა, էջ 0101:

<sup>11</sup> Գ. Գաբաշვილი, მიმოსლვა, էջ 0106—0107, Տե՛ս նաև Վրաց. ՄՍՀ ԳԱ Զեռագրերի ինստիտուտ, Hd-2215 փաստաթուղթը, որը գրված է 1747 թ. և որտեղ Քութայիսիի միտրոպոլիտ է անվանված Տ. Գաբաշվիլին (Հրապարակումը տե՛ս «ისტორიული დოკუმენტები იმერეთის სამეფოსა და გურია-ოდიშის სამთავროებისა» (1466—1770 წწ.), წიგნი I, ტექსტი გამოსცა, წინასიტყვაობა და საძიებლები დაურთო Մ. Զურჯანაძემ, თბ., 1958, էջ 80):

<sup>12</sup> Գ. Գաբաշვილი, მიმოსლვა, էջ 0103:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 0109:

քը կաթողիկոսից հետո), Տ. Գաբաշվիլին մոտ էր կանգնած նաև երկրի քաղաքական կյանքին:

1750-ական թվականներին Անդրկովկասում և նրա սահմաններից դուրս Արևելյան Վրաստանի քաղաքական ազդեցութունն ու հեղինակութունը նշանակալիորեն աճեց: Այդ զգալի շափով պայմանավորված էր Քարթլիի թագավոր Թեյմուրազ II-ի և նրա որդու՝ Կախեթի թագավոր Հերակլ II-ի ճկուն ու համաձայնեցված քաղաքականությամբ, որով նրանց հաջողվում էր Վրաստանը հնարավորին շափ զերծ պահել խոշոր ավերումներից, հզորանալ, դուրս գալ Պարսկաստանի գերիշխանութունից և, ի վերջո, հարկատու դարձնել նաև հարևան Գանձակի ու Երևանի խանութունները: Արևելյան Վրաստանի երկու թագավորներն էլ աշալուրջ հետևում էին ժամանակի միջազգային իրադրության փոփոխութուններին: Արդեն իսկ XVIII դարի կեսերին, վրաց իշխող շրջանների համար գաղտնիք չէր, որ Անդրկովկասում հյուսիս-կովկասյան խանութունների, Պարսկաստանի ու Թուրքիայի գործելակերպը գնալով ավելի ու ավելի է պայմանավորվում եվրոպական խոշոր տերութունների վարած արտաքին քաղաքականությամբ:

XVIII դարի կեսերին Պարսկաստանում, Նադիր շահի մահից հետո, սկսվում է խառնակութունների ու գահակալական կռիվների մի շրջանառազմական ու տնտեսական առումով Պարսկաստանն այնքան է ջլատվում, որ նրանից այլևս չեն զգուշանում հարևան պետութունները և սպասվում էր, որ Թուրքիան կարող է հարձակվել ու նրանից ետ խլել Նադիր շահի օրոք Պարսկաստանին անցած տարածքները: Թուրքիային նման գործողության էին հրահրում եվրոպական տերութունները, նպատակ ունենալով Թուրքիայի առաջխաղացումով կանխել նաև Ռուսաստանի մուտքը Անդրկովկաս ու Պարսկաստան և երկրորդ՝ Ռուսաստանի ուշադրութունը շեղել դեպի Արևելք:

1750-ական թվականներից, երբ եվրոպական խոշոր պետութունները պատրաստվում էին նոր պատերազմի և որի անխուսափելիության մեջ նրանք համոզված էին, Ռուսաստանը ձեռնապահ էր մնում անդրկովկասյան ժողովուրդների հետ ակներև քաղաքական որևէ հարաբերութուն ունենալուց, առիթ չտալու համար Թուրքիայի առաջխաղացմանը դեպի Անդրկովկաս: Այսպես, երբ 1752 թ. աշնանը Մոսկվա ժամանեց Աթանաս Տփիսիսեցու և Սիմոն Մաղաշվիլու դեսպանութունը՝ Թեյմուրազ II-ի և Հերակլ II-ի անունից ռուսական արքունիքից օգնութուն խնդրելու, պատասխանը բացասական էր: Կանցլեր Բեստուժևը բացատրում էր. «Այստեղի կայսրության շահերը պահանջում են, ընդհակառակը, վրացիների

պաշտպանության և դրա հետ կապված պարսկական գործերի մեջ բնավ չմտնել ու չխառնվել, որքան որ թուրքական արքունիքը կշարունակի մնալ այսպես լուռ: Ուստի կասկածի ամեն մի առիթ պետք է վերացնել, որ թուրքերը կարող են ունենալ այն մասին, թե ռուսական կայսերական արքունիքը վրացական արքունիքի հետ հարաբերություններ ունի և խառնվում է այնտեղի գործերին»<sup>14</sup>:

Հակառակ Ռուսաստանի ղգուշավորության, Թուրքիայում ու Արևմուտյան Եվրոպայում Հերակլ II-ի անվան շուրջ բաղմաղան լուրեր էին պտրտվում, որ իբր Հերակլը Ռուսաստանի օգնությամբ հարձակվել է Պարսկաստանի վրա, գրավել Սպահանը և հակաթուրքական ճառեր արտասանել<sup>15</sup>: 1750-ական թթ. սկզբներին թեև Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպան Օբրեզկովը հանգստացնում էր իր կառավարութայանը<sup>16</sup>, թե Թուրքիան լուրջ մտադրություններ չի ցուցաբերում և չի խառնվում Անդրկովկասի ու Պարսկաստանի գործերին, այնուամենայնիվ՝ 1754 թ. ռուսական արքունիքը Վրաստան ուղարկեց կապիտան Օթար Թումանովին՝ Անդրկովկասում, Պարսկաստանում ու Թուրքիայում տիրող իրադրության շուրջ թարմ լուրեր ստանալու համար: Նրան հանձնարարված էր իմանալ՝ «չե՞ն լինում, արդյոք, երբեմն ինչ-ինչ տեղաշարժեր թուրքերի կողմից՝ դեպի Պարսկաստանի սահմանները կամ հենց Պարսկաստան, այն նպատակով, որ այնտեղի ներկա խառնակություններից, երբ դեռևս ոչ ոք չա՛հ չէ հայտարարված, օգտվի [Թուրքիան] և որոշ հողեր գրավի»<sup>17</sup>:

Թուրքիայի դիրքավորումը, նրա նպատակները, ինչպես նաև Պարսկաստանում տեղի ունեցող իրադարձությունները պակաս չէին մտահոգում նաև Արևելյան Վրաստանի թագավորներին: 1755 թ. սկզբներին Թուրքիայից սկսեցին ստացվել բաղմապիսի անհանգստացնող լուրեր: 1755 թ. մարտի 21-ին կապիտան Օթար Թումանովը Թիֆլիսից Ռուսաստան է ուղարկում մի զեկուցագիր, որտեղ հայտնում է, թե «փետրվարի 18-ին Երևանից տեղեկություն ստացվեց. թուրքերը մտադիր են պատե-

<sup>14</sup> Տես օ. Գինճաճյե, ատանսե տծիլլեոսա և սոմոն մայաճջիլոս յելիոծա Բուսեոթո (1752—1754), «Նոստրոտո մոսոմբե», 1952, № 6, էջ 159: Հմմտ. «Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века». сборник документов, т. III, Ер., 1978, էջ 278:

<sup>15</sup> Օ. Ս. Մարկովա, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966, էջ 134:

<sup>16</sup> օ. Գինճաճյե, ատանսե տծիլլեոսա և սոմոն մայաճջիլոս յելիոծա, էջ 90:

<sup>17</sup> Տե՛ս օ. Գինճաճյե, յափոտոն ոտոն տյումանոցոս մոսնեյեծիտի ծոնոտեծի Նոյոնոյեղոսոն (1754—1756), տսյ Մոնոմեծի, XXVII Բ, 1946, էջ 13: Հմմտ. «Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века», т. III, էջ 280:

բաղմ սկսել, սուլթանը հրաման է արձակել պատերազմ սկսելու մասին, և միաժամանակ այստեղ վախենում են, թե արդյոք չեն ուղղվի նաև դեպի այս կողմ: Մարտի 7-ին Թոխաթից Թիֆլիս եկավ հայ Հարություն Գասպարաշվիլին: Թոխաթից ճանապարհվել էր դեկտեմբերի 27-ին: Նա հաղորդեց, որ Թոխաթում լուր է ստացվել Կոստանդնուպոլսից Ռուսաստանի ու Ֆրանսիայի դեսպանների արտաքսման մասին»<sup>18</sup>:

1754—1755 թթ. հաճախակի դարձավ հյուսիս-կովկասյան ցեղերի ասպատակութունները Անդրկովկաս, և առաջին հերթին՝ Վրաստան<sup>19</sup>: Գաղտնիք չէր, որ այդ հարձակումները հրահրում էր նաև Թուրքիան:

Ահա, նման իրավիճակում, Արևելյան Վրաստանի թագավորները 1755 թ. գարնանը նախապատրաստեցին և Թուրքիա ուղարկեցին Տիմոթեոս Գաբաշվիլուն՝ օժտելով նրան անհրաժեշտ գրություններով: Ուղևորության նպատակ հայտարարվում էր թուրքական պետության սահմաններում եղող սրբատեղիներ՝ մասնավորապես Երուսաղեմ և Աթոս այցելութունը:

Դուրս գալով Թիֆլիսից, Տ. Գաբաշվիլին գնում է նախ Ախալցխա, ներկայանում թուրքական փաշային, նրանից հանձնարարական գրություններ ստանում՝ ուղղված Կոստանդնուպոլսի բարձրաստիճան անձանց՝ Երուսաղեմ այցելության թույլտվության համար: Ախալցխայի փաշան, սակայն, արգելում է նրան ճանապարհը շարունակել ցամաքով և, հատուկ ուղեկիցներ հատկացնելով, պահանջում է մինչև Կոստանդնուպոլիս ճանապարհվել ծովով և այդ նպատակով նրանց ուղարկում է Բաթում: Տ. Գաբաշվիլին ստիպված է լինում ճանապարհը շարունակել նավով, սակայն Ունիա մերձափնյա քաղաքը հասնելով, անցնում է ցամաք և ճանապարհվում Աթոս: Կես տարուց ավելի նա շրջում է կենտրոնական ու արևմտյան Թուրքիայի քաղաքներում (Նեոկեսարիա, Կոմանա, Թոխաթ, Ամասիա, Իկոնիա, Զմյուռնիա, Քիոս կղզի և այլն) և Աթոս է հասնում 1755 թ. դեկտեմբերին: Այնտեղ նա մնում է մինչև 1756 թ. աշունը և այդ ընթացքում կարճատև այցելութուններ կատարում Կոստանդնուպոլիս: 1756 թրվականի աշնանը նա վերջնականապես տեղափոխվում է Կոստանդնուպոլիս, ստանում Երուսաղեմ այցելելու թույլտվութուն, սակայն հետաձգում է իր ճանապարհորդութունը հաջորդ տարվա ամռանը: Այստեղ նա շարադրում է իր ճանապարհորդական տպավորությունները և ուղարկում Վրաստան՝ վրաց թագավորներին: 1757 թ. ամռանը Տ. Գաբաշվիլին ճանապարհվում է Երուսաղեմ և երկար դանդաղումներով, աշնանը հաս-

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>19</sup> საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. IV, თბ., 1973, էջ 627:

նում այնտեղ: Երուսաղեմում նա զբաղված էր տեղի վրաց գաղութի պատմության համար նյութեր հավաքելով, որոնք նա օգտագործել է իր «Շրջագայության» շարադրման ժամանակ:

Վերադառնում է Կոստանդնուպոլիս արդեն 1758 թ. գարնանը, ապա նավով գալիս է մինչև Սամսուն, որից հետո կրկին ափ է իջնում և ճանապարհը շարունակում ցամաքով, շրջելով այս անգամ Թուրքիայի արևելյան մասերը: Թիֆլիս է հասնում 1759 թ. ամռանը:

Տ. Գաբաշվիլու ճանապարհորդությունը տևել է ընդամենը չորս տարի (1755—1759): Նա, նկարագրելով իր դեգերումները ողջ ճանապարհորդության ընթացքում, անսպասելիորեն ավարտում է ուղեգրությունը Սուրամ հասնելու նշումով: Ինչպես՝ ընդունեցին նրան հայրենիքում, ի՞նչ էր անում ուղևորությունից վերադառնալուց հետո, ուղեգրության մեջ չի արտացոլված: Կարելի է միայն այդ տարիների ընդհանուր քաղաքական իրադրությունից ելնելով մոտավոր ձևով կռահել, որ նրան հայրենիքում սիրով չեն դիմավորել<sup>20</sup>:

Հայրենիքում նրա բացակայության ժամանակ շատ բան էր փոխվել: Անտոն կաթողիկոսը, որի հետ Տ. Գաբաշվիլին համաձայնեցված էր գործում, կաթողիկոսյանը հարելու մեղադրանքով արտաքսվել էր Վրաստանից և գտնվում էր Ռուսաստանում, որտեղ կառավարում էր Վլադիմիրի թեմը, իսկ Վրաստանում հոգևոր իշխանության գլուխ էր անցել նրա հակառակորդ և մրցակից թեմը:

1761 թ. Ղզլարի վրայով Ռուսաստան է տեղափոխվում նաև Տ. Գաբաշվիլին: Դրանից հետո, ինչպես արդեն նշվել է, նրա բոլոր ջանքերը ուղղված էին այն բանին, որ իրավունք ձեռք բերեր Ռուսաստանում մշտապես մնալու համար, ռուսական իշխանությունը համոզելով, թե հենց Ռուսաստանն է այն երկիրը, որտեղ ինքը կարող է անցկացնել իր կյանքի մնացած մասը, և ապա՝ որ կառավարությունը բարոյապես պարտավոր է իրեն ապաստան տալու, քանի որ բոլոր հալածանքներն ինքը կրել է իր ռուսական օրիենտացիայի, իր 1738—1740 թթ. դեսպանագնացության պատճառով:

Գրագրությունը մի կողմից Տ. Գաբաշվիլու և մյուս կողմից սինոդի ու արտաքին գործերի կոլեգիայի միջև ձգձգվեց ավելի քան երկու տարի (1762—1764): Ի վերջո, նրան թույլատրվում է ապրել Մոսկվայում, բայց նա արդեն ի վիճակի չէր օգտվելու այդ հնարավորությունից: 1764 թ. հունիսի 28-ին Աստրախանում նա կնքեց իր մահկանացուն:

<sup>20</sup> Թ. Գաբաշվիլու, Թոմոսլո, էջ 0116—0126.



ს. Գաբաշվիլին իր եռանդուն քաղաքական-հասարակական գործունեությանը զուգընթաց զբաղվել է նաև մատենագրությամբ<sup>21</sup>: Նա խմբագրել է նաև Անտոն I-ի մի շարք աշխատությունները<sup>22</sup>:

Տ. Գաբաշվիլու թողած դրական ժառանգության մեջ ամենակարևորը, սակայն, նրա ուղեգրությունն է, որը նա անվանել է „მიმოსლვა“ բառացի՝ «Շրջագայություն»: Աշխատությունը շարադրել է ճանապարհորդության ժամանակ և խմբագրել հայրենիք վերադարձից հետո: Մեղ է հասել նրա երեք ինքնագիր և մեկ՝ հեղինակի կողմից խմբագրված ձեռագիր: Դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է հեղինակի կողմից կատարված աշխատանքի որոշակի փուլ<sup>23</sup>: Առաջին և համառոտ տարբերակի շարադրելը նա ավարտել է վրաստանից Կոստանդնուպոլիս հասնելուց անմիջապես հետո և ուղարկել վրաստան, վրաց թագավորներին<sup>24</sup> (այն ընդգրկում է ճանապարհորդության հիշյալ հատվածի նկարագրությունը): Ամբողջ նկարագրությունը, որ նա կատարել է հենց ճանապարհորդելիս, պահպանվել և մեղ է հասել «Շրջագայության» ինքնագիր երկրորդ ձեռագրում, որտեղ շարադրանքն ավարտվում է նրա՝ Սուրամ հասնելու նշումով<sup>25</sup>:

Երրորդ ինքնագիր օրինակը պահպանվել է վրաց. ՍՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտի Տ—3244 ձեռագրում: Այն Տ. Գաբաշվիլին շարադրել է ճանապարհորդությունից վերադառնալուց հետո և հեղինակային Չ—80 ձեռագրի խմբագրված ու մշակված տարբերակն է, որի հիման վրա էլ կատարվել է ուղեգրության գիտական բնագրի հրատարակումը<sup>26</sup>:

Չորրորդ ինքնագիր օրինակը<sup>27</sup>, ըստ Ե. Մետրեկելու, պետք է գրված լինի վրաստանի սահմաններից դուրս, մասնավորապես Աստրախանում, որտեղ երկար ժամանակ (1762—64 թթ.) Տ. Գաբաշվիլին սպասում էր իր՝ Մոսկվա տեղափոխվելու թույլտվության ստացվելուն<sup>28</sup>:

Տ. Գաբաշվիլու ուղեգրությունն ունեցել է երկու հրատարակություն. 1852 թ.<sup>29</sup> այն հրատարակել է Պ. Իոսելիանին, իսկ 1956 թ. լույս է տե-

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 0127—0129:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 0129:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 06:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 06—07, վրաց ՍՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտ, ձեռ. Կ—842:

<sup>25</sup> վրաց. ՍՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտ, ձեռ. Չ—80:

<sup>26</sup> Գ. Գաբաշվիլու. მიმოსლვა, էջ 1—98.

<sup>27</sup> նկարագրությունը տե՛ս P. P. Орбели, Грузинские рукописи Института востоковедения АН СССР, вып. I, М.—Л, 1956, էջ 82—85.

<sup>28</sup> Գ. Գաբաշվիլու. მიმოსლვა, էջ 021:

<sup>29</sup> მოხილუა წმიდათა და სხუათა აღმოსავლეთისა ადგილთა ტიმოთესაგან ქართლისა მთავარეპისკოპოსისა, ტფილისი, 1852.

სულ ხრკი გიჟთაკან ზრათარაკიოქიონერ ყროფ. ს. შხორხელიო ილიონ-  
ნასირიოქიონ-აოაჯაქანოქ, ქაოარანოქ იო განხერიოქ<sup>30</sup>; სოაჯინ ზრათ-  
თარაკიოქიონიგ ზათქაძენერ ჭ შარქმანხელ იოსერხნი ს. ჩხრდხნიოქ<sup>31</sup>,  
ჩასკ რ. ჳორქინოქი (ღორქინაჯქიქი)<sup>32</sup> «ქრხათომათიკიონამ» იოკო ხნი თხ-  
სულ ქრავგერხნი ქნაჯრი თოანდჩინ ერქლაჯნერ: შ. ჩროსხნი შარქმანხელ ჭ  
ჭრანსერხნი<sup>33</sup> ლრქინ ზათქაძაქარ<sup>33</sup>:

«ჭრჯაჯაიოქიონერ» ლარხორ ასღქნაღქიორ ჭ XVIII դარი ქრასათანი  
ღ ხროსაღხმჩი ქრავაკან გაღოქიქი კათამოქიკან ილიონნასირიოქიონ  
ზამარ ჭ ილიონნასირიოქინერი ლიოქიგ არქთანაგხელ ჭ კათაჯაღ ქნაჯა-  
თოქიკან:

ხერქაკაგხელიოქ ს. ჳაქაჯქიქიო იოღხერიოქიკან ლხნიგრაღოქ კაჯ-  
ქიოღ დხოაჯრხერი, ი. ორქელინი გროქ ჭ. «ჳაქაჯქიქიო «ღანაკარზორიოქ-  
ქიონერ» XVIII დ. ქრავ ჩნქნოქიოქინ გრასკანოქიკან ნჯანაკიორ ზოჯარ-  
დანხერიგ ჭ, ქრავ ქიოქიქი კათამოქიკან ზხთ ქრავაკან გაღოქინერი  
ქაჯმარქარქან ლაკქ ჭ ნრანგ ქაგოქიქი მჯაკიოქიკან ნჯანაკიოქიონერ  
ართაგოქიოქ არქხეკაკიორ კათამაკან ასღქნაღქიორ: ჳოჯარდანერ თო  
კიოქი კაჯკანოქ ჭ ჩო გიჟთაკან არქხექ, ჳარიონაკქიოქ ჭ ნრა ილიონ-  
ნასირიოქიონერ»<sup>34</sup>:

ს. ჳაქაჯქიქიო «ჭრჯაჯაიოქიკანერ» თოანდჩინ ზოქქაძენერ ხნი ნქი-  
რხელ ს. სიქქაძენ<sup>35</sup>, რ. ჳარიქაქიქიქი<sup>36</sup>, სოლ. ჳორქანხიქიქი<sup>37</sup> ჭ კიქქი:  
ჩნჯახხა ნჯიქგ, ჳანაკარზორიოქიკან ქამანაკ ჭ ნრანიგ ზხთი  
ჳაქაჯქიქინ ჳარიქრხელ ჭ ჩო «ჭრჯაჯაიოქიკანერ», ორ მხელ ჭ ზასხელ ჳორა  
ჩნქნაჯჩო ორქინაკიოქ: შაკაკინ ქამქაჯრქმან თარიქხერ ასთიღანხერიოქ  
გთნიქიოქ კიოქ ორქინაკხერიგ იო მხელიოქ ზხიქინაკერ გრქხე ჳი ანქრაღაკანიოქ  
ქამანაკიქ ქაღაქრასკან ანგიოქარდხერი: სო მანრამასნიორხნი ნიქა-

<sup>30</sup> ტ. გაბაშვილი, მიმოხლვა, ტექსტი გამოსაცემად მოამზადა, გამოკვლევა, ლექსიკონი  
და სპიქებლები დაჯრთო ელ. მეტრეველმა, თბილისი, 1956.

<sup>31</sup> «Выдержки из Путешествия по Востоку Тимофея архиепископа Мухет-  
ского», «Закавказский вестник», 1852, № 12, 16, 18, 22.

<sup>32</sup> Грузинская хрестоматия, составленная Д. Чубиновым, часть I (проза),  
СПб., 1846, стр. 137—160.

<sup>33</sup> Description extraite du livre de la Visite par Timothé Gabachwili, HG,  
III, Add. X, p. 189—209.

<sup>34</sup> P. P. Орбели, სქი. აქი., ჭქ 83.

<sup>35</sup> ა. კიქვაძე, ტიმოთე გაბაშვილი, «ლიტერატურა და ხელოვნება», 1944, № 4.

<sup>36</sup> გრ. ზარდალიშვილი, გამოჩენილი ქართველი მოგზაურები, თბ., 1958. სიქნი<sup>37</sup>  
გამოჩენილი ქართველი მოგზაურ-კარტოგრაფი, «მნათობი», 1964, № 12, ჭქ 177—181.

<sup>37</sup> სოლ. ყუბანეიშვილი, ტიმოთე გაბაშვილი რუსეთში «საიუბილეო კრებული კ. კიქქი-  
ლიძის დაბადების 80 წლისთავზე», თბ., 1959, ჭქ 330—353.

րագրում է իր ճանապարհորդության ուղին, ճանապարհին հանդիպած քաղաքները, սրբավայրերը, շատ ավելի մանրամասն՝ Աթոսի մենաստանները, հանդիպումներն ու զրույցները նշանավոր վարդապետների ու գիտնականների հետ, Երուսաղեմի վրացական գաղութի պատմությունը, ներկայացված է Երուսաղեմի վրացական վանքերի ցանկը և այլն: Քաղաքական իրադարձություններից ուղեգրության մեջ հիշված են սոսկ մալթացիների և թուրքերի պատերազմական վիճակի մեջ լինելու փաստը, և մի քանի փոքրիկ այլ ակնարկներ: Կարելի էր ենթադրել, թե քաղաքական դեպքերի նկարագրմանը նա նվիրել է հատուկ գրություն, որը պիտի ներկայացվեր ինչպես Վրաստանի թագավորներին, այնպես էլ ռուսական իշխանություններին: Եվ հիրավի, պահպանվել է նման գրության մի տարբերակի ռուսերեն թարգմանությունը: Այն գտնվում է Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան գրադարանի ձեռագրական ֆոնդում (ֆ. 203, թղթ. 251, № 4)<sup>38</sup> և չի օգտագործված Տ. Գաբաշվիլու կյանքն ու գործունեությունը ուսումնասիրողների կողմից: Նորահայտ գրությունը արժեքավոր նյութ է պարունակում ինչպես հեղինակի քաղաքական հայացքների, այնպես էլ նրա կենսագրության ու որոշ պատմական իրադարձությունների ժամանակագրության ճշգրտման համար: Ստորև մենք ներկայացնում ենք միայն քաղաքական այն իրադարձությունները, որոնց ականատեսն է եղել ճանապարհորդը և որոնց նկարագրությունը նա ներկայացրել է ռուսական իշխանություններին:

Տ. Գաբաշվիլին նախ տալիս է թուրքական կայսրության հպատակ քրիստոնյա բնակչության սպասումները՝ կապված ռուսական պետության հզորացման ու դեպի հարավ առաջխաղացման հետ, նկարագրում է թե ինչ ուշադրությամբ էին նրանք հետևում Ռուսաստանի վերաբերյալ յուրաքանչյուր տեղեկության: Այսպես, նա գրում է. «(Из Трапизона) поехал до града Кукусула Армянскаго, которой ныне презывается Тохад и в нем гроб святого Иоанна Златоустаго. Христиане меня спрашивали о Российском самодержавств[в]е как благополучно и услыша от меня славу Российскую, которым то известие приятно стало. И велми радуются и отом вкупе и молебствие со слезами учинили»<sup>39</sup>, նման պատկեր կրկնվել է նաև Աթոսում, որտեղ «о Российском благополучном самодержавстве всегда благодарные молебны богу посылаются»<sup>40</sup> իսկ Տրիպոլիում «тамошния живущия христиане слышали о мне и вышли навстретение и тайно

<sup>38</sup> Բնագրի հրատարակումը տե՛ս ստորև՝ «Հավելված» բաժնում:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 159:

<sup>40</sup> Նույն տեղում:

спрашивали меня о российском самодержавстве как благополучно, и я им ответствовал, что много европейскими также и азиатскими городами владеется и по божией руке всегда Российскаго царства рог возвышает. И слыша тамошней христианской народ молебное господу благодарение со слезами учинили»<sup>41</sup>.

Տ. Գաբաշվիլու ուշադրութիւնից շի վրիպել նաև այն փաստը, որ թուրքական կառավարութիւնը աշխատում է ամեն ջանք գործադրել, որ պեսզի քրիստոնյաներին Ռուսաստանից հեռու պահի, թույլ շտա նրանց միջև որևէ առնչութիւն: Միայն այն բանի համար, որ Կոստանդնուպոլսի հույն պատրիարքը եկեղեցական տոնի առթիվ շնորհավորել էր Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանին. «Թուրքական սուլթանը հույների պատրիարքին ցանկանում էր մահապատժի ենթարկել՝ ուսնների հետ միանալու մեղադրանքով», — գրում է Գաբաշվիլին: Նա հատկապես կանգ է առնում այնպիսի իրադարձութիւնների նկարագրութեան վրա, որոնք Վրաստանի և Ռուսաստանի համար առաջնակարգ հետաքրքրութիւն են ներկայացնում: Ճանապարհորդը նկարագրում է Թուրքիայի ներքին դրութիւնը, թուրքական արքունիքի և թուրքահայատակ ժողովուրդների ու ցեղերի հարաբերութիւնները, ինչպես նաև Թուրքիայի ու եվրոպական երկրների, Թուրքիայի ու հյուսիս-կովկասյան լեռնականների հարաբերութիւնները և այլն: Հստակութեան ու հավաստիութեան համար նա իր տեսած իրադարձութիւնների նկարագրութիւնը լսածներից առանձին է ներկայացնում:

XVIII դարի կեսերին Վրաստանի ու ամբողջ Անդրկովկասի համար շափազանց մեծ վտանգ էին ներկայացնում կովկասյան լեռնականները: Նրանց հանկարծակի հարձակումները և ավարառութիւնները գրեթե ամայացրել էին անդրկովկասյան բազմաթիվ շրջաններ: Ընդ որում, լեռնականները գործում էին Թուրքիայի հետ համաձայնեցված ու երբեմն էլ նրա թելադրանքով<sup>42</sup>: Սակայն, ինչպես նշում է Տ. Գաբաշվիլին, լեռնականները ոչ միայն չէին բավարարվում թալանով, այլև Թուրքիայից պահանջում էին Անդրկովկասում վերացնել վրացական թագավորութիւնները: Ըստ Տ. Գաբաշվիլու տեղեկութեան, լեռնականների ներկայացուցիչները «սուլթանին ներկայացրել են լեզգիական ողջ ժողովրդի հայտագիրը, [պահանջելով, որ] եթե նրանց (այսինքն՝ Սողոմոն և Հերակլ թագավորներին — Պ. Չ.) մեր հավատին դարձնեք և [նրանց փոխարեն] դնեք ձեր փաշաներին, ապա և մենք ձեզ պատանդներ կտանք, որ ձեր տերութիւնը

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966, էջ 129.

մեր կողմից մազաչափ անգամ չի տուժի»: Կան մի շարք փաստեր, որոնք վկայում են, թե լեոնականների այդ պահանջն իրոք գործելակերպի նշանաբան էր դարձել 1750-ական թվականներին: 1752 թ. Ելիզավետա I-ին ուղղված նամակում Թեյմուրազ II-ն ու Հերակլ II-ը գրում էին. «Մեր թագավորութունները շրջափակված են այլատոհմ հեթանոսներով, ուստի ամառ թե ձմեռ պատերազմական վիճակի, ավերման ու գերեվարման մեջ են, և մեզնից շատ ավելի ուժեղ են և ցանկանում են մեր սուրբ եկեղեցիների ավերումն ու վերացումը: Եվ հիմա էլ մեր շրջակա թշնամիների առաջնորդները որոշել են հավաքվել ու երդվել իրենց անիծյալ գըրքով, որ Վրաստանի ժողովուրդներին իրենց արանքից կվերացնեն ու մահամեղականներ կբնակեցնեն: Բոլորը միաձայն են»<sup>43</sup>:

1760-ական թվականներին ևս Տ. Գաբաշվիլին շարունակում էր փորձել Ռուսաստանի ուշադրութունը հրավիրել Անդրկովկասի գործերին: Նկարագրելով Թուրքիայի ռազմական թուլութունը, ներքին քայքայումը, դրանով իսկ նա ընդգծում էր, որ Ռուսաստանի համար ռազմական առումով մեծ դժվարութուն չի ներկայացնի Թուրքիայի լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդներին օգնության հասնելը: Տ. Գաբաշվիլու թվարկմամբ՝ Թուրքահայատակ ցեղերից իշխանութուններին չեն ենթարկվում Լիբանանի տուրքերը (իմա՝ դրուզները—Պ. Չ.), որոնց առաջնորդը, հեղինակի խոսքերով, «у себя войска имеет довольно, туркам неподсудное». Երուսաղեմում արաբները չեն ենթարկվում սուլթանին և անգամ հարձակվել, թալանել ու գերել են այն քարավանը, որով Մեքքա էր ճանապարհվել սուլթանի քույրը: Դամասկոսի փաշան գործում է առանց սուլթանի հրամանների: 1759 թ. մեծ զորքով Նիկոմիդիա է արշավում Աբդուռահման փաշան և, Գաբաշվիլու տեղեկությամբ, «ուզում էր թուրքական սուլթանին գահընկեց անել, որը և վախենալով՝ հիշյալ փաշային տվեց ոչ փոքր գումար և բարձր պաշտոն, որից հետո փաշան հեռացավ»:

Եվ իրոք, XVIII դարի երկրորդ կեսին «որոշ խոշոր ֆեոդալներ սեպարատիզմի ուղին էին բռնել և հանդես էին գալիս թուրքական արքունիքի դեմ... Այսպես, անգամ 1768 թ., երբ սկսվել էր ռուս-թուրքական պատերազմը, Իզմիրի փաշա Կարա Օսմանօղլին, որ պարտավոր էր տրամադրել 20 հազար զինվոր, չի ներկայացնում և ոչ մեկը: Կառավարութունը ոչինչ չի ձեռնարկում նրա դեմ՝ զգուշանալով, որ նա կարող էր իրեն անկախ հայտարարել»<sup>44</sup>:

<sup>43</sup> Ծանոթություններ, ատանեսց տծողլոնսա ըս սոմոն մայսՊջոլոնս յլլոծո. ., էջ 140:

<sup>44</sup> А. Д. Новичев, История Турции, I, II, 1963, էջ 221.

Նկարագրելով Թուրքիայի վիճակը ներքին ու արտաքին հարաբերու-  
թյուններում, Տ. Գաբաշվիլին ընդգծում է Արևմտյան Վրաստանի թագա-  
վոր Սողոմոն Ա-ի եռանդուն պայքարը Թուրքիայի դեմ: Նա հիշատակում  
է այդ պայքարից հետևյալ դրվագը. Սողոմոն Ա-ն Արևմտյան Վրաստան  
արշավող թուրքական 12 հազարանոց զորքի դեմ դուրս գալով, միայն  
500 զինվորներով պարտության է մատնում թուրքական փաշային, գերում  
և գլխատում է նրան: Այս վկայությունը հատկապես կարևոր է Վրաստանի  
պատմության համար, քանի որ խոսքը, անկասկած, վերաբերում է Խրե-  
սիլի հայտնի ճակատամարտին (1757 թ.), որի մասին աղբյուրները շատ  
սակավաթիվ են:

Տ. Գաբաշվիլին արդեն սկսել էր ճանապարհորդությունը, երբ սկսվեց  
Յոթնամյա պատերազմը (1756—1763 թթ.): Գրեթե բոլոր եվրոպական  
երկրները մասնակցեցին այդ պատերազմին: Թուրքիան թեև չէր մասնակ-  
ցում ռազմական գործողություններին, բայց կողմնորոշվել էր դեպի Անգ-  
լիան ու Պրուսիան: Տ. Գաբաշվիլին կանգ է առնում հատկապես այնպիսի  
փաստերի վրա, որոնք բացահայտում են Թուրքիայի դիրքորոշումը մի-  
ջազգային հարաբերություններում՝ Յոթնամյա պատերազմի ժամանակ,  
թեև միշտ չէ, որ ճշտորեն կռահվում են թուրքական արքունիքի այս կամ  
այն քայլի պատճառները: Նա թվարկում է դրվագներ՝ Թուրքիայի եվրո-  
պական խոշոր երկրների հետ ունեցած հարաբերություններից, Թուրքիա-  
յի ու Մալթայի միջև ընթացող պատերազմը, որի ժամանակ մալթացիները  
գրավել էին 6 թուրքական խոշոր նավ: Թուրք-ֆրանսիական հարաբերու-  
թյունները բնութագրելու համար Գաբաշվիլին բերում է մի քանի փաստ,  
որոնք ցույց են տալիս այդ հարաբերությունների սրման աստիճանը. Միջ-  
երկրական ծովում թուրքերի կողմից բռնագրավվում էին ֆրանսիական  
նավերը:

Պրուսիայի ու Թուրքիայի հարաբերությունները թեև բարեկամական  
էին, սակայն Թուրքիան խուսափում էր Պրուսիայի առաջարկներից՝ պա-  
տերազմի մեջ մտնել Ավստրիայի ու Ռուսաստանի դեմ: Թուրք-պրուսական  
բանակցությունների ժամանակ, որ տեղի էր ունենում գաղտնի պայման-  
ներում և խիստ նեղ շրջանակների էր հայտնի նրա ընթացքի մասին, «Մեծ  
վեզիրը և հոգևոր առաջնորդը՝ Շեյխ-ուլ Իսլամը, խորհուրդ տվեցին սուլ-  
թանին, որ մեր նախկին ժամանակները անցել են և պետք չէ այլ պետու-  
թյունների ճնշել, այլ հարկավոր է, որ մենք մեզ պահպանենք»:

Իրոք, XVIII դարի երկրորդ կեսից նոր շրջան էր սկսվում Թուրքիայի  
պատմության մեջ: Այլևս անցել էր Թուրքիայի փայլուն հաղթանակների  
ժամանակաշրջանը: Ճիշտ է դիտում Ա. Նովիչևը, թե «Թուրքական իշխող

Ֆեոդալական վերնախավը շարունակում էր քաղաքականության մեջ առաջնորդվել իր դասակարգային շահերով, սակայն ուժերի հարաբերակցության փոփոխումն հօգուտ եվրոպական երկրների նրան ստիպում էր, և գնալով ավելի ու ավելի, խուսանավելու միջազգային բարդ իրադրությունների ժամանակ, որպեսզի, օգտվելով եվրոպական պետությունների միջև եղած հակասություններից, շարունակի իր գոյությունը»<sup>45</sup>:

Վերը բերված շարադրանքից հստակ երևում է, թե ինչպիսի ուշադրությամբ է նշանավոր դիվանագետը հետևել ժամանակի քաղաքական անցուդարձին, ընդհուպ մինչև կյանքի վերջն էլ մնալով որպես ակտիվ քաղաքական գործիչ, մեծ հայրենասեր ու Ռուսաստանի օժանդակությամբ Վրաստանի անկախության վերականգնման ջատագովներից մեկը:

Տ. Գաբաշվիլու դիվանագիտական գործունեության պատմությամբ և նրա ուղեգրության ուսումնասիրմամբ դբաղվել են մի շարք վրացի գիտնականներ: Ե. Մետրևելին, հենվելով Տ. Գաբաշվիլու այն տեղեկության վրա, թե ինքը ճանապարհվել է վրաց թագավորներից ճանապարհորդելու թույլտվության գրություններ ունենալով, ենթադրել է, որ Տ. Գաբաշվիլին ևս պետք է ունենար քաղաքական բնույթի հանձնարարություններ<sup>46</sup>: Մի այլ տեղ նա արդեն անմիջականորեն գրում է. «Տիմոթեն ճանապարհորդելիս երկու գլխավոր նպատակ ուներ իր առջև: Առաջին՝ Թուրքիայի տարածքում ռադմա-քաղաքական հետախուզումներ (այս առումով Տիմոթեն շարունակում էր այն հակաթուրքական գործունեությունը, որը նա դեռևս Իմերեթում, իսկ այնուհետև Ռուսաստանում էր կատարում): Եվ երկրորդ՝ Աթոսի և Երուսաղեմի վրացական մշակույթի հնագույն օջախների դիտումը, հնագիտական աշխատանքների հետևանքով պատմական նյութերի հավաքումն ու այս օջախների պատմության շարադրելը»<sup>47</sup>:

Նորահայտ նկարագրությունը հիմք է տալիս լիովին փաստարկված համարելու Ե. Մետրևելու վերոհիշյալ ենթադրությունը: «Նկարագրությունը» դարասկզբին կատարված պատճեն է, որին կցված է պատճենողի մեկ էջանոց բացատրագիրը: Ըստ անհայտ պատճենողի ենթադրության՝ «Նկարագրությունը» կազմվել է Ղզլարի պարետ, գեներալ-մայոր Ստուպիշինի հանձնարարությամբ, որի վերահասության ներքո է գտնվել ժամանակին Վրաստանի հետ հարաբերությունների գործը: Նկարագրությունը գտնվել է Ղզլարի պարետային հին արխիվի 120-րդ կապոցում՝ 1762 թվականի տակ: Վրացերեն բնագիրը չի հայտնաբերված:

<sup>45</sup> А. Д. Новичев, История Турции, I, էջ 209.

<sup>46</sup> Գ. ԶաձաՅցուլո, ԹոմոսլոՅո, էջ 0110—0115:

<sup>47</sup> Նույն տեղում. էջ 0127:

Տ. Գաբաշվիլու «Շրջագայութիւնը» հարուստ չէ հայերի մասին հաղորդումներով, թեև անկասկած է, որ նա իր ճանապարհորդութեան ժամանակ հանդիպել է բազմաթիվ հայերի, անցել Արևմտյան Հայաստանի տարածքով և այլն: «Շրջագայութեան» բնագրում եղած որոշ հաղորդումներ, այնուամենայնիվ, ուշադրութեան արժանի են նաև հայ ժողովրդի պատմութեան առումով: Առաջին հերթին խոսքը վերաբերում է ճանապարհորդի հետևյալ տեղեկութեանը. խոսելով Երուսաղեմի վրացական վանքերի պատմութեան, նրանց հիմնադիրների, կառուցման ժամանակի ու ճարտարապետների մասին և կազմելով տեղի վրացական վանքերի ցանկը, նա այդ ցանկում է դնում նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց հայկական պատրիարքանիստ վանքը:

### ԲԵՐԵՆՖ ՆՐԱ ԿԱԴՈՐՈՒՄՆԵՐ.

- |  |   |
|--|---|
| <p>1 „յაკոբ ալօքես մոցիքլոսի սա-<br/>         ֆամեբելի և սաօլազի մոնաս-<br/>         տերի ալլաշենեբիա ցիորցի մե-<br/>         օքես սախարտեղոսաս, սֆ րոմե-<br/>         օլիցա սոմեքտ շքիրազետ. օտ-<br/>         քոլդեն, ցիտարմեդ Ֆարաօքանա<br/>         մեօքետա սախարտեղոսատա սմ<br/>         օլիդս մոնաստերի քոօօլա<sup>48</sup>.</p> <p>2 „յაკոբ-ալօքես մոնաստերի, ցի-<br/>         օրցի քիւրաքալատիս մեօքիսազան<br/>         ալլաշենեբլոլի“<sup>49</sup>.</p> <p>3 ...ֆարքեդիտ մոնաստրադ սոմեք-<br/>         տա և ցանքցիօրլիտ սիքեթեսսա<br/>         միսսա, րամեթի մե քեքեթի քր-<br/>         ֆիքնալե քաքարի արաօլդես մի-<br/>         քիլազես և արցա քեքեթի Պեք-<br/>         քոքա. քսե մոնաստերի արս, րո-<br/>         մեղի ալաշենա մեօքեք ցիօրցիմ<sup>50</sup>.</p> | <p>1. «Հակոբ Ալիքես առաքյալի վը-<br/>         կայարանն ու գերեզման վան-<br/>         քը կառուցել է վրաստանի Գի-<br/>         որգի թագավորը, որն այժմ<br/>         հայերի ձեռքին է: Ասում են,<br/>         թե վրաստանի թագավորների<br/>         փողերանոցը այս մեծ վանքում<br/>         է եղել»:</p> <p>2. «Հակոբ-Ալիքեսի վանք, կյու-<br/>         րապաղատ Գիորգի թագավորի<br/>         կողմից կառուցված»:</p> <p>3. «...գնացինք հայոց վանքը և<br/>         զարմացանք նրա գեղեցկու-<br/>         թյամբ, որովհետև ես այդպիսի<br/>         փայլուն տաճար երբեք չեմ տե-<br/>         սել և ոչ էլ այդպիսի հարդա-<br/>         րանք: Այս վանքն է, որը կա-<br/>         ռուցել է Գիորգի թագավորը»:</p> |
|--|---|

Տ. Գաբաշվիլու սույն հաղորդումը (թե Երուսաղեմի հայկական ս. Հա-  
 կոբ վանքը կառուցված է վրաց թագավոր Գիորգիի կողմից, սկզբնապես  
 եղել է վրացական և հետո անցել հայերին) մտել է գիտական գրականու-

<sup>48</sup> Գ. Գաբաշվիլու, միմոսլոզա, էջ 78:

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 81:

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 84:



ქონს, ზაქასათი ზე რქითქელ ლე კრკნიქონ ლე ყათმდაჯროქჲან მნე, ქხელებე  
ლ ნეჲ, ირ აქე აყაგოცეი ირლს ზიმნაქორ ქათათარქ ანავქამ ზაქონა-  
ქერქად ლე:

ხროსაღენი ქრავ გაღოქი ყათმოქჲან ქაქათხეჯელ მასნაგხთ  
ხ. ოხორლხქინ ვროლ ლე. «*ქაქორე ოქქესი ქანქონ ქრავქინერი ვორქონხი-*  
*ქჲან ზხთქნ აქამ ქითქინ ჰნექლად ლე, ქანი ირ აქნ არღენ XIII ოარიქე*  
*აქლს ქრავქინერი ლერ ყათქანონ: ოქმოქხენ, საქაქნ, აქნაქეს ქნო-*  
*ქან კერაქი ლე ანქანონ ქანქი კანოცეიქინ, ირ ხრლონ ლე, ქხ ნრა*  
*ქამანსაქ აქე აყაგოცეი ნქოქ ოხლს ვოქოქჲონ ონენ: ირ იროქ ლაქორ*  
*ოქქესი ქანქრ ქრავქინერი კანოცეადნ ლე, აქს ლე აქ ნქოქერი ზხთ მი-*  
*სინ<sup>51</sup> ქქაქონ ლე ლ აქნ, ირ XVI ოარი სქღქინ ხროსაღენ ვნაგად ოხენსა*  
*ქოქოქაქქიქინ ანქნაღქო კერაქი ყაქქარონ ლე ლაქორე ქანქიქე ზა-*  
*ქერი ართარქამან ლე ქრავქინერი ირქონქინერი ქერაქანქონან ზა-*  
*ქამარ<sup>52</sup>: ინე ქოხე, ვარქაქქიქო თხეკელიქჲონე, ხქხ აქნ ზაქასათი ქი-*  
*ნენ, იროქ კარლორ არქექე კონხენარ ქანქი ყათმოქჲან ოსონანსარ-*  
*ქან ზამარ<sup>53</sup>:*»

ოქმოქხეი ვარქაქქიქინ აქნ ზეღქინაქე ლე, ირქინ კარქიქი ქინერი კას-  
ქადხე ანზიმნ ზაქთარაროქჲან მნე: კინხქიქ ხროსაღენიქ მით ქხე  
ამქს, ნსა ზიმნაქორაქეს ოსონანსარქელ ლე ხროსაღენი ქრავქან გა-  
ღოქი ყათმოქჲონე, ზოქარქანქინერი ქრა ყაქანქად არქანაჯრო-  
ქჲონქინ ოქ ორქანსარქინერი, ორქოქ სქღქნაჯეიქინერი<sup>51</sup> დხოჯერი  
ზიქათაქარანქინ ოქ ზიქათაქაჯროქჲონქინერი, ქერანაქი ზაღოქოქიქ-  
ინ ოქ თხექან აქანქოქჲონქინერი (ხქხ ორანქ ირენ ზაქასათი ხნ  
ქქაქელ): ლარქ ლე ნეჲ, ირ ამენ ოქაქონ, ხრე ნსა აქანქოქჲან კამ  
ქერანაქი ზაღოქოქიქან ზიმან ქრა ლე ირლს თხეკელიქჲონ მნე ქერიქონ,  
აქა ანაქაქიქან აქე მასქინ ზათოქ ნეჲ ლე კათარონ: ლათ ზოქარ-  
ქანქინერი ანქიქიქ ნრა ზაღოქოქიქინერი მნედაქოქიქ მასე ოქთაქან ქრ-  
ნოქჲონ ხნ ქონხე ლე ზასათოქელ აქლსაქლ სქღქნაჯეიქინერი თხეკელი-  
ქჲონქინერიქ:

<sup>51</sup> ზეღქიქ ხნ M. Brosset, *Addit. et ecl.*, ლე 198, ოქანქ. 2 ლ A. Цагарелу, *Памятники...*, ლე 118:

<sup>52</sup> ო. ვადაშვილი, *მიმოხევა*, ლე 0221:

<sup>53</sup> ლაქორე ქანქონ ქრავქინერი ვორქონხიქჲან ზიქათაქინერი ოქნეაქად ხნ ზა-  
ქამარონ ნსა აქლ ზხთაჯოქიქინერი: ხნ G. Peradze, *An account of the georgian*  
*monks and monasteries in Palestine, „Georgica“*, A journal of Georgian and Cau-  
casian Studies, 1937, № 4—5, ლე 224: ქეტიქე ქონქოქიქიქ, *მოგზაურობა ქმ. ქალოქს*  
*იერუსალიმსა ლა ქმ. ათონს მთაზედ, ოფიქოსი*, 1901, ლე 94—96:

Վերոհիշյալ բոլոր պարագաներով հանդերձ, Տիմոթեոս Գաբաշվիլու մեզ հետաքրքրող հաղորդումը չի հաստատվում. մինչև XVI դարը գրված ոչ մի այլ սկզբնաղբյուրում նման տեղեկություն դոյություն չունի, կամ, համենայն դեպս, առայժմ հայտնաբերված չէ:

Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ Տ. Գաբաշվիլու հաղորդումը հիշեցնող տեղեկություն, այն է՝ Սրբոց Հակոբյանց վանքը նախապես իսպանացիներին, վրացիներին կամ հույներին պատկանելու մասին, գոյություն ունի նաև բազմաթիվ այլ սկզբնաղբյուրներում, որոնք, սակայն, բոլորն էլ XVI դարից են կամ ավելի ուշ շրջանի: Բերենք նման հաղորդումներից մի քանիսը. վաղագույններից մեկը (1615 թ.) անհայտ ճանապարհորդի թողած գրառումն է, ըստ որի «Ս. Հակոբի եկեղեցին ու վանքը պատկանում է հայերին, թեև նախապես իսպանական թաղավորն էր կառուցել դրանք իր երկրի ուխտագնացների համար»<sup>54</sup>: Ռուս ճանապարհորդ Արսենի Սուխանովի հաղորդմամբ, որ ճանապարհորդել է 1649—1653 թթ. «Монастырь Иакова сына Заведеева, на том месте Ирод главу ему отсече и то место теперь в церкви;... тот монастырь был иверской, сиречь грузинский и старцы тот монастырь заложили у армян в невеликой цене, и ныне владеют тем монастырем армяне. Живет тут их арцыбискуп и старцев много;... тот монастырь велик как город, и жилья без числа много, церковь велика и чудна, служат армяне...»<sup>55</sup>.

1707—1709 թթ. Երուսաղեմ այցելած Հիպոլիտ Վիշենսկին գրում է, թե «монастырь святого Иакова Зеведеева бывал грецкий, а теперь армянский...»<sup>56</sup>.

Ինչպես նշվեց, հայերի կողմից վանքի սեփականման մասին վարկածը չի հանդիպում XVI—XVII դդ. ավելի վաղ<sup>57</sup>: Հայագիտության մեջ Սրբոց Հակոբյանց վանքի հիմնադրման ժամանակի ու պարագաների մասին

<sup>54</sup> Տե՛ս G. Peradze, An account of the georgian monks and monasteries in Palestine, էջ 224:

<sup>55</sup> «Проскинитарий Арсения Суханова (1649—1653 гг.), под ред. Н. И. Ивановского, «Православный Палестинский сборник», т. VII, вып. III, СПб. 1889, էջ 165:

<sup>56</sup> «Путешествие иеромонаха Ипполита Вишенского», (в Иерусалим, на Синай и Афон 1707—1709 гг.)»—ППС, 1914, вып. 61, էջ 86.

<sup>57</sup> Միակ բացառությունը, թերևս, Զոսիմայի հաղորդումն է (1419—1422 թթ.), որը, թվարկելով Երուսաղեմի վանքերը, Ս. Հակոբի մասին գրում է. «5-я Церковь Иакова, брат Господень, сию ж церковь Арменове взяли за себя» (տարընթերցում՝ Владеют). «Хождение инока Зосимы 1419—1422 гг.», под редакциею Хрисанфа Лопарева, ППС, т. VIII, вып. III, էջ 19:

դեռևս հանգամանալից ուսումնասիրութիւն գոյութիւն շունի, եթե բացառենք Մ. Աղավնունու<sup>58</sup> և Տ. Սավալանյանցի<sup>59</sup> աշխատութիւնները, որոնք, սակայն, հատկապես սույն հարցերին չեն նվիրւած, այլ հպանցիկ շոշափում են այդ հարցի վերաբերյալ ինչ-ինչ դրվագներ:

Այսօր շափազանց դժվար է ձեռնամուխ լինել վանքի հիմնադրման ժամանակի հարցի լուծման գործին: Դժվար է, նախ այն պատճառով, որ վանքի տարածքում դեռևս հնագիտական լուրջ աշխատանքներ չեն տարվել, իսկ գրավոր աղբյուրներում ևս դրա համար անհրաժեշտ ուղղակի տեղեկութիւններ չեն հայտնաբերվել: Մնում է եղած բազմաբնույթ ըսկզբնաղբյուրներից հավաքած մեր տեղեկութիւններն ի մի բերել և տալ մոտավոր մի եզրակացութիւն, որը կարող է ճշգրտման ենթարկվել ժամանակի ընթացքում, երբ կկատարվեն հնագիտական պեղումներ և ի հայտ կգան նոր նյութեր<sup>60</sup>:

Այս հարցի շուրջ լուրջ և գիտական սկզբունքներով գրված օտար հետազոտողների աշխատութիւններից առաջին հերթին պետք է հիշատակել գերմանացի գիտնական Տիտուս Տոբլերի երկհատորանոց երկը<sup>61</sup>: Հեղինակն ամենայն բարեխղճութամբ եվրոպական ճանապարհորդների, գրավոր այլ սկզբնաղբյուրների հիման վրա կազմել է Երուսաղեմի ու նրա շրջակայքի տեղագրութիւնը՝ հնարավորին շափ թվարկելով յուրաքանչյուր ճարտարապետական միավորի շուրջ եղած վկայութիւններն ու շարադրելով նրանց համառոտ պատմութիւնը: Աշխատութիւնը մինչև օրս էլ չի կորցրել իր գիտական արժեքը: Երուսաղեմի միջնադարյան վանքերի ուսումնասիրութիւն գործը մի նոր աստիճանի բարձրացրին Վենսան Ուգուն և Ֆ.-Մ. Աբելը, որոնք մի քանի հատորների մեջ ամփոփել են բոլոր կարևոր կառույցների պատմութիւնը<sup>62</sup>: Նախորդ ուսումնասիրողների աշխատութիւնների համեմատութիւնամբ այս գործի առավելութիւնը կա-

<sup>58</sup> Մ. Աղավնունի, Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ Երկրին մէջ, Երուսաղեմ, 1931, էջ 248—278:

<sup>59</sup> Տ. Տ. Սավալանյանց, Պատմութիւն Երուսաղեմի, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեան, առաջին հատոր, Երուսաղեմ, 1931:

<sup>60</sup> Գտնված հնագույն արձանագրութիւնները, որոնց մասին կխոսվի ստորև, հայտնաբերվել են 1830-ական թթ. վանքում վերանորոգչական-շինարարական աշխատանքների ժամանակ: Տե՛ս Տ. Սավալանյանց, նշվ. աշխ., էջ 986:

<sup>61</sup> Titus Toblers Zwei Bücher Topographie von Jerusalem und seinen Umgebungen, Buch I, Berlin 1853, CVI+677 ss., Buch II, Berlin, 1854, IV+1033 ss., ս. Հակոբի մասին տե՛ս հ. 1, էջ 358—364:

<sup>62</sup> Vincent Hugues et F.-M. Abel, Jérusalem, recherches de topographie, d'archéologie et d'histoire, Paris, 1914—1926.

յանում է նրանում, որ գրավոր սկզբնաղբյուրներից բացի օգտագործված են նաև վիմագիր արձանագրություններն ու հնագիտական պեղումների արդյունքները, տրված են գրեթե բոլոր կառույցների հատակագծերը: Հայ ուսումնասիրողն այս աշխատությունից բավականին փաստական նյութ կարող է քաղել Երուսաղեմի, հայկական գաղութի պատմության վերաբերյալ: Սակայն տվյալ դեպքում մեզ հետաքրքրող ս. Հակոբի վանքի պատմությունը շարադրելիս, ցավոք, հեղինակները զերծ չեն մնացել ընդփաստարկված ավանդական տեսակետներին տուրք տալուց, որը զգալիորեն իջեցնում է աշխատության արժեքը<sup>63</sup>: Օտար հետազոտողների աշխատությունների թերի կողմերից մեկը հայկական սկզբնաղբյուրներին անտեղյակ լինելն է, որոնք եթե գումարվեն եվրոպական գիտնականների բերած փաստական նյութին՝ կարող են որոշակիորեն օժանդակել շատ հարցերի լուծմանը<sup>64</sup>:

Խոսելով ս. Հակոբի վանքի մասին, հետազոտողները միասնական կարծիքի են այն բանում, որ IX—XI դարերից առաջ այն չի հիշատակվում և, հետևաբար, գոյություն էլ չի ունեցել: Նրա տեղում V դարից եղել է ս. Մինաս մատուռը<sup>65</sup>, որի շուրջը հետագայում (IX—XI դդ.) կառույցներ ավելացվելով՝ հետզհետե ընդարձակվել է: Ընդունված է ս. Մինաս մատուռի հիմնադիր համարել Եվդոկիա կայսրուհու ընկերուհուն՝ Բասսային<sup>66</sup>:

Հարցի քննության մեջ առավել հստակություն մտցնելու համար անհրաժեշտ է նշել, որ Երուսաղեմում գոյություն է ունեցել ս. Հակոբ Ալփյանի երեբ, ս. Հակոբ Զեբեդեի որդու՝ մեկ և ս. Հակոբ Պարսիկի մեկ վանք: Շատ հաճախ ուսումնասիրողների կողմից մոռացության տրված այս

<sup>63</sup> Vincent Hugues et F.-M. Abel, Jérusalem, t. II, Fascicule III, Paris, 1922, pp. 516—561.

<sup>64</sup> Մեզ հետաքրքրող շրջանի ու տեղի պեղումները դեռևս ընթացքի մեջ են և սպասելի են նորանոր հայտնագործություններ:

<sup>65</sup> Մկրտիչ Աղավնունի, Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ Երկրին մէջ (ուսումնասիրություններ), Երուսաղեմ, 1931, էջ 251, 259—260; Vincent Hugues et F.-M. Abel, Jérusalem, t. II, fasc. III, Paris, 1922, էջ 519; R. P. Delehaye, L'invention des reliques de Saint Méneas à Constantinople; Anal. Bollandiana, XXIX, 1910, էջ 117—150. Ս. Մինասի լեզենդի ու նրա պաշտամունքի մասին տես նաև Dictionnaire d'archéologie chrétienne et de liturgie, publié par Fernand Cabrol, tome septième, deuxième partie, Paris, 1927. p. 2334. К. Кекелидзе, Иерусалимский канонарь VII века. (грузинская версия), Тифлис, 1912, էջ 112, 249:

<sup>66</sup> К. Кекелидзе. Նշվ. աշխ., էջ 112, 249 ծան. 53: Джон Карсуэлл, Резная дверь в армянском кафедральном соборе св. Якова в Иерусалиме, Ереван, 1978, էջ 7:

պարագան թյուրիմացությունների պատճառ է դառնում՝ մեկ վանքի մասին ճանապարհորդների հաղորդումը հաճախ վերագրելով մյուսին: Այդ շփոթը տեղի է ունեցել նաև միջնադարում, իսկ նոր ժամանակներում երբեմն էլ միտումնավոր աղավաղվել է<sup>67</sup>: Հակոբ Ալփյանի վանք եղել է 1) Հովասափատի ձորում<sup>68</sup>, 2) Խարամ եջ-Շերհֆում<sup>69</sup> և 3) Հարության տաճարում<sup>70</sup>: Հակոբ Զեբեդեի որդու կամ Զեբեդյանի վանքը, որը երբեմն անվանվում է նաև Հակոբ Ալփյանի վանք, (իմա հայկական Սրբոց Հակոբյանց վանքը) գտնվում է Սիրոն լեռան վրա: Հակոբ Պարսկի վանքը (Saint-Jacques l'Intercis) գտնվում է Դավթի աշտարակի մոտ<sup>71</sup>: Բոլոր նշված վանքերը հիմնվել են տարբեր ժամանակներում և պատկանել են տարբեր համայնքների: Ինչպես նշվեց, V դարում Սիրոն լեռան վրա ս. Հակոբի վանքի տեղում եղել է ս. Մինաս մատուռը, որի շուրջ հետագայում

<sup>67</sup> Максим Симский, История иерусалимских патриархов со времен шестого вселенского собора до 1810 г. (ППС, т. XIX, вып. I, СПб., 1904). «Попираемый Иерусалим монаха Прокопия Назианзина Арабоглу, драгомана Иерусалимской патриархии (ППС, т. XIX, вып. I, СПб., 1904, էջ 164—228). Վերջինս մասնավորապես գրում է. «После взятия Иерусалима султаном Селиман I часто начали приходить в Иерусалим армяне на поклонение святым местам и оставались там; они тогда оказывали нам большое послушание и почтение. Наши отдали им тогда для жительства дом Анны, лежащей вне Иерусалима у св. Сиона; с течением времени они присвоили себе этот дом и до сих пор владеют им. Позже они, взяв пример с франков, наняли у Грузин монастырь св. Иакова Зеведея (он принадлежал Грузинам), заключили с ним условие, что наемная плата будет в 50 червонцев...» (նույն տեղում 164):

<sup>68</sup> «Феодосий о местоположении святой земли начала VI века», по ред. Гильдемейстера издал, перевел и объяснил Н. Помяловский (ППС, т. X, вып. I, СПб., 1891, էջ 16—17).

<sup>69</sup> Повесть Епифания о Иерусалиме и сущих в нем мест первой половины IX века, изданная, переведенная и объясненная В. Г. Васильевским (ППС, т. IV, вып. II, СПб., 1886,

<sup>70</sup> Աստվածատուր Հովհաննիսյանց, Ժամանակագրական պատմութիւն ս. Երուսաղէմի, հատ. 1, Երուսաղէմ, 1890, էջ 281: Մկրտիչ Արծրունյան, Ստորագրութիւն սրբոյ քաղաքին Երուսաղէմի, Երուսաղէմ, 1859, էջ 62: X դարում գոյութիւն է ունեցել ս. Հակոբի անվամբ մի վանք ևս, որի կառուցող է հիշատակված ոմն Պողոս, սակայն հայտնի չէ նրա տեղադրութիւնը: Այդ մասին կարևոր վկայութիւն է պահպանվել Հովհան Վրացու (օտանց խորտեղ) Տոնացուլցում (X դար). «<Յոսիս> քե թաւլցս Մթնեղլս օյոյո թմիլաս լաւցմա օյոյո թոցիլցլոս ժմիս լուցլոսա...» (մայիսի 25. Պողոսի կառուցած սուրբ Հակոբում հիշատակը տեառնեղրայր Հակոբ առաքյալի): Տե՛ս Ե. Կեքելոս, օտանց խորտեղի կալենդարի (X ս), Մեսթորեղլո Յեյսթի լա ցամոյկլեցա, տեղ Մրոմբո, XXXIX, 1950, էջ 46:

<sup>71</sup> Grand Larousse eucyclopédique, en dix volumes, tome sixième, p. 297.

վեր է խոյացել կից կառույցների մի համալիր և անվանվել ս. Հակոբի վանք: Ուստի ս. Հակոբի վանքի պատմության ուսումնասիրման ժամանակ ընդունված է սկիզբ համարել հենց Մինասի եկեղեցու հիմնադրման ժամանակը (V դ.): Այդպես է վարվել նաև Ֆ. Աբելը, որը ս. Հակոբի վանական հաստատության իր ներկայացրած պարբերաշրջանները ներկայացնում է հետևյալ հաջորդականությամբ.

«Բյուզանդական—V դար  
վրացական—IX—XI դդ.  
միջին—XII դ.  
հայկական—XIII—XIV դդ.  
անորոշ, անհայտ—  
ժամանակակից—»<sup>72</sup>

Այս պարբերացման թերությունների մասին խոսք կլինի ստորև, երբ կներկայացվեն պատմական այն փաստերը, որոնք լուսաբանում են վանքի պատմության, մասնավորապես նրա պատկանելության հարցը: Այստեղ նշենք միայն, որ հեղինակը XII դարի Երուսաղեմում ներկայացնում է Հակոբի անունը կրող երկու վանք<sup>73</sup> (ս. Հակոբ Պարսկի ու ս. Հակոբ հայկական թաղամասում):

Միոն լեռան վրա գտնվող հայկական ս. Հակոբը<sup>74</sup> XII դարից ավելի վաղ գրավոր սկզբնաղբյուրներում չի հիշատակվում: Ճիշտ է, վանքում պահպանվել է թվակիր ավելի հին վիմագիր արձանագրություն (X դ)<sup>75</sup>, սակայն այդ արձանագրության մեջ չի հիշատակվում վանքի անունը, և մենք չենք կարող պարզել, թե ինչպես է այն կոչվել X—XI դարերում: Միոն լեռան վրա գտնվող ս. Հակոբի վանքն ու նրա հայկական լինելը ճանապարհորդների երկերում ու պատմական այլ սկզբնաղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է միայն XII դարից սկսած: Այսպես.

<sup>72</sup> Vincent Hugues et F.-M. Abel, Jérusalem, t. II, planches du fasc. III, planche LIX (église patriarcale Arménienne Saint-Jacques“).

<sup>73</sup> Vincent Hugues et F.-M. Abel, Jérusalem, t. II, planches du fasc. IV, planche LXXXVI („Jérusalem au temps du Royaume latin; XII<sup>e</sup> siècle“).

<sup>74</sup> Պետք է նշել, որ VII դարում հայկական է եղել Հովասափատի ձորի մոտ գտնվող ս. Հակոբ վանքը, որը Անաստաս ուղեգրի ցուցակում («Վասն վանորէից հայոց որ յԵրուսաղէմ») անվանված է Քարովանք. «Սահառունեաց վանքն, ի նույն կողման է, զոր Քարովանք կոչէն, որ է Տեառնեղբօրն՝ զոր ընկալաւ վէմն» (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 227): Այդ վանքը հայկական էր ու այնտեղ հայեր էին միաբանում նաև XVI դարում (տե՛ս Տիգրան Սավալանյանց, Պատմութիւն Երուսաղէմի, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ Եսլիսկոպոս Նշանեան, Առաջին հատոր, Երուսաղէմ, 1931, էջ 147):

<sup>75</sup> Տ. Սավալանյանց, նշվ. աշխ., II, էջ 1235:

Jean de Würzburg-ը հաղորդում է, որ „...non longe abhinc, per descensum ultra aliam plateam est magna ecclesia in honorem Sancti Jacobi constructa, ubi monachi habitant armeni, et habent etiam ibidem magnum hospitale pro colligendis pauperibus suae linguae“<sup>76</sup>

(«Ոչ հեռու այստեղից, ավելի առաջ իջնելով մի այլ փողոց, կա մեծ եկեղեցի՝ կառուցված ի պատիվ սուրբ Հակոբի, որտեղ հայ վանականներ են բնակվում և ունեն նույն տեղում նաև մեծ հյուրանոց իրենց լեզվով (խոսող) աղքատ ուխտավորներ ընդունելու համար»): Օտար հեղինակի այս հաղորդումը, որ ճանապարհորդել է Երուսաղեմ 1160—1170 թթ., կարևոր նշանակություն ունի: Ս. Հակոբյանց վանքում պահպանվել է նաև Աբրահամ Բ պատրիարքի տապանաքարը. «որ կը գտնուի արտաքին դրան ձախակողմը». «Այս է տապան եւ պահարան սրբասնեալ մարմնոյ Տեառն Աբրահամու եպիսկոպոսի Երուսաղեմացոյ երջանիկ պատրիարքի Սրբոյ Աթոռոյս, որ յանգի յիշխանութեան սուլթան Սալաէտինի. թվ. Ոհ եւ Ա. (1192 թ.)<sup>77</sup>»:

Վերոհիշյալ վկայությունները բավարար են, որպեսզի ապացուցված համարենք գոնե XII դարի երկրորդ կեսից Հակոբյանց վանքում հայեր լինելու փաստը: Նկատելի է միաժամանակ և այն, որ վանքի անվան առաջին իսկ հիշատակության ժամանակ այնտեղ վկայված ենք տեսնում հայերի ներկայությունը:

XII դարից սկսած ս. Հակոբյանցը միշտ գտնվել է հայերի ձեռքին, եղել է հայոց եպիսկոպանիստ և հետագայում էլ պատրիարքանիստ վանքը<sup>78</sup>:

Բազմաթիվ են այն վկայություններն ու պատմական մասունքները<sup>79</sup>,

<sup>76</sup> Vincent Hugues et F.-M. Abel, Jérusalem..., t. II, fasc. III, Paris, 1922, էջ 527; Հմմտ. Titus Toblers zwei Bücher Topographie von Jerusalem..., Erstes Buch, Berlin, 1853, էջ 359; John of Würzburg, Description of the Holy land (1160—1170), transl. by A. Stewart with notes by C. Wilson, London, 1890, XII+72.

<sup>77</sup> Տե՛ս Տ. Սավալանյանց, նշվ. աշխ., էջ 1229:

<sup>78</sup> 1311 թ. այն անշատվելով Սսի կաթողիկոսական աթոռից հռչակվեց անկախ պատրիարքություն:

<sup>79</sup> Բազմաթիվ ճանապարհորդների գրառումներից ու պատմական գրավոր աղբյուրների տեղեկություններից զատ, ս. Հակոբյանց վանքում պահպանվել են պատկառելի քանակությամբ վիմագիր արձանագրություններ: Բառի վերոհիշյալ 956, 1151, 1153 և 1192 թթ. խաչքարերից ու տապանաքարից, այնտեղ արձանագրություններ են պահպանվել XIII—XIV դարերի խաչքարերի, կառույցների, տապանաքարերի վրա, որոնք հրատարակված են Տ. Սավալանյանցի աշխատության մեջ (տե՛ս հատոր II, էջ 1219—1252): Տե՛ս նաև Աստվածատուր Էյս. Հովհաննիսյանց, Ժամանակագրական պատմութիւն ս. Երուսաղէմի, հատ. 1, Երուսաղէմ, 1890, էջ 160—165, 182—187 և այլն:

որոնք ապացուցում են հայերի մշտական տիրապետութիւնը վանքում: Միայն 1657—1659 թթ. հուլն եկեղեցականներին հաջողվում է գրավել այն, որը սակայն երկար չի տևում<sup>80</sup>: Ապացուցված համարելով հանդերձ ս. Հակոբյանց վանքի՝ XII դարի երկրորդ կեսից գոյութիւն ունենալու և հայերին պատկանալու փաստը, պետք է արձանագրեել նաև, որ մի քանի մշուշապատ ու վերապահութիւններ ընդունելի փաստերից բացի, XI դարին վերաբերող որևէ ստույգ տեղեկութիւն չունենք: XI դարին է վերաբերում նախ Պետրոս Սարկավազի հաղորդումը, թե «в церкви же, которая зовется святым Сионом, есть престол Иакова брата Господня, погребеннаго возле храма. Она построена на том месте, где во время вечери апостолов, дверем затворенным, явился после страданий Господь»<sup>81</sup>.

Այստեղից պարզ է, սակայն, որ այդ ժամանակ վանքը դեռևս չէր կոչվում Հակոբ Տեառնեղբոր անունով, թեև մատնացուցվում է նրա «գերեզմանը»: Երկրորդ տեղեկութիւնը բերված է Մկրտիչ Արծրունյանի աշխատութիւն մեջ, ըստ որի. «Հաճրն քաղաքում Հակոբ Մծբնացու վանքում ասորերենից հայերենի է թարգմանվել մի ձեռագիր «յաւուրս Գրիգորի Մագիստրոսի և որդւոյ նորա Գրիգորի Վկայասիրի՝ որ է Վահրամ, քաղաքն Սիս», որտեղ Հեղինե թագուհու Երուսաղեմ գալու մասին հատված է եղել, ուր նշվում էր նաև, թե «...յետ հինգերորդ ամի կացութեան իւրոյ յԵրուսաղէմ... ձեռն արկ և սկսաւ սլարապել ՚ի շինութիւն մատրանաց... Եւ յուակ ուրեմն ետ յաւրինել կամար մի ի վերայ շիրմի Յակոբայ մեծի առաքելոյն որդւոյն Զեբեթեայ... ուր ստէպ այց ելանէր առ սուրբ կոյսն մայրն Յիսուսի մերձ ՚ի Վերնատունն Սիովնի...»<sup>82</sup>: Վերջին այս վկայութիւնը, ավանդական լինելով հանդերձ, հետաքրքիր և ուշագրավ է իր՝ XI դարով թվագրված լինելու փաստով: Մեր կարծիքով, բերված հաղորդումը հորինվել է, հավանաբար, հենց XI դ. վերջերին՝ վանքի արդեն

<sup>80</sup> Միք. Չամչյան, Պատմութիւն հայոց, Գ, Վենետիկ, 1786, էջ 666, 809—810: Աստ. Հովհաննիսյանց, Ժամանակագրական պատմութիւն ս. Երուսաղէմի, I, էջ 352—363):

<sup>81</sup> Տե՛ս «Паломничество по святым местам конца IV века», изданное, переведенное и объясненное Н. В. Помяловским (ППС, т. VII, вып. II, СПб., 1889, стр. 180).

<sup>82</sup> «Ստորագրութիւն սրբոյ քաղաքին Երուսաղէմի», քննութեամբ համառոտեալ ի Հաննա եւ ի Մարինոս պատմագրաց, ընդ որս եւ յաւելեալ բազում բանս հանդերձ կարեւոր ծանօթութեամբբ: Աշխատասիրեալ ի Մկրտիչ վարդապետէ Արծրունեան, Երուսաղէմ, 1859, էջ 5—7:



հայկական դառնալուց հետո<sup>83</sup>: XII—XIII դարին է վերագրվում նաև «Դաշանց թղթի» հորինումը, որտեղ պատմվում է Տրդատ թագավորի ու Գրիգոր Լուսավորչի Հռոմ ճանապարհորդելու մասին ավանդությունը<sup>84</sup>, որից էլ վերցնելով, անշուշտ, մեջ են բերում այն հետագա հայ պատմագիրները: Կ. Գանձակեցու հաղորդումով, Հռոմում, ի թիվս այլ ընծաների, նրանց տալիս են «և յԵրուսաղէմ զԳողգոթայ՝ զտեղի խաչելութեանն Քրիստոսի, և զսուրբ Յակովբն, և զտեղի մի պատարագի ի սնարս սուրբ Յարութեանըն»<sup>85</sup>:

«Դաշանց թղթի» անվավերականությունը թեև ակնհայտ է, սակայն Տ. Սավալանյանցը ևս, չձեռքազատվելով ավանդությանը տուրք տալուց (անշուշտ հայերի՝ Երուսաղեմում ունեցած մեծ դերի ազդեցության

<sup>83</sup> Սրբոց Հակոբյանց վանքի հայկական լինելը բավական երկար ժամանակ ընդհանուր ճանաչում գտած փաստ է եղել արդեն իսկ XII դարի վերջերին և XIII դարի սկզբներին, որը և Վարդան Այգեկցուն հիմք է տվել իր 1205 թ. ավարտված աշխատության մեջ գրելու. «Եվ մեծ բանադրանք կայ գրե[ալ] յեկեղեցւոյն ներբողեանն, որ թէ ես ոչ ժամանեմ առմանն Երուսաղէմի, նայ ի ձենչ ով եւ մնասցէ կենդանի՝ տարցէ զնա յԵրուսաղէմ, յորժամ տայ Աստուած զնա քրիստոնէից եւ շինի Սուրբ Յակոբ տուն Հայոց, եւ առցէ զարհնութիւնն Աստուծոյ» (տե՛ս Զ. Անասյան, Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ, Բաղմավեպ, 1968, № 7—12, էջ 264): Դրանից քիչ անց այդտեղ գրվել է այժմ Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանում պահվող մի ճառընտիր, որն ունի հետևյալ հիշատակարանը.

«Յամի վեցհարիւրերորդի վաթսներորդի և ի չորրորդում ամի շրջաբերութեան Հայոց տումարի (1215). ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի, ի վերջացեալ և ի նուաղեալ դառն ժամանակի... յաշխարհս Պաղեստին՝ ի մէջ գերութեանս Երուսաղէմի, ընդ հովանեաւ սուրբ Յակոբայ առաքելական աթոռոյս՝ գրեցաւ զիրս գերահրաշ և ամենապայծառ...» (Տե՛ս Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հտ. Բ, Վենետիկ, 1924, էջ 144: Հմմտ. Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 773—774):

<sup>84</sup> Նման ավանդություններ գոյություն ունեն նաև այլ ժողովուրդների մոտ, որոնք պատմականորեն ճշգրիտ չլինելով հանդերձ՝ միջնադարյան եկեղեցականների համար ըստացել են անվերապահ փաստի զորություն: Ըստ վրացական ավանդության Երուսաղեմի մոտ գտնվող վրացական ս. Խաչ վանքի տեղն ընտրել է Վրաստանում քրիստոնեություն տարածող Նինոյի կողմից Երուսաղեմ առաքված Միրիան թագավորը (տե՛ս Գ. ՅոճաՅոցո, ՅոճաՅոցո, էջ 77, 121):

<sup>85</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 11: Այդ մասին հաղորդում կա նաև Անաստաս վարդապետի ցուցակում, որը ցույց է տալիս, թե այդ ցուցակը ևս հետագա խմբագրումների կամ հավելումների է ենթարկվել (տե՛ս «Հայապատում», էջ 227—228):

տակ)<sup>86</sup>, գրում է, թե «Մենք ընդունելով գոյությունը այդպիսի պայմանագրութեան մը, և սակայն մերկացնելով դայն ամեն նորամուտ ու անհեղեղ յաւելուածներէն, կը հաստատենք, թէ Տրդատ իրօք Ս. Տեղեաց շինութեան մէջ արեւմտեան կայսեր հետ հաւասար ու զուգընթաց դեր ունեցաւ, ու բաժին ստացաւ ս. Յակոբի վանքը, ուխտաւորներու բնակութեան համար, և Գողգոթեան...»<sup>87</sup>, Մեզ անհայտ սկզբնաղբյուրի հիման վրա Տ. Սավալանյանցը գրում է<sup>88</sup>, թե XI դարի սկզբներին «Ս. Յակոբ Տեառնեղբօր եկեղեցիին տեսչութիւնը կը վարէր Արսէն պատրիարք (=Եպիսկոպոս)»<sup>89</sup>:

Այսպիսով, մեր հեղինակների (բացի Մ. Աղավնունուց) ուսումնասիրություններում ս. Հակոբյանց վանքի պատմությունն սկսվում է Տրդատի ու Գրիգորի՝ Հոռմ այցելության գնալու պարագայով, ուստի և հիմնադրված IV դարում: Մ. Աղավնունին այդ մասին գրում է հետևյալը. «Մենք սա համոզումը ունինք, թէ տաճարի (իմա՛ ս. Հակոբյանց վանքի—Պ. Զ.), սրբավայրերը միաժամանակ շեն շինուած. գլխաւոր սրբավայրերը ս. Գլխադիր և ս. Մինասի մատուռներն գոնէ Ե դարէն սկսեալ գոյութիւն ունէին. ատոնց և ուրիշ մատուռներուն իբր լրացուցիչ, շինուած կըթուի ս. Յակոբեանց գեղեցիկ և հոյակապ տաճարը, բաց աստի, որոշ է նաև, և պատմականօրէն կը հաստատուի, թէ ս. Յակոբեանց վանքը ու եկեղեցին խաչակիրներէն շատ յառաջ արդէն շինուած էր, վանքին արեւմտեան պարսպին ճակատը խաչքար մը կայ հին ու կիսամաշ, որուն թևերուն անկիւնները շորս ուրիշ խաչեր քանդակուած են, շուրջանակին վերևի երկու խորշերուն մէջ երկաթագիր՝ Տր. Ա.Ս. և խաչի պատուանդանին տակ՝ Թվ. ՆԵ. (=956) բառերը կան. այս խաչքարը մերձաւորապէս խաչակիրներէն 150 տարիէ աւելի յառաջ գոյութիւն ունենալով ազուցուած է վանքի արտաքին պարսպին ճակատը»<sup>90</sup>: Նա միաժամանակ հաստատում է 1151 թ.

<sup>86</sup> Ավանդական այդ տեսակետներն են պաշտպանել Աղ. Երիցյանը (տե՛ս նրա՝ Տաճկաստանի հայոց իրավունքները և նոցա սահմանադրութիւնը (պատմական տեսութիւն), «Փորձ», 1876, № 2, էջ 145—182), և Մ. Մելիքսեթ-Բեկը (տե՛ս նրա «Armeno-Hebraica», Труды Историко-этнографического музея евреев Грузии», т. III, Тб., 1945, 258—259) Ասով. Հովհաննեսյանցը, (տե՛ս Ժամանակագրական պատմ. Երուսաղեմի, Երուսաղեմ, 1890, էջ 58—59, 61—62, 86—87) և շատ այլ ուսումնասիրողներ:

<sup>87</sup> Տ. Սավալանյանց, Պատմութիւն Երուսաղեմի, հատ. I, էջ 213:

<sup>88</sup> Նույն տեղում, էջ 287:

<sup>89</sup> Մեզ թվում է, այստեղ պիտի ենթադրել Հովասափատի ձորի մոտ գտնվող վանքը: Նույն տեղում, էջ 245, Մ. Աղավնունի, հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ երկրին մէջ, Երուս., 1931, էջ 3—5: Հմմտ. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 227:

<sup>90</sup> Մկրտիչ Աղավնունի, նշվ. աշխ., էջ 251—252:

և 1153 թ. խաչքարերի դոյության փաստը և նշում, թե «երևցած յիշատակարաններու մէջ ամենէն հիները ասոնք են»<sup>91</sup>:

Օտար ուսումնասիրողների, և մասնավորապես եվրոպացի գիտնականների կարծիքով, որ փաստորեն ամփոփված է վենսյան Ուգու-ի և Ֆ.-Մ. Աբելի աշխատության մէջ, V դարից դոյություն ուներ ս. Մինաս եկեղեցին կամ մատուռը: X—XI դարերում այն անցնում է վրաց հոգևորականների ձեռքը, որոնք կից կառույցներ են ավելացնում: «Հաջորդ դարում (իմա XII—Պ. Զ.), սակայն վրացիները, զբաղված լինելով պատերազմներով, զիջում են այն հայերին»: XII դարը, այն է՝ խաչակրաց արշավանքների ժամանակը, նշված հեղինակները համարում են միջին շրջան, որից հետո նրան տիրում են հայերը (XIII—XIV դդ.): Այնուհետև սկսվում են վանքի պատմության անորոշ և նորօրյա շրջանները: Այդ ապացուցելու համար նրանք ներկայացնում են ս. Հակոբյանց վանքի հատակագիծը, նրա վրա նշում ըստ իրենց պարբերացման կցակառույցների ժամանակն ու, որպես հավելված, տարբեր ճանապարհորդների ուղեգրություններից վկայություններ բերում<sup>92</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, իրոք հնագույն կառույց պետք է համարել ս. Մինաս մատուռը, և եթե V—IX դդ. այն հիշատակվում է, ապա նշանակում է, թե դեռևս այն մնում է որպես առանձին կառույց, առանձին միավոր, դեռևս չի ձուլվել այլ կառույցների հետ և անվանափոխության ենթարկվել: Այս պարագան իր հերթին ենթադրել է տալիս, թե ս. Հակոբյանց վանքի հիմնադրության սկիզբը պետք է փնտրել X կամ XI դարերում: Դրանով իսկ ընդունելի ենք համարում ինչպես Մ. Աղավնունու, այնպես էլ եվրոպացի գիտնականների եզրակացությունը վանքի պատմության առաջին շրջանի մասին: Երկրորդ, այն է՝ վրացիներին պատկանելու շրջանի մասին, պետք է նշել, որ բոլոր հետադոտողները հենվում են միայն XVIII—XIX դարերի հեղինակների աշխատությունների վրա, որոնք են՝ Տ. Գաբաշվիլի, Ա. Մուրավյով և Ա. Ցազարելի, որոնց մենք կանդրադառնանք առանձին:

Ինչպես ասվեց, XII դարը վանքի պատմության մէջ անվանում են միջին, իսկ անորոշ շրջան ասելով հիշյալ գիտնականները նկատի ունեն այն ժամանակահատվածը, երբ տեղեկություններ են պահպանվել, թե վանքում ապրում են հակոբիկներ և այլ ազգության հոգևորականներ<sup>93</sup>:

<sup>91</sup> Նույն տեղում, էջ 252:

<sup>92</sup> Vincent Hugues et F.-M. Abel, Jérusalem..., t. II, fase. III, Paris, 1922, էջ 527—528:

<sup>93</sup> „In civitate est monasterium Jacobitarum, ubi est caput Sancti Jacobi et brachium Sancti Stephani protomartyris“, տե՛ս նույն տեղում, էջ 257:

Տվյալ դեպքում շփոթության մեջ գցողը այն պատկերացումն է, թե հակոբիկ ասորիների, ղպտիների<sup>94</sup>, հաբեշների<sup>95</sup> կամ լատինների<sup>96</sup> ներկայությունը վանքում բացառում է հայերի այնտեղ լինելու հնարավորությունը: Սակայն այդ փաստը միանգամայն այլ պատկեր է մատնացուցում և բնավ երբեք վանքի պատկանելության հարցը չի կարող շոշափել:

Այժմ անցնենք մեզ հետաքրքրող հարցի մասին վրացական մատենագրության մեջ եղած տեղեկությունների քննությանը: Առաջին գրավոր աղբյուրը, որտեղ հիշատակվում է ս. Հակոբի վանքը, XVI դարի սկզբից է: 1512 թ. Երուսաղեմ ժամանած Բեննա Չոլոզաշվիլին գրում է. «აქა მე და სომეხნი დავისარჩლებით იაკობ წმიდისა საყდარზედა, და დიდი ჰირი და სარჯელი გარდამხდა ცოდვილსა ბეენასა, ძმანო»<sup>97</sup> («Այստեղ ես և հայերը դատ ունեցանք ս. Հակոբի տաճարի շուրջ, և մեծ վիշտ ու տառապանք վիճակվեց ինձ՝ մեղավոր Բեննայիս, եղբայրք»): Այս վկայությունը հաստատում է այն եզրակացության ճշմարտացիությունը, թե ինչպես XIV—XV դդ., այնպես էլ «Պաղեստին Օսմանեան սուլթաններու տիրապետության ենթարկուելէն ետք՝ անոր քրիստոնեայ հասարակութիւններն ու կրօնական միաբանութիւնները կանգուն ու յարատև կը մնային միմիայն տրուած տուրքերու ու կաշառքներու շնորհիւ»<sup>98</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, ս. Հակոբյանց վանքի՝ նախկինում վրացական լինելու վարկածը ուշ միջնադարում (XVII—XVIII դդ.) Երուսաղեմում մեծ տարածում էր ստացել և այնքան էր կրկնվում ճանապարհորդ-

<sup>94</sup> Ал. Цагарели, Памятники грузинской старины на святой Земле и Синае (ППС, т. IV, вып. I, СПб., 1888,

<sup>95</sup> Նույն տեղում:

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 119: „Латиняне служили и служат там ежегодно раз обедню“.

<sup>97</sup> Ե. Ֆարո, იერუსალიმის ბერძნული საპატრიარქო წიგნსაცავის ქართულ ხელნაწერების მოკლე აღწერილობა, დასაბუქდად მოამზადა ე. მეტრეველმა, თბ., 1955, էջ 36: А. А. Цагарели, Сведения о памятниках грузинской письменности, էջ 49, 61. Հմմտ. Գ. ვაბაშვილი, მიმოხლევა, էջ 0185. Անհրաժեշտ է նշել, որ մինչև Բեննա Չոլոզաշվիლი մեկնումը, վրացիների կողմից նման երկու փորձ եղել էր նախորդ դարերում: 1311—12-ական թթ. կատարվել է I փորձը՝ Սարգիս պատրիարքի օրոք. տե՛ս Աստվ. Հովհաննեսյանց, Ժամ. պատմ., հ. 1, էջ 201—205: Իսկ երկրորդը՝ 1470—1480-ական թթ. (տե՛ս Աստվ. Հովհաննեսյանց, Ժամանակ. պատմ. ս. Երուս., 1890, հ. 1, էջ 232—233):

<sup>98</sup> Տ. Սավալանյանց, նշվ. աշխ., II, էջ 797: Բեննա Չոլոզաշվիլու վերոհիշյալ ձեռնարկման մասին վկայություններ են պահպանվել նաև հայկական մատենագրության մեջ (Աստվ. Հովհաննեսյանց, Ժամանակագրական պատմութիւն ս. Երուսաղէմի, Երուս., 1890, հ. 1, էջ 241—244):

ների ուղեգրություններում, որ հույների կամ վրացիների համար այլևս կուվան էր դիտվում՝ այն «վերադարձնելու» համար: Մարթա անունով ոմն վրացուհի XVIII դարի սկզբներին Վրաստան ուղարկած իր մի նամակում ցավով էր արձանագրում, որ Երուսաղեմում վրացական, նախկինում ծաղկուն, գաղութից այժմ միայն հիշատակներ են մնացել: Նա պահանջում էր կրկին Երուսաղեմ ուղարկել հոգևորականների, որոնք տեր կարող էին կանգնել վրացական վանքերին: Այդ առիթով թվարկելով մի շարք վրացական հնություններ, նա տալիս է նաև ս. Հակոբի վանքի անունը<sup>99</sup>: Ժամանակագրական առումով հաջորդ (1757—1758 թթ.) տեղեկությունը Տ. Գաբաշվիլու մեր կողմից մեջ բերված հաղորդումներն են: Կրկին անդրադառնալով այդ հաղորդումներին, նշենք, որ դրանք մեծ արձագանք են գտել հետագայի գիտական գրականության մեջ և բազմիցս կրկնվել: Տ. Գաբաշվիլու հաղորդումը կրկնել է Ա. Մուրավյովը իր «Ճանապարհորդության» մեջ<sup>100</sup> և, միաժամանակ ավելացրել, թե ինքը Երուսաղեմի պատրիարքարանում պահվող մի փաստաթուղթ է տեսել, ըստ որի «ս. Հակոբի վանքը հիմնադրվել է վրացիների կողմից իրենց բարօրության ժամանակներում և երեք հարյուր տարուց ավելի չէ, որ Հարության տաճարի վերնահարկերի հետ միասին անցել է հայերի ձեռքը, ինչպես այդ մասին վրկայում է Երուսաղեմի պատրիարքարանում պահվող գրությունը: Նրանով հայերը պարտավորվում են զիջել այդ սրբավայրերը վրացիներին հենց որ այս վերջիններս ի վիճակի կլինեն վճարելու Դոանը (Թուրքիային—Պ. Զ.) այս մենաստանին տիրելու համար [սահմանված] տարեկան հարկը»<sup>101</sup>:

Երուսաղեմ կատարած իր այցելությունից հետո, Ա. Ցագարելին բազմաթիվ վկայություններ ու փաստեր է ժողովել Երուսաղեմի վրացական գաղթավայրի ու հուշարձանների պատմության շուրջ, համադրել նրանք միմյանց հետ, հաստատել կամ ժխտել այս կամ այն հեղինակի արտահայտած կարծիքը կամ տեղեկությունը և այլն: Ա. Ցագարելին, բնականաբար, անդրադարձել է նաև ս. Հակոբյանց վանքի շուրջ եղած վկայություններին, մեջ բերել Տ. Գաբաշվիլու՝ Գիորգի թագավորի կողմից վանքի կառուցման մասին հաղորդումը, միաժամանակ նշելով, որ «Քարթլիս Ցխովրեբայում» նման տեղեկություն չկա. «Քարթլիս Ցխովրեբայում» ոչինչ չի ասվում այն մասին, որ Գիորգի I (1014—1027) կամ Գիորգի II

<sup>99</sup> Գ. Գաբաշվիլու, Մոմոտևա, էջ 0192: Հմմտ. Ե. Թաթաիշվիլու, Տաթարեյի խոսքեր, էջ 37—39:

<sup>100</sup> А. Н. Муравьев, Путешествие к св. Местам в 1830 г., СПб., 1848, ч. II, 293—303.

<sup>101</sup> Նույն տեղում, էջ 115:

(1072—1089) *թագավորները որևէ բան են կառուցել ս. Երկրում*<sup>102</sup>, բայց ավելացնում է. «Հովհան Ոսկեբերանի օրինակի արաբերեն մի հիշատակագրության մեջ ասվում է, որ «վրաց թագավորներից մեկը պատվիրել է ավետարանների երկու ձեռագիր և նրանցից մեկը կաղմի մեջ դրված մասունքներով հանդերձ նվիրել Երուսաղեմի ս. Հակոբ վանքին: Այդ գրառումը որոշ չափով ապացուցում է Տիմոթէի (իմա՛ Տիմոթեոս Գաբաշվիլու—Պ. Չ.) խոսքը»<sup>103</sup>:

Ի տարբերություն մնացած հետազոտողների, Ա. Յագարելին, անդրադառնալով վանքի՝ վրացիներին պատկանելու հարցին, որի մասին 1883 թ. Երուսաղեմում եղած ժամանակ ասել են նրան թե՛ հրեաները, և թե՛ հույներն ու արաբները, նա գրում է. «Բայց անկասկած է, որ վրացիները XIII դ. սկսած այլևս չեն ապրել այդ վանքում, այլ այդ ժամանակ այնտեղ բնակվում էին հայերը...»<sup>104</sup>: 1883 թ. վանքը դիտելու ժամանակ ես նրանում վրացական հնություններ չգտա. բյուզանդական ոճի երեք նավերով ու գմբեթով գլխավոր տաճարը միանգամայն թարմ տեսք ունի, ինչպես և այլ վանական շինություններ՝ ամբողջովին սպիտակեցված է, սվաղված և մաքրադարձված: Այն նկարադարձված է ոչ վատ, որմնանկարչությունը ևս նոր է...»<sup>105</sup>:

Ահա այս երկու հեղինակների աշխատությունների միջոցով Տ. Գաբաշվիլու հաղորդումը մտել է գիտական լայն շրջանառության մեջ: Բոլոր ուսումնասիրողները հղում են նրանց աշխատությունները և գրում Գիորգի կյուրապաղատի կամ թագավորի կողմից ս. Հակոբյանց վանքի կառուցման կամ հիմնադրման մասին<sup>106</sup>, թվագրելով այն Գիորգի I (1014—1027

<sup>102</sup> А. А. Цагарели, Памятники грузинской старины... էջ 117—118.

<sup>103</sup> Նույն տեղում, էջ 118: Անդրադառնալով այնուհետև Մուրավյովի այն տեղեկությանը, թե ինքը փաստաթուղթ է տեսել պատրիարքարանում, գրում է. «Ես 1883 թ. շեմ տեսել այդ վավերագիրը և չգիտեմ, գոյություն ունի՞ այն, թե՛ ոչ»: Բնական է, որ Ա. Յագարելին Երուսաղեմում հետամուտ պիտի լիներ այդ փաստաթղթի հայտնաբերմանը, սակայն, ինչպես իր վկայությունից է երևում, նրա փնտրտուքները անարդյունք են մնացել:

<sup>104</sup> Նույն տեղում:

<sup>105</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>106</sup> T. Tobler, Նշվ. աշխ., I. էջ 358: ელდარ მამისთვალიშვილი, ბერნარდ ფონ ბრაიდენბახი პალესტინაში მყოფი ქართველების შესახებ, „მაცნე“ ისტორიის... სერია, 1975, № 3, էջ 78, ժան. 18:

Մի շարք ուսումնասիրողներ, խոսելով ս. Հակոբի հիմնադրման մասին, այն թվագրում են XI դարով (1072—1088) և հղում Մ. Չամչյանի «Հայոց պատմությունը»: Մ. Չամչյանի «Հայոց պատմության» մեջ, սակայն, նման տեղեկություն չկա: Թյուրիմացությունը ծագել է հետևյալ կերպ. Մ. Թամարաշվիլին իր «վրաց եկեղեցին սկզբից մինչև



հրովարտակաները: Այստեղ հիշատակված են ինչպես հայկական ս. Հակոբը (Սիրոն լեռան վրա), այնպես էլ «վրացական ս. Հակոբը»՝ Հարության տաճարում<sup>110</sup>: Հարության տաճարի ս. Հակոբ Ալփեսի վանքին, իրոք, ինչպես ճանապարհորդներն են վկայում, տիրել էին հայերը: Այդ վանքի մասին խոսելիս, որ երբեմն անվանվում է նաև եկեղեցի, Արսեն Սուխանովը գրում է. «в той церкви служат армяне: тут два престола. А ныне называют ту церковь Якова брата Божия. А из той церкви на восток, лестница вниз от церковного мосту даже до низу 11 ступеней... то место держит патриарх Иерусалимский, а наперед сего было за Иверы»<sup>111</sup>.

Այստեղից պարզ է, որ վրացական ս. Հակոբը, որին մի ժամանակ հայերն էլ են տիրացել և որն այնուհետև անցել է հունական եկեղեցականներին, շփոթվել է Սիրոնի վրա հայկական թաղամասում գտնվող հայկական ս. Հակոբյանց վանքի հետ և վրացական հայտարարվել նաև վերջինս: Այդ շփոթը կամ հունական եկեղեցականների կողմից հորինված պատումը նպատակ է ունեցել, վրացական հայտարարելով, յուրացնել մնացած վրացական հնությունների հետ նաև հայկական ս. Հակոբը, որին հույները ընդհուպ հասել էին 1658—1659 թթ. և որը, սակայն, 18-ամսյա հունական տիրապետությունից հետո կրկին վերադարձվել է հայկական պատրիարքությունը<sup>112</sup>:

Ասվածից պարզ է, որ Տ. Գաբաշվիլու հաղորդումը վերաբերում է Հարության տաճարի Հակոբ Ալփեսի վանքին, բայց, ժամանակի մտայնությունը հետևելով, Գաբաշվիլին այն վերագրել է սրբոց Հակոբյանց հայկական վանքին: Որ սա միայն ենթադրություն չէ, այլ իրողություն, հաստատվում է նաև այլ սկզբնաղբյուրներով: Տ. Գաբաշվիլու՝ ս. Հակոբի մասին հաղորդման մեջ նշվում է նաև այն մասին, որ ժամանակակիցները «ասում են, թե Վրաստանի թագավորների փողերանոցը այս մեծ վանքում է եղել»<sup>113</sup>: Վերջերս լույս ընծայած մենագրության մեջ Վ. Չաչանիձեն գրում է, թե Իտալիայում աշխատելու ժամանակ (1945—1950 թթ.) Վատիկանում աստվածաբանության դոկտոր, վրացագետ Միքայել Թարխանիշվիլին իրեն հայտնել է, որ գոյություն ունեն հետաքրքիր

<sup>110</sup> Прокопий Назианзин Арабоглу, Попируемый Иерусалим (ППС, т. XIX, вып. I, СПб., 1904, էջ 299).

<sup>111</sup> Проскинитарий Арсения Суханова (ППС, т. VII, вып. III, էջ 143).

<sup>112</sup> Վահրամ Կեօֆեան, Հայ երուսաղեմը դարերու մէջէն, Երուսաղեմ, 1965, էջ 80—82:

<sup>113</sup> Գ. Գաբաշვილი, მიმოხლვა, էջ 78:



փաստեր թ՛ամար թագահու դին Վրաստանից Երուսաղեմ տեղափոխելու  
 մասին և մասնավորապես, կա այդ մասին վկայող մի փաստաթուղթ Վա-  
 տիկանի արխիվային ֆոնդերից մեկում, որը դեռևս հայտնի չէ գիտական  
 աշխարհին: «Նրանում նշվում է, որ մոնղոլների՝ Վրաստան կատարած  
 արշավանքներից առաջ թ՛ամար թագահու որդի երիտասարդ Գիորգի Լաշա  
 թագավորը կատարել է իր մորը տված խոստումը՝ տեղափոխել թ՛ամարի  
 մասունքները և թաղել Երուսաղեմի մոտի վրացական վանքերից մեկում:  
 Թագահու մասունքների հետ միասին Վրաստանից տարվել են արքունի-  
 քի գանձերը և թաքցվել վանքում»<sup>114</sup>: Վ. Ի. Չաչանիձեի աշխատության  
 մեջ բերված է XIII դարի սկզբի խաչակիր ասպետներից մեկի լատիներեն  
 նամակը, ուսերեն թարգմանությամբ հանդերձ<sup>115</sup>, որտեղ իրոք ասվում է  
 թե «Խորապես հարգելով իր մոր ցանկությունը, թագավորը մտադիր է  
 թաղել նրան սուրբ քաղաքում անհավատների համաձայնությամբ կամ  
 հակառակ նրանց»<sup>116</sup>:

Այս փաստի հավանականությունը անդրադարձել է նաև ակադ. Շալ-  
 վա Ամիրանաշվիլին և վավերական ճանաչել այն<sup>117</sup>: «Գիորգի Լաշան  
 կատարել է մոր վերջին ցանկությունը, օգտվելով խաչակրաց արշավանք-  
 ներին մասնակցող ֆրանսիացի ասպետների օգնությունից, մոր մասունք-  
 ները տեղափոխել է Երուսաղեմ և թաղել Հարուխյան տանառում՝ Քրիստո-  
 սի գերեզմանի մոտ»<sup>118</sup>:

Անկախ վերոհիշյալ լատիներեն նամակի վկայությունների ճշգրտու-  
 թյան աստիճանից, մի բան միայն պարզ է, որ Տ. Գաբաշվիլու հաղորդ-  
 ման մեջ եղած Գիորգի թագավորին պիտի նույնացնել Գիորգի IV Լաշայի  
 հետ և ոչ Գիորգի I, Գիորգի II կամ Գիորգի III թագավորների, ինչպես  
 այդ արել են բոլոր նախորդ հետազոտողները, և վրացական ս. Հակոբի  
 վանքի կառուցումը թվագրել XIII դարի I քառորդով:

114 В. И. Чачанидзе, Петр Ивер и археологические раскопки грузинского монастыря в Иерусалиме, Тбилиси, 1977, էջ 31.

115 Նույն տեղում, էջ 32—34:

116 Նույն տեղում, էջ 34: Նամակը, որի վրա թվականը նշված չէ, ըստ Շ. Լոմսաձեի  
 կարծիքի, (բաժանում է նաև Վ. Չաչանիձեն) պետք է թվագրել 1220—1222 թթ.:

Յ. Լոմսաձե, მიხეილ თამარაშვილი., 1964, էջ 35: В. И. Чачанидзе, նշվ. աշխ.,  
 էջ 34):

117 „საბჭოთა ხელოვნება“, 1961, № 4, էջ 65:

118 Տե՛ս В. И. Чачанидзе, նշվ. աշխ., էջ 35 (ընդդ. մերն է—Պ. Չ.): Գիորգի  
 Լաշայի մասին եղած մի շարք ավանդությունների և նրանց աղբյուրների մասին  
 տե՛ս Կ. Կեքელიძე, ახალი ლიტერატურული წყაროები ლაშა გიორგის ისტორიისათვის,  
 „გვიუღებო ძველი ქართული ლიტერატურის ისტორიიდან“, I, თბ., 1956, էջ 283—299:

Այսպիսով, իր լրիվ բացատրությունն է գտնում Տ. Գաբաշվիլու հաղորդումը և, հանձին նրա, մենք տեսնում ենք մի դիտնականի, որին արդեն հայտնի են եղել այն փաստերն ու ավանդությունները, որոնք միայն վերջերս են հայտնաբերվում ժամանակակից հետազոտողների կողմից:

Ի վերջո, Տ. Գաբաշվիլու ուղեգրության առիթով պետք է շոշափվի Լ. Մելիքսեթ-Բեկի կատարած մի հատվածի հայերեն թարգմանության մեջ սպրդած վրիպումների խնդիրը, որոնք աղավաղել են բնագրի իմաստը և թյուրընկալումների աղբյուր դարձել: Լ. Մելիքսեթ-Բեկի թարգմանության մեջ կարդում ենք. «Կոստանդնուպոլսից նավով անցա կաթոլիկների եկեղեցին... (հայերն) ինձ մոտեցան և ասում էին, որ ֆրանկներն ու հայերը կնունք չգիտեն: Պետք ունին կրկին մկրտության, և մենք սրա դեմ ելանք»<sup>119</sup>:

Թարգմանիչը այս հատվածը ծանոթագրում է. «Անհասկանալի է, թե ո՞ր կնունքի մասին է խոսքը, կամ գուցե «կոնֆիրմացիայի»<sup>120</sup>: Տ. Գաբաշվիլու բնագրում այդ հատվածը հետևյալ տեսքն ունի. «մյն Կոստանդնուպոլսից նավով անցա կաթոլիկների եկեղեցին... (հայերն) ինձ մոտեցան և ասում էին, որ ֆրանկներն ու հայերը կնունք չգիտեն: Պետք ունին կրկին մկրտության, և մենք սրա դեմ ելանք»<sup>121</sup>: Այնտեղ [Կ. Պոլսում] եղած ժամանակ մենք լսեցինք, որ արտաքսել են պատրիարք Կիրիլին և [նրա տեղը] նստել է Կալինիկեն: Շուտափույթ նավակ նստեցի և գնացի կաթոլիկ եկեղեցին ու տեսա, որ եկեղեցական հայերը և հարուստ աշխարհականները հավաքված էին ու ձեռնադրում էին Կալինիկեին [պատրիարքական աթոռին]: Եվ ես հարցրեցի պատճառը, թե ինչի համար են արտաքսել Կիրիլին: Նրանք պատասխանեցին, որ իբր նա [Կիրիլը] ասում էր, թե ֆրանկներն ու հայերը կնունք չունեն, նրանց պետք է վերստին կնքել, դրա

<sup>119</sup> Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրներ..., Գ, էջ 113:

<sup>120</sup> Նույն տեղում, էջ 115:

<sup>121</sup> Գ. Գաբաշվիլու, Միմոսլո, էջ 58:

համար էլ մենք [իմա՛ Կալինիկեի կողմնակիցները—Պ. Չ.] դրան դեմ  
ելանք և արտաքսեցինք: Երբեք ես չէի լսել այս»<sup>122</sup>:

Ինչպես տեսնում ենք, Տ. Գաբաշվիլու բնագրում միանգամայն այլ  
բան է ասված, և Մելիքսեթ-Բեկի թարգմանությունը պետք է սրբագրել:

---

<sup>122</sup> Գ. Գաբաշվիլո, «Պատմություն», էջ 58: Ս.յդ իրադարձությունների մասին մանրա-  
մասին տե՛ս *А. П. Лебедев*, История греко-восточной церкви под властью турок  
от падения Константинополя (в 1453 г.) до настоящего времени, т. I, Москва,  
1896, էջ 318—322:

«ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ»

Իոնա Գեդեանիշվիլու երկը գրվելուց անմիջապես հետո իր վրա է բեռնել ժամանակակիցների ուշադրությունը, հրապարակվել հեղինակի մահվանից քիչ անց (1852 թ.) և ունեցել ավելի ուսերեն թարգմանություններ (հատվածական), քան որևէ մի այլ վրացական ուղեգրություն: Չնայած այդ ուշադրությանը, սակայն, ինչպես Իոնա Գեդեանիշվիլու կենսագրությունը, այնպես էլ նրա գործունեության պատմությունն ու «Շրջագայությունը» առ այսօր մասնավոր ուսումնասիրման նյութ չեն դարձել: Այդ է պատճառը, որ վրաց ուղեգրական ու աշխարհագրական կամ ընդհանուր մատենագրության պատմությանը նվիրված աշխատություններում նրա մասին տրվում են միայն հակիրճ, հանրահայտ տեղեկություններ: Իոնա Գեդեանիշվիլու ուղեգրությունը լիովին արժանի և կարոտ է ինչպես մասնավոր ուշադրության, այնպես էլ հատուկ ուսումնասիրման:

Իոնա Գեդեանիշվիլին (աշխարհական անունը՝ Իոանե=Հովհան) ծնվել է 1737 թվականին, զորահրամանատար Գաբրիել Գեդեանիշվիլու ընտանիքում<sup>1</sup>: Դեռևս 16 տարեկան հասակում (1753 թ.) նա Անտոն I կաթողիկոսի կողմից ձեռնադրվում է սարկավազ, իսկ 1756 թ.՝ Անտոն I-ին Ռուսաստան արտաքսելու ժամանակ, նրա հետ տեղափոխվում է նաև Իոնա Գեդեանիշվիլին:

Նա վրաստան է վերադարձել կրկին Անտոն I-ի հետ՝ 1763—1764 թթ. և նշանակվել ս. Խաչ վանքի վանահայր: 1772 թ. Անտոն I-ին Ռուսաստան ուղեկցողների մեջ էր նաև վանահայր Իոնան<sup>2</sup>:

<sup>1</sup> „მიმოხულა ანუ მგზავრობა იონა გუისის მიტროპოლიტისა“, ტფ., 1852, էջ 1.

<sup>2</sup> Грамоты и другие исторические документы XVIII столетия относящиеся к Грузии, т. I, под редакцией А. А. Цагарели, СПб., 1891, էջ 370; კ. კეკელიძე, ქართ. ლიტ. ისტ., ტ. I, էջ 374.

1776 թ. Ռուսաստանից վերադառնալով նա նշանակվում է Ռուսիի արքեպիսկոպոս<sup>3</sup>, սակայն շուտով, 1780 թ., Հերակլ II-ի պահանջով եկեղեցական ժողովը նրան զրկում է եկեղեցական բոլոր իրավունքներից ու կոչումից և ուղարկում Դավիթ Գարեջայի անապատը: Կիրառված խստության պատճառները դեռևս անհայտ են: Արքայազն Բագրատի մի նշումից ենթադրվել է<sup>4</sup>, թե Իոնան դարձել է Դարեջան թագուհու խարդավանքի զոհը, Գիորգի արքայազնի կողմնակիցներին հարելու պատճառով: Այդ տեղեկությամբ «Դարեջան թագուհին հալածում էր իր խորթ զավակ Գիորգիին ու Գիորգիի կուսակից թավադներին ու ազնվականներին ստորացնում... իսկ հոգևորականներից ոմանց իրենց թեմերից զրկեց և ոմանց աքսորեց, որպիսիք էին Միքայել Տփխիսեցին, նկարիչ Իվանեի որդին ու Իոնա Գեդևանիշվիլին, վարդապետ Գայող Թաղաշվիլին՝ այս արտակարգ ուսյալ անձնավորությունը, և ուրիշ շատեր, որոնց սովորության պատճառով լռում եմ»<sup>5</sup>:

Հավանականությունից զուրկ չէ նաև այն ենթադրությունը, թե Իոնայի նման խիստ պատժի ենթարկվելու համար բավական չէր նրա՝ Գիորգիի խմբին հարելու պարագան: 1780 թ. նրա նկատմամբ կիրառված հալածանքները մտածել են տալիս, թե հնարավոր է Իոնայի մասնակցությունը նախապատրաստվող հեղաշրջման փորձին, ինչպես կարծում են որոշ ուսումնասիրողներ<sup>6</sup>:

Ի. Գեդևանիշվիլին Դավիթ-Գարեջայի անապատում երկար չի մնում: Շուտով նա գաղտնի տեղափոխվում է Արևմտյան Վրաստան, սակայն նրան կրկին վերադարձնում են Քարթլի և պահում Թիֆլիսի մոտ գտնվող Քաշվեթի եկեղեցում: Ի. Գեդևանիշվիլին, այնուամենայնիվ, կարողանում է անցնել Ախալցխա, որտեղից փաշայի հովանավորությամբ ու աջակցությամբ ճանապարհվում է Կոստանդնուպոլիս: Այդ մասին տեղեկանում է վրաց կաթողիկոս Անտոն I-ը և նամակով Կոստանդնուպոլսի պատրիար-

<sup>3</sup> Հերակլ II-ի 1776 թ. հրովարտակը տե՛ս «მიმოსულა ანუ მგზავრობა»· էջ 5—6, ծան. 11: Ի դեպ, պահպանվել է Իոնայի գլխավորությամբ 1779 թ. դեկտեմբերի 18-ին կազմված և նրա ստորագրությունը կրող դատական մի վճիռ, որը վավերացվել է կաթողիկոսի կողմից 1780 թ. հունվարի 5-ին: Տե՛ս «ქართული სამართლის ძეგლები», ტ. V სასამართლო განჩინებანი (XVIII ს.), ტექსტები გამოსცა და შენიშვნები დაურთო პროფ. ი. დოლიძემ, თბ., 1974, էջ 93:

<sup>4</sup> შამია დარჩია, გაიოზ რექტორი, თბ., 1972, էջ 74:

<sup>5</sup> „მასალები საქართველოს ისტორიისათვის, შეკრებული ბატონიშვილი დავითისა და მისი ძმებისა“, ტფ., 1905, էջ 55:

<sup>6</sup> Л. И. Маруашвили, Вахушти Багратиони, его предшественники и современники, Москва, 1956, էջ 119.

քից պահանջում շկատարել Ի. Գեդևանիշվիլու խնդրանքը<sup>7</sup>: Ինչպես կուհել էր Անտոն I-ը, նա նպատակ ուներ վերականգնել տալ իր հոգևոր կոչումները և նշանակվել Ախալցխայի թեմի առաջնորդ: Չնայած Անտոն I-ի զգուշացմանը, Ի. Գեդևանիշվիլին կարողանում է Կոստանդնուպոլսի պատրիարքից վերստանալ իր կոչումները և պատրաստվում է ճանապարհվելու Անտիոք ու Ալեքսանդրիա՝ տեղի պատրիարքների կողմից ևս իր կոչումները վերականգնելու համար: Այդ ևս նրան հաջողվում է, և նա Բալկանյան թերակղզու վրայով բռնում է վերադարձի ճանապարհը, անցնում է Վենետիկ, Ավստրիա, Լեհաստան, Մոլդավիա և 1789 թ. վերադառնում Ռուսաստան: Այնտեղ նա երկու տարի և երեք ամիս մնում է Կիևոպեչորյան մայրավանքում, իսկ այնուհետև (1795 թ.)<sup>8</sup> փոխադրվում Մոսկվա, ապրում է Չուգովո վանքում, որտեղ ստանձնում է Ռուսաստանում լույս տեսնող վրացական հրատարակությունների գրաքննիչի պաշտոնը: Նրա արտոնմամբ լույս են տեսել մի շարք գրքեր, հիմնականում հոգևոր բնույթի<sup>9</sup>: Առայժմ հայտնի են հետևյալ հրատարակությունները. 1808 թ.

<sup>7</sup> Անտոն I-ի նամակը պահպանվել է Վրաց. ՍՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտի Н—2510 ձեռագրում՝ թ. 12ր:

<sup>8</sup> თორნიკე ჭყონია, ახალი მასალები იონა გედევანიშვილის ბიოგრაფიისათვის, „ლიტერატურული ძიებანი“, II, 1944, էջ 243: *Մեզ հաջողվել է հայտնաբերել Իոնայի ինքնագիրը նամակը, որով նա թուլյատվութիւն էր խնդրում Մոսկվա տեղափոխվելու համար: Ահա այն.*

Снятейнейший граф! Милостивый государы!

Вашему сиятельству известно в каком гибельном состоянии находится наше отечество, места, составлявшие мою епархию, разорены до основания, так, что ни одного села, ни деревни не осталось, и будучи сам почти изгнан принужден был себе искать места, где бы остатки дней моих мог проводить: проехавши все святые места наконец достиг Молдавии, где обретши надежное пристанище, мнил, что уже останусь спокойным. Но смерть светлейшаго князя лишила меня онаго, кем я был взыскан, он определил мне получать из дивана жалованье давши при том для жительства и монастырь. Но как я по человечеству должен располагать и следующие краткия дни моей жизни: то прибегая к человеколюбию Вашего сиятельства осмеливаюсь всенижайше просить о исходотайствовании мне у милосердой монархини для пропитания жалованья и дозволения жить в Москве. Снятейнейший граф! Воззри милостиво на сие мое нижайшее прошение и удостой милостивый Государь и меня носить твои милости да благословлю и прославлю имя твое до конца дней моих.

Снятейнейший Граф! Милостивый Государы! Вашего сиятельства! Нижайший слуга и богомолец смиренный Иона митрополит Грузинский. საქობოტ-გლობ მიტროპოლიტი მროველი იონა (подпись). (АВПР, ф. Сношения России с Грузией, 1774—1804, опись 110/2, д. 18, л. 182а-б).

հրատարակվել է մի «Տոնական» (სადღესასწაულო), ესտ თիտղոսա-  
 թերթի վրա եղած վկայության՝ «գորահրամանատար Գաբրիելի որդի արք-  
 եպիսկոպոս Իոնա Գեդևանիշվիլու գործակցությանը և գրաքննությանը»<sup>10</sup>։  
 1815 թ. հրատարակվել է մի «Աղոթագիրք» (110 էջ), որը լրացումներով  
 (353 էջ) վերահրատարակվել է նաև 1820 թ.<sup>11</sup>։

Դեռևս 1792 թ. ռուսական կառավարությունը Ի. Գեդևանիշվիլուն թո-  
 շակ է նշանակում (տարեկան 600 ռ.) «За усердие к России»: 1814 թ.  
 նրա թոշակն ավելացվում է մինչև 1000 ռ., 1817—1819 թթ. նա ստա-  
 նում էր արդեն 2000, իսկ 1819 թ.՝ ցմահ՝ 4000 ռ.<sup>12</sup>։

Պահպանվել է Դարեջան թագուհու 1806 թ. հունվարի 8-ի Իոնային  
 գրված նամակը, որից տեղեկանում ենք, թե մինչ այդ Իոնան վկայություն  
 էր խնդրել նրանից՝ իր եղբոր և ազգականներից մեկի իշխանական ծա-  
 գումը հաստատելու համար։ Այդ նամակով Դարեջանը կատարում է  
 Իոնայի խնդրանքը<sup>13</sup>։

Ի. Գեդևանիշվիլին մահացել է Մոսկվայում 1821 թ. օգոստոսի 4-ին,  
 84 տարեկան հասակում։ Պահպանվել է մահվանից հետո նրա ունեցվածքի  
 գույքագրման ցուցակը, որից պարզվում է, թե նա պարզևատրված է եղել  
 նաև ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանով<sup>14</sup>։ Այդ, անշուշտ, վկա-  
 յում է Ռուսաստանի համար նրա կատարած ինչ-որ, առայժմ ոչ հայտնի,  
 ծառայությունների գնահատման մասին։

Իր ուղեգրությունը, որ նա վերնագրել է «Зпутешествие, есє օգո  
 მიმოსვლა ანუ მგზავრობა, ქმნილი გედევანოვ სარდალ გაბრიელის ძის  
 იონა მიტროპოლიტისაგან» (Պուտեշեստվիե, այսինքն՝ Շրջագայություն  
 կամ ճանապարհորդություն, հորինված Գեդեվանով հրամանատար Գաբ-  
 րիելի որդի Իոնա արքեպիսկոպոսի կողմից) մեզ է հասել մի շարք ընդ-  
 օրինակումներով, որոնք ցրված են Սովետական Միության մի շարք գրա-  
 դարաններում և ձեռագրատներում։ Օրինակներ են պահպանվել Վրաց.  
 ՍՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտի ֆոնդերում<sup>15</sup>, Արևելագիտության ինս-

<sup>9</sup> „ქართული წიგნი,“ ბიბლიოგრაფია, ტომი პირველი, 1629—1920, თბ., 1941, էջ  
 83—84. 87:

<sup>10</sup> նույն տեղում, էջ 84:

<sup>11</sup> նույն տեղում, էջ 87:

<sup>12</sup> თ. ქეონია, ზეპ. აქს., էջ 244:

<sup>13</sup> დოკუმენტები საქართველოს სოციალური ისტორიიდან, II, ბატონყმური ურთიერთო-  
 ბა (XV—XIX სს), ნ. ბერძენიშვილის რედაქციით, თბილისი, 1953, էջ 224:

<sup>14</sup> თ. ქეონია, ზეპ. აქს., 245:

<sup>15</sup> S—75, H—592.

თითოთი ლენინგრაფიან რაქანამონებრამ (E—56)<sup>16</sup>, შოსკვავი ლენინი  
ანქან გრაფარანი დეოაგრასკან რაქანამ<sup>17</sup> ლ აქენ: ბნენაგერ ორინაკერ,  
რსთ ღ. შარადხი, გათქომ ზ ქორინგოქნერი არხიქომ<sup>18</sup>: ნიღეგროქონერ  
აოაჯაქანომ ნი ბანოქაგროქონენებრომ ზრათარაკელ ზ ოქათონ ბოსხ-  
ქიანინ<sup>19</sup>: შაქაგროქონერ ლათარქელ ზ აქომ ქრავ. *სსზ ღს ყ. ყხეხეღხი*  
ანქან *ღეოაგრერი* ინათითოთომ აქაქომ *S—75* დეოაგრიგ<sup>20</sup>:

ო. ბოსქიანის ზრათარაკოქონიგ, აქე ხსკ თარომ, ლათარქელ  
ღ რნაგერი ზათქაბაკან ოოსერენ შარგამანოქონერ<sup>21</sup>: ბინაკი ღანა-  
აქარგორქონერ მოსასათანომ ნქარაგროღ აოანდინ ზათქაბენ  
ქოქს ხნ თხხელ ო. ბოსქიანის ოოსერენ შარგამანოქამერ<sup>22</sup>: ში ქოქერ  
აქელქ რნგარბაკ ზ (ბრ მხე აონელიქ ნაკ ო. ბოსქიანის ლათარადრ)  
შ. ღანაქქოქოქოქოქონერ, ორ სქაქომ ზ ქხენსაკინ ქერაქერიღ  
ზათქაბიგ ლ ზასნომ მხინღე ქერიგ<sup>23</sup>: სქნ თარქერიქომ ზ ს. ბერიდენიქი  
(ბერიდენიქიქი) ლ ო. ბოსქიანის შარგამანოქონენებრიგ:

<sup>16</sup> P. P. Orbeli, Грузинские рукописи Института востоковедения, вып. I, М.—Л., 1956, էջ 85.

<sup>17</sup> ზინე 186, ქრავერენ დეოაგერ № 5, էჯ 6ა—7ა, თხ'ა ნაკ ლ. ქუთათელაძე, ვ. ო  
ლენინის სახელობის ლენინის ორდენოსანი სსრკ სახელმწ. ბიბლიოთეკის ქართულ ხელნა-  
წერთა აღწერილობა, „ს. ჯანაშიას სახელობის სახელმწიფო ლუზუშის ნომბე“, 1953, ტ.  
XVII-B.

<sup>18</sup> გ. შარაძე, არქეოგრაფიული ძიებანი, თბ. 1973, էჯ 108—109.

<sup>19</sup> ზიმოსულა ანუ მგზავრობა იონა რუისის მიტროპოლიტისა, ტფ., 1852.

<sup>20</sup> სეხელი ზ, ორ მხინღე აქომ ოქათონ ბოსქიანის 1852 ქ. ზრათარაკოქონერ მნომ  
ღ მხაკერ: სქე აქსათანენ აქომ ზანდნარარქაბ ზ ქრავ. *სსზ ღს ყ. ს. ყხეხეღხი*  
ანქან დეოაგრერი ინათითოთი აქსათაკიგ სნნა ღარაქქოქონ, ლ საქასელი ზ, ორ მ-  
თაკა ბამანაკნებრომ ოსომნასიქოქნერი თრამაგროქონ თაკ ლერიქ ქრავ მათხ-  
ნაგროქონ აქე ზოჯარბანი რნაგერი ლ: სნერასიქ ზოქაბერ თხ'ა ა. ჰაბაშვილი,  
ზოგიერი ოცნობა ონა გედევანიშვილის ოცოვრებისა ლა ნოღვაწეობის შესახებ, „მაცნე“  
ენისა ლა ლიტერატურის სერია, 1979, № 3, էჯ 14—24.

<sup>21</sup> «Извлечения из Путешествия грузинского митрополита Ионы по разным городам и местам Азии, Европы и Африки», перевод Н. Берзенова, «Закавказский вестник», 1852, № 11, 13, 15, 16, 28, 32, 35: *სიქნერ ზრათარაკიქელ ზ ნაკ აოანდინ გრქოქიქი ზხასიქი ქერიანაგროქი*. «Посещение Новороссийского края Ионою митрополитом Руисским (в Грузии)», отрывок из полного его Путешествия по Востоку и России, с 1790 по 1799 год, изданного на грузинском языке, с нужными примечаниями... Платоном Иосселианом. Перевод Н. Берзенова, Тифлис, 1852, 26 стр.

<sup>22</sup> «Путешествие по Новороссийскому краю Ионы митрополита Руисского (1791-й год), перевод с грузинского, сообщил П. Иосселиан д. ч. о. «Записки одесского общества истории и древностей», том III, Одесса, 1853, 556—563.

<sup>23</sup> М. Дж[анашвили], Из путевых заметок митрополита Ионы, газ. «Кавказ», 1901, №№ 196, 197.



Ուղեգրության հայերին վերաբերող հատվածները հայերենի է փոխադրել պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը<sup>24</sup>:

Ի. Գեղեկանիշվիլին իր ուղեգրության շարադրանքն սկսել է այն պահից, երբ ինքը եղբոր ու բարեկամների աջակցությամբ կարողացել է դուրս գալ Թիֆլիսից և ճանապարհվել Մցխեթ: Ապա նա հասել է Սուրամ, իսկ այնտեղից այլ ճանապարհորդների հետ, ուղևորվել է Ախալցխա: Տեղիս փաշան, տեղեկանալով նրա ժամանման մասին, նրան իր հովանավորության տակ է վերցնում և առ ժամանակ հետո ճանապարհում Կոստանդնուպոլիս գնացող վաճառականների հետ՝ Արդվինի կառավարչին ուղղած հանձնարարական-նամակով ու ուղեկցողով: Դուրս գալով Ախալցխայից, 10 վերստ հեռավորության վրա գտնվող մի գյուղում Իոնան հրաժեշտ է տալիս իրեն ուղեկցող բարեկամներին և եղբորը՝ Գիորգիին<sup>25</sup>, ճանապարհվում Արտանուշ, իսկ այնտեղից՝ Արդվին: Այստեղ նա իր ուղեկցի հետ ներկայանում է տեղի կառավարիչ Կարաղայային՝ Ախալցխայի փաշայի եղբորը, նրան հանձնում ունեցած հանձնարարական նամակը: Հեղինակի իսկ բառերով, Արդվինի կառավարիչը «Շուտափույթ իր մոտ կանչեց ազնվական կոչվող ոմն հայի՝ բնիկ Արդվին քաղաքից և հրամայեց. Ինչ-որ անհրաժեշտ է ծովով ճանապարհորդողների համար, բոլորը նախապատրաստիր, ինչպես պահանջում է ինձնից նամակով Ախալցխայի փաշա իմ եղբայրը: Սրան (իմա՛ Ի. Գեղեկանիշվիլուն—Պ. Չ.) կարգին ճանապարհելու համար ամեն ինչ նախապատրաստիր և հենց դու էլ մինչև Խոփա պետք է ուղեկցես»<sup>26</sup>: Արդվինից նրանք հասնում են Խոփա, և Իոնան ծովով, Տրապիզոն և Ունիա քաղաքների մոտով, հասնում է Կոստանդնուպոլիս: Իր ուղեգրության մեջ նա բավական մանրամասն նկարագրում է Կոստանդնուպոլիսը, քաղաքային շինությունները, եկեղեցիները և այլն:

Ինչպես արդեն նշել ենք, Ի. Գեղեկանիշվիլին վերստանում է իր հոգևոր կոչումները Կոստանդնուպոլսի նորընտիր պատրիարք Կիրիլից ու այդ միջոցին այնտեղ գտնվող Երուսաղեմի հունական պատրիարք Աբրահամից, որի մասին պատրիարքները գրավոր հայտնում են վրաց թագավոր Հերակլին և կաթողիկոս Անտոն 1-ին<sup>27</sup>:

Կոստանդնուպոլսից Ի. Գեղեկանիշվիլին ճանապարհվում է Երուսաղեմ: Անցնելով Տենեդոս (Բոխչա-Ադա), Լեմնոս կղզիները, նա որոշում է

<sup>24</sup> Լ. Մելիքսեթ-Բեկ, վրաց աղբյուրներ..., հատ. Գ, էջ 194—196:

<sup>25</sup> შიშობსულა ანუ მგზავრობა, էջ 12:

<sup>26</sup> նույն տեղում, էջ 13—14:

<sup>27</sup> նույն տեղում, էջ 20—21:

այցելել նաև Աթոս და ლემნოსის ოკუპირებულ და აქნათელ: Աթოსში აქცელებულ და ვიზიტორ ქანაქანის სასათაბუჯოების ოკუპირებულ, ორივეს  
სკარაფრიბუჯის რეალური თბილისის სასათაბუჯის  
მეზ<sup>28</sup>: Աთოსის რ. ვილანისვილი ოკუპირებულ და შალისი (ბესალისი),  
ქონდა და შოსლისი, შივილი, რიო კვირისებულ და სასილი რევირ  
(შვილი), ორი სკარაფრიბუჯის თაქი და სასათაბუჯის: შვილი-  
სივირისი ანგნობ და რაფა (ვილი) რევირ და აქნათელის სასათაბუჯ-  
ებულ ბრუსაბელ, ორივეს მნილი და რევირისი მელი ამის: რი ორივეს რი  
კათარ აბელილი სასათაბუჯის რ. ვილანისვილი ანობ და ანთირი, თბილი  
ყათრირისი კვირისი და ქვირისისი ანობ რი სასათაბუჯის ოკუპირებულ, ორი მ-  
სი ანთირისი ყათრირისი ანობ და ქვირისი ბრუსაბელილი ოკუპირებულ<sup>29</sup>:

ქვირისისი ბრუსაბელ, ან ორივეს და აქცელებულ ანთირისი  
ქვირისი, სასათაბუჯის, თბილისისი ბრუსაბელის სასათაბუჯის  
ქვირისისი, ორივეს და ბრუსაბელის ქვირისისი სასათაბუჯის და შვილის-  
კათარისი ანგნობ<sup>30</sup>: შვილი, შვილი კვირისისი ქვირისი სასათაბუჯის და  
რი<sup>30</sup>:

აქნათელ, სასათაბუჯის, ანთირის სასათაბუჯის ან, ორივეს სასათაბუჯის და ოკუპირ-  
ებულ ყათრირისი და «ოკუპირისი ოკუპირისი ქვირისისი»<sup>31</sup>, ოკუპირისი ოკუპირ-  
ისი ანთირისი სასათაბუჯის ქვირისისი ოკუპირისისი ოკუპირისისი, ანთირისი  
ოკუპირისი ოკუპირისისი ანგნობ<sup>32</sup>:

სასათაბუჯის ოკუპირისისი რ. ვილანისვილი ანობ და ათისი და  
ანგნობ შვილი: აქნათელის სასათაბუჯის<sup>33</sup> რევირისი მასისი ანთირისი ან ანობ  
და «აქნათელისი მასისი [ქვირისისი] ანთირისი სასათაბუჯის (ორი და ოკუპირ-  
ისისი), ოკუპირისი ქვირისისი და ანთირისი ოკუპირისისი, ოკუპირისისი ოკუპირისისი  
ქვირისისი, და აქნათელისი ყათრირისისი, ორივეს რევირისისი ანთირისისი ოკუპირისისი  
ქვირისისი და რევირისისი ანთირისისი»<sup>34</sup>:

აქნათელის რ. ვილანისვილი თბილისისი და რევირისისი ოკუპირისისი,  
სასათაბუჯის სკარაფრიბუჯის ქვირისისი, კვირისი ქვირისისი რევირისისი, ოკუპირისისი  
ანთირისი სასათაბუჯის მასისი და აქნათელისი სასათაბუჯის ქვირისისი  
თბილისისი ანთირისისი აქნათელისისი, ანთირისისი ოკუპირისისი: ოკუპირისისი

<sup>28</sup> ანთირისი თბილისისი, ქვირისისი 29—36:

<sup>29</sup> ანთირისი თბილისისი, ქვირისისი 60:

<sup>30</sup> ანთირისი თბილისისი, ქვირისისი 62:

<sup>31</sup> ანთირისი თბილისისი:

<sup>32</sup> აქნათელისი მასისისი ოკუპირისისი კვირისისი ოკუპირისისი:

<sup>33</sup> კ. ხარაძე, ოკუპირისისი გეოგრაფიის ოკუპირისისი, „საქ. სსრ მეცნ. აკადემიის შვილი  
ბე“, ტ. 66, 1972, № 1, ქვირისისი 107:

<sup>34</sup> ოკუპირისისი ანთირისისი ოკუპირისისი, ქვირისისი 69:

հիրենում Ի. Գեղեկանիշվիլուն ցնցում է բնակիչների՝ ֆելլահների, արտակարգ աղքատ վիճակը, նրանց շահագործման սաստկութունը: Նկարագրելով իր տեսած Եգիպտոսը, նա գրում է. «Իսկ այս երկրի բնակիչները գյուղացիներ են, աշխատում են, խիստ աղքատ: Սրանց անվանում են ֆելլահ, որ [նշանակում] է գյուղացի մարդ: Սրանցից բեգերն ու իրենց տերերը բազմաթիվ հարկեր են վերցնում և այս պատճառով նրանք չքավոր են: Եվ ովքեր որ կողոպտում են՝ իրենց տերերը, նրանք շատ հարուստ են, սակայն ընդհանրապես ավելի աղքատ են քան հարուստ»<sup>35</sup>:

Կահիրեից Սինա ճանապարհովող քարավանի կազմում Ի. Գեղեկանիշվիլին հասնում է Սինայի լեռները, շորս ամիս մնում այնտեղ, որից հետո վերադառնում է Կահիրե և Ալեքսանդրիա, նավարկում Հռոդոս և Մորեայով ու Դալմաթիայով հասնում Ֆայում: Իր ուղեգրության մեջ նա Ֆայում հասնելու կապակցությամբ նշում է, թե «Յոթ տարի անցավ և ութերորդ տարին է արդեն, և ես ազատվեցի ծովերով ճանապարհորդելուց»<sup>36</sup>: Այս տեղեկության հիման վրա Պ. Իոսելիանին իրավացիորեն ենթադրել է, որ նա իր ճանապարհորդությունը սկսել է 1783 թ.<sup>37</sup>:

Ֆայումից նա կրկին գնացել է Տրիեստ, այնուհետև Վիեննա, որտեղ, ըստ նրա հաղորդման, նրա գտնվելու ժամանակ մահացել է Հովսեփ կայսրը (1790 թ. փետրվար), մնացել է շորս ամիս և տեղափոխվել Լեհաստան: Այնուհետև նա ճանապարհվել է Լվով և ապա Յասսի, որտեղ, առ ժամանակ մնալուց հետո, հանդիպել է Արևմտյան Վրաստանից ժամանած դեսպաններ Բեսարիոն Գաբաշվիլուն<sup>38</sup>, Սիմոնին և Արևելյան Վրաստանի դեսպաններ Գայոզ վարդապետին<sup>39</sup> ու Սուլխան Թումանովին<sup>40</sup>:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 86—87:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 100—101:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 100, ծան. 74:

<sup>38</sup> Բեսարիոն Գաբաշվիլու գործունեության մասին մանրամասն տե՛ս Յ. Յաքոբովի Զեյնոյի լոբլոմոպոյո՛ր սարժուլե՛ջ, տժ., 1968.

<sup>39</sup> Գայոզ վարդապետի մասին տե՛ս Յաքոբ Ջաբո՛ւ ճաճո՛ւ ճաճո՛ւ, տժ., 1972, յ. յեճեճոճեճ, յարո՛. լոճ. իճ. ի, II, տժ., 1958, Ս. Մ. Մյրաճյաճ, Արմյաճո-գրւզինսկիե յ. յեճեճոճեճ, յարո՛. լոճ. իճ. ի, II, տժ., 1958, Ս. Մ. Մյրաճյաճ, Արմյաճո-գրւզինսկիե յ. յեճեճոճեճ, յարո՛. լոճ. իճ. ի, 1966, յտր. 159—164. Պ. Սուլխանյան, Գայոզ Ռեքտորը և հայ մշակույթը, ՎՍՍՌ ԳՄ հայկական բաժ. «Ալմա-նախ», Թբ., 1962, էջ 438—442:

<sup>40</sup> Սուլխան Թումանյանը (Թումանով, Թումանիշվիլի) XVIII դարի II կեսի վրաց արքունիքում բարձր պաշտոն ստացած հայ գործիչներից է: Նա իր պաշտոնական գործունեությանը զուգընթաց զբաղվել է նաև հայկական ազատագրական շարժման ծավալմանը նպաստավոր լինելու գործով: Մի շարք փաստաթղթեր, որոնք գալիս են լույս սփռելու նրա այս վերջին գործունեության վրա, մենք հայտնաբերել ենք և պատրաստում ենք հրատարակության: Սուլխան Թումանյանի Ռուսաստան կատարած դեսպանագնացության մասին տե՛ս նաև Վ. Մարտիրոսյան, 1783 թ. Գեորգիևսկի դաշնագիրը և հայերը, «Լրագրեր» (հաս. գիտ.), 1978, № 9, էջ 94:

Այդ ժամանակ Յասսիում էր գտնվում նաև Հովսեփ արքեպ. Արղուժյանը: Ի. Գեղեանի շնորհիվ Յասսի էր ժամանել քաղաքի համար պատմական կարևոր իրադարձություններով լեցուն մի ժամանակաշրջանում: Ռուս-թուրքական պատերազմը (1787—1791 թթ.) իր ավարտին էր մոտեցել: Յասսիում էր կնքվելու հաշտության պայմանագիրը, Յասսիում էին հավաքվել ինչպես ռուսական գլխավոր հրամանատարության ու պալատական ներկայացուցիչները, այնպես էլ անդրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք մեծ հույսեր էին կապում թե՛ պատերազմի և թե՛ կնքվելիք հաշտության պայմանագրի հետ՝ իրենց հայրենիքի ազատագրության համար: Յասսիում էր գտնվում նաև «Արարատյան դեսպանը»՝ Ստեփան Դավթի Տեր-Սահակյանը<sup>41</sup>, որը հայ ժողովրդի պաշտոնական ներկայացուցիչն էր ռուսական արքունիքում և Հովսեփ Արղուժյանի հետ միասին աջակցում էր ռուսական հրամանատարության ծրագրերի իրագործմանը<sup>42</sup>, դրա մեջ իրավացիորեն տեսնելով նաև ինչպես տեղի հայերի, այնպես էլ բուն Հայաստանի ազատագրության նախերգանքը:

Յասսիում Ի. Գեղեանի շնորհիվ մի շարք հանդիպումներ է ունեցել Հովսեփ Արղուժյանի հետ. նրանք միասին հրավիրվել են մասնակցելու հաշտության պայմանագրի կնքումից հետո տրված ճաշկերույթին, որին ներկա են եղել օտարերկրյա ներկայացուցիչներ ու թուրքական պատվիրակությունը<sup>43</sup>:

Պայմանագրի կնքումից և ռուս-թուրքական սահմանի որոշումից մեկուկես ամիս հետո, երբ ռուսական հրամանատարությունն ու բարձրատիճան ներկայացուցիչները պատրաստվում էին վերադառնալ Պետերբուրգ, Ի. Գեղեանի շնորհիվ հարցը տնօրինելը հանձնարարում են Հովսեփ Արղուժյանին: «...Գրաֆ Բեզբորոդկոն, — գրում է Ի. Գեղեանի շնորհիվ, — պատրաստվում էր ճանապարհվելու, և եկանք բոլոր հոգևորականներս, հրաժեշտ տվեցինք, և ինձ [հետ կապված խնդիրների հոգալը] հանձնարարեցին հայոց արքեպ. Հովսեփին, [որն ինձ ասաց]՝ քո այստեղ մնալը լավ չէ, արի մեզ մոտ, Ռուսաստանն ավելի լավ է, քան Թուրքիան և սրանց երկիրը: Եվ այս երկիրը թուրքերին է մնալու, քեզ համար Ռուսաստանը գերադասելի է: Եվ ես նրա կամքին հնազանդվեցի: Երբ գնաց, ասաց ինձ՝ քո հրամանագիրը շուտով կգա: Ես խոնարհաբար երկրպագեցի և երկար նրս-

<sup>41</sup> Ж. А. Анаян, Армянская колония Григориополь, Ереван, 1969, էջ 24—25.

<sup>42</sup> Ռուսական զորքերի կազմում պատերազմական գործողություններին մասնակցող հայ կամավորականների մասին տե՛ս М. Г. Нерсисян, Армянские волонтеры в русско-турецкой войне 1787—1791 гг., ՊԲՀ, 1979, № 3, էջ 105—111:

<sup>43</sup> მიძობულა ანუ მგზავრობა, էջ 127.

տեցինք: [Այնուհետև] ելավ և համբույր ու հրաժեշտ տալով մեզ, գնաց Սանկտ-Պետերբուրգ:... Այն բանից հետո, երբ Ռուսաստանի հեծյալ զորքը գնաց Մոլդավիայից, անցավ յոթը ամիս և ութերորդ ամսին՝ դեկտեմբերին, ... ինձ եկավ Եկատերինա Երկրորդի հրամանագիրն ու հրամանը և բավական ճանապարհածախս մինչև Կիև ու ապրուստի միջոց, այսինքն՝ բավական դրամ...»<sup>44</sup>:

Իր ուղևորության մեջ Ի. Գեդևանիշվիլին մանրամասն նկարագրում է Յասսին ու այդ թվականներին այնտեղ տեղի ունեցած իրադարձությունները, մասնավորապես՝ հիշատակում է Իդմայիլ ամրոցի առումից հետո հայերի տեղափոխումն այնտեղից ու Քիլիից, որոնց «բնակեցրին Գրիգորիոպոլսում»<sup>45</sup>:

Ի. Գեդևանիշվիլին իր ճանապարհորդության ընթացքում պատահել է հայերի ու եղել հայկական միջավայրում և ըստ այդմ էլ ուղեգրության մեջ հաճախակի նշում է այդ մասին, սակայն այդ տեղեկությունները կամ մակերեսային են և կամ էլ՝ սոսկ հիշատակություններ, որոնց (ինչպես նաև նրա մնացած շատ հաղորդումների) ուսումնասիրությունը դժվարանում է շարադրման յուրահատուկ մեթոդի պատճառով: Բանն այն է, որ, ինչպես արդեն նշել ենք, նա իր ուղեգրությունը շարադրել է 1805—1810-ական թվականներին, այսինքն՝ ճանապարհորդությունը սկսելուց մոտ 22—28 տարի հետո, Մոսկվայում: Ուղեգրության ուշադիր ընթերցումից կարելի է ենթադրել, որ նա ճանապարհորդության ժամանակ կամ գրառումներ չի կատարել և հետո ամբողջովին շարադրել է սոսկ հիշողությամբ, և կամ էլ, եթե անգամ ինչ-ինչ գրառումներ ունեցել է, ապա դրանք եղել են անխնամ ու շատ համառոտ:

Շարադրանքի ընթացքում նա որևէ թվական չի նշում, բացի նրանից, որ թվարկում է, թե այս կամ այն քաղաքից քանի օրում նա հասավ մյուսը և կամ ինչքան (օր, ամիս) մնաց այս կամ այն քաղաքում: Եթե հեղինակը կարողանար այդ սկզբունքը գոնե հետևողականորեն կիրառել, ապա ուսումնասիրողի գործը համեմատաբար դյուրին կլիներ: Սակայն բազմիցս ոչ միայն չի նշում այդ մասին, այլև երբեմն ուղեգրության մեջ հանդիպում են նաև հակասություններ ու անախրոնիզմներ<sup>46</sup>: Առանց այդ ամենի

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 128, 135:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>46</sup> Իրականությունը չի համապատասխանում, մասնավորապես, նրա այն հաղորդումը, թե իր՝ Վիեննայում գտնվելու ժամանակ վախճանվել է Հովսեփ կայսրը (1780—1790 թթ.): Ինչպես կարող էր նա 1790 թ. լինել Վիեննայում, երբ 1789 թվականին արդեն հասել էր Յասսի և 1790 թվականին նշանակվել էր, իր իսկ հաղորդմամբ, Պանկրատի վանքի վանահայր (էջ 103, 113—114):

վերացման ու ժամանակագրության հարցի ճշգրտման, ինչ խոսք, դժվար է ձեռնամուխ լինել ուղեգրության հաղորդումների ուսումնասիրմանը և, միևնույն ժամանակ՝ առանց բնագրի մանրամասն հետազոտության անկարելի է ժամանակագրության ճշգրտումը:

Ի. Գեղեկանիշվիլու ուղեգրությանն անդրադարձած տարբեր հետազոտողներ ճանապարհորդությունը սկսելու տարբեր թվականներ են մատնանշում: Այսպես, Ալ. Յագարելին գրում էր. «Իոնան թողել է Վրաստանը 1783 թ. և 7 տարի ճանապարհորդել Արևելքի սուրբ տեղիներ»<sup>47</sup>: Ըստ Կ. Խարաձեի «Իոնա Գեղեկանիշվիլին ճանապարհորդությունը սկսել է 1782 թ. հետո և այն տևել է տասը տարուց ավելի»: Հողվածի ուսերեն ամփոփման մեջ նա կոնկրետացնում և առաջարկում է 1782—1793 թթ.<sup>48</sup>: Ճանապարհորդությունը սկսելու որևէ թվական առաջարկելուց ձեռնպահ է մնացել Լ. Մարուաշվիլին, որը նույնպես անդրադարձել է Ի. Գեղեկանիշվիլու ուղեգրությանը<sup>49</sup>:

Մեր հետազոտություններից պարզվել է, որ իրոք Ի. Գեղեկանիշվիլին ճանապարհորդության է մեկնել 1783 թ. գարնանը և 1789 թ. գարնանը նա գտնվում էր Յասսիում: 1790 թ. գարնանը նա դիմում է Սերգեյ Լազարևին և հիշեցնում, թե ինքը մեկ տարի է գտնվում է այդտեղ, սակայն ապրուստի միջոց իրեն դեռևս չի հատկացվել<sup>50</sup>: Ինչ վերաբերում է ճանապարհորդության ընթացքին, ապա պարզվում է, որ նա Ախալցխայից մեկնելով 1783 թ. գարնանը, մայիսին եղել է Արտանուշում, հունիս—օգոստոս ամիսներին՝ Կոստանդնուպոլսում, 1784 թ. օգոստոս—սեպտեմբեր ամիսներին և 1785 թ. փետրվարին՝ Երուսաղեմում, նույն թվականի դեկտեմբերին՝ Տրիեստում, 1786 թ. հունվար—ապրիլ ամիսներին՝ Վենետիկում, 1787 թ. հունիսին՝ Կեֆալոնիայում և այլն:

Ինչպես նշվեց, Ի. Գեղեկանիշվիլին Կոստանդնուպոլսում է եղել 1783 թ. հունիս—օգոստոս ամիսներին: Այդ ժամանակամիջոցում նա շրջել է քաղաքն ու նրա արվարձանները, հանգամանորեն ծանոթացել կենցաղին ու սովորույթներին, եղել շատ վանական հաստատություններում և այլն: Ադրիանապոլսի ճանապարհին գտնվող մի վանքի այցելության նկարագրության ժամանակ նա գրում է, թե ինքը տեսել է սառը, բարե-

<sup>47</sup> Ал. Цагарели, Памятники грузинской старины в св. Земле и на Синае (ППС, т. IV, вып. I, СПб., 1888, էջ 87) նույն թվականով է թվագրել նաև Պ. Իոսելիանին, տե՛ս მიმოხუთა ანუ მგზავრობა, էջ 100, ժան. 74:

<sup>48</sup> კ. ხარაძე, *ნշվ. აշխ.*, էջ 109:

<sup>49</sup> Л. И. Маруашвили, Вахушти Багратиони, его предшественники и современники, Москва, 1956, էջ 118—121.

<sup>50</sup> მიმოხუთა ანუ მგზავრობა, էջ 113—114:

համ և կես մասով տապակված ձկներով առատ աղբյուրներ: Նա, սակայն, այդ ասելով, միաժամանակ նշում է. «Իսկ ես լռում եմ. մեծ ավազան է և նրա մեջ ձկներ են նստած»<sup>51</sup>: Ի. Գեդևանիշվիլու ուղեգրության ուսերենի թարգմանիչ Ն. Բերձենովը ծանոթագրելով Իոնայի այդ հաղորդումը, հետևյալ ավանդությունն է պատմում, որ մեջ ենք բեշում ամբողջությամբ: «Վերցնելով Կ. Պոլիսը և նպատակադրվելով այն իր նստավայրը դարձնել, Մահմեդ II ... թույլ է տվել իր զինվորներին կողոպտելու քաղաքը, սակայն արգելել է հրկիզումը: Այդ նշանակված էր միայն երեք օր, և այդ պատճառով զինվորները, օգտվելով թույլտվությունից, թափանցում էին բոլոր թաքստարանները: Պարիսպները, որոնք շրջափակում էին այդտեղ գտնվող հայկական վանքը, համարվում էին անառիկ: Հուսալով դրան, վանահայրը ոչնչից չէր վախենում և հանդիստ ճաշի համար ձուկ էր տապակում: Հանկարծ մոտ է վազում մի եկեղեցական և գոռում, թե թուրքերը պարսպի մեջ անցք են փորել և ներխուժել վանք: Այդ լուրը վանահորն այնքան անհավանական էր թվացել, որ նա ուսերը թոթվելով ասել է. «Ես ավելի շուտ կհավատամ, որ այս ձկները դուրս ցատկեն թավայից և սկսեն ցատկոտել հատակին»: Այս խոսքերը հենց որ նա արտասանում է, ձկներն անմիջապես թափվում են հատակին և ցատկոտում: Սարսափած այդ տեսարանից, վանահայրը ձկները դնում է փեշի տակ և վազում դեպի ավազանը, որպեսզի ազատ թողնի նրանց, բայց հենց որ նա դուրս է գալիս այգի, թուրքերից մեկը, կարծելով, թե նա ցանկանում է փախչել ինչ-որ գանձեր առած, խփում է նրա կրծքին սրով: Չնայած մահացու վերքին, նա շարունակում է վազել և ընկնում է արդեն ավազանի եզրին: Ձկները ցատկում են լճի մեջ և ապրում նախկինի պես»<sup>52</sup>:

Ի. Գեդևանիշվիլու համառոտ ակնարկը փաստորեն վերաբերում է այս ավանդությանը, որ Կոստանդնուպոլսում հարատևում էր դեռևս XIX դարում և նրա անդրանիկ ու միակ գրառումն է:

Հայերի մասին Ի. Գեդևանիշվիլու մյուս հաղորդումները, ինչպես առիթ ունեցանք նշելու, որևէ էական նորություն չեն ավելացնում մեր ունեցած ծանոթություններին: Այսպես, նա նշում է, թե իր այցելության ժամանակ Կոստանդնուպոլսում եղել է հունադավան՝ 24, հայկական՝ մեկ, իսկ կաթոլիկ ոչ մի եկեղեցի<sup>53</sup>: Սակայն այդ հաղորդումը իրականությանը չի համապատասխանում: Այլ աղբյուրներից մեղ հայտնի է, որ Կոստանդնուպոլսում XVIII դարի վերջերին եղել է հայկական ոչ թե մեկ, այլ երեք

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 24—25:

<sup>52</sup> «Закавказский вестник», 1852, № 13, էջ 51.

<sup>53</sup> მოძოხულა ანუ მგზავრობა, էջ 18:

եկեղեցի<sup>54</sup>: Հունական եկեղեցիների քանակը Ի. Գեղեանիշվիլին ճիշտ է նշում. այդ վկայում է նաև Ղ. Ինճիճյանը, գրելով. «Կ. Պոլսում... 3 հայու եկեղեցի կայ, 20 էն աւելի հոռմի եկեղեցի: Մէկ քաղաքի մը մէջ շիգայ աշխարհիս վերայ անդտար մեր ազգին շատվորութիւն՝ ինչպէս հոս...»<sup>55</sup>:

Երուսաղեմի Հարության տաճարում Ի. Գեղեանիշվիլին հանդիպել է հայերի և նշում է, որ տաճարի «աջակողմյան բարձր կառուցված եկեղեցին հայերինն է»<sup>56</sup>: Վենետիկում եղած ժամանակ նա այցելել է նաև ս. Ղազար կղզում Մխիթարյանների վանքը, որի մասին գրում է. «Այս քաղաքից (իմա Վենետիկից—Պ. Չ.) դուրս, ծովի մէջ կա փոքրիկ հայկաթուղիկների վանք: Մեկ եկեղեցի վանքի մէջ: Տները փոքրիկ են և շուրջը՝ ծով: Ունեն իրենց լեզվով գրքեր տպագրելու տպարան»<sup>57</sup>:

<sup>54</sup> Տեսութիւն համառօտ հին և նոր աշխարհագրութեան, աշխատասիրեալ ի հայր Ղուկաս վարդապետէ Ինճիճեան, Վենետիկ, 1791, էջ 117:

<sup>55</sup> Նույն տեղում:

<sup>56</sup> მიმოსულა ანუ მგზავრობა, էջ 60:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 80:



«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀՆԴԿԱՍՏԱՆ»

Ուղեգրական մատենագրության հուշարձանների մեջ եզակի ճակատագիր է վիճակվել Ռ. Դանիբեգովի՝ «Ճանապարհորդություն դեպի Հընդկաստան» երկին, որտեղ նա շարադրել է, ըստ հեղինակի հավաստիացման, 1795 թ. Հերակլ II-ի կողմից իրեն Հնդկաստան ուղարկելու առիթով կատարած ճանապարհորդության տպավորությունները: Դրանք, ենթադրելի է՝ գրառված լինելով ուղևորության ընթացքում, իրադարձությունների ու երևույթների անմիջական տպավորության տակ, հեղինակի կենդանության ժամանակ և, ամենայն հավանականությամբ, հեղինակի իսկ մասնակցությամբ, Մոսկվայում խմբագրվել ու թարգմանվել են ռուսերենի հայ նշանավոր գործիչ Հարություն Ալամդարյանի կողմից և հրատարակվել 1815 թ.: Թարգմանությունը ավարտվելուց (1814 թ. դեկտեմբերի սկիզբ) կես տարի հետո (1815 թ. մայիս) այն արդեն տպագրված էր, և պարտադիր օրինակներն ուղարկված էին ըստ նշանակման<sup>2</sup>: «Ճանապարհորդության» բնագիրը, ցավոք, չի պահպանվել կամ, համենայն դեպս, առ այսօր չի հայտնաբերված, և հեղինակի կյանքի ու գործունեության հետազոտման հիմնական սկզբնաղբյուրը մնում է այդ հրատարակությունը<sup>3</sup> և մի շարք արխիվային վավերագրեր, որոնք հայտնաբերվել են տարբեր ռուսամենասիրողների կողմից՝ 1949 թ. սկսած: Հարկ է նշել, որ «Ճանապարհորդությունը» հեղինակի միակ գրական երկն է, նա չի ունե-

<sup>1</sup> Գործածում ենք հեղինակի ազգանվան այն ձևը, որը դրված է նրա գրքի տիտղոսաթերթի վրա և որով ինքը՝ Ռաֆայելն էր ստորագրում (ինքնագիրը տե՛ս ГОО, ф, 2, оп. 374, л. 7—8, և հմմտ. «Сквозь два столетия», тд., 1969, № 1—3, էջ 20).

<sup>2</sup> Центральный Государственный Исторический архив г. Москвы (այսուհետև՝ ЦГИАМ), ф. 31, опись 5, д. 9, л. 26 об., 27 об.

<sup>3</sup> Путешествие в Индию грузинского дворянина Рафаила Данибегова, Москва, 1815.

ցել այլ գործեր կամ եթե այդպիսիք անգամ եղել են, ապա մեզ չեն հասել: Ինչպես արդեն նշվեց, հեղինակի «Ճանապարհորդությունը» ծնունդ է առել նրա Հնդկաստան, Շահամիր Շահամիրյանի մոտ, ճանապարհվելու առիթով, և, բնականաբար, նրա ուսումնասիրությունը ևս պետք է սկսել ճանապարհորդության դրդապատճառների հետազոտումից, առանց որի անհնար է լիովին և հստակ պատկերացում կազմել ինչպես հեղինակի կյանքի, այնպես էլ նրա գործունեության մասին:

Մեզ հասած կցկտուր տեղեկություններից երևում է, որ կաթոլիկություն ընդունած Դինիբեկյանց (Դանիբեգով, Դանիբեգաշվիլի) տոհմը երկար ժամանակ դիվանագիտական ծառայության մեջ էր գտնվում Քարթլիի թագավոր Թեյմուրազ II-ի և նրա մահից հետո Քարթլ-Կախեթի թագավոր Հերակլ II-ի արքունիքներում: Ռաֆայելի պապը՝ Խատինը<sup>4</sup>, Թեյմուրազ II-ի մոտ ծառայում էր որպես՝ դաղբաշի<sup>5</sup>, իսկ հայրը՝ Հովսեփը, հինգհարյուրապետի կոչում էր ստացել Հերակլ II-ից<sup>6</sup>: Հայտնի է նաև, որ Խատինը և Հովսեփը ինչ-ինչ ծառայությունների համար պարգևագրեր են ստացել նաև պարսից շահերից<sup>7</sup>:

Մի շարք վավերագրեր վկայում են նաև Ռ. Դանիբեգով հոր՝ Հովսեփ Դինիբեկյանցի, Հնդկաստան կատարած բազմակի ճանապարհորդությունների մասին<sup>8</sup>, որոնց ժամանակ նա, կատարելով Հերակլ II-ի հանձնարարությունները, հնդկահայ գաղութին և, մասնավորապես՝ Շահամիր Շահամիրյանին էր տանում նրան հասցեագրված Հերակլ II-ի և Գիորգի XII-ի հրովարտականներն ու նամակները: Պարզվում է նաև, որ Վրաց արքունիքի կապը Շահամիր Շահամիրյանի հետ XVIII դարի 70—90-ական թթ. իրագործվում էր հիմնականում վերջինիս՝ Հովսեփ Դինիբեկյանցի, միջոցով:

Ինչպես հայտնի է, XVIII դարը Անդրկովկասի ժողովուրդների կյանքում և, մասնավորապես, հայ ժողովրդի պատմության մեջ ազգային-

<sup>4</sup> Մինչև հիմա ընդունված էր կարծել, թե Ռ. Դանիբեգովի պապի անունը ևս Ռաֆայել է (տե՛ս «Кавказ», 1883, № 94; Путешествия Рафаила Данибегашвили в Индию, Бирму и другие страны Азии (1795—1827), М., 1969, стр. 55. Վերջերս Վ. Գրիգորյանը հայտնաբերեց մի փաստաթուղթ, որից պարզվեց նրա իրական անունը՝ Խատին: Փաստաթուղթը վերնագրված է «Թուղթ ևս առ Դինիբեկեանց Խատինի որդի պարոն Յովսէփին...»: Տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, նոր տեղեկություններ Հովսեփ Դինիբեկյանի մասին, — ՊԲՀ, 1979, № 1, էջ 108:

<sup>5</sup> Տե՛ս Путешествия Рафаила Данибегашвили в Индию ..., стр. 66.

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Այդ ճանապարհորդությունների մասին տես ստորև:

ազատագրական շարժումների ու գաղափարախոսության ծաղկման : : : : :  
 ընդլայնման ժամանակաշրջան էր՝ արտահայտված թե՛ զինված ապրս-  
 տամբության ձևով և թե՛ բազմաթիվ ծրագրերի ու բանակցությունների  
 տեսքով: Ինչպես գործնականում, այնպես էլ ազգային-ազատագրական  
 ծրագրերում թուրք-պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրման գոր-  
 ծը իրավացիորեն դիտվել է վրաց և ուլս ժողովուրդների հետ դաշինքի ու  
 փոխօգնության և նրանց կողմից ռազմական աջակցության հետ շաղկապ-  
 ված: XVIII դարի երկրորդ կեսին հայ ազգային-ազատագրական շարժ-  
 ման գաղափարախոսների դերում հանդես էին գալիս հնդկահայ համայնքի  
 ներկայացուցիչները (Հովսեփ Էմին, Շահամիր Շահամիրյան): Նրանք  
 ազատագրական շարժման գաղափարական ու դիվանագիտական նախա-  
 պատրաստման գործին ձեռնամուխ էին լինում ինչպես մի շարք աշխա-  
 տությունների հրապարակումով<sup>9</sup>, որոնցով կոչ էին անում ժողովրդին  
 սթափվել և զենքի դիմել՝ պարսկա-թուրքական բռնակալությունից ազա-  
 տագրվելու համար, այնպես էլ վրացական ու ուլսական արքունիքների հետ  
 բանակցությունների միջոցով, աշխատելով լուծել իրենց քաղաքական  
 նպատակների իրագործման համար դաշնակիցների ու ռազմական օգ-  
 նության հարցը: Այդ նպատակների համար եթե XVIII դարի 60-ական  
 թթ. Հովսեփ Էմինը անձամբ էր ճանապարհորդում Ռուսաստան ու վրաս-  
 տան և բանակցություններ վարում ուլսական արքունիքի ու վրաց Հերակլ  
 II-ի հետ և կապեր հաստատում բուն Հայաստանում զենքի դիմելու պատ-  
 րաստական ուժերի հետ<sup>10</sup>, ապա 70-80-ական թթ. Շահամիր Շահամիրյա-  
 նի բանակցությունները ուլսական արքունիքի հետ իրագործվում էին  
 Հովսեփ Արղունյանին ուղղված նամակագրությամբ, իսկ վրաց արքունի-  
 քի հետ՝ Հովսեփ Դինիբեկյանցի միջոցով<sup>11</sup>:

Վրաց արքունիքի հետ Շահամիր Շահամիրյանի նամակագրական  
 կապերը սկիզբ են առնում 1770-ական թթ. սկզբներից: Պատկառելի  
 հարստության տիրացած հնդկահայ հայրենասեր գործիչը նվերների ան-  
 վան տակ հաճախակի մեծ գումար էր տրամադրում վրաց թագավորին:  
 Հերակլ II-ը 1775 թ. հրովարտելով Շ. Շահամիրյանին է նվիրում կոռու

<sup>9</sup> «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ», Մադրաս, 1772: «Գիրք անուանեալ Որոգայթ  
 փառաց վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան: Շարադրեցեալ Յակոբայ  
 Շահամիրեանց նոր Զուղայեցւոյ առ ի օգուտ յազգին հայոց», Մադրաս, 1773: «Տետրակ  
 որ կոչի նշաւակ վասն կառավարելոյ ինչս որոց և առանց կտակ ննջելոց», Մադրաս, 1783:

<sup>10</sup> Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945.

<sup>11</sup> А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х  
 годах XVIII столетия, Ереван, 1947, стр. 136—163.

-գավառը<sup>12</sup>, իսկ շնորհագիրը Հնդկաստան տանելու գործը հանձնարարվում է Հովսեփ Դինիբեկյանցին: Այս ճանապարհորդութունը պրոֆ. Գ. Զարդալիշվիլին թվագրում է 1775—1777 թթ. և համարում այն Հովսեփի կատարած առաջին ճանապարհորդութունը<sup>13</sup>: Հովսեփ Դինիբեկյանցը, ինչ խոսք, լիովին իրազեկ էր իր կողմից տարվող ինչպես այս, այնպես էլ հետագա բոլոր նամակների ու հրովարտականների բովանդակությանն ու երկու կողմից էլ բաղում բանավոր հանձնարարություններ ունեւր կատարելու, որոնց գրավոր շարադրանքը կարող էր վտանգավոր լինել թշնամական երկրների տարածքով ճանապարհորդող դիվանագետի համար, քանի որ այդ նամակները կարող էին բռնագրավվել թուրք կամ պարսիկ իշխանավորների կողմից: Հայտնի է, օրինակ, որ այդ հանգամանքից խիստ զգուշանում էր նաև Շահամիր Շահամիրյանը. Հերակլին գրած և Հովսեփ Դինիբեկյանցի միջոցով ուղարկվելիք իր նամակում նա որոշակի նշում էր, թե ինքը նպատակահարմար է գտնում իր նամակները Վրաստան ուղարկել Անգլիայի ու Ռուսաստանի վրայով, քանի որ, ինչպես ինքն է գրում՝ «Բաղդատու փաշայն ստացաւ (իմա՛ բռնագրավեց—Պ. Զ.) Յովսէփոս հինգհարիւրապետէ օրինակն նամակի շնորհաց քոց<sup>14</sup>, որ առ իս և առաքեաց Կոստանդնուպօլիս ի սպաս սուլթանի, և արգելաց հինգհարիւրապետին Բաղդատ երիս ամիս ժամանակաւ, և ապա արձակեաց, առ մեզ...»<sup>15</sup>:

Հովսեփ Դինիբեկյանցը մեկ անգամ չէ, որ բանտարկվել է իր դեսպանագնացութունների ժամանակ: Հայտնի է մի այլ դեպք ևս: Վ. Գրիգորյանի հայտնաբերած փաստաթղթում (1781 թ. նոյեմբերի 9) նշվում է, որ «Սա (Հովսեփը—Պ. Զ.) յառաջ քան զԳ (3) ամս գնացեալ էր ի Հնդիկս և այժմ վերադարձեալ անտի հանդերձ թղթովք ի նուիրակէն մեր-

<sup>12</sup> Mesrobs Jacob Seth, Armenians in India from the Earliest times to the Present Day, Calcutta, 1937, p. 590.

<sup>13</sup> Յ. Ֆահրադաղիճեան, Լաւոյն Երանայի մօտ Յաւրօտն օնլոյտն (ձեալի մեալեյնի յՅաւրօտն) «Տօլոսի», 1969, № 20 էջ 3:

<sup>14</sup> «Օրինակ նամակի շնորհաց քոց» ասելով Շահամիր Շահամիրյանը նկատի ունի Հերակլ II-ի 1786 թ. նշանավոր հրովարտակը, որով իշխանական տիրոջ էր շնորհվում իրեն և որը, ինչպես ստորև կտեսնենք, նույնպես Հնդկաստան էր տանում Հովսեփ հինգհարյուրապետը (Դինիբեկյանցը):

<sup>15</sup> ՏԵՍ Ռ. Աբրահամյան, Շահամիր Շահամիրյանի նորահայտ նամակագրութունը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 3, էջ 136: Շ. Շահամիրյանի այս նամակը գրվել է 1787 թ. հոկտեմբերի 15-ին: Հրատարակության մեջ, սակայն, հավանաբար տրպագրական վրիպակի հետևանքով, այն թվագրված է 1785 թ. հոկտեմբերի 15-ով: ՏԵՍ ստորև, էջ 180:

մէ առ սրբազանն և յընծայիւք յոմանց առ Հերակլ արքայն, նաև առ սրբազանն ևս, եկեալ էր հասեալ Ի Բաբու, յորոյ իշխողէն ըմբռնեցեալ և արձակեալ ապա»<sup>16</sup>: Ի վերջո, որ Հովսեփը, իրոք բանավոր շատ հանձնարարություններ էր կատարում, որոնք չէին արձանագրվում և մեզ էլ, բնականաբար, չեն հասել, վկայված ենք գտնում Շահամիր Շահամիրյանի պատասխան նամակներում՝ հասցեագրված Հերակլ II-ին կամ Ղուկաս կաթողիկոսին և որոնց հանձնարարությունները կատարելու էր գնում նա: Այդ նամակներում հաճախ է Շ. Շահամիրյանը գործածում «ի բերանէ պարոն Յովսէփոս Հինգհարիւրապետէ լուաք», «վեր ընկալայ ի ձեռնէ Յովսէփոս հինգհարիւրապետ ծառայէ քումմէ, լուեալ լուր...», «զլուրն Յովսէփ [հինգ] հարիւրապետին» և այլն:

Այս ամենը, ինչ խոսք, վկայում է այն մասին, որ Հովսեփ Դինիբեկյանցը սոսկ նամակատար չէր:

Ե՞րբ է սկսել Հովսեփն իր դիվանագիտական ծառայությունը Հերակլ II-ի արքունիքում և ո՞ր թվականին է նա կատարել իր առաջին ճանապարհորդությունը Հնդկաստան: Ինչպես նշվեց, Գ. Զարդալիշվիլին Հովսեփի առաջին ճանապարհորդությունը թվագրում է 1775—1777 թթ.: Նման ճանապարհորդության ենթադրությունը միանգամայն իրավացի է, քանի որ այն պետք է ձեռնարկվեր 1775 թ. Հերակլ II-ի կողմից Լոռին Շ. Շահամիրյաններին նվիրելու մասին հրովարտակը Հնդկաստան տանելու համար: Պետք է նշել, որ եթե տրամաբանական է 1775 թվականը ճանապարհորդության սկիզբ համարելը, քանի որ այդ թվականին է տրվել Հերակլ II-ի հրովարտակը, ապա ենթադրվում է որ նա Անդրկովկաս է վերադարձել 1777 թվականին, քանի որ Հնդկաստան գնալ և վերադառնալու համար անհրաժեշտ կլիներ առնվազն 2—3 տարի:

Այսպիսով, Հովսեփ Դինիբեկյանցի առաջին ճանապարհորդությունը թվագրվում է 1775—1777 թթ., որի ժամանակ նա Հնդկաստան էր տարել Հերակլ II-ի հրովարտակը: Հրովարտակի բնագիրը չի պահպանվել, սակայն դեռևս 1820 թ. այն եղել է Շ. Շահամիրյանի ժառանգների՝ Նազար Հակոբի Շահամիրյանի և Հովհաննես Շահամիրյանի մոտ, որոնք այն մտցրել են Լոռիի մասին ունեցած իրենց վավերագրերի ցուցակում: Այդ ցուցակում հիշյալ հրովարտակի հայերեն և վրացերեն բնագրերը գրանցված են «է» (7) և «Ը» (8) համարների տակ և վերնագրված «Ազնուութեան ի նորին բարձրութենէ Հերակլ երկրորդ հանգուցեալ արքայէն Վրաս-

<sup>16</sup> Վ. Գրիգորյան, Նոր տեղեկություններ Հովսեփ Դինիբեկյանի մասին, էջ 108 (ընդգծ. մերն է—Պ. Զ.):

տանի և այլն, և այլն առ հանգուցեալ Տէր Շամիր Սուլթանն ու մեզ»<sup>17</sup>: Երկրորդ անգամ նա Հնդկաստան է ճանապարհորդել 1778—81 թթ., որի մասին վկայութիւնն է պահպանվել 1781 թ. գրված մի վավերագրում, որտեղ նրա մասին հաղորդվում է, թե «զամանէ (իմա՛ Հովսեփի—Պ. Չ.) այսպէս է գիտելի, զի սա յառաջ քան զԳ (3) ամս զնացեալ էր ի Հնդիկս և այժմ վերադարձեալ անտի հանդերձ թղթովք ի նուիրակէն մերմէ առ սրբազանն և յընծայիւք յոմանց առ Հերակլ արքայն, նաև առ սրբազանն ևս, եկեալ էր հասեալ ի Բաքու, յորոյ իշխողեն ըմբռնեցեալ էր և արձակեցեալ ապա: Իսկ այժմ գրեալ էր սրբազան Վեհին, թէ զթուղթս ունիմ ի նուիրակէն և զնծայ ևս ունիմ անտի և այլն: Բայց ոչ կարեմ գալ յայդր, մինչ ոչ նախ զնացեալ տեսից զարքայն: Ապա յետ տեսանելոյ զնա գալոց եմ և զորս ընդ իս, ինքնին բերելոց եմ»<sup>18</sup>: Այս գրութիւնը թվագրվում է 1781 թ. նոյեմբեր ամսով, որից պարզ է, թե նա այդ ամսին արդեն գտնվում էր Գանձակում, որտեղից նա նամակով իր գալստյան մասին հայտնել էր Ղուկաս Կարնեցուն:

Մի այլ վկայութեամբ պարզվում է, որ նա, իրոք, անձամբ ներկայացել է կաթողիկոսին 1782 թ. հունվարին և նրան հանձնել Հնդկաստանից բերված նվերներն ու նամակները. «Ի ՌՄԼՍ. (1782)... ի Հինդ բնակեալ Շամիր աղայն ձեռամբ թիֆլիզեցի ֆռանգ Յօսեփին յղեալ էր Բ (2) թօփ հնդու կապոյտ զատաք, Բ (2) թօփ սպիտակ կտաւ. Բ (2) թօփ կապոյտ մահրամայք, որոց Ա (1) թօփն ընդ տեկիրմի է: Ի յունվարի ելն»<sup>19</sup>:

Հովսեփ Դինիբեկյանը էջմիածնում մնացել է մոտ երկու շաբաթ: 1782 թ. փետրվարի 12-ին կաթողիկոսի կողմից նրան է նվիրվել մի ոսկեհյուս թիկնոց, որի մասին վկայում է էջմիածնի վանքի ելից մատյանի հետևյալ գրառումը. «Թիֆլիզեցի ֆռանգ Յօսեփին ի գալն ի սուրբ Աթոռս և բերելն զընծայն Շահամիր աղային, որոյ ետուք Ա (1) զէրպապ կապայ, որ էր մեր խանի (իմա՛ Երևանի խանի—Պ. Չ.) տուեալն ի ՌՄԻԸ (1779) թուուջն նաւոսին: Մեք ի փետրվարի ԺԲ (12) ետուք նմայ»<sup>20</sup>:

Հովսեփ Դինիբեկյանի այս ճանապարհորդութեան մասին վկայութիւնն է պահպանվել նաև Ղուկաս կաթողիկոսի Շ. Շահամիրյանին գրած

17 Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմութեան համար, Երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատութիւններ». հատ. XIII, Երևան, 1940, էջ 9:

18 Վ. Ռ. Գրիգորյան, Նոր տեղեկութիւններ Հովսեփ Դինիբեկյանի մասին, էջ 108:

19 Նույն տեղում, էջ 110:

20 Նույն տեղում, էջ 111:

1785 թ. նամակում<sup>21</sup>: Այդ նամակում կաթողիկոսը նշում է, թե Յովսեփ Դինիբեկյանցի միջոցով ստացվել է Շ. Շահամիրյանի Սիմեոն կաթողիկոսին գրած 1779 և 1780 թթ. նամակները և տպագիր «Աշխարհացույցից» երկու օրինակ<sup>22</sup>:

Երրորդ անգամ Հերակլ II-ը Հովսեփ Դինիբեկյանցին Հնդկաստան է ճանապարհել 1786 թ.՝ ի պատասխան Շ. Շահամիրյանի ուղարկած թագի և այլ նվերների նրան իշխանական տիտղոս շնորհելու իր 1786 թ. մարտի 22-ի հրովարտակը տանելու համար<sup>23</sup>: Այս ճանապարհորդության ժամանակ է, որ, ինչպես արդեն նշվեց, Բաղդադի փաշայի կողմից նա բանտարկվում է, խլվում է նրանից Հերակլի «Նամակ շնորհաց»-ը և ուղարկվում Կոստանդնուպոլիս՝ սուլթանին ի գիտություն: Երեք ամիս բանտարկված մնալուց հետո, ի վերջո, Հովսեփը ետ է ստանում խլված հրովարտակը և ճանապարհը շարունակելով՝ հասնում է Մադրաս ու հանձնում այն Շ. Շահամիրյանին: Այդ մասին պատմում է Շ. Շահամիրյանը 1787 թ. հոկտեմբերի 15-ին Հերակլ II-ին գրած պատասխան նամակում. «Նամակ շնորհաց և յատկապէս սիրոյ Տեառն իմոյ ի թուէն 1786 յամսեանն մարտի քսան, վեր ընկալայ ի ձեռնէ Յովսեփոս հինդհարիւրապետ ծառայէ քումմէ»<sup>24</sup>: Ըստ Շ. Շահամիրյանի նամակի Հովսեփ Դինիբեկյանցը Հնդկաստանից պետք է ճանապարհվեր նամակի գրվելուց մոտ երկու ամիս հետո, այսինքն՝ 1787 թ. դեկտեմբերին: Պարզվում է, սակայն, որ նա ճանապարհվել է շատ ավելի ուշ, համենայն դեպս, 1788 թ. փետրվարի 6-ից հետո, քանի որ այդ թվականը կրող Ղուկաս կաթողիկոսին գրված Շ. Շահամիրյանի նամակը ևս տեղ հասցնելու համար հանձնվել էր նրան: Ե՞րբ է Հովսեփը Թիֆլիս վերադարձել: Հայտնի է, որ մինչև 1789 թ. հուլիս ամիսը նա Ղուկաս կաթողիկոսին չէր հանձնել նրան հասցեագրված Շ. Շահամիրյանի նամակները: Այդ մասին Ղուկաս կաթողիկոսը գրում է Շ. Շահամիրյանին. «...իսկ ի միւս թուղթդ գրեալ էիր զվերադառնալն

21 Ս. Վ. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 47:

22 Վլադիմիր Գրիգորյան, Շահամիր Շահամիրյանի «Աշխարհացույց Հայաստանեայցը», «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 353—362:

23 Հրովարտակի բնագիրը հրատարակել է Ալ. Երիցյանը՝ ուսերեն թարգմանությամբ («Кавказ», 1883, № 94), անգլերեն թարգմանությամբ՝ Մեսրոպ Սեթր (տե՛ս նրա Armenians in India, էջ 590—591): Ալ. Երիցյանի ուսերեն թարգմանությունից հայերեն է վերածել Ս. Տեր-Ավետիսյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 25), իսկ Ա. Ճեխլիլին՝ Մեսրոպ Սեթրի գրքից վրացերենի՝ (տե՛ս «ისტორია, საზოგადოებრივი ცოდნეობა, გეოგრაფია სკოლაში», 1969, № 1, էջ 38):

24 Ս. Վ. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 90, ստորև էջ 167:

այսի հարիւրապետ Յովսէփն Թիֆլիզեցւոյ... Այլ տակաւին ոչ երևեցաւ յիշեալ Յովսէփն, և ոչ ևս հնչէ լուրն թէ ո՞ւր իցէ հասեալ ու մնացեալ: Եթէ գայցէ նա, և կամ աւանդն առ մեզ հասուցէ, գրելոց եմք զմիամտութիւն առ քեզ»<sup>25</sup>:

Հովսէփ Դինիբեկյանի՝ Թիֆլիս վերադառնալու ճշգրիտ թվականի մասին վկայութիւն չունենալով հանդերձ, մենք գիտենք, սակայն, որ նա 1790 թվականի վերջերին արդեն պատրաստվում էր նոր հանձնարարութեամբ կրկին Հնդկաստան ճանապարհվելու: Այս անգամ նա Հնդկաստան էր տանելու Գիորգի արքայազնի հրովարտակը՝ Լոռին Շահամիրյանին նվիրելու Հերակլ II-ի (1775 թ.) հրովարտակին ի հաստատութիւն, ինչպես նաև Հերակլ II-ի մի նոր հրովարտակը և Լոռու մանրամասն մի քարտեզ: Վերջինս մեզ է հասել և հրապարակված է Ս. Տեր-Ավետիսյանի հիշյալ աշխատութեան մեջ: Այդ իրողութեան մասին Ալ. Երիցյանը գրում է. «1789 թ. Շամիր աղան կրկին նվերներ ու նշանակալի դրամական գումար է առաքում Հերակլին..., ընդ որում նա ցանկութիւն էր հայտնել անձամբ ընտանիքով ու հազար հնդիկ ստրուկներով փոխադրվել Հնդկաստանից Հերակլի թագավորութիւն, որտեղ պիտի գործարանային ու ֆաբրիկային գործունեութիւն ծավալեր, բացեր շաքարի գործարաններ... Նման մեծահարուստին վրաստան բերելը հավանական է, այնքան էր զբաղեցնում Հերակլի արքունիքին, որ վերջինս իր որդուն՝ գահաժառանգ արքայազն Գիորգիին, համողեց նվիրաբերել Շամիր աղային որպես հին հայկական տարածքի մի մաս՝ Լոռու ողջ տափաստանը...: Կատարելով հոր ցանկութիւնը, Գիորգին 1790 թ. նոյեմբերի 16-ի հատուկ հրովարտակով Լոռին նվիրաբերեց Շամիր աղային որպես հավերժ և ժառանգական տիրույթ. նվիրաբերված երկրի սահմաններն էին. արևելքից Շամլուղի լեռը, արևմուտքից՝ Կարաղաջի լեռը, հարավից՝ Դվալի լեռը և հյուսիսից՝ Եղվարի (Լեզվեր) լեռը: Հրովարտակին կից կար նաև բավական հմտորեն կատարված տեղանքի քարտեզը»<sup>26</sup>:

Ճանապարհվելով հավանաբար 1791 թ. մայիսին, Հովսէփ Դինիբեկյանը Հնդկաստան է հասնում մոտ մեկ տարի հետո և Շահամիրյանին

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 65: Այս վկայութիւնից պարզվում է նաև, որ Հովսէփը Թիֆլիս ևւ շէր հասել, քանի որ տվյալ դեպքում կաթողիկոսը այդ մասին անմիջապես կտեղեկանար:

<sup>26</sup> „Кавказ“, 1883, № 91. Այս Հովսէփ Դինիբեկյանի շորրորդ ուղևորութիւնն էր Հնդկաստան (1791—1794?):



հանձնում հիշյալ հրովարտականներն ու քարտեզը<sup>27</sup>: Ղուկաս կաթողիկոսին գրած 1792 թ. մայիսի 14-ի Շ. Շահամիրյանի նամակից պարզվում է, որ Հովսեփը Հնդկաստան ճանապարհվելիս այցելել է նաև Ղուկաս կաթողիկոսին և ապա՝ նրա հետ միասին Հնդկաստան, Շահամիրյանի մոտ է ճանապարհվել նաև Կարապետ խաղակյան «վրացի» վաճառականը՝ Հերակլի և Ղուկաս կաթողիկոսի հատուկ հանձնարարությամբ:

Շ. Շահամիրյանը ընթերցելով Ղուկաս կաթողիկոսի 1791 թ. մայիսի 13-ի նամակը, գրում է. «Զլուրն Յովսէփի հարիւրապետին, և զհանձնարարութիւնն Քոյին Պատուականութեան զԿարապէտ վրաց վաճառականին եղև ի սրտի իմում փոքրիկ բան խղճմտանաց, վասն որոյ նախ հայցելով ի Քոյին Սրբութենէ ներողութիւն իմոյս համարձակութեանս, ապա համարձակեցա հարցանել զպատճառն. այսինքն սոյն Յովսէփի հարիւրապետն ի ժամանակի դալստեան նորա առ մեզ հանդիպեալ է Քոյին սրբութեան, որպէս այս Կարապետ վաճառականս<sup>28</sup>, և սոցին եր-

<sup>27</sup> Գիորգի արքայազնի և Հերակլ II-ի վերստին տված հրովարտականների վրացերեն և հայերեն օրինակները ևս գրանցված են նազար Հակոբի Շահամիրյանի ու Հովհաննես Շահամիրյանի մոտ եղած փաստաթղթերի վերոնիշյալ ցուցակում №№ Ա. (1), Բ. (2), Գ. (3), Դ. (4), Ի. (իմա՝ ժԱ. (11) — Պ. 2.). տե՛ս Ս. Վ. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 8—9:

Ի դեպ, իր այս ուղեորության ժամանակ Հովսեփ Դինիբեկյանը Հնդկաստան է տարել մի հետաքրքիր վավերագիր ևս՝ Հերակլ II-ի կողմից համայն հայությանն ուղղված մի ուղերձ (1790 թ. դեկտ. 4), որով վրաց թագավորը վրաստան է հրավիրում օտար երկրներում բնակվող հայերին՝ խոստանալով նրանց իր հովանավորությունը: Այս ուղերձում նշված է նաև, որ նման մի կոչ էլ ուղղվել է Ադրբեջանի և Պարսկաստանի հայերին դեռևս 1770 թվականին: Տե՛ս Լ. Գրիգորյան, «Ջորջիա-Պարսկաստանի հայերի և Պարսկաստանի հայերի հարաբերությունները», Երևան, 1972, էջ 99, Հիմա. վրաց. ՍՍՀ ՊԿԱ, ֆոնդ 1449, գործ 1300: Տե՛ս նաև ստորև, էջ 158, 176—177:

<sup>28</sup> Կարապետ Գասպարի խաղակյան վաճառականի մասին պահպանվել են մի քանի վկայություններ, որոնց հիման վրա կարելի է ենթադրել, թե նա վաճառականի անվան սակ կատարում էր նաև դիվանագիտական հանձնարարություններ: Վրացերեն մի փաստաթղթից պարզվում է, որ դեռևս 1790 թ. մարտին Կարապետ խաղակյանը պատրաստվում էր ճանապարհվելու Հնդկաստան, ուստի մինչև վերադառնալը իր ողջ ունեցվածքի սնօրենն է կարգում իր փեսա Դեմետրիին (տե՛ս «Մասալեքի խաղակյանի և Պարսկաստանի հայերի հարաբերությունները», Երևան, 1972, էջ 280—281): Կարապետ վաճառականը հիշվում է նաև մի այլ առիթով: Ղուկաս կաթողիկոսի Շահամիրյանին գրած 1792 թ. օգոստոսի 16-ի նամակից պարզվում է, որ Շ. Շահամիրյանը Ղուկաս կաթողիկոսի միջոցով հատուկ նամակ էր գրել վրաց արքունի դպիր Սուլխան դիվան Թումանյանին (վրացական փաստաթղթերում՝ Թումանիշվիլի, Թումանով), սակայն հասցեատիրոջը չի հանձնվել՝ նրա Ռուսաստան դեսպանագնա-

կոցունց գալուստն ևս բարւոք դիտէ զՊատուականութիւն Քոյ, թէ յումմէ, առ ուր, և կամ վասն ինչ գործի, որովհետև որ զպատուականութիւն Քոյ ոչ յիշեաց ոչ ի նամակի, և ոչ ի յատուկ ձեռնագրութեան քո զպաշտօնն ի վեր յիշեցեալ գործակալաց, այս բնականապէս նեղէ զխիղճն իմ, թէ մի գուցէ բանքս այլ լինիցին ընդդէմ կամաց Սրբութեան Քոյ, եթէ կամք Քոյին Պատուականութեան լինիցի հարցանել ի մէնջ զիարդ մեր յառաջագոյն ոչ ազդ արարաք Սրբութեան Քոյ, առ այդ խոստովանիմ առաջի Սրբութեան Քոյ արդարն, որ գործն զոր գործեցաւ ի նոցին Արքայական Բարձրութենէ, երբէք ոչ եղև խնդիր մեր... Եւ արդ հարկավոր է ինձ ասել զի նախ ակն ունիմ ի Պատուականութենէ Քումմէ, զի փոքրի տառիւ բարձցես զխիղճն մտաց իմոց ի սրտէ իմմէ և հայրախնամ գրով օրհնեսցես զաստիճանն իշխանութեանն և ազարակն ժառանգութեան մերոյ զոր շնորհեցավ ի նորին Արքայական Բարձրութենէ...»<sup>29</sup>,

Ինչպես նշվեց, Հովսեփ Դինիբեկյանը 1792 թ. մայիսին գտնվում էր Հնդկաստանում, Շահամիր Շահամիրյանի մոտ: Նրա՝ վրաստան վերադարձի ճշգրիտ թվականը դեռևս հայտնի չէ: Հաջորդ՝ հինգերորդ, ճանապարհորդությունը սկսվել է 1796 թ. գարնան վերջին, երբ նա պետք է ճանապարհվեր Հնդկաստան՝ Շ. Շահամիրյանին տանելու Գիորգի թագաժառանգի 1796 թ. մայիսի 10-ի նամակը, որով թագաժառանգը տեղեկացնում էր Աղա-Մահմեդ խանի կողմից Թիֆլիսն ավերելու, ռուսական զորքերի Կովկաս գալու մասին և կռուի գավառի վերաբերյալ Շահամիրյանից նոր կարգադրություններ էր պահանջում<sup>30</sup>: Հովսեփ Դինիբեկյանի վերադարձը այդ ճանապարհորդությունից ենթադրելի է 1798 թ. գարնանը: Հովսեփը դեռևս Հնդկաստանում էր գտնվում, երբ Հերակլ II-ի և Գիորգիի կարգադրությամբ նրա որդին՝ Ռաֆայելը, 1797 թ. գարնանը ճանապարհվում է Հնդկաստան, տանելով Գիորգիի նոր նամակը Շահամիրյանին: Ռ. Դանիբեկովի այդ ճանապարհորդության մասին վկայում է 1797 թ. ապրիլի 3-ի<sup>31</sup> նրա ստացականում նշված այն փաստը, թե ինքը պատ-

ցություն ուղարկված լինելու պատճառով, այլ հանձնվել է նրա եղբորը՝ Մանուշար դիվան Թումանյանին, որը «թուղթ գրեալ առ մեզ զպատասխանին թղթոյ քո եղեալ էր ի մէջ նորա, և խնդրեալ էր ի մէնջ հասուցանել առ պարոն Կարապետ (որ ի վերոյ յիշեցաք) և Մեր վաղ ուրեմն յղեցաք ի վան առ ջուղայեցի Տէր Յովհաննիսեան՝ տիրացու Ստեփաննոսն՝ ի վերայ Բաղդադու յղել առ նոյն պարոն Կարապետն որ հասուցէ առ քեզ»: (Ս. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 70):

<sup>29</sup> Ս. Վ. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 83—84:

<sup>30</sup> Նազարու Հովհաննես Շահամիրյանների վերոհիշյալ ցուցակում Գիորգիի հիշյալ նամակը առկա է՝ № 6(5): Նույն տեղում, էջ 9:

<sup>31</sup> Տե՛ս Путешествия Рафаила Данибегашвили в Индию, Бирму..., էջ 68

րաստվում է ճանապարհվելու Հնդկաստան Շահամիր-աղայի մոտ, որի համար Գորիում նա 60 ուլաի և այլ հնդկական դրամ է վերցնում Տեր-Դավիթ քահանայից՝ գրավ դնելով Թիֆլիսում իրենց «վանքի այգին»։ Ըստ ստացականում նշված պայմաններից մեկի, այն է՝ եթե ինքը մահանա և Թիֆլիս չվերադառնա, իսկ իր ապրանքները վերադառնան Հնդկաստանից այս քաղաքը, ապա Տեր-Դավիթը կարող է տրված դրամի համարժեքով ապրանքներ վերցնել, կարելի է ենթադրել, թե Ռ. Դանիբեգովն իր այս ճանապարհորդությունը կատարել է Թիֆլիսից առևտրական գործերով Հնդկաստան մեկնող քարավանի կազմում։ Սա Ռ. Դանիբեգովի առաջին ինքնուրույն ճանապարհորդությունն էր։ 1798 թ. ամռան սկզբներին հասնելով Հնդկաստան, նա վախճանված է գտնում Շահամիր Շահամիրյանին և Գիորգիի նամակը հանձնում է Հովհաննես Շահամիրյանին (և ոչ Եղիազար Շահամիրյանին, որը մահացել է 1787 թ., ինչպես նշում են ուսումնասիրողները)։ Նամակի բովանդակությունը նազար և Հովհաննես Շահամիրյանների վերոհիշյալ ցուցակում ներկայացված է հետևյալ կերպ. «Մի օրինակ գրոցն հայերէն ի նորին բարձրութեան հանգուցեալ Գիորգիոյ առ հանգուցեալ տէր Շամիր Սուլթանն, յորում գրէ զշնորհիւն լօուոյ հանգուցեալ Տէր Շամիր Սուլթանին և ժառանգաւորացն նորին որպէս և կամի, և զվերանորոգումն որ ի նորին արքայական բարձրութենէ հօր իւրոյ հանգուցեալ տէր Շամիր Սուլթանի կատարեալ ընծայելոց է»<sup>32</sup>։

Գիորգի XII-ը գահ էր բարձրացել հոր՝ Հերակլ II-ի, մահվանից հետո (11 հունվարի 1798 թ.)։ 1798 թ. գարնանը նա կրկին պատրաստվում էր Հովսեփ Դինիբեկյանին Հնդկաստան ճանապարհելու՝ Շահամիր Շահամիրյանին<sup>33</sup> տանելու իր նամակը<sup>34</sup>, որով հայտնում էր Հերակլ II-ի մահը և կրկին հրավիրում էր նրան գալ և տեր կանգնել իր ղեկավարին։ Մեզ հայտնի չէ՝ տեղի ունեցե՞լ է այս ճանապարհորդությունը, թե ոչ։ Հայտնի է, սակայն, որ հաջորդ տարվա ամռանը Հովսեփը այլևս կենդանի չէր իսկ Գիորգիի այդ նամակը չի արձանագրված վերոհիշյալ ցուցակում։

<sup>32</sup> Ս. Վ. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 9։

<sup>33</sup> 1798 թ. Անդրկովկասում դեռևս հայտնի չէր դարձել Շահամիրյանի մահը (մահ. 13 հուլիսի 1797 թ.)։ Ղուկաս կաթողիկոսը, շիմանալով այդ մասին, 1798 թ. հունիսի 13-ի Շահամիր Շահամիրյանին գրված իր նամակով հաղորդում էր Հերակլ II-ի մահը։

<sup>34</sup> Ալ. Երիցյանը հետևյալ կերպ է վերաշարադրում այդ նամակի բովանդակությունը. «Մեր տրամադրության տակ եղած Շամիր աղայի վավերագրերի ու թղթերի մեջ կա և վրացական գահ բարձրացած Գիորգի XII-ի նրան ուղղված նամակը, որտեղ ամենաջերմ արտահայտություններով շտապում է տեղեկացնել հնդկական միլիոնատիրոջը Հերակլի մահվան մասին և կրկին նրան հրավիրում Վրաստան» («Кавказ», 1883, № 100)։

Այսպիսով, Հովսեփ Դինիբեկյանի մասին վերը բերված ամբողջ շարադրանքից հստակորեն երևում է, որ, հանձին նրա, Հերակլ II-ի արքունիքում գործում էր մի անդուլ հայրենասեր դիվանագետ-բանագնաց, որը պատվով էր կատարում իր վրա դրված ծանր պարտականությունը: Իր կյանքի վերջին գրեթե քսանհինգ տարին նա նվիրաբերել է վրաց արքունիքի, էջմիածնի Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների ու հնդկահայ գաղթօջախի միջև կատարվող բանակցությունները իրականացնելու գործին, այդ նպատակի համար բազմիցս Թիֆլիսից բռնելով հեռավոր Հնդկաստանի բազմաթիվ դժվարություններով, անակնկալներով ու փորձություններով լի ճանապարհը: Նրա որդիները, և հատկապես ավագ որդին՝ Ռաֆայելը, դաստիարակված լինելով նման մի գործչի ընտանիքում, դեռևս հոր կենդանության ժամանակ և մանավանդ նրա մահից հետո իրենք ևս լծվում են նրա գործունեությունը շարունակելուն, Անդրկովկասը Ռուսաստանի օգնությամբ պարսկա-թուրքական լծից ազատագրելու եռանդուն ջատագովներ հանդիսանալով:

Ռաֆայել Դանիբեկովը, որ, ինչպես նշվեց, ճանապարհվել էր 1797 թ. դարնանը և Հնդկաստան հասել 1798 թ. դարնան վերջին կամ ամռան սկզբներին, 1799 թ. ամռանը արդեն վերադարձել էր Վրաստան: 1799 թ. աշնանը Գիորգի XII-ը հատուկ հրովարտակով նրան կրկին Հնդկաստան է ճանապարհորդությունը: Այս անգամ նա Հնդկաստան էր տանում Գիորգի XII-ի հրովարտակը Հովհաննես Շահամիրյանի անունով: Մեր նշած փաստաթղթերի ցուցակում այն հետևյալ ձևով է ներկայացված. «Թ՛ նշանալ. մի օրինակ գրոյն հայերեն ի նորին բարձրութեան Գեօրգին հանգուցեալ արքայէն Վրաց և Կախից և այլոց առ մեր պարոն Յովհաննէս Շամիրեան, յորում գրէ, զի ղխնդիրն հանգուցեալ Տէր-Շամիր Սուլթանին, որ յաղագս խօսոյ գաւառին յօժարութեամբ կատարեալ երանելի հօր իւրոյ արքային, զգրուածն զկնի ի կենաց փոխելոյ հօր իւրոյ առաքեալ է առ մեզ»<sup>35</sup>:

Ռ. Դանիբեկովի ուղևորությունից երկու տարի շէր անցել, երբ ռուսական տիրապետության հաստատումով ու Արևելյան Վրաստանի՝ Ռուսաստանին միացումով Անդրկովկասի պատմության մեջ նոր էջ բացվեց:

Ռ. Դանիբեկովը, ինչպես կարելի է կռահել նրա հետագա գործունեու-

<sup>35</sup> Ս. Վ. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 9: Այս նամակը եղել է Ալ. Երիցյանի տրամադրության տակ: Նա գրում է. «Պակաս հուզումնալից շէ նաև Գիորգի թագավորի մյուս նամակը Շամիր աղայի որդի Հովհաննեսին, որով սփոփում է վերջինիս հոր մահվան կապակցությամբ, հորդորում նրան հետևել հանգուցյալի ձգտումներին ու ներկայանալ տիրելու կռիին» («Кавказ» 1883, № 100):



այդպես են ընկալել, սակայն Շ. Մեսխիայի հայտնաբերած փաստաթղթի հիման վրա մի շարք կարևոր սրբագրումներ կատարվեցին: 1949 թ. նա Լենինգրադում (Մ. Բրոսեի արխիվում) հայտնաբերեց Գիորգի XII-ի հրովարտակը՝ տրված 1799 թ. սեպտեմբերի 14-ին, և հրապարակեց այն<sup>39</sup>: Այդ հրովարտակից պարզվում է, որ Գիորգի XII-ը վախճանված Հովսեփ Դինիբեկյանցի «հինգհարիւրապետի» կոչումը շնորհում է նրա որդիներին՝ Ռաֆայելին ու Հովսեփին, և վերահաստատում նրանց ունեցած բոլոր շնորհագրերն ու տիրույթները: Այդ հրովարտակում Գիորգի XII-ը գրում է. «Եվ այժմ քեզ, Ռաֆայելիդ, մենք ուղարկում ենք Հնդկաստան, Շահիր աղայի որդու մոտ: Քանի որ քո հայրը լինելով մեր երանելի հոր ծառայության մեջ, մի քանի անգամ ուղարկվել էր Հնդկաստան, մենք քեզ ևս նույն ծառայության համար ուղարկում ենք Հնդկաստան»<sup>40</sup>:

Այս վավերագրից ուսումնասիրողները, բնականաբար, եկան այն հետևություն, որ Ռ. Դանիբեգովը կատարել է երկու ճանապարհորդություն. 1795—1798 թթ. և 1799—1813 թթ.: Այդ եզրակացությունը առավել համոզիչ դարձավ, երբ ի հայտ եկավ ևս մի փաստաթուղթ՝ Ռ. Դանիբեգովի ստացականը, որով նա Գորիում 1797 թ. ապրիլի 3-ին 60 ռուպի էր վերցրել Հնդկաստան՝ Շահամիր Շահամիրյանի մոտ գնալու համար<sup>41</sup>: Ռ. Դանիբեգովի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրողների համար պարզվեց, որ նա 1795—1799 թ. կատարել է ոչ թե մեկ, այլ երկու ուղևորություն՝ 1795—1796 թթ. և 1797—1798 թթ.: Ուղեգրության բնագրի ուսումնասիրությունը և, մասնավորապես, այնտեղ նկարագրված սլամական դրվագների թվագրումը պարզեց նաև, որ ուղեգրության տեղեկությունները հիմնականում վերաբերում են 1799—1813 թթ. ճանապարհորդությանը<sup>42</sup>: Ակներև դարձավ նաև մի այլ հակասություն: Ռ. Դանիբեգովը գրում է, թե ինքը 1795 թ. մարտի 15-ին ճանապարհվելով Հնդկաստան, տեղ հասնելուց հետո կախազիրը (հրովարտակը) հանձնում է Շահամիր Շահամիրյանի որդուն, քանի որ իր տեղ հասնելուց մեկ տարի առաջ Շահամիրը արդեն մահացել էր: Ռ. Օրբելին այդ առիթով նկատում է. «Դուրս գալով Վրաստանից 1795 թ. գարնանը անգամ այն ժամանակվա փոխադրական բոլոր դժվարություններով ու ճանապարհին ուշացում-

<sup>39</sup> Մ. Ձեքոն, რაფიელ დანიბეგაშვილი, «ლიტერატურა და ხელოვნება», 1949, № 45.

<sup>40</sup> Տե՛ս «Путешествия Рафаила Данибегашвили в Индию, Бирму» ..., էջ 67.

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 68: Այս փաստաթուղթը թվականի սխալ վերձանման պատճառով մինչև վերջերս թվագրվում էր 1795 թ. ապրիլի 2-ով:

<sup>42</sup> P. P. Орбели, К литературной истории «Путешествия в Индию» Рафаила Данибегова, «Страны и народы Востока», вып. 5, (Индия—страна и народ), М., 1967, էջ 216—218.

ներով հանդերձ Դանիբեգովը կարող էր դեռևս նրան կենդանի գտնել: Ե՞րբ է, այդ դեպքում, նա ժամանել Մադրաս: Հետագայում ոչ մի անգամ Դանիբեգովը տարեթվեր չի հիշատակում, այլ, ընդհակառակը, ժամանակի պատկերացումները կարծես թե ջնջում է»<sup>43</sup>: Այդ փաստը Ռ. Օրբելուն ստիպել է մտածելու, որ «Դանիբեգովը զուրկ չէ դիվանագիտական ունակություններից... [նա] կարողանում է հմտորեն լռել իր ճանապարհորդության իրական նպատակների մասին»<sup>44</sup>:

Այդ հակասությունը չի վրիպել նաև Ռ. Դանիբեգովի «Ճանապարհորդության» վերահրատարակության և ուսումնասիրման գործում զգալի վաստակ ունեցող Լ. Մարուաշվիլու ուշադրությունից: Նրա կարծիքով ևս «Ռ. Դանիբեգովը կողմից առաջին երկու ճանապարհորդությունները ձեռնարկվել էին Հերակլ II թագավորի հրամանով: Նրանց մասին շատ քիչ բան է հայտնի, թեև, ինչ-որ բացթողման հետևանքով, տպավորություն է ստեղծվել, իբր Դանիբեգովը գրքում նկարագրված երկրներն ու քաղաքները (հեղինակն) այցելել է հենց առաջին ուղևորության ժամանակ»<sup>45</sup>:

Ուշադրություն դարձնելով այն փաստի վրա, որ Հերակլ II-ի՝ Լոռիի մասին հրովարտակը Հնդկաստան է տարվել 1775 թ. և ոչ 1795-ին, ինչպես այդ նշված է Ռ. Դանիբեգովի մոտ և տարել է այն ոչ Ռ. Դանիբեգովը, այլ նրա հայրը՝ Հովսեփ հինգհարյուրապետը և ապա՝ իշխանական տիտղոս շնորհելու մասին եղած հրովարտակը ևս չի տարել Ռ. Դանիբեգովը, քանի որ այն 1786-ին է տրված, Գ. Զարդալիշվիլին եկել է այն եզրակացության, որ Ռ. Դանիբեգովի ուղեգրության առաջին պարբերությունը կեղծ է»<sup>46</sup>:

Ռ. Դանիբեգովի «Ճանապարհորդությանը» վերաբերող հայկական երկու նորահայտ փաստաթղթերի հրապարակման ու ուսումնասիրության առիթով արժարժվող խնդրին անդրադարձել է նաև Պ. Մուրադյանը: Նկատելով այդ հակասությունը, նա ևս գրում է. «Դանիբեգովը չէր կարող չորս տարի (1795—1798) գտնվել Հնդկաստանի ճանապարհին: Մյուս կողմից, դժվար է ենթադրել, թե խոսվում է երկրորդ ճանապարհորդության մասին, քանի որ բերված բառերում ակնարկ չկա այդ մասին, իսկ 1797 թ. ապրիլի 3-ի և անգամ 1799 թ. սեպտեմբերի 14-ի վավերագրերում այդ

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 215:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 211:

<sup>45</sup> Л. Маруашвили, Жизнь и деятельность Рафаила Данибегашвили, (очерк) տե՛ս «Путешествия Рафаила Данибегашвили в Индию, Бирму и другие страны Азии (1795—1827), М., 1969, էջ 56.

<sup>46</sup> Զ. Ֆարալուիշվիլի, Լանդշաֆտների մոզաիկոսի օնոլոգիա (սեռական մասերի օնոլոգիա) «ժողովուրդ», 24 օգոստոս, 1969, № 20 (4980).

მასին շկան ուղղակի ցուցումներ: Մարուաշվիլին գուցե և իրավացի է առաջին ճանապարհորդությունը 1795—1796 թթ. վերագրելով, բայց այդ պետք է ապացուցել»<sup>47</sup>:

Քննարկվող հարցի կապակցությամբ հետաքրքիր դիտարկումներ է անում Գ. Մայսուրաձեն և փորձում գտնել վերոհիշյալ հակասության բանալին: Նա ևս համաձայն է, որ «Ինչպես «Ճանապարհորդության» մեջ պահպանված տեղեկությունները, այնպես էլ հիշյալ փաստաթղթերի հաղորդումները առաջին երկու ճանապարհորդություններին Ռաֆայելի մասնակցության կամ էլ այդ ճանապարհորդություններում նրա դերի մասին, որոշակի կասկածներ, այնուամենայնիվ, հարուցում են»<sup>48</sup>:

Կասկածի առավել հաստատուն կռվան է Պ. Մուրադյանի, ապա նաև Գ. Մայսուրաձեի դիտած այն հանգամանքը, որ եթե Ռ. Դանիբեգովը մինչև 1799 թ.<sup>49</sup> կատարած լիներ Հերակլի կողմից հանձնարարված ճանապարհորդություն, ապա այն կարձանագրվեր Գիորգի XII-ի հրովարտակում:

Բոլոր այս հակասական տվյալները համաձայնեցնելու փորձ է Գ. Մայսուրաձեի այն ենթադրությունը, թե 1795—1799 թթ. երկիցս Հնդկաստան է ճանապարհվել Հովսեփ հինգհարյուրապետը, իր հետ տանելով նաև որդուն՝ Ռ. Դանիբեգովին, որի հետևանքով էլ Ռ. Դանիբեգովի առաջին երկու ճանապարհորդությունները ի մի են ձուլված և հենց այդ պատճառով է, որ Ռ. Դանիբեգովը գրում է տասնութ տարի Հնդկաստանում իր ճանապարհորդելու մասին<sup>50</sup>:

Ի մի բերելով Ռ. Դանիբեգովի առաջին (1795—96) և երկրորդ (1797—98) ճանապարհորդությունների մասին վերոհիշյալ կարծիքները, պետք է նշել հետևյալը. թերևս բացառված չէ, որ Ռ. Դանիբեգովի գրքի առաջին պարբերության մեջ առկա լինի նաև ցենզուրային կոմիտեի աշխատակցի գրիչը, ինչ, ըստ էության, ենթադրում է Լ. Մարուաշվիլին: Անշուշտ, տրամաբանական կլիներ Գ. Մայսուրաձեի վերջին ենթադրությունը, թե նա կարող էր հոր հետ միասին ճանապարհորդելով՝ իր ճանապարհորդությունների սկիզբ համարել 1795 թ., եթե չլինեին դրան հակասող այլ հանգամանքներ:

<sup>47</sup> П. М. Мурадян, Новые материалы о Рафаиле Данибегове, «Բանբեր Երեվանի համալսարանի», 1973, № 3, էջ 171, ծան. 15:

<sup>48</sup> Զ. Յախչիաձե, յոթերորդ դարի ռուսական ճանապարհորդությունները և մասնավորապես «Մուրադյանի», VI, տ. 1976, էջ 130:

<sup>49</sup> Պ. Մուրադյանի մոտ՝ մինչև 1897 թ. ապրիլի 3, որը քիչ հավանական է, քանի որ ստացականում սպասելի էլ չէր նման հաղորդում:

<sup>50</sup> Զ. Յախչիաձե, նշվ. աշխ., էջ 133:



Ռ. Դանիբեգովի երկի առաջին պարբերության մեջ եղած հակասություններն այնքան լուրջ ու ծանրակշիռ են, որ հնարավոր չէ լուծել այն արդարացնող ոչ մի ենթադրությամբ: Ավելին, 1795 թ. մարտի 15-ին Հովսեփի և Ռաֆայելի ճանապարհորդությունը բացառվում է նաև այն պատճառով, որ այդ թվականներին (1794—1795 թթ.) չի եղել վրաց արքունիքի կողմից նրանց տրված որևէ նման հանձնարարություն, որը և պիտի նրանց Հնդկաստան ուղևորվելու պատճառ դառնար: Եթե նման պատճառներ լինեին, ապա նրանք անպայման կարձանագրվեին Շահամիր Շահամիրյանի և նրա ժառանգների՝ Հերակլին կամ Ղուկաս կաթողիկոսին այդ թվականներին գրած նամակներում: Այդ թվականներից որևէ փաստաթուղթ չի հիշատակված նաև Շահամիր Շահամիրյանի ժառանգների մոտ եղած փաստաթղթերի վերոհիշյալ ցուցակում<sup>51</sup>: Այս եզրակացությունը ավելի քան համոզիչ է նաև այն պատճառով, որ, ինչպես տեսանք, բոլոր փաստաթղթերը մեր կողմից թվագրվում են և հաստատվում գրողությունների մեջ եղած վկայություններով ու համընկնում Հովսեփ Դանիբեկյանի կատարած բոլոր ճանապարհորդությունների հետ: Հետևաբար, Ռ. Դանիբեգովի այն հայտարարությունը, թե ինքը 1795 թ. մարտի 15-ին Հնդկաստան է տարել Հերակլ II-ի հրովարտակը Լոռիի մասին, չի համապատասխանում իրականությանը: Նման հրովարտակ գոյություն չի ունեցել այդ թվականին:

Այսպիսով, Ռ. Դանիբեգովի կատարած առաջին ինքնուրույն ճանապարհորդությունը տեղի է ունեցել 1797—1799 թթ.<sup>52</sup>, ընդ որում՝ առանց հոր, որը, ի միջի այլոց, հաստատվում է հենց իր ստացականի գոյության փաստով, երբ ինքն է ձեռնամուխ լինում, պայմանավորվում ու պրավ դնում իրենց ունեցվածքը:

Ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, Ռ. Դանիբեգովի «Ճանապարհորդության» մեջ ներկայացված է նրա 1799 թ. աշուն—1813 թ. ուղեվորությունը: Այս ճանապարհորդությունը մեզ հայտնի է իր մանրամասնությունների մի զգալի մասով: Ճանապարհորդության ժամանակ նրա, ենթադրելի է, գրառած նոթերի շնորհիվ, որոնց խմբագրմամբ կազմվում, թարգմանվում և ուսերենով լույս է տեսնում նրա «Ճանապարհորդություն դեպի Հնդկաստան» ուղեգրությունը, հայտնի է դառնում նաև նրա երթուղին՝ գոնե իր գլխավոր գծերով: Այդ ճանապարհի նկարագրությունը, որը XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին Անդրկովկասը Հնդկաս-

<sup>51</sup> Բնագիրը տե՛ս Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 250:

<sup>52</sup> Մենք չենք բացառում Ռ. Դանիբեգովի՝ հոր հետ միասին 1790-ական թթ. սկզբներին (և ոչ թե 1795 թ.) Հնդկաստան ճանապարհորդելու հավանականությունը:

տանին և Հնդկաստանը Ռուսաստանին կապող առավել բանուկ երթուղիներինց մեկն էր, անկասկած, խիստ հետաքրքրություն է ներկայացրել ուսական միջավայրում՝ ինչպես ժամանակի աշխարհագրական գիտելիքների ճշգրտման, այնպես էլ տնտեսական-քաղաքական շահերի առումով: Այդ մասին է վկայում թեկուզ և այն փաստը, որ ուղեգրության մեջ հատուկ նշվում են մի շարք հնդկական ու միջինասիական քաղաքներ իրար կապող առևտրաքարավանային ճանապարհների երկարությունները՝ վերստերով<sup>53</sup>:

Ուղեգրության առաջին պարբերությունից հետո, որի մասին խոսք եղավ վերևում, հեղինակը անմիջապես սկսում է իր երթուղու նկարագրությունը: Առաջին քաղաքը, որ նա այցելել է իր ճանապարհին, Թիֆլիսից 6 օրվա հեռավորության վրա գտնվող Ախալցխան է, իսկ ապա, 20 օրվա ճանապարհ կտրելով՝ էրզրում: Այստեղից 12 օրից հետո հասել է Մուշ, ուր նա գնում է հայոց Հովհան Մկրտչի վանք (իմա՝ Ս. Կարապետ) այցելելու համար, որը, ըստ հեղինակի վկայության, գտնվում էր Մուշից 30 վերստ հեռավորության վրա: Ռ. Դանիբեգովը հիացմունքով է նկարագրում նրա դիրքն ու գեղեցկությունը<sup>54</sup>: Մենք կարծում ենք, որ ճանապարհորդի այցելությունը՝ իր բուն ճանապարհից դուրս գտնվող Մուշի Ս. Կարապետ հայկական վանք, արժանի է հատուկ ուշադրության, մասնավանդ որ այդ վանքի վանականները և հատկապես նրա առաջնորդ Հովնանը եռանդուն գործունեություն էին ծավալել XVIII դարի երկրորդ կեսին<sup>55</sup>:

Ակադ. Ա. Ռ. Հովհաննիսյանի ընդգրկուն մենագրությունից հստակ երևում է, թե ինչպիսի կապ գոյություն ունեւ Հովսեփ Էմինի ու այդ վանքի վանահայր Հովնանի միջև, և որ՝ Հովնանը և նրա կուսակիցները լիովին պատրաստ էին թուրքական բռնակալությունից ազատագրվելու համար զինված ապստամբության դիմելու<sup>56</sup>: Մենք առայժմ ոչ մի վկայություն չունենք վանքի վանականների այդ գործունեության շարունակման մասին XVIII դարի 70—80 և 90-ական թթ.: Մեզ համար տվյալ դեպքում արտակարգ մեծ արժեք է ձեռք բերում Ռ. Դանիբեգովի հաղորդումը, քանի որ դրա հիման վրա հնարավոր է ենթադրել, թե Հնդկաստան ուղևորվելու Բաղդադի ճանապարհը, որ անցնում էր Արևմտյան Հայաստանով, պատահական ընտրության արդյունք չէր: Հայտնի է, որ այդ ճանապար-

<sup>53</sup> Путешествия Рафаила Данибегашвили в Индию, Бирму..., էջ 37

<sup>54</sup> նույն տեղում, էջ 16:

<sup>55</sup> А. Иоаннисян, Иосиф Эмин, Ер., 1945, էջ 146 և հետո:

<sup>56</sup> նույն տեղում:

հով է Հնդկաստան գնացել նաև Ռաֆայելի հայրը՝ Հովսեփ Դինիբեկյան-  
ցը: Բնական է ենթադրել, որ Հովսեփ էմինի՝ Հնդկաստան տեղափոխվելուց  
հետո մի կողմից նրա և Շահամիրյանների, մյուս կողմից՝ Մուշի Ս. Կա-  
րապետ վանքի վանականների միջև դեռևս շարունակում էին գոյություն  
ունենալ ինչ-ինչ կապեր: Չի բացառվում նաև Մուշի Ս. Կարապետ վանքի  
վանականների կապը վրաց արքունիքի հետ, թեև առայժմ հիշյալ թվա-  
կաններից այդ հաստատող այլ փաստ չունենք, բացի Ռ. Դանիբեգովի  
այցելության իրողությունից, որը չի կարող բացատրվել զուտ կրոնական  
միտումներով կամ ճանապարհորդական հետաքրքրասիրությամբ:

Ռ. Դանիբեգովի այցելած հաջորդ քաղաքները ևս «Ճանապարհոր-  
դության» մեջ ներկայացված են համառոտ պարբերություններով, սակայն  
դիպուկ արտահայտություններով տրված են այդ քաղաքների կյանքի  
ակնհայտ յուրահատկությունները: Մուշից հետո Ռ. Դանիբեգովն անցնում  
է էրզանի, Բալու<sup>57</sup>, Դիարբեքիր, Մոսուլ, Բաղդադ և Բասրա, իսկ այստե-  
ղից Հնդկաստան անցնելու համար գնում է Մասկատ: Վերջինից, ինչպես  
ինքն է գրում, նա 22 օրում հասնում է Բոմբեյ, նավարկում Ցեյլոն կղզի և,  
նորից անցնելով մայր ցամաք ու այցելելով Բոնդիշերի և Տրակբեր քա-  
ղաքները՝ հասնում է Մադրաս:

Մադրասը, ըստ Գիորգի XII-ի հրովարտակի, պետք է լիներ Ռ. Դա-  
նիբեգովի ճանապարհորդության նպատակակետը: Ուղեգրության մեջ,  
սակայն, քաղաքի մասին համառոտ տեղեկություններից հետո, նա գրում  
է. «Из города Мадраса, по кратком моем в нем пребывании, же-  
лая ознакомиться с другими городами, отправился я...»<sup>58</sup>,  
այլևս չնշելով, սակայն, թե ինքը գտա՞վ Շահամիրյանի որդուն, որի  
մոտ ճանապարհվել էր: Գիորգի XII-ի նամակի առկայությունը նազար ու  
Հովհաննես Շահամիրյանի վերոհիշյալ ցուցակում վկայում է, որ նա իրոք  
կատարել էր Գիորգիի հանձնարարությունը և, հավանական է, հակառակ  
իր պնդման, Մադրասում քիչ ժամանակ չի մնացել: Նա, հավանաբար,  
այստեղ էլ լսել է Վրաստանի՝ Ռուսաստանին միացվելու մասին և, այլևս  
Վրաստանում անելիքներ շտեմանելով, բռնել Ռուսաստան վերադարձի  
ճանապարհը: Ուղեգրության մեջ այնուհետև թվարկվում են Բիրմայի ու  
Հնդկաստանի այն քաղաքները, որոնցով անցել է նա Ռուսաստան վերա-

<sup>57</sup> Ռ. Դանիբեգովի ուղեգրության մեջ նշված է Փալա: Փալա—Բալու կռահումը  
պատկանում է Գ. Զարդալիշվիլուն: Տե՛ս «ოცდაშვიდი წელი აზიის ქვეყნებში», ქართვე-  
ლი აზნაურის მოგზაურობანი, თარგმნა. წინასიტყვაობა, შენიშვნები დაურთო... პროფ.  
გრიგოლ ზარდალიშვილმა, თბ., 1971, էջ 56-57-58-59-60-61-62-63-64-65-66-67-68-69-70-71-72-73-74-75-76-77-78-79-80-81-82-83-84-85-86-87-88-89-90-91-92-93-94-95-96-97-98-99-100-101-102-103-104-105-106-107-108-109-110-111-112-113-114-115-116-117-118-119-120-121-122-123-124-125-126-127-128-129-130-131-132-133-134-135-136-137-138-139-140-141-142-143-144-145-146-147-148-149-150-151-152-153-154-155-156-157-158-159-160-161-162-163-164-165-166-167-168-169-170-171-172-173-174-175-176-177-178-179-180-181-182-183-184-185-186-187-188-189-190-191-192-193-194-195-196-197-198-199-200-201-202-203-204-205-206-207-208-209-210-211-212-213-214-215-216-217-218-219-220-221-222-223-224-225-226-227-228-229-230-231-232-233-234-235-236-237-238-239-240-241-242-243-244-245-246-247-248-249-250-251-252-253-254-255-256-257-258-259-260-261-262-263-264-265-266-267-268-269-270-271-272-273-274-275-276-277-278-279-280-281-282-283-284-285-286-287-288-289-290-291-292-293-294-295-296-297-298-299-300-301-302-303-304-305-306-307-308-309-310-311-312-313-314-315-316-317-318-319-320-321-322-323-324-325-326-327-328-329-330-331-332-333-334-335-336-337-338-339-340-341-342-343-344-345-346-347-348-349-350-351-352-353-354-355-356-357-358-359-360-361-362-363-364-365-366-367-368-369-370-371-372-373-374-375-376-377-378-379-380-381-382-383-384-385-386-387-388-389-390-391-392-393-394-395-396-397-398-399-400-401-402-403-404-405-406-407-408-409-410-411-412-413-414-415-416-417-418-419-420-421-422-423-424-425-426-427-428-429-430-431-432-433-434-435-436-437-438-439-440-441-442-443-444-445-446-447-448-449-450-451-452-453-454-455-456-457-458-459-460-461-462-463-464-465-466-467-468-469-470-471-472-473-474-475-476-477-478-479-480-481-482-483-484-485-486-487-488-489-490-491-492-493-494-495-496-497-498-499-500-501-502-503-504-505-506-507-508-509-510-511-512-513-514-515-516-517-518-519-520-521-522-523-524-525-526-527-528-529-530-531-532-533-534-535-536-537-538-539-540-541-542-543-544-545-546-547-548-549-550-551-552-553-554-555-556-557-558-559-560-561-562-563-564-565-566-567-568-569-570-571-572-573-574-575-576-577-578-579-580-581-582-583-584-585-586-587-588-589-590-591-592-593-594-595-596-597-598-599-600-601-602-603-604-605-606-607-608-609-610-611-612-613-614-615-616-617-618-619-620-621-622-623-624-625-626-627-628-629-630-631-632-633-634-635-636-637-638-639-640-641-642-643-644-645-646-647-648-649-650-651-652-653-654-655-656-657-658-659-660-661-662-663-664-665-666-667-668-669-670-671-672-673-674-675-676-677-678-679-680-681-682-683-684-685-686-687-688-689-690-691-692-693-694-695-696-697-698-699-700-701-702-703-704-705-706-707-708-709-710-711-712-713-714-715-716-717-718-719-720-721-722-723-724-725-726-727-728-729-730-731-732-733-734-735-736-737-738-739-740-741-742-743-744-745-746-747-748-749-750-751-752-753-754-755-756-757-758-759-760-761-762-763-764-765-766-767-768-769-770-771-772-773-774-775-776-777-778-779-780-781-782-783-784-785-786-787-788-789-790-791-792-793-794-795-796-797-798-799-800-801-802-803-804-805-806-807-808-809-810-811-812-813-814-815-816-817-818-819-820-821-822-823-824-825-826-827-828-829-830-831-832-833-834-835-836-837-838-839-840-841-842-843-844-845-846-847-848-849-850-851-852-853-854-855-856-857-858-859-860-861-862-863-864-865-866-867-868-869-870-871-872-873-874-875-876-877-878-879-880-881-882-883-884-885-886-887-888-889-890-891-892-893-894-895-896-897-898-899-900-901-902-903-904-905-906-907-908-909-910-911-912-913-914-915-916-917-918-919-920-921-922-923-924-925-926-927-928-929-930-931-932-933-934-935-936-937-938-939-940-941-942-943-944-945-946-947-948-949-950-951-952-953-954-955-956-957-958-959-960-961-962-963-964-965-966-967-968-969-970-971-972-973-974-975-976-977-978-979-980-981-982-983-984-985-986-987-988-989-990-991-992-993-994-995-996-997-998-999-1000

<sup>58</sup> «Путешествия Рафаила Данибегашвили...», էջ 21.

դարձի իր ճանապարհին. Բեկու (Ռանգուն) քաղաքում նա հանդիպել է հայերի, որոնք, ըստ իր հաղորդման, փրկել են իրեն անխուսափելի մահից<sup>59</sup>: Ռանգունից նա ճանապարհավորում է Կալկաթա, տեղ հասնում մի շարք արկածներից հետո: Այստեղ հայերի առկայության փաստը նշում է հետևյալ կերպ. «Там весьма много Армян, которые живут весьма богато и пышно, производят знатный торг с иноземцами»<sup>60</sup>.

Շարունակելով ճանապարհը, Ռ. Դանիբեգովը լինում է Դելիում<sup>61</sup>, Լահորում, Քաշմիրում, Տիբեթում, Ախսու, Տուրֆան քաղաքներում և վերադառնում Սեմիպալատինսկ, իսկ այստեղից Օմսկ անցնելուց հետո ճանապարհորդությունն ավարտում է Մոսկվայում՝ 1813 թ.:

1815 թ., Եփրեմ կաթողիկոսից Հովակիմ Լազարյանին ուղղված հանձնարարական նամակ վերցնելով, Մոսկվա է տեղափոխվում նաև Ռաֆայելի կրտսեր եղբայր Հովսեփը: Եփրեմ կաթողիկոսի նամակում մասնավորապես նշված է, որ «սույն գրաբեր ազնիւ Յովսէփ Յովսէփեան Դինիբէկեանց, որ է յազգէն ֆռանկաց և ի Թիֆլիզ բնակեալ, ի ներկայս եկեալ էր ի սուրբ Աթոռս յուխտ և յերկրպագութիւն... Դորին եղբայր ազնիւ Ռափայէլն եկեալ ի Հնդկաց, գոլով այդր՝ ի Մոսկով կամ ի Ս. Պ. Բուրգ,

<sup>59</sup> Նավաշինարանում միամտաբար կանգնել է արքայի համար կառուցվող նավի տախտակներից մեկի վրա և ցեխոտել այն. «...и может быть, я лишился бы жизни, ежелиб некоторые из Армян, очень известные там по своему богатству, не вступились за меня и не уверили бы начальника, что я это сделал по моему неведению». *Նույն տեղում, էջ 23:*

<sup>60</sup> *Նույն տեղում, էջ 25:*

<sup>61</sup> Ռ. Դանիբեգովը իր «Ճանապարհորդության» մեջ նշում է, որ իր՝ Դելիում եղած ժամանակ «возложена на меня была от Гальского (իմա Дельского = Դելի—Պ. Զ.) владельца должность собирать положенную на народ подать. За сие от царя положено мне было жалованья ежемесячно 200 рупий». (*Նույն տեղում, էջ 29*),: Այդ հաղորդումը կասկածի տակ էր առնվում որոշ ուսումնասիրողների կողմից՝ ելնելով այն բանից, որ մի օտարականի, որպիսին Ռ. Դանիբեգովն էր Հնդկաստանում, վստահվել է նման պատասխանատու պաշտոն: Հարցի մեջ պարզություն է մտցնում Մերոպ Սեթի աշխատության մեջ պահպանված մի վկայություն, որտեղից հայտնի է դառնում թե Դելիում Ռ. Դանիբեգովն ունեցել է Անտոն անունով հորեղբայր, որի մասին ինքը ոչինչ չի հիշատակում, բայց որը, ըստ երևույթին, այդտեղ բնակվել է բավական երկար ժամանակ և մահացել ու թաղվել Դելիում (1801 թ. սեպտեմբերի 16): Ահա նրա տապանադիրը. «There are in that isolated cemetery six tombstones with Armenian inscriptions, the following being translations... „This is the tomb of Anthony the son of Khatin of the family of Dinibeg of Tiflis who departed to God on the 16th September 1801, in the city of Dilli (Delhi)“. *Mesroub Jacob Seth, Armenians in India the Earliest Times to the Present Day, Calcutta, 1937, էջ 197, № 6.*

ինքն ևս հանդերձեալ է գալ առ նա»<sup>62</sup>: Ռաֆայել Դանիբեգովի նման մի հմուտ ճանապարհորդ այդ թվականներին ռուսական իշխանությունների կողմից աննկատ չէր կարող մնալ: Բանն այն է, որ այդ տարիներին գնալով ավելի էին աշխուժանում Ռուսաստանի հետաքրքրությունները Միջին Ասիայի, Աֆղանստանի և Հնդկաստանի նկատմամբ: Ռուս-հնդկական առևտրական հարաբերություններում նշանակալից դեր էին խաղում անդրրկովկասյան և, մասնավորապես, հայ վաճառականները, որոնք դեռևս XVII դարից հիմնվել էին Հնդկաստանում և ակտիվ առևտուր էին անում աշխարհի շատ երկրներում, այդ թվում նաև՝ Ռուսաստանում<sup>63</sup>:

XVIII դարի երկրորդ կեսից Ռուսաստանում բարձր դիրքի էին հասել կազարյանները, որոնք բազմաթիվ թելերով կապված էին շատ երկրների հայ գործիչների հետ: Գլխավորապես նրանց միջոցով էր իրագործվում ռուսական արքունիքի հետ հայերի կապը: Ռուսաստան մեկնած և օժանդակության կարոտ հայերը առաջին հերթին նրանց էին դիմում՝ օգնության խնդրանքով, իսկ կազարյանները հմտորեն օգտագործում էին նրանց՝ Ռուսաստանի համար կարևորություն ներկայացնող մի շարք ասպարեզներում (առևտրական, դիվանագիտական, հետախուզական, ռազմական և այլն) և դրանով իսկ շահում ցարական կառավարության ակնհայտ վստահությունը: կազարյանների գործուն նախաձեռնությամբ ու արքունիքի հետ համաձայնեցված էին իրագործվում նաև Ռուսաստանի համար կարևոր նշանակություն ունեցող Միջին Ասիա, Աֆղանստան ու Հնդկաստան ուղարկվող դիվանագիտական ու առևտրական առաքելությունները: Եթե անգամ կազարյանների անմիջական առևտրական գործակալները չէին, ապա, համենայն դեպս, նրանց օժանդակությամբ ու կարգադրությամբ էին գործում նաև ռուս-հնդկական հարաբերություն-

<sup>62</sup> П. М. Мурадян, նշվ. աշխ., էջ 176: Մոսկվայում բնակվող հայերի ցուցակում արձանագրված են Դինիբեկյանների տոհմին պատկանող հետևյալ անձնավորությունները (որոնք վրիպել են ռուսամասիրողների ուշադրությունից). «Յարութին Դինիբեգեանց, Յովսէփ Դենեպէկեանց, Նիկողայոս Դենեպէկեանց» (տես «Հարիրամեակ կենարար սուրբ խաչի վերացման Մոսկվայի հայոց եկեղեցւոյն, կառուցելոյ 1779 թ. Քրիստոսի և Հայոց ՌՄԻԸ», աշխատասիրութիւն Յակոբայ Սուրենեանց, Ռոստով (Դոնի վերայ), 1879, էջ 124—125: Բացառված չէ, որ սրանք լինեն Ռաֆայելի կամ Հովսէփի ժառանգները, հակառակ դեպքում նրանց Մոսկվայում մշտապես բնակվելու փաստը անհասկանալի պիտի մնար:

<sup>63</sup> Այստեղ նրանց հայտնվելու մասին մեր ունեցած առաջին տեղեկությունը վերաբերում է 1663 թ.: Русско-индийские отношения в XVII., сборник документов, М., 1958, էջ 141—150. П. А. Чобанян, Роль закавказских купцов в русско-индийской торговле (XVIII—начало XIX в.), «Бартольдские чтения, 1978, год четвертый, Тезисы докладов и сообщений, М., 1978, էջ 66.

ներում մեծ ավանդ ներդրած Ս. Մադաթովը, Մ. Ռաֆաիլովը, Իվան Մուրատովը և այլք: Պատահական չէ, հետևապես, որ Հնդկաստանից Մուսկվա ժամանած Ռ. Դանիբեգովին ևս, ինչպես Պ. Մուրադյանն է նկատել, մենք տեսնում ենք կաղարյանների հովանավորության տակ: Նրանց հանձնարարությունները Հ. Ալամդարյանը խմբագրել ու թարգմանել է Դանիբեգովի «Ճանապարհորդությունը»: Անհավանական չէ, որ Ռ. Դանիբեգովն իր վերադարձի ժամանակ կաղարյաններին հնդկահայ համայնքին առնչվող հաղորդելիք հանձնարարություններ ունենար, որի հետ նա, շարունակելով հոր գործունեությունը, շփվում էր տասնյակ տարիներ:

1815 թ. Դանիբեգովը կրկին ուղևորվում է Հնդկաստան, այս անգամ՝ Ռուսաստանից և, հասկանալի է, բացի իր առևտրական շահերից, ունենալով նաև ռուսական արքունիքի դիվանագիտական, քաղաքական, առևտրական ու հետախուզական հանձնարարությունները: Այդ ապացուցվում է թեկուզ և նրանով, որ 1820 թ. հուլիսին վերադառնալով Ռուսաստան, Սեմիպալատինսկում իր տված ցուցումների ժամանակ նա նշում է, թե ինքը «1815 թ. հոկտեմբերի 11-ին Սեմիպալատինսկի մաքսատանը անձնագիր վաճառելու համար ապրանքներ և ռուսական ուղեկցող ջոկատ ստանալով, ճանապարհվել է Քաշմիր, իսկ այստեղից շինական քաղաք Կուլջա...»<sup>64</sup>: Այս ճանապարհորդության ժամանակ Ռ. Դանիբեգովը Կուլջայից ուղևորվել է Ախսու, եղել Յարկանդ, Տիբեթ, Քաշմիր, Լահոռ, Դելի, Միրուտ, Կանբուր, Բինարես քաղաքներում և բռնել վերադարձի ճանապարհը: Միջին Ասիայից նա իր հետ բերել է կիրգիզների կողմից տրված մի գրություն, որով նրանք ռուսական հպատակություն էին ընդունում և Ռ. Դանիբեգովի ներկայություններ, որպես Ռուսաստանի ներկայացուցչի, ղուրանով երդման արարողություն կատարում<sup>65</sup>:

1820 թ. աշնանը վերադառնալով Ռուսաստան, Ռ. Դանիբեգովը այս անգամ ևս երկար չի մնում և 1822 թ. սկզբներին նոր հանձնարարություններով կրկին ճանապարհվում է Հնդկաստան: Այդ մասին մենք տեղեկանում ենք Օրենբուրգի սահմանային հանձնաժողովի նախագահ Գ. Ֆ. Գենսի գրառումներից, որին Ռ. Դանիբեգովը պատմել էր իր ուղևորության արդյունքների մասին՝ ճանապարհորդությունից վերադառնալուց հետո

<sup>64</sup> Այս փաստաթուղթը Օմսկի պետական արխիվում (ГОО, ф. 2 оп. 1, д. 374) հայտնաբերել է Վ. Պլոսկիխը: Բնագիրը նա ուղարկել է Քբիլիսի, որտեղ այն տպագրվել է վրացերեն թարգմանությամբ. տե՛ս Բ. ԼանդեյցաՊեյլոնի Եմբրոմի ձեռագրերի մասին «Մենք օգտվում ենք հրապարակված սույն բնագրից»:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 20—22:

(1827 թ.): Գրառումը վերնագրված է՝ «Рассказ грузинского дворянина губернского секретаря Рафаила Данибекова»<sup>66</sup>: Այդ փաստաթղթից հայտնի են դառնում ճանապարհորդության հետ կապված մի շարք մանրամասներ: Ի տարբերություն նախորդ ճանապարհորդության, Ռ. Դանիբեգովն այս անգամ Հնդկաստան է ուղևորվել ոչ Միջին Ասիայով, այլ «из Астрахани по Каспийскому морю в Мазандаран, откуда через Тегеран, Испаган, Шираз в Абушир, сел там на английское судно и на нем прибыл в Бомбей, откуда поехал прямым путем в Лагор, и через Кашемир, Кабул в Бухару, откуда с караваном в начале июля месяца 1827 года прибыл в Орскую крепость»<sup>67</sup>.

Գ. Գենսի գրառումներում այնուհետև պատմվում է Հյուսիսային Հնդկաստանում, Աֆղանստանում և Պակիստանում անգլիացիների գործունեության մասին, որպիսիք խիստ կարևոր էին ուսական իշխանությունների համար: Թվարկելով անգլիացիների նվաճումները նշված երկրներում Ռ. Դանիբեգովն արձանագրում է. «Вообще англичане в Индии более и более усиливаются»<sup>68</sup>.

1827 թվականին Ռուսաստան վերադարձի հաղորդումով մեր տեղեկությունները նրա մասին սպառվում են: Թե ինչ գործունեություն է ծավալել նա այնուհետև և երբ է մահացել՝ մնում են անհայտության մեջ:

Ռ. Դանիբեգովի «Ճանապարհորդություն դեպի Հնդկաստան» ուղեգրությունը Մոսկվայում 1815 թ. լույս տեսնելուց հետո երկար ժամանակ գրեթե մոռացության էր տրված: XIX դարի վերջին այդ փաստին առաջին անգամ անդրադարձել է Ալ. Երիցյանը: «Из нашей старины» վերնագրով իր լրագրային հոդվածում Ռ. Դանիբեգովի մասին տեղեկություններ հաղորդելով հանդերձ նա հարցնում է. «Չի՞ կարող արդյոք որևէ մեկը մամուլում հաղորդել այդ հետաքրքիր երկի բովանդակությունը»<sup>69</sup>: Հետագայում թեև ինչ-ինչ շափով այդ ուղեգրությունը ուշադրության էր առ-

<sup>66</sup> Ինչպես այս գրառումից է երևում, Ռ. Դանիբեգովը 1820 թ. ճանապարհորդությունից վերադառնալուց հետո ստացել էր «գուբերնսկի սեկրետարի» պաշտոն: Փաստաթուղթը հայտնաբերել է Ե. Լյուստերնիկը 1964 թ., տե՛ս Ե. Կ. Լյուստերник, Русско-индийские экономические, научные и культурные связи в XIX веке, М., «Наука», 1966. Օրենբուրգից Գենսի գրառումները բերել ու հրատարակել է Գր. Զարդալիշվիլին, տե՛ս Յ. Ֆահրադաղոմշვილი, «23 წელი აზიასში», «კომუნისტი», 1964, 18 სექტემბერი, № 219 (13035).

<sup>67</sup> «Путешествие Рафаила Данибегашвили в Индию, Бирму..., էջ 70

<sup>68</sup> նույն տեղում:

<sup>69</sup> А. Ерицов, Из нашей старины, «Новое обозрение», Тифлис, 13 декабря, 1890 г., № 2403, էջ 1.

ნრძელ, სასაქონო მხნე 1949 წ. შ. შხაჩაძის კოლმხე გიჯალ ფასთა-  
ბეჭდის საკონსტრუქციო, ლორე სათავადადის ანარკა ჯე რარბელ<sup>70</sup>:

1950 წ. შ. ბორგანხიჯიქის საკონსტრუქციო და შ. ბანხიქევიქი «შანა-  
ყარსორიქის» კონსტრუქციო ქრეხერენს კათარაბ შარკამანიქიონერ,  
ანაჯარანიქი და საქმედადნერიქი: სკა სათარაქიქიონერ მხდაყხა  
ნაყასთომ და შ. ბანხიქევიქი ხერი ნკათამამჟ მასნაგხითასკანს სათა-  
ქრეხერიქის დაქმადანერ: სკანს სკამომ და სადაქასკი გიჯათასქმელ ქრეხ  
მასნაგხითაქისერ ნქირქმად თარქერ აჯასათიქიონენერიქი: 1961 წ.  
შოსქმეკომ ს. შაროლაჯიქი კოლმხე ქერასათარაქიქომ და შ. ბანხი-  
ქევიქი «შანაყარსორიქის» 1815 წ. კონსტრუქციო ქმედიქი ლიკა თხადა  
ქნაგხირქ, სათარაქიქი ანაჯარანიქი, დაწმადერიქიონენერიქი და სა-  
ქმედადნერიქი<sup>72</sup>: 1963 წ. შქიქიქიქომ ხერიქი სათარაქიქომ და «შანა-  
ყარსორიქის» ქრეხერენს ნორ შარკამანიქიონერ<sup>73</sup>: ბ ქერიქი, 1969 ქმ-  
კანსინს შოსქმეკი «ქრეხერენს» სათარაქიქიქიონერ კონსტრუქციო, გინქი და  
ანგქერენს ქმედიონერიქი ლიკა და ქნდაქომ შ. ბანხიქევიქი ხერიქი ქსათ ს.  
შაროლაჯიქი 1961 წ. სათარაქიქის ქმქარქმად და ქრეხქმად თხა-  
ქიქი<sup>74</sup>: სკა სათარაქიქიონერ, ხინს ქსთქ, ნჯანასკაქიქიონენს ქნქლასნხე  
შ. ბანხიქევიქი ხერიქი სათარაქიქიქი მასნაგხითაქის ქრეხანასკი: შათ  
ქანხუდა ლიკა თხაქი შ. შორაქიქის კონსტრუქციოქიონერ, კრთხე სა-  
ყარაქიქიქი და ნასკ კარსორ არქსქ კონსტრუქციოქიონენერიქი ქასათაქიქიქი, კრინქ  
სანარაქიქიქიონერ ხინს თაქიქი მქ ჯარქ დაქრთომენსერ კათარქიქი მხნე

<sup>70</sup> საგანიქიონერ და შხრსა მქასნს სქ. შიქსადაქი აჯასათიქიონერ, კრთხე სადაქმ-  
თარქარ ქნქარდაქი 5—6 ჯე ქრა, ქერაჯარაქიქიქი და გრქი ქიქანდაქიქიონერ:  
ქრ. რუხაქი, „ქართული ებოსი“.., ჯე 110—115:

<sup>71</sup> რაფიელ დანიბეგაშვილი, მოგზაურობა ინდოეთში, თარგმანი, წინასიტყვაობა და  
დამატებანი შენიშვნებითურთ დაურთო ს. იორდანიშვილმა, თბ., 1950:

<sup>72</sup> Путешествие Рафаила Данибегашвили, Очерк, Комментарии и библио-  
графия Л. Н. Маруашвили, М., 1961.

<sup>73</sup> „თგრამეტი წელი აზიის ქვეყნებში, რაფიელ დანიბეგაშვილის მოგზაურობა, თარ-  
გმანი, რედაქცია, შენიშვნები, ბიბლიოგრაფია და ნარკვევი გეოგრაფიული მეცნ. დოქტო-  
რის ლევან მარუაშვილისა, საარქივო საბუთებისა და სამარშრუტო რუკის დართვით, თბ.,  
1963. ქერასათარაქიქიქი და კონსტრუქციოქიონენერიქი და არქიქიქი-  
ქის ქმქერაქიქიქი კონსტრუქციოქიონენერიქი შარკამანიქიქიქიქი სასქერა (ჯე 95—121):

<sup>74</sup> «Путешествия Рафаила Данибегашвили в Индию, Бирму и другие стра-  
ны Азии (1795—1827)», М., 1969. სკა სათარაქიქიქიონერიქი ხერიქი თარქი ანხე  
1971 წ., ლიკა თხაქი ქრეხერენს მქ ნორ შარკამანიქიქიონერ და: სქა „ოცდაშვიდი წელი  
აზიის ქვეყნებში“, ქართველი აზნაურის რაფიელ დანიბეგაშვილის მოგზაურობანი, თარგმ-  
ნა, წინასიტყვაობა, შენიშვნები, ახალი მასალები და ფოტოილუსტრაციები დაურთო...  
გრიგოლ ზარდალიშვილმა, თბ., 1971.



այժմ Ռ. Դանիբեգովի ուղեգրության շուրջ եղած պատկերացումների մեջ<sup>75</sup>:

Այժմ երկու խոսք Ռ. Դանիբեգովի «Ճանապարհորդության» ինքնագրի լեզվի մասին: Առաջին հայացքից պարզ թվացող այդ հարցը վերջին տարիներս արժարժման նյութ է դարձել, և հայտնվել են իրարամերժ կարծիքներ: Երկի 1815 թ. հրատարակության և՛ տիտղոսաթերթի, և՛ Ալեքսանդր I-ին ուղղված ձոնի մեջ երկիցս կրկնվում է, թե «Ճանապարհորդությունը» ուսերենի է թարգմանվել վրացերենից: Ինչպես երևում է, ծանոթ չլինելով «Ճանապարհորդության» ուսերեն բնագրին ու ընդգրծված այս տեղեկությանը, Հ. Ալամդարյանի անտիպ նամակից Դանիբեգովին՝ վերաբերող հատվածը վկայակոչելիս Շ. Նազարյանը ենթադրել է, թե «Ալամդարյանը մեծ ջանասիրությամբ, ըստ երևույթին լատիներենից, հայերենի է թարգմանում Ճանապարհորդական մի աշխատություն»<sup>76</sup>: Մասնագիտական գրականության մեջ արտահայտված է մեկ այլ ենթադրություն ևս. իր աշխատության ծանոթագրության մեջ Ե. Լյուստերնիկը գրում է. «1813 թ. Պետերբուրգում Ռ. Դանիբեգովի Ճանապարհորդական գրառումները լույս տեսան ֆրանսերեն լեզվով, իսկ երկու տարի անց նրանք ուսերենով հրատարակվեցին Մոսկվայում»<sup>77</sup>:

Ինչպես Շ. Նազարյանի, այնպես էլ Ե. Լյուստերնիկի ենթադրությունները չեն հաստատվում և որևէ կովան չունեն, ուստի նրանց այլևս չենք անդրադառնում: «Ճանապարհորդության» բնագրի լեզվի խնդրին հանգամանորեն անդրադարձել է Պ. Մուրադյանը: Նա դիմել է ուսերեն տեքստի լեզվաոճակոն և բառազանձային քննությանը և երևան բերել մի շարք ինքնատիպություններ, որոնք հեղինակի կարծիքով հայկաբանություններ են: Նա եզրակացնում է. «Անշուշտ, նման քանակությամբ օրինակների առկայության դեպքում չի կարելի կասկածել ենթադրության իրական լինելու մեջ, որ Հ. Ալամդարյանը թարգմանել է հայերենից, սակայն չափազանց կտրուկ կլիներ հայտարարել «Ճանապարհորդության»

<sup>75</sup> П. М. Мурадян, *նշվ. աշխ.*:

<sup>76</sup> Շ. Նազարյան, *Հարություն Ալամդարյանի գործունեության մոսկովյան տարիները, «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 183:*

<sup>77</sup> Е. Я. Люстерник, *Русско-индийские экономические, научные и культурные связи в XIX в., М., 1966, էջ 106, ծան. 2: Պրոֆ. Ե. Լյուստերնիկի հետ բանավոր զրույցի ժամանակ, սակայն, պարզվեց, որ նա Ռ. Դանիբեգովի գրքի նման հրատարակության ծանոթ չէ: Մեր պրպտումներից պարզվեց նաև, որ Դանիբեգովի գրքի ֆրանսերեն հրատարակություն գոյություն չունի ոչ Սովետական Միության, և ոչ էլ Ֆրանսիայի գրադարաններում, ինչ-որ անկարելի կլիներ, եթե նման հրատարակություն իրոք կատարված լիներ: Մենք ստուգեցինք նաև Պետերբուրգում 1813—15 թթ. լույս տեսած պարբերական մամուլը, որտեղ ևս ոչ մի հետք չկար նման, թեկուզ և հատվածաբար, թարգմանության:*

ողջ բնագրի հայալեզու լինելու մասին... Ակնհայտ է, այդ նշումներն ու գրառումները մասամբ կատարված են եղել վրացերեն լեզվով, որը և նրան հիմք է տվել խոսելու վրացերենից թարգմանելու մասին: Կրկնում եմ, հեղինակի ու թարգմանչի համատեղ աշխատանքը կարող էր ընթանալ հայերեն լեզվով, որի հետևանքով և ուսերեն բնագրում շկան վրացաբանության հետքեր»<sup>78</sup>:

Լիովին համամիտ լինելով Պ. Մ. Մուրադյանի վերջին եզրակացությունը, թե հեղինակի և թարգմանչի համատեղ աշխատանքը կարող էր ընթանալ հայերեն լեզվով, ինչպես նաև ընդունելով այն փաստարկները, որոնցով ապացուցվում է, որ խմբագրման ժամանակ Հ. Ալամդարյանը հայկական գրավոր սկզբնաղբյուրներից<sup>79</sup> հատվածներ է ներմուծել Ռ. Դանիբեգովի ուղեգրության մեջ՝ թարգմանելով դրանք ուսերենի<sup>80</sup>, մենք գտնում ենք, որ հիշյալ փաստերը շեն բացառում Ռ. Դանիբեգովի ամբողջ գրառումների վրացալեզու լինելու հնարավորությունը: Եվ ապա՝ Պ. Մուրադյանի մատնացուցած հայկաբանություններից մի քանիսը իրականում այդպիսին չպիտի համարվեն: Խոսքը վերաբերում է «Ճանապարհորդության» մեջ առկա „сделать вопрос“, „большой брат“ և „упражняются в торговле“ արտահայտություններին. Առաջինը հեղինակը համարում է հայերեն «հարցանել» բայի տառացի թարգմանություն, իսկ երկրորդը՝ «մեծ եղբայր» արտահայտության պատճենում: Պետք է նշել, սակայն, որ այդ երկուսն էլ ժամանակին գործածական են եղել ուսերենում<sup>81</sup>: Ի միջի այլոց „большой брат“ արտահայտությունը գործածված ենք գտնում 1682 թ., անկասկած, վրացերենից ուսերենի թարգմանված մի ձեռագրում<sup>82</sup>: Նույնը վերաբերում է նաև Ռ. Դանիբեգովի երկի մեջ գործածված „упражняются в торговле“ արտահայտությանը, որը խիստ գործածա

<sup>78</sup> П. М. Мурадян, Новые материалы о Рафаиле Данибегове, էջ 180—181:

<sup>79</sup> «Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի», աշխատասիրութեամբ Ստեփաննոսի Գիւէր Ագոնց..., հ. IV, Վենետիկ, 1805:

<sup>80</sup> П. М. Мурадян, նշվ. աշխ., էջ 182:

<sup>81</sup> Путешествие по Египту и Нубии, в 1834—1835 г. Авраама Норова, ч. I, СПб., 1840, էջ 99: «Африка глазами наших соотечественников, М., 1974, էջ 253. «Первый вопрос его мне сделанный...»

<sup>82</sup> Տե՛ս Սալտիկով-Շչեգրինի անվ. դրագ., ձեռագրերի բաժին, F IV, 342, № 9, թ. 20 ա—բ: Տե՛ս նաև տ. Գիցաձե, ერთի ეპიზოდი XVII საუკუნის 60- იანი წლების რუსეთ-საქართველოს ურთიერთობის ისტორიიდან, „ქართული სამეფო-სამთავროების საგარეო პოლიტიკის ისტორიიდან, I, თბ., 1970, էջ 101, ժան. 10.

կան էր XVIII—XIX դդ. ուսական գրականության մեջ, հետևաբար այդ ևս հայկաբանությունն դիտվել չի կարող<sup>83</sup>: Սակայն խնդիրն այն է, որ հայկաբանություններն իսկ վերջնականապես չեն կարող լուծել բնագրի ինչ լեզվով գրված լինելու հարցը, որովհետև դրանք շարադրված ու խմբագրված են Հ. Ալամդարյանի ձեռքով, իսկ վերջինս, հարկավ, կարող էր հայկաբանություններ թույլ տալ, քանի որ, իր իսկ հաղորդմամբ, նա օգտվել է հայկական աղբյուրներից:

Գ. Մայսուրաձեն Հ. Ալամդարյանի վերոհիշյալ վկայությունը հասկանում է այլ կերպ. իբր թե Հ. Ալամդարյանը ուսերենից էր հայերենի թարգմանում Ռ. Դանիբեգովի ուղեգրությունը<sup>84</sup>: Այս վարկածի հետ ևս հնարավոր չէ համաձայնել նախ այն պատճառով, որ հեղինակի նպատակների առումով այդ անիմաստ մի գործ կլիներ: Երկրորդ, Հ. Ալամդարյանը նշում է, թե «որքան էին ի նմայն կուտակութիւնք անյարիր բանագրութեանց, կամ լաւ ևս ասեալ՝ ի գրուցաց ընկալեալ ճառից, շիք հնարընդ գրով սահմանի փակել. Գոհութիւն մեծ մերոցն և այլազգանց աշխարհագրաց, որոց օգնականութեամբ զբարիսն ժողովեալ ի փունճ մի՛ զխոտանն ի բաց մերժեցաք ըստ կարի»: Այս նշանակում է, որ եթե նա ուսերենից թարգմանելու լիներ, պիտի ուսերեն բնագիրը նման ձևով խմբագրեր և նոր թարգմաներ հայերենի, որն, ինչ խոսք, անիմաստ է, քանի որ ուսերենում չկան ո՛չ «կուտակութիւնք անյարիր բանից», «ի զրուցաց ընկալեալ ճառք» և ո՛չ էլ «խոտան», որոնցից նա ազատել է աշխատությունը:

Հարություն Ալամդարյանի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրող է. Գևորգյանը, անդրադառնալով Ռ. Դանիբեգովի գրքի թարգմանու-

<sup>83</sup> Բառի իմաստը ուսերենում ավելի քան հստակ է հետևյալ նախադասության մեջ. «Не только упражнявшимся в Российской Истории, но даже читателям оной известно, что...» տե՛ս «Северный архив», 1824, № 11, էջ 219. «...дабы купцы обеих высокочестных сторон имели между собою союз и с совершенною надежностью упражняясь в торговле приезжали и отъезжали...» „მახლობელი აღმოსავლეთის ქვეყნების ახალი და უახლესი ისტორიის საკითხები, თბ., 1975, էջ 71 էջ 71 (ընդգծ. մերն են—Պ. Զ.): նշելի է նաև, որ Մադրասի Տինիրատյան, Չինիրատյան, Չինիպապատան անվանումներից բացի կա նաև Տոշինապուտեն ձևը՝ վկայված հենց XVIII դ. վերջում և XIX դ., I տասնամյակում (1809 թ.): Տե՛ս Путешествия писанные чиновниками Аглинской компании в Индию и Персию, и из Индии в Мекку. С описанием острова Пуло-Пинанги, нового поселения..., с аглинского, Москва, 1809, էջ 279.

<sup>84</sup> Յ. Ձաօնթրճոյ, նշվ. աշխ., էջ 139—140: Այս ենթադրությունը հավանական կլիներ, եթե Հ. Ալամդարյանի թարգմանությունը կատարվեր ուսերեն բնագրի լույս տեսնելուց հետո:

թյան հարցին, գրում է. «Մեր համողմամբ, թարգմանությունը կատարված է հայերենից»<sup>85</sup>: Դժբախտաբար, պարզ չէ, թե այս համողմունքը հայտնելիս հեղինակը հենվում է նախորդ հետազոտողների բերած փաստերի վրա, թե ինքը լրացուցիչ կովաններ ունի: Է. Գևորգյանը Ռ. Դանիբեգովի գրքի վրա նշված վրացերենից թարգմանված լինելու պարագան բացատրում է հետևյալ կերպ. «Վրաց պալատական իշխանի գրքի վրա կազարյանները նպատակահարմար չեն գտել նշելու երիտասարդ թարգմանչի անունը և նշել են միայն, որ թարգմանությունը կատարվել է վրացերենից»<sup>86</sup>: Նման բացատրության հետ չի կարելի համաձայնել հետևյալ պատճառով. Ռ. Դանիբեգովը պալատական իշխան չի եղել, այլ ազնվական և հետո՝ դժվար է կազարյաններին նման մեղադրանքներ կայացնել: Եթե նպատակահարմար չեն գտել նշելու թարգմանչի անունը, այդ դեռևս չի նշանակում, թե նրանք կարող էին կեղծել ու մի լեզվի փոխարեն մի այլ լեզու գրել:

Քննության ենթակա շահամարելով ուղեգրության՝ Հ. Ալամդարյանի կողմից ուսերեն թարգմանության փաստը<sup>87</sup>, մենք գտնում ենք, որ «Ճանապարհորդության» նախնական բնագիրը (իմա՝ գրառումները) հեղինակի՝ Ռ. Դանիբեգովի, կողմից վրացերենից գրավոր կամ բանավոր ձևով թարգմանվել են հայերենի, իսկ Հ. Ալամդարյանն այն խմբագրելով փոխադրել է ուսերենի: Ելնելով Հ. Ալամդարյանի այն դժգոհությունից, թե «Ճանապարհորդությունը» լի է եղել ավելորդություններով ու «խոտանով», որից ինքը «ըստ կարի» ազատել է այն «բազմապատիկ տարժանմամբ» թարգմանության ժամանակ, պետք է հավանական համարել, անշուշտ, Ռ. Դանիբեգովի կողմից իր ուղեգրության վրացերենից գրավոր թարգմանելու ենթադրությունը: Հեղինակի համար այդ աշխատանքը մեծ դժվարություն չպիտի ներկայացներ, քանի որ ուղեգրության ծավալը մեծ չի եղել (ուղեգրության 1814 թ. փետրվարի 12-ին գրաքննական կոմիտեին ներկայացված օրինակը ունեցել է ընդամենը 46 էջ ծավալ)<sup>88</sup>:

<sup>85</sup> Էլմիրա Գևորգյան, Հարություն Ալամդարյան, Երևան, 1977, էջ 50, ծան. 48:

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>87</sup> Մենք չենք բացառում, սակայն, Ռ. Դանիբեգովի նաև լատիներենի, ուսերենի և արևելյան որոշ լեզուների (մայրենի հայերենից զատ) ինչ-ինչ շափով իմանալու հանգամանքը, ելնելով այն փաստից, որ նա կաթոլիկ էր ու դեսպանագնացության ուղարկվելու արժանի անձնավորություն, որը ենթադրում է նաև լեզուների իմացություն:

<sup>88</sup> ЦГАМ, ф. 31, оп 1, л. 5, л. 726. Այս փաստաթղթում նշված է նաև, որ ձեռագիրը գրաքննության էր ներկայացրել Ռոման Զախլինը, իսկ մարտի 8-ին այն վերցրել էր Պավել Կուզնեցովը, որոնք, ըստ երևույթին, տպարանատիրոջ կամ գրաքննական կոմիտեի աշխատակիցներ են:

«ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԹԻԻԼԻՍԻԻՑ ԵՐՈՒՍԱՂԵՄ»

XVIII դարի երկրորդ կեսին Հերակլ II-ի իշխանության ներքո Արևելյան վրաստանի միավորման ու Երևանի և Գանձակի խանությունների հարկատու դարձնելու հետևանքով վրաստանը դարձավ Անդրկովկասի բոլոր ու ուժեղագույն պետական միավորներից մեկը: 1783 թ. վրաստանի և Ռուսաստանի միջև կնքվեց նշանավոր Գիրքիկյան դաշնագիրը, ըստ որի Հերակլ II-ը ճանաչում էր ռուսական կայսեր գերագույն իշխանությունը, իսկ Ռուսաստանն իր հովանավորության տակ էր առնում վրաստանին և նրան տրամադրում զորք<sup>1</sup>: Գիրքիկյան դաշնագրի կնքումից հետո տեղի ունեցավ դեսպանությունների փոխանակում: վրաստանի դեսպանության կազմում Ռուսաստան ուղարկվեց նաև 15-ամյա Գիրգի Ավալիշվիլին (1769—1850)<sup>2</sup>:

Պետերբուրգում սկսվեց նրա ուսումնառությունը և նախապատրաստումը դիվանագիտական գործունեության<sup>3</sup>: Այդ, սակայն, երկար շարունակվեց: Սկսվող ռուս-թուրքական նոր պատերազմի կապակցությամբ (1787—1791) Ռուսաստանը, հնարավորություն չունենալով և զգուշանալով Անդրկովկասում պատերազմի երկրորդ ճակատ բացելուց, ետ կանչեց

<sup>1</sup> Դաշնագրի տեքստը տե՛ս «ქართული სამართლის ძეგლები», II, თბ., 1965, էջ 457—482: Հանգամանորեն քննությունը տե՛ս ი. ცინცაძე, 1783 წლის მფარველობითი ტრაქტატი, თბ., 1960. მ. ლუმბაძე, 1783 წ მფარველობითი ტრაქტატი (პროფ. იასე ცინცაძის წიგნის გამო) «მასალები საქართველოსა და კავკასიის ისტორიისათვის», 33, თბ., 1960. վ. Մարտիրոսյան, 1783 թ. Գիրքիկյան դաշնագիրը և հայերը, «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, № 9, էջ 92—100: Նույնի՝ «Նոր վավերագրեր Գիրքիկյան 1783 թ. դաշնագրի մասին», ՊԲՀ, 1978, № 3, էջ 235—243:

<sup>2</sup> Տե՛ս Գ. ავალიშვილი, მგზავრობა თბილისიდან იერუსალიმამდე, ტექსტი გამოსაცემად მოამზადა, გამოკვლევა, ლექსიკონი და საძიებლები დაურთო ელ. მეტრეველმა, თბ., 1967, էջ 06 (აქაოი ჩხთს' გ. ავალიშვილი, მგზავრობა)

<sup>3</sup> Նույն տեղում:

վրաստանից իր զորքերն ու դեսպանին, իսկ Պետերբուրգում գտնվող վրացական դեսպանությունը վերադարձավ վրաստան<sup>4</sup>:

Շուտով վրաստան վերադարձավ նաև Գիորգի Ավալիշվիլին, որը Գ. Ճավճավաձեի հետ Հերակլ II-ի 1791 թ. դիվանագիտական հանձնարարությունամբ արդեն գտնվում էր «պարսկական մասում և Ադրբեջանի մի շարք քաղաքներում»<sup>5</sup>:

1791—1795 թթ. շարունակվում էին վրաստանի ու Ռուսաստանի միջև դիվանագիտական բանակցությունները, և դեսպանությունը 1794-ին վերադարձավ Պետերբուրգ<sup>6</sup>: Աղա-Մահմեդ խանի՝ Անդրկովկաս, այդ թվում և վրաստան, կատարելիք վերահաս արշավանքի կապակցությամբ վրաստանը Ռուսաստանին էր դիմել օգնության խնդրանքով: Եվ ահա Գ. Ավալիշվիլին դեսպանության կազմում կրկին ուղևորվեց Պետերբուրգ: Դեսպանությունը ճանապարհին երկարատև կանգ առավ Գիորգիևյան ամրոցում, որտեղ Գ. Ավալիշվիլին դբադված էր Ա. Սումարոկովի կոմեդիաների վրացերեն թարգմանելու գործով<sup>7</sup>: Հասնելով Պետերբուրգ, Գ. Ավալիշվիլին դիվանագիտական աշխատանքին դուզընթաց դբադվում էր նաև գրական գործունեությամբ, վրացերեն էր թարգմանում ռուս և ֆրանսիացի հեղինակների ստեղծագործությունները, գրում էր ինքնուրույն երկեր<sup>8</sup>:

վրաստանը Ռուսաստանին միանալուց հետո (1801 թ.) Գ. Ավալիշվիլին որոշ ժամանակ մնաց վրաստանում (1802—1805), ապա կրկին տեղափոխվեց Ռուսաստան, հիմնվեց Պետերբուրգում և ապա Մոսկվայում, որտեղ ապրեց մինչև իր կյանքի վերջը (1850)<sup>9</sup>:

Գիորգի Ավալիշվիլին Պետերբուրգում վրացերենի է թարգմանել Հովսեփ Արղությանի հեղինակած «Вероисповедание армянской церкви» աշխատությունը<sup>10</sup>: Այդ մասին վկայում է Բագրատ Արքայազնի հետևյալ հիշատակությունը, որը նա թողել է իր արտագրած օրինակում.

<sup>4</sup> Տախարտեղոս իստորիս Նարկեզեքեք, IV, տեք, 1973, էք 715:

<sup>5</sup> Զ. զեալիՅեքիլի, Նշվ. աշխ., էք 07, ժան. 2:

<sup>6</sup> Յ. ՄքիտիՅեքիլի, Զարսեքեք Քեքեքեքիս ըքլոքեքիտի մոլեքեքեքեք, «Մեքեք»: 1964, № 4 էք 160—161: Տախ. իստորիս Նարկեքեքեք, IV, էք 754—757:

<sup>7</sup> Այդ երկերի հրապարակումը տեք՝ Եր. Քեքեքեք, ժեքլի Քարտիլի տեքտրի ըք ըք ըք ըք ըք, տեք., 1949, էք 211—231, 334—490: Տեք՝ նաև Տ. Մ. Տեքեքեք, Զեքրի ԱեքալիՅեքիլի—քեքեքեք Տեքարոքեք (,Զի իստորի ռուսսիկ իտերատուրնիք ՕտնոՅեքիլի XVIII—XIX եքեք, Մ.-Լ., 1959, էք 352—359):

<sup>8</sup> Եր. Քեքեքեք, Քարտիլի եքեքի Զարըքեքեքեք իստի իտեքրեքտրեք, տեք., 1939, Նոքեք, Քարտիլ-Քուսիլի իտեքրեքտրեք Մրտիեքրտեքիս իստորիքեք XVIII—XVI ս ս., տեք., 1960, Զ. զեալիՅեքիլի, Նշվ. աշխ., էք 016—019:

<sup>9</sup> Եր. Քեքեքեք, «Քարտիլի եքեքի»..., էք 168:

<sup>10</sup> «Вероисповедание армянской церкви», ՏՔեք., 1799.

„ხოლო ესე... თარგმნა რუსულიდამ ქართულსა ენასა ზედა მათმა ბრწყინვალეობამ თავადმა გიორგი ავალიშვილმან, უფალმან სტატცკის სოვეტნიკმან, რომელიცა მსახურებს ამჟამსა შინა ინოსტრანის კალელიასა შინა ...წელსა 1817, თუშსა იანვარს 5 საკტპეტერბურხსა, მე, მეფის გიორგის ძემ, ბაგრატმან გარდმოვქსწერე ჩემთვის თვთ ხელითა ჩემითა, წელსა 1817. სრულ ვჰყავ თებერვლის 23. ს[ან]კთ-პეტერბურხსა“<sup>11</sup>

«ჩასკ აკა... იოსებნიხე ძრავებინ ლედი შარყმანხე იორინ აკაქბაიქაქლიქონ ხეჰსან ჳიორგი სქლქიქიქინ, აკარინ ახთასკან ხორრეკასკან, ირე ბაკაკიქმ ზნერკაკიქმ ითარერკრქა [გორბერი] კილქეკაკიქმ... 1817 შ. ზინქლარი 5-ინ სანკთ მხთერქორქომ ხა` ჳიორგი შაკაკიქორი ირქიქ, ჩაკრათრქ, ართაკრეხეი ხნდ ზამარ ხმ დხორქი 1817 შ.: სქლართხეი ახთორქლარი 23-ინ სანკთ მხთერქორქომ»:

სქა ძლქაკიქლქან ძხე ილქაკრქაქ ზნას აკნ აქასორ, ირ ჳ. სქლქიქიქინ ბაკაკიქ ზ იოსაკასორნი ითარერკრქა გორბერი კილქეკაკიქმ, ირე, ძხნე კარბომ ხნე, ირქლქი რერ ზ ხაქლქხე ზრა ღანაკარზორქიქლქან ქამანასკ: 1818 შ. ზა ძერაკარბხე ზ შიქიქიქა ლ გხნერქლ ბრქორქიქი ძიქნიორქიქლქან რქიმხე` ბეჩაკთიქ ღანაკარზორქელქლ შიქლქიქიქონს ათანაკლქ ზამარ<sup>12</sup>:

1819 შ. ახთორქლარინ ჳ. სქლქიქიქინ იოსაკასორნი ითარერკრქა გორბერი კილქეკაკიქ ათაკაკიქ ანდნაკიქ «ჩასკასკან ახთასკან ხორრეკასკან» კიქმან ზქორქიქ ლ ღანაკარზორქიქლქონ რსკხელქლ შიქლქიქიქონს<sup>13</sup>: ირქხე ღანაკარზორქიქლქან ზაკათასკ ჳ. სქლქიქიქინ ზაკთარარქომ ზ რიოსაკლქმ არქაკაკრერ რქიქლქლ ქრ განკიქიქონ რ ზ ბეჩაკთიქლქლ ქრ ზასკინ ღორთხერიქ ძხეი ქაკანქიქიქონ რ ათანაკლქ გორბე, ირე ბეჩაკთიქლქ ზარსორქლქ, ძაზაკხე ზრ აკნთხე` აოანგ ქაკანქ შიქლქლქლ<sup>14</sup>: ჳ. სქლქიქიქიქლქ «ილქორქიქლქან» რნაკერი ზრათარაკიქ ბ. შხორლქლქ კარბიქიქ, ძხრქინ ზანქამანქ რიქ ზანქიქაკხე ზ ზრა ღანაკარზორქიქლქან რონ ზაკათასკ, შხლ ზა ჰი რაკაკიქლქ ლ აკნ, ირ ღანაკარზორქიქლქ აკაკთინასკან აკე ზაკათასკიქ რორქ კარქიქ ზრ

<sup>11</sup> ძრავ. ოოღ ჳს კ. კხლქიქიქიქ ანქ. ჳიორქერი ქნსორქორქ, დხი. № ი 2103, ზე 50 რ. ზამთ. „ხელნაწერთა აღწერილობა“, ი კოლქექიქიქ, V, თბ., 1949, ზე 63:

<sup>12</sup> გ. ავალიშვილქ. ზქიქ. აკიქ., ზე 4:

<sup>13</sup> გ. ავალიშვილქ, ზქიქ. აკიქ., ზე 4: ა. ცაკარელი, Сведения о памятниках грузинской письменности, вып. II, стр. XXIII.

<sup>14</sup> გ. ავალიშვილქ, ზქიქ. აკიქ., ზე 4, 020—025:

ունենալ նաև ուսական իշխանությունների հատուկ հանձնարարությունները<sup>15</sup>: Գ. Զավախիշվիլու կարծիքով, ճանապարհորդությունը թելադրված էր հիմնականում քաղաքական նպատակներով<sup>16</sup>:

Ճանապարհորդության ուղին հետևյալն էր. Թիֆլիս—Սուխում—Ղրիմ—Կոստանդնուպոլիս—Ալեքսանդրիա—Կահիրե—Երուսաղեմ—Կիպրոս—Կեսարիա—Սեբաստիա—Կարս—Գյումրի—Թիֆլիս: Ճանապարհորդությունը տևել է 1819 թ. հունիսի 6-ից մինչև 1820 թ. հուլիսի 17-ը:

Գ. Ավալիշվիլին ճանապարհորդության ժամանակ օրագիր էր պահում, որտեղ գրառում էր իր ամենօրյա տպավորությունները և որոնք հետագայում նա օգտագործեց իր «Ուղևորության» շարադրման ժամանակ:

«Ուղևորությունը» մեղ է հասել եզակի ձեռագրով, ինքնագիր<sup>17</sup>: Այն բաղկացած է երկու մասից. առաջինում նկարագրված է նրա ճանապարհորդությունը Թիֆլիսից մինչև Երուսաղեմ, իսկ երկրորդում՝ Երուսաղեմից մինչև Թիֆլիս: «Ուղևորության» լեզուն արհեստական և շինծու է, տեղ-տեղ արտակարգ բարդ ու խրթին: Գ. Ավալիշվիլին շարադրման ժամանակ հետևում է հին վրացերենի նորմերին և Անտոն I կաթողիկոսի լեզվական ուսմանը<sup>18</sup>:

«Ուղևորության» մեջ հատակ արտացոլված են հեղինակի հայացքներն ու բազմակողմանի հետաքրքրությունները<sup>19</sup>: Ճանապարհորդության ժամանակ նա հատուկ ուշադրությամբ է ծանոթացել Օսմանյան կայսրության մեջ ապրող վրացիների կյանքին: Ճանապարհորդի ուշադրության կենտրոնում են եղել նաև իր այցելած քաղաքների պատմական հնություն-

<sup>15</sup> Ե. Մեծրեզեղ, Զ. Զավալիշվիլի—Բիբլիոֆիլի և Կոլեկցիոների, «Տալանտը 63-րդ թ. Կեղևիլի և Դաբալի 80 Վլիստաճե», տժ., 1959, էջ 251: Զ. Զավալիշվիլի նշվ. աշխ., էջ 019—025:

<sup>16</sup> Վրաց. ՍՍՀ ԳԱ Զեռագրերի ինստիտուտ, Գ. Զավալիշվիլու անձ. արխիվ, № 144: Զ. Զավալիշվիլի, նշվ. աշխ., էջ 033—034:

<sup>17</sup> Վրաց. ՍՍՀ ԳԱ Կ. Կեկելիձեի անվ. Զեռագրերի ինստիտուտ, ձեռ. Ի—450: «Ուղևորության» մի ու լրիվ (11 հասարակ և մեկ ընդհանուր տետր) արտագրություն պահպանվել է Վրաստանի գրականության թանգարանում (10515—Ե): Այն հավանաբար արտագրվել է 1930-ական թթ. Գ. Զավալիշվիլու կողմից, որը առաջինն էր ձեռնամուխ եղել նրա ուսումնասիրությանը և մտադիր էր հրատարակել ուղևորության բնագիրը (հմմտ. ծան. 16):

<sup>18</sup> «Ուղևորության» լեզվի ուսումնասիրությանը հատուկ աշխատություն է նվիրված լուս. Կոչնաճե, Զ. Զավալիշվիլի յեռ. («Երեսալիմի մոգնաւրոբի» միեղեղիտ), «Փիլոլոգիւրի ժիեբանի» I, 1964, էջ 137—180:

<sup>19</sup> Լ. Մարտաճեղի, Զ. Զավալիշվիլի, «Մեցնիերեբա և Երեկոյա», տժ., 1969, №5. Կ. Նարաճե, Զ. Զավալիշվիլի մոգնաւրոբի Նոցի Տալիտիտաճի «Տալարտեղոս և միսի մոտաճեղեղ օլլեթի միեղեղիտաճի», տժ., 1975, էջ 153—161:



ները: Հայրենիք վերադառնալով, նա իր հետ Երուսաղեմից բերել էր ձեռագիր և տպագիր գրքեր, Եգիպտոսից՝ մումիա և այլն<sup>20</sup>:

Գ. Ավալիշվիլին հետաքրքրվում էր նաև Օսմանյան կայսրությունում ապրող քրիստոնյա բնակչության դրությամբ, հույների և հայերի նկատմամբ թուրքական կառավարողների քաղաքականությամբ և ուշագրավ է այն, որ 1819 թ. նա արդեն գիտեր թուրքական տիրապետության դեմ հունական ապստամբության (1821—1829 թթ.) նախապատրաստման մասին<sup>21</sup>:

Գ. Ավալիշվիլու «Ուղևորության» մեջ կան բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ հայերի մասին, որոնք ուշագրավ են մի շարք առումներով. նախ՝ որպես նյութեր Եգիպտոսի, Պաղեստինի, Կոստանդնուպոլսի և թուրքական կայսրության հայկական բնակավայրերի պատմության ուսումնասիրման համար և երկրորդ՝ այստեղ կան հետաքրքիր փաստեր և բուն Արևմտյան Հայաստանի պատմության, հայ-թուրքական, հայ-ուսական առնչությունների և հայ ժողովրդի տնտեսական կյանքի պատմության մասին:

Դեռևս «Ուղևորության» հրատարակումից շատ առաջ Լ. Մելիքսեթ-Բեկը հատուկ ուշադրություն է դարձրել նրանում պահպանված այդ տեղեկություններին, որոնց մի փոքրիկ մասը նա ձեռագրից թարգմանել է հայերենի<sup>22</sup>: Գ. Ավալիշվիլու տեղեկությունների հիման վրա կեսարահայերի խոսվածքին առանձին հոդված է նվիրել Պ. Մ. Մուրադյանը<sup>23</sup>: Սակայն հայերի մասին շատ հաղորդումներ դեռևս մնում են շուտումնասիրված և չթարգմանված<sup>24</sup>:

Գ. Ավալիշվիլին «Ուղևորության» մեջ նկարագրում է իր այցելած քաղաքները, համառոտ տեղեկություններ տալիս բնակչության ազգային կազմի, այնտեղ եղած եկեղեցիների, մզկիթների և այլնի մասին: Ըստ ուղեգրողի վկայության՝ հայկական բնակչություն կար հետևյալ քաղաք-

<sup>20</sup> Զ. Զվալիշվիլու, նշվ. աշխ., էջ 215: Ե. Յեգրոջյան, Զ. Զվալիշվիլու—ճիշտագրություն և յոթնամյա շրջանը, էջ 247—261:

<sup>21</sup> Զ. Զվալիշվիլու, նշվ. աշխ., էջ 43—44, 030—031:

ուսերենի և իր ընդարձակ բացատրականի հետ 1815 թ. հուլիսին ներկայացնում ցարական կառավարությանը՝ հանձին օտար դավանությունների մինիստր Գուլիցինի<sup>116</sup>: Հ. Արարատյանը փորձում է ապացուցել աքսորյալների անմեղ լինելը, քննադատում է Կովկասի կառավարչապետների, մասնավորապես Ռտիշչևի քմահաճ դատաստանը նրանց նկատմամբ, ցույց տալով, որ խռովարարների անվան տակ նրանց աքսորելը ոչնչով արդարացված չէ: Նա գրում է. «...Нухийские армяне явились к главнокомандующему в тома толиком числе (300—Պ. Զ.), думая сим способом более удостоверить в истине их страданий и преклонить милостивому на них воззрению, а не по побуждению духа возмущения. Да и что сия горсте безоружных людей, пришедших из далекого места своего жилища к командующему войсками, могла что-либо другое нести в чувствах своих, кроме покорности и смирения?»<sup>117</sup>.

Բացատրականի հեղինակը պահանջում է, որ Ռուսաստանի անդրրկովկասյան քաղաքականությունը կիրառելիս հաշվի առնվեն հայ ժողովրդի մատուցած ծառայություններն ու նվիրվածությունը Ռուսաստանին, սահմանափակվեն տեղական իշխողների կամայականությունները: Հ. Արարատյանը փորձում է իր «խորհուրդներով ու խոստումներով» Անդրրկովկասում շահագործվող բնակչության շահերից բխող որոշակի բարեփոխություններ կատարել տալ, ռուսական կառավարությանը «գայթակղելով» սպասվող ավելի մեծ և կամուտների հեռանկարով:

Հարություն Արարատյանի այս գրությունը անհետևանք չէր կարող անցնել<sup>118</sup>: Աքսորականների համար դրա արդյունքը փոքր էր<sup>119</sup>, մինչդեռ Հարություն Արարատյանի դեմ հալածանքներ սկսվեցին: Նա փորձեց պայքարին մասնակից դարձնել իր հայրենակիցներին ևս, սակայն անօգուտ: 1815 թ. սեպտեմբերին ոմն Սիմեոն Նիկիֆորով Պետերբուր-

(Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 100, նույն տեղում, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 883):

<sup>116</sup> Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 27, վավ. 41:

<sup>117</sup> Նույն տեղում, էջ 5—6:

<sup>118</sup> Այն հանձնվել էր Նուխիի բնակիչ Մակար Գուլբասարյանին, որը և ցուցմունք էր տվել «О доходах Шекинской провинции и местечка Сальян» (АКАК, т. VI, ч. I, էջ 728—731), նշելով նաև Արարատյանի նամակում բերված փաստերի իրավացիությունը:

<sup>119</sup> 1818 թ. հունվարին Շաքիի բնակիչները գեներալ Երմոլովին գրավոր խնդրում են թույլ տալու 25 աքսորականներից 6-ին, որոնք դեռ աքսորում էին գտնվում, վերադառնալու: Հայտնում են, որ աքսորականներից 8-ը մահացել է, իսկ մնացածները վերադարձել են (АКАК, т. VI, ч. I, էջ 728—730):

գից Եփրեմ կաթողիկոսին գրում է. «здесьние ваши одноверцы или слишком мало, или вовсе не помышляют об общей пользе, а только о своей. Почти все вместо того, чтобы помогать Артемию, кто и как может, или смотреть на него с завистью или даже действуют против его, следовательно и против всей нации... Артемий в полной мере чувствует и на самом деле старается оказать благодарность свое к России, как истинный и верный подданный, а с тем вместе старается полезным и наций своей в справедливом деле, каково теперь начатое...»<sup>120</sup>.

Ներսես Աշտարակեցին, որից ևս Հ. Արարատյանը պահանջել էր միջամտել գործին, զգուշորեն պատասխանում էր. «Վերջապես դու ևս ընդ այլսն մի մեղադրիր զիս, սիրելի, իբրև թէ իցեմ ես անզգայ վասն վշտաց... ազգի իմոյ, այլ զի շունեմ զզօրութիւն, և աւելի ևս երդամբ և թագաւորական օրինոք կամ կաշկանդեալ, զինչ ունիցիմ առնել, բայց եթէ աղօթել...»<sup>121</sup>:

Միայնակ մնալով և զգալով, որ հետագա պայքարն իր ուժերից վեր է, Հ. Արարատյանը ստիպված է լինում խորհել ասպարեզից հեռանալու մասին: Պետերբուրգում գտնվող Հ. Արարատյանի գործունեության կարևորությունը գիտակցող Աշտարակեցին 1816 թ. փետրվարի 19-ին գրում է. «...Կամիմ ես, թէ որքան կարելի դուցէ յամբերութեամբ մնասցես այդր, ուր կարող ես՝ թէ յաջողեսցէ աստուած շահել զանձնդ և զաշխարհ համանգամայն առաւել, քան հեռանալովդ յանապատս: Եւ թէ հարկաւոր ևս լիցից մինչ իսպառ հեռանալն յանապատ՝ ահաւասիկ անապատ Հայաստան, ի սահմանս որոյ ի ներքոյ հովանաւորութիւնէ ռուսաց փառաւորեալ տերութիւնէ կարող ես ճգնիլ ի վիճակի իմում ուր և հաճոյ ձեզ թուեսցի...»<sup>122</sup>:

1816 թ. վերջերին Հ. Արարատյանը ստիպված էր թողնել Ռուսաստանը: 1817 թ. փետրվարին կամ մարտին նա արդեն Փարիզում էր<sup>123</sup>, ուր մնաց շուրջ երկու տարի: Այս շրջանի նրա գործունեության մանրամասները մեզ չեն հասել: Հայտնի են միայն մամուլում ունեցած նրա

<sup>120</sup> Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 27, վա.վ. 51:

<sup>121</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վա.վ. 883, Աղ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վա.վ. 100:

<sup>122</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վա.վ. 813:

<sup>123</sup> Տե՛ս «Собрание актов относящихся к обозрению истории армянского народа», часть III, М., 1838, էջ 292. 1818 թ. հուլիսի 9-ին «Gazette de France» լրագրում Արարատյանը բանավիճային հողվածում նշում է. «ներկայումս 16 ամիս է, ինչ ես գտնվում եմ Փարիզում»:

բանավեճը Հակոբ Շահան-Ջրպետյանի հետ<sup>124</sup> և այդ առիթով Կլապրոտի հետ միասին Հովհան Ոսկերչյանի «Ժամանակագրության» թարգմանելն ու հրատարակելը<sup>125</sup>: Այդ տարիներին նա եղել է նաև եվրոպական այլ երկրներում, իսկ 1819 թ. փետրվարին կրկին վերադարձել Պետերբուրգ՝ իր մայրագրի մոտ<sup>126</sup>: Ռուսաստան վերադառնալու թույլտվությունը ձեռք էր բերվել Խաչատուր Լազարյանի ակտիվ միջնորդությամբ: «Ի հերոն հետ է գրէ ինձ բարերարն իմ Կատարինէ Զախարովնայն. փոխանականարդ համարելոյ կրկնակի էք արարեալ շնորհն ձեր իմ վերայ և բանիցուցց տւեալ ի կողմանէն իմ ընդ դէմ կացեալ հակառակից վասն մթացեալ սենեակին իմոյ, երկու ամ ևս ժամանակ մինչն դառնալս տեղդ. արդեօք երբ իցէ, որ կարողացայց հաղուցանել ծառայութեամբ ձեր շնորհրն», — գրում է Հ. Արարատյանը Խաչատուր Լազարյանին՝ Փարիզից: Նա խոստանում էր կյանքն իսկ շխնայել նրա հանձնարարությունները ապագայում ևս կատարելու համար, «յանձն առնելով զիս ի շնորհս ձեր և ինչ որ եմ արարել պաշտօն ունիք հրամայեցեք մինչև կեանս չեմ խնայելոց»<sup>127</sup>: Սակայն Հ. Արարատյանը Պետերբուրգում երկար չի մնում և ձեռ-

<sup>124</sup> «Собрание актов»... ч. III, էջ 288—295.

<sup>125</sup> Mémoire de Jean Ouosk'herdjian, prêtre arménien de Wagarchapat, pour servir à l'histoire des événements qui ont eu lieu en Arménie et en Georgie à la fin du dix-huitième siècle et au commencement du dix-nouvième, suivis de vingt-huit anciennes inscriptions arméniennes, traduit de l'arménien à l'aide de M. Aroutioun Astwatsatour; par Jules Klaproth, Paris, 1818, 79 p. նույնը տե՛ս նաև J. Klaproth, Mémoires relatifs à l'Asie, Paris, 1824, էջ 224—309: Այս աշխատությունը, որ ընդգրկում է 1751—1805 թթ. իրադարձություններն Անդրկովկասում, Հ. Ոսկերչյանը գրել է 1811 թ. Հարություն Արարատյանի խնդրանքով, որն այն օգտագործել է իր «Կյանքը» շարադրելու ժամանակ (հայերեն բնագիրը տե՛ս Առ. Արարատյան, «Համառոտ վարք և գրաւոր գործք տեառն Յովհաննու աւագ քահ. Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատցոյ», Տիֆլիս, 1859, տե՛ս նաև «Կոռնկ հայոց աշխարհին», 1862, № 4, էջ 278—316: Առ. Արարատյանի լրացումները վերջին հրատարակության կապակցությամբ տե՛ս նույն տեղում, 1862, № 8, էջ 589—593): Ռուս. թարգմանել է Ալ. Երիցյանը. «Летопись протоиерея Тер-Огана Воскерчянц» («Кавказская старина», 1873, № 7—8, էջ 192—198): Հայկ Տեր-Աստվածատրյանցի վկայությամբ «Այնտեղ (Փարիզում—Պ.Զ.) նա մի քանի ուրիշ (Ոսկերչյանի ժամանակագրությունից բացի—Պ.Զ.) գրքեր էլ տպեց» («Բառարան հայ կենսագրութեանց 1441—1904», Թիֆլիս, 1904, էջ 142):

<sup>126</sup> Արարատյանի Պետերբուրգ վերադարձը շնորհավորել է Եփրեմ կաթողիկոսը, 1819 թ. փետրվարի 25-ին Կատարինե Զաքարյանին ու Հարություն Արարատյանին ուղղած նամակներով (ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 46, թ. 32ա):

<sup>127</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 104, գործ 8, վավ. 185:

նարկում է իր երկրորդ ճանապարհորդությունը<sup>128</sup>, այս անգամ արդեն արևելյան երկրներ<sup>129</sup>: Մինչև վերջերս սոսկ հիշողությամբ հայտնի այս ճանապարհորդության մասին<sup>130</sup>, հանգամանորեն խոսում է վրաց նշանավոր դիվանագետ, երկար տարիներ Ռուսաստանում ապրած բանագնաց գրող և թարգմանիչ Գիորգի Ավալիշվիլին իր «Ուղեգրության» մեջ<sup>131</sup>: Գ. Ավալիշվիլին ճանապարհորդությունը սկսել է 1819 թ. Թիֆլիսից և անցնելով Ղրիմ—Կոստանդնուպոլիս—Ալեքսանդրիա—Կահիրե—Երուսաղեմ—Կիպրոս—էրզրում քաղաքներով, վերադարձել է Թիֆլիս 1820 թ.:

Հ. Արարատյանն ու Գ. Ավալիշվիլին հանդիպել են Կոստանդնուպոլիսի մոտ Բոյուքդարայում, ուր կանգ էին առել սուլթանից ճանապարհորդությունը շարունակելու իրավունք (ֆերման) ստանալու համար: Գ. Ավալիշվիլու հաղորդմամբ, Հ. Արարատյանը Բոյուքդարա է հասել 1819 թ. սեպտեմբերի 11-ին՝ Թեոդոսիայից, և նույն օրն էլ այցելել իրեն<sup>132</sup>: Պարագանների թելադրանքով, սեպտեմբերի 12-ին Գ. Ավալիշվիլին Հ. Արարատյանին հրավիրում է իր մոտ և սենյակ տրամադրում: Բոյուքդարայում Հ. Արարատյանը մնում է մինչև սեպտեմբերի 20-ը: Այդ ընթացքում, նույն տանն ապրելով, նրանք միասին այցելում են Վրաստանից Կոստանդնուպոլիս ժամանած մի շարք անձնավորությունների: Սեպտեմբերի 19-ին Հ. Արարատյանը ուսական դեսպանատանը ստանում է սուլ-

<sup>128</sup> Մինչև այժմ ենթադրվում էր, որ «նվրոպայից վերադառնալուց հետո Արարատյանը զբաղվում է իր մեմուարների թարգմանության գործով» (Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, էջ 168, նաև «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 1, Երևան, 1962, էջ 221): Արարատյանի մասնակցությունը իր գրքի գերմաներեն ու անգլերեն թարգմանությունների գործին, վկայված չէ:

<sup>129</sup> Հ. Արարատյանի՝ Կոստանդնուպոլիսով Երուսաղեմ կատարած ուղևորության մասին նշում է նրա գրքի գերմաներեն թարգմանիչ Յոհան Հայնրիխ Բուսսեն (տե՛ս *Artemius von Wagarstchapat, Leidengeschichte seiner Jugend...*, էջ 387): Այդ մասին նշում է նաև Ներսես Աշտարակեցին՝ 1820 թ. մայիսի 15-ին Եփրեմ կաթողիկոսին գրած նամակում. «Արարատեանն ի Պոլսոյ ևս անցեալ լինի յնգիպտոս կամ յերուսաղէմ» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 41, թ. 78ա): Այս վերջին վկայության և Արարատյանի 1825 թ. հունիսի 28-ին Կլապրոտին գրած նամակի մասին մեզ տեղեկացրել է Գ. Հարությունյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Կլապրոտին ուղղված ֆրանսերեն նամակի ֆոտոպատճենը գտնվում է ՀՍՍՀ ՊԿՊԱ-ում և պատրաստվում է հրատարակության: Օգտվել ենք նամակի հայերեն թարգմանությունից, որը կատարել է նշված արխիվի գիտաշխատող Վերգինե Խաչատրյանը:

<sup>130</sup> Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, էջ 168:

<sup>131</sup> Զ. ձვաლოშვილი, მგზავრობა თბილისიდან იერუსალიმამდე, էջ 54—64, 151—217: Հ. Արարատյանին վերաբերող Գ. Ավալիշվիլու հաղորդումներից Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը թարգմանել է միայն մեկ նախադասություն (տե՛ս Վրաց աղբյուրները, էջ 217):

<sup>132</sup> Զ. ձვաლოშვილი, նշվ. աշխ., էջ 55: Այդ նշանակում է, թե նրանք անձանոթ չէին մինչև հանդիպումը:

թանի ֆերմանն ու իր անձնագիրը և պատրաստվում հաշորդ օրն իսկ ճանապարհվելու: Գ. Ավալիշվիլու խնդրանքը՝ սպասել իր ֆերմանի ստացվելուն՝ միասին ճանապարհորդելու, Հ. Արարատյանը մերժում է, բացատրելով, որ ինքը դեսպանատանը լսել է Ավալիշվիլուն ճանապարհը շարունակելու իրավունք չտալու մասին<sup>133</sup>: Սեպտեմբերի 20-ին Հ. Արարատյանը ճանապարհվում է Կոստանդնուպոլիս: Հոկտեմբերի 13—14-ին նա դեռևս գտնվում էր Կուռուչեսմե նավահանգստում: Այդտեղ նա կրկին հանդիպել է Գ. Ավալիշվիլուն<sup>134</sup> և կրկին մերժել միասին ճանապարհորդելու նրա առաջարկը, այս անգամ էլ պատճառաբանելով, թե նավատիրոջը կանխապես վճարված է երթևեկության վարձը, իսկ նավատերը հրաժարվում է այն վերադարձնելուց<sup>135</sup>: Սրանով առժամանակ ընդհատվում է Հ. Արարատյանի ու Գ. Ավալիշվիլու կապը ճանապարհորդության ընթացքում: Հ. Արարատյանն այդ ժամանակամիջոցում լինում է Զմյուռնիայում<sup>136</sup>, Ալեքսանդրիայում ու Լիբիայում:

Գ. Ավալիշվիլու և Հ. Արարատյանի հաշորդ հանդիպումը տեղի է ունենում Կահիրեում, 1820 թ. փետրվարի 9-ին<sup>137</sup>: Այդ օրը, Գ. Ավալիշվիլու տեղեկությամբ, իրեն է այցելում Ալեքսանդրիայից ժամանած Հ. Արարատյանը: Հետևապես, Հ. Արարատյանը Լիբիայից նորից վերադարձել էր Ալեքսանդրիա և նոր միայն ճանապարհվել Կահիրե: Կահիրեում Հ. Արարատյանը մնում է մինչև 1820 թ. մարտի 2-ը: Այդ ընթացքում նա հաճախ էր հանդիպում Գ. Ավալիշվիլու և ուսական դիվանագիտական ներկայացուցիչների ու գործակալների հետ<sup>138</sup>:

<sup>133</sup> Ձ. ճՅՁԼԹՅՅԹԼԹ, նշվ. աշխ., էջ 62:

<sup>134</sup> Նույն տեղում, էջ 88: Գ. Ավալիշվիլին գրում է, թե երբ իրենց նավը նավահանգիստ էր մտել, ինքը տեսել է ափին լեկերի հետ շրջող Հ. Արարատյանին: Վերջինս էլ տեսնելով Գ. Ավալիշվիլուն, բարձրացել է նրա մոտ և պատմել իրենց նավի խորտակվելու, նոր նավ վարձելու մասին, միաժամանակ դժգոհել նավի վրա լեկերի (լեզգիների) հաբեանությունից:

<sup>135</sup> Գ. Ավալիշվիլու այս առաջարկներից պետք է հնթադրել, որ նրան հայտնի էր Հ. Արարատյանի ճանապարհորդության ուղղությունը, և որ իրենց ճանապարհները համընկնում էին: Քանի որ Գ. Ավալիշվիլին ափ է իջնում Ալեքսանդրիայում, հետևաբար Հ. Արարատյանն էլ այդ նավահանգստում ափ իջնելուց հետո է ճանապարհվել Լիբիա: Այս փաստը միաժամանակ ցույց է տալիս, որ Հ. Արարատյանը Գ. Ավալիշվիլուն հետևելու հանձնարարություն չունի:

<sup>136</sup> Զմյուռնիայից նա Ֆրանսիայի դեսպանի կամ գլխավոր հյուպատոսի միջոցով Կլապրոտին է ուղարկել իր արկածներից մեկի նկարագրությունը (տե՛ս Հ. Արարատյանի նամակը Կլապրոտին, հմմտ. ծան. 30):

<sup>137</sup> Ձ. ճՅՁԼԹՅՅԹԼԹ, նշվ. աշխ., էջ 151:

<sup>138</sup> Նրանք միասին զբոսանքների ու բուրգերը դիտելու են գնում, այցելում են սուլթանի մզկիթը, Մուհամմեդ Ալիի ամառանոցը և այլն:

1820 թ. մարտի 2-ին Գ. Ավալիշվիլու գլխավորած քարավանի կազմում Հ. Արարատյանը Կահիրեից ճանապարհովում է Երուսաղեմ: Անցնելով Փելբաղ, Սալհեյա, Կատայա, Արիս Կալա, Ռափա, Ղաղա, Ռամլա, էմմայոս քաղաքներով, քարավանը 1820 թ. մարտի 18-ին հասնում է Երուսաղեմ: Այստեղ Հ. Արարատյանը մնում է մինչև 1820 թ. ապրիլի 5-ը: Հիշյալ օրը նա այցելում է Գ. Ավալիշվիլուն և հրաժեշտ է տալիս՝ Շամ (Դամասկոս) գնալու համար: Ճանապարհորդության այս հատվածի հանգամանքները դեռ պարզ չեն: Դիտենք միայն, որ նա Պետերբուրգ վերադարձել է 1821 թ.: 1825 թ. հունիսի 28-ին Կլապրոտին ուղղված նամակում Հ. Արարատյանը հայտնում է, թե «1821-ին մի քանի օրով եկա Ս. Պետերբուրգ՝ բարեկամներիս տեսնելու համար, բայց գործերս վատ ընթանալու պատճառով մնացի Պետերբուրգում, քանի որ տոկոսներս չեմ կարողանում ստանալ»<sup>139</sup>: Նա Պետերբուրգում մնում է մինչև 1826 թ., որովհետև այդ թվականին նա արդեն Հայաստանում էր: Հովհ.

<sup>139</sup> Մոսկվայի Հայկական եկեղեցու «Ել և մտից մատյանից» տեղեկանում ենք (համառոտված տպագրվել է Դոնի Ռոստովում, 1879 թ.՝ «Հարիրամեակ կենարար սուրբ խաչի վերացման Մոսկվայի հայոց եկեղեցւոյն»), որ 1811 թ. փետրվարի 18-ին եկեղեցու ունեցած պարտքերի վճարման համար 14 անձնավորություն դրամական օգնություն է ցույց տվել: Ցանկում Հարություն Աստվածատրյանը հինգերորդն է (նույն տեղում, էջ 93): 1818 թ. երեք նվիրատուներից մեկն է «Յարութին Աստուածատուրեան Օղանով»՝ 100 ռ. (նույն տեղում): 1818—1819 թթ. եկեղեցին իր պարտքերից 4563 ռ. վճարել է «Ի դրամոց Յարութին Օղանէանց» (նույն տեղում, էջ 94): 1815—1822 թթ. եկեղեցին Հարություն Աստվածատրյան Օղանյանցին է վճարել տարեկան 500 ռ., որպես փոխատու դրամի տոկոսներ (նույն տեղում, էջ 95—98): Հ. Օղանյանցը «կտակել» էր, որ «եկեղեցին կամ իւր պարտքը վճարէ և իւր դրաւ դրած տունը սեպհականէ, կամ յարմար միջոց՝ տունը վաճառէ և պարտքերը վճարելուց յետոյ մնացեալ փողը ստանայ: Եկեղեցին ութը տարի վճարեց նրա պարտքի տոկոսը և տունը ծախելուց ստացավ 4563 ռուբ» (նույն տեղում, էջ 95, ծան. 9): Հովակիմ Աղազարյանին (Լազարյան) ներկայացրած «ի 1814 և յունվարի միոջէ Մոսկովու հայոց երկու եկեղեցեաց միոյ տարւոյ հաշուագրութիւն»—ի մեջ Գրիգոր Մորողովը նշում է. «Արտեմի Բողղանիչին ըստ զօրութեան կտակի նորուն փող հտու—300» (1814 թ. դեկտեմբերի 31. Մոսկվա), (Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 102, գործ 6, վավ. 447, էջ 2):

Ակնհայտ է, որ վերոհիշյալ Արտեմի Բողղանիչը, Հարություն Աստվածատրյանն ու Հարություն Աստվածատրյան Օղանովը նույն անձնավորությունն է և նույն ինքը՝ Հարություն Աստվածատրյան Արարատյանը (Վաղարշապատցի)—Артеми́й Богданов Ара́ратский-ն: Հետաքրքիր է, որ նա 1810 թ. բնակվել է Մոսկվայում («Հարիրամեակ կենարար սուրբ խաչի վերացման Մոսկվայի հայոց եկեղեցւոյն» աշխատասիր. Հակոբ Սուրենյանցի, Դոնի Ռոստով, 1879, էջ 120):

Հ. Արարատյանը Կլապրոտին ուղղված վերոհիշյալ նամակում (1825 թ.) նշում է նաև իր հասցեն՝ Պետերբուրգ: Նևսկի պողոտա, Հայկական եկեղեցու տուն (ընդգծումը մերն է—Պ. Զ.):

Ղրիմեցիին Հաղբատի ս. Նշան վանքի պատմության մեջ հետևյալ հիշատակությունն է թողել. «Յայս աղբիւր (խոսքը «Քոռաղբյուրի» մասին է—Պ. Չ.) ստեպ յաճախէր պարոն Յարութիւն Աստուածատուրեանն Վաղարշապատցի Արարատով, որում դէպ եղև կալ աստէն ընդ ամիսս ինչ եւ ի ջրոջ անտի ըմպէր ախորժանօք իբրեւ ի կենդանի ջրոջ դրախտին փափկութեան եւ զգայր բաւական օգուտ առ անձին զօրութիւն եւ առողջութիւն յիրում տկարութեան»<sup>140</sup>: Հաղբատում Հ. Արարատյանի լինելու մասին է վկայում նաև հետևյալ փաստը: Նա Խ. Աբովյանին Հաղբատում արտագրել է տվել Կարամզինի ուղեգրությունից մի փոքրիկ հատված. «Արտահանել ետու ես՝ Յարութիւնս Աստուածատուրեան Վաղարշապատցի զսոյն զայս սակաւամասն հատուած բանի՝ որ ի 282 երեսոջ գրիւր այսօրինակ թէ՛ յեկեղեցոջ Սելեստինա՝ ուր էին բազմութիւնք պատկերաց և արձանաց, էր ընդ նոսա եւ յիշատակարան Լևոնի Արքային Հայոց՝ որ հալածեալ գոլով ի թուրքաց, մեռաւ ի Փարէզ ի 1383 ամին: ...Ի խընդրոյն վերոհիշեալ պարոնին՝ արտահանեցի ի ռուս բնագրէ անտի թարգմանութեամբ հանդերձ, Խաչատուր դպիրս Ապովեան Քանաքեռցի: Ի 1826 ամին, ի 3 ամսեանն նոյեմբերի, ի Սուրբ Նշանի վանս՝ որ ի Հաղբատ:—Որոյ և բնագիրն մնաց առ իս»<sup>141</sup>:

Հ. Արարատյանի՝ Հայաստանում գտնվելու մասին երրորդ տեղեկությունը 1827 թ. հունիսի 30-ին Հովհաննէս և Խաչատուր Լաղարյաններին էջմիածնից Ներսես Աշտարակեցու գրած նամակում եղած վկայությունն է, թե «Արարատեանն աստ առ մեզ կայ և եղիցի մինչև յաւարտ պատերազմացն յԵրևան»<sup>142</sup>: Այս տեղեկությունից իրավացիորեն կարելի է եզրակացնել, որ Հ. Արարատյանը մասնակցել է ռուսական բանակի 1827 թ. երևանյան արշավանքին<sup>143</sup>: Նա, ինչ խոսք, որ «բուժվելու» նպատակով շէր գտնվում պատերազմական գործողությունների թատերաբեմում և Հաղբատից նոյեմբերին նրա հեռանալն էլ պատահական չի եղել: 1826 թ. օգոստոսին, ռուս-պարսկական պատերազմը սկսվելու կապակցությամբ, ցարական կառավարութայունը Անդրկովկաս է ուղարկում լրացուցիչ զորամիավորումներ: 1826—27 թթ. այդ առիթով բանտից ու աքսորից ա-

<sup>140</sup> «Յովհաննու Ղրիմեցայ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին», հրատ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1965, էջ 25, հմմտ. Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան (կյանքը, գործը, ժամանակը), Երևան, 1967, էջ 250, ծան. 1:

<sup>141</sup> Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 248—249:

<sup>142</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 791, էջ 53ա:

<sup>143</sup> Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերութայունները, Երևան, 1947, էջ 13:

զատվեցին և Անդրկովկաս՝ ռազմաճակատ ուղարկվեցին նաև նշանավոր դեկաբրիստներ ու նրանց հարած մի շարք այլ ղինվորական ու հասարակական գործիչներ: 1826 թ. օգոստոսին շտապ Անդրկովկաս ուղարկվեց 1812 թ. հայրենական պատերազմի հերոս, գեներալ Դենիս Դավիդովը: Նրա հետ Անդրկովկաս եկավ նաև նույն թվականի հունիսի 2-ին բանտից ազատված Գրիբոյեդովը: Նրանք 1826 թ. սեպտեմբերի 3-ին արդեն Թիֆլիսում էին, որտեղից մի քանի օր հետո Դենիս Դավիդովը ուղարկվեց Լոռի-Փամբակ՝ դուրս քշելու պարսիկներին<sup>144</sup>: Դենիս Դավիդովը հաջողությամբ կատարում էր իր պարտականությունները, երբ նրան 1826 թ. նոյեմբերին ետ կանչեցին Թիֆլիս<sup>145</sup>. Մնում է ենթադրել, որ Հարություն Արարատյանի՝ Լոռիում (Հաղբատում) գտնվելու «ամիսս ինչը» և նրա՝ նոյեմբերին Հաղբատն անակնկալ թողնելը կապված էր ռազմական գործողությունների հետ<sup>146</sup>: Նա ևս Թիֆլիս էր տեղափոխվել, անշուշտ, 1826—1827 թթ. ձմռանը և մնացել իր եղբոր մոտ, որի մասին հիշատակում է Պ. Պոռշյանը, Հ. Արարատյանի «Կյանքի» իր թարգմանության առաջաբանում<sup>147</sup>: Հ. Արարատյանը, հավանաբար, մինչև «յաւարտ պատերազմացն յԵրևան» մնացել է Անդրկովկասում, այնուհետև կրկին մեկնել Ռուսաստան<sup>148</sup>:

1830 թ. Հ. Արարատյանը ձեռնարկում է մի նոր ճանապարհորդություն դեպի Հնդկաստան: Ռուսաստանից մեկնելով Կոստանդնուպոլիս, 1830 թ. աշնան վերջերին, վերահաս ձմռան պատճառով նա ճանապարհը չի շարունակել, այլ անցել է Տրապիզոն, ուր մնացել է վեց ամիս և իր այս ուղևորության մասին տեղեկություններ թողել 1831 թ. մայիսի վերջերին գրած ծավալուն (68 քառատող) բանաստեղծության մեջ<sup>149</sup>: Դժվար է ասել՝ այս երրորդ ճանապարհորդությունը որտե՞ղ է ավարտվել և իրո՞ք նա Մուշ է այցելել, մահացել ու թաղվել Լիմ անապատում, ինչպես Պ. Պոռշյանն է հաղորդում բանավոր զրույցների հիման վրա<sup>150</sup>: Համենայն դեպս, 1831 թ. հետո նրա մասին այլևս տեղեկություններ չեն հանդիպում:

<sup>144</sup> М. Г. Персиян, Из истории русско-армянских отношений, книга вторая, Ереван, 1961, էջ 7—30.

<sup>145</sup> Նույն տեղում:

<sup>146</sup> Շտապ տեղափոխության պատճառով է, որ Հ. Արարատյանին պատկանող Կարամզինի ուղեգրության բնագիրը մնացել է Խ. Աբովյանի մոտ և նա այդ մասին հատուկ նշում է արել:

<sup>147</sup> «Վաղարշապատեցի Յարութին Արարատեանի կեանքը», թարգմ. Պ[երճ] Պ[ոռշյան], Թիֆլիս, 1892, էջ Թ:

<sup>148</sup> ՀՄՄՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 44, թ. 11ա:

<sup>149</sup> Նույն տեղում, թ. 11ա—17բ:

<sup>150</sup> «Վաղարշապատեցի Յարութին Արարատեանի կեանքը», էջ Ժ:



Մենք փորձեցինք հին ու նոր աղբյուրների հիման վրա համառոտա-  
կի ուրվագծել Հարություն Արարատյանի կենսագրությունը: Նորօրյա  
հետազոտողին նա ներկայանում է իբրև հայ իրականության մեջ ու-  
սական կողմնորոշման երդվյալ ջատագով՝ իր 20-ամյա տարիքից սկսած  
մինչև 1830—31 թվականը, երբ վերջին անգամ ուղևորության էր մեկ-  
նում: Ո՛չ ցարական պաշտոնեությունից, կրած հալածանքներն ու ծառա-  
յողական իջեցումները և ո՛չ էլ հայրենակիցներին նպաստավոր լինելու  
անկարելիությունները շասանեցին Ռուսաստանի հանդեպ տածած նրա  
հավատը: Հիշյալ առումով Հ. Արարատյանը և Աբովյանին նախորդած  
մեծերից է, արժանի մասնավոր գնահատության:

Թվում է, նրա թողած գրավոր ժառանգությունը ծանոթացած մար-  
դիկ, մանավանդ հետազոտողները, վաղուց արդեն ազատված պիտի լի-  
նեին նախապաշարումներից ու կաշկանդումներից՝ անաշառությամբ գը-  
նահատելու նրա իրական վաստակը: Բայց, ցավոք, շատ խնդիրներ  
պարզվելու փոխարեն առավել մթազնվեցին. հոգևորականների հասցեին  
կատարած դատափետումների համար Արիստակես եպս. Սեդրակյանը  
որոշեց մենագրությամբ «պարզել Հ. Արարատյանի կեղծիքը», ամբաս-  
տանելով նույնիսկ նրա գործի հայերեն թարգմանչին՝ Պերճ Պոռչյանին<sup>151</sup>:  
Ա. Սեդրակյանի աշխատության ոգեկոշած մոլորությունն այնքան մեծ  
էր, որ վստահություն ներշնչեց անգամ քննախույզ Նիկողայոս Մառին<sup>152</sup>:

Տարբեր ժամանակներում Հ. Արարատյանին վերագրված ամբաստա-  
նությունների ու մեղադրանքների մեջ, սակայն, կա մեկը, որ հիմնովին  
նենգափոխում է իրողությունը և սպառնում վարկաբեկելու ազնիվ գործ-  
չի հիշատակը պատմության առաջ:

Աղա-Մահմեդ խանի՝ Թիֆլիս կատարած արշավանքի ժամանակ Հե-  
րակլ II-ին հաջողվում է հավաքել և պատերազմի դաշտ դուրս բերել  
ընդամենը 4—5 հազար զինվոր, որից երկու հազարը օգնական զորքեր  
էին՝ Արևմտյան Վրաստանի թագավոր Սողոմոն I-ի գլխավորությամբ,  
մինչդեռ Աղա-Մահմեդ խանի բանակում կար մոտ 30—35 հազար զին-  
վոր: Հարություն Արարատյանն իր «Կյանքում» Հերակլի զորքերի սակա-  
վաթվությունը բացատրում է նրանով, որ որոշ արքայազներ իրենց զոր-  
քերով շէին ներկայացել թագավորին: Այս բացատրությունը (որն այժմ

<sup>151</sup> Յարութին Արարատեանի կեղծիքը պարզեց Ա. Ե. Ս., Բաքու, 1894:

<sup>152</sup> Н. Я. Марр, Подлог Артемия Арааратского раскрыл А. Е. С., Баку, 1894  
(տե՛ս «Записки Восточного отделения имп. Русского Археологического общест-  
ва», т. IX, 1896, էջ 311—313).

ընդունված է և մասնագիտական գրականության մեջ՝ որպես պարտության պատճառներից մեկը), ինչպես նաև Գիորգի արքայազնի (հետագայում՝ Գիորգի XII, 1798—1800 թթ.) մասին գրքում եղած հողորդումները ժամանակին վրդովեցրել են Արևմտյան Վրաստանի կառավարչուհի, Գիորգի XII-ի դուստր Նինա Դադիանիին: Նա 1814 թ. ռուսական կառավարությանն է դիմել՝ Հ. Արարատյանի գրքի արգելման պահանջով: Կառավարությունը մերժել էր այդ<sup>153</sup>:

1844 թ. գրված «Աղա-Մահմեդ խանի մուտքը Թիֆլիս, երկի հեղինակ Ալեքսանդր Զամբակուր-Օրբելիանին, Հ. Արարատյանին ներկայացնում է որպես Ռուսաստանի գործակալ և նշում, թե Աղա-Մահմեդ խանը Թիֆլիսի մոտից ետ կվերադառնար Պարսկաստան և քաղաքը շէր գրավի, եթե չլիներ Հ. Արարատյանի դավաճանությունը: Նա, ըստ Զամբակուր-Օրբելիանիի, Թիֆլիսից իբր փախցրել և ազատել է Աղա-Մահմեդ խանի այնտեղ պահվող դեսպանին, իսկ վերջինս համոզել է խանին և վստահեցրել, թե Հերակլն այնքան շատ զորք չունի, որքան սխալմամբ խանն է կարծում<sup>154</sup>:

Ինչ խոսք, 1795 թ. տակավին Ռուսաստան շտեպած 21-ամյա Հ. Արարատյանին Ռուսաստանի գործակալ համարելը պարզապես ամբաստանություն է: Ա. Զանբակուր-Օրբելիանին (ռուսական տիրասպետության հակառակորդ իշխաններից ու 1832 թ. դավադրության կազմակերպիչներից մեկը)<sup>155</sup> դավաճաններ է անվանում ժամանակի գրեթե բոլոր ռուսական կողմնորոշում ունեցող գործիչներին, ընդ որում՝ թե հայ և թե վրացի, այդ թվում նաև Հովսեփ Արղությանին, որի թելադրանքով էլ, իբր, գործում էր Հ. Արարատյանը:

<sup>153</sup> О. П. Маркова, Восстание в Кахетии 1812 г., М., 1951, стр. 321; ЦГИАЛ, ф. 1284, опись 4<sup>a</sup>, 1814, III отд. I стола, д. 246 էջ 84—106. Նինա Դադիանիից առաջ, ըստ երևույթին, նման վերաբերմունք են ցուցաբերել նաև հայ հասարակայնության ներկայացուցիչներից ոմանք: Այդ երևում է «Сын отечества»-ի խմբագրությանը ուղղած Հ. Արարատյանի 1814 թ. մարտի 12-ի նամակից ու հրատարակիչների ծանոթությունից: Տե՛ս «Сын отечества» СПб., 1814, часть 12, № 12, էջ 259—261:

<sup>154</sup> Բ. Վահ-ժե Զամբակուր-Օրբելիանի, Բա-Մամադ-Խանի Մեմուրներ Գ. Գուլիսի, Գաղթողական լուսավորում «Մոսկովի», Գ. 1895, էջ 35—37, նույնը կրկնում է նաև Մարգիտա Կակարաձեն: Տե՛ս Բարգի Կարաձե. Տաթարական իստորիա. Երևան, 1990, էջ 338:

<sup>155</sup> Գ. Գաղափարաբան, 1832 թվականի Մեթոդները, տ. 1, 1935; Լ. Գաղափարաբանի նախնիները (անծանոթի Բիբլիոգրաֆիկա); տե՛ս Տաթարական իստորիա. Մոսկովի, 1947. էջ 265—268:

Քննելով Աղա-Մահմեդ խանի արշավանքի շուրջ եղած աղբյուրները և ցույց տալով Ալ. Զամբակուր-Օրբելիանիի տեղեկությունների մեծ մասի միտումնավոր ու սխալ լինելը, պրոֆ. Ի. Յինցաձեն Հ. Արարատյանին վերաբերող հատվածի մասին նշում է. «Ալ. Օրբելիանիից բացի, ոչ մի հեղինակի մոտ այսպիսի վկայություն չկա... Սեպտեմբերի 9-ին և 10-ին հակառակորդների հետախուզության և առաջապահ մասերի հանդիպումը Աղա-Մահմեդ խանին անարդյունք Իրան վերադառնալու հիմք չէր տալիս»<sup>156</sup>:

Այս ճիշտ հարցադրումը հեշտությամբ պիտի զարգացվեր, եթե Զամբակուր-Օրբելիանիի մտացածին վարկածը հաստատող վկայություն չդիտվեր անվանի բանաստեղծ Նիկ. Բարաթաշվիլու «Քարթլիի բախտը» պոեմի հետևյալ հատվածը.

...Հոգնեց պարսից մուկնած արքան  
 Եվ, պարզվում է, լիովին հուսահատ՝  
 Քարթլիից հեռանալ էր մտորում:  
 Սակայն թե ժամ էր որոնում Հուդան—  
 Ահա, այստեղ է, [որ] նա ձեռք գցեց.  
 Եվ զազրելու ձեռներն անկուշտ  
 Բացեցին երկրի ամբուսթյան դռները,  
 Նա թշնամյաց զոհեց յուրային եղբարց<sup>157</sup>:

Նիկ. Բարաթաշվիլու այս տողերը գրվել են 1839 թ., իսկ Ալ. Զամբակուր-Օրբելիանիի մեկնաբանությունը՝ 1844-ին: Եթե երկրորդի աղբյուրը առաջինը չէ (միտումնավոր մասնավորեցումով), ապա նրանք երկուսն էլ տեղեկությունը քաղել են բանավոր նույն զրույցից, բայց տարբեր անձնավորումով: Իրողությունը պարզելու համար անհրաժեշտ է դիմել անցուդարձերին ժամանակակից աղբյուրների: Աղա-Մահմեդ խանի բանակում ծառայած և արշավանքի մասնակից Հակոբ Բեհբուդյանը հետևյալն է հաղորդում. «Շահն տեսնելով ինչա փախուստը, կամեցավ վերադառնալ՝ որպէս զի կրկին գեաի անցկացած տեղովը միանայ իւր զօրաց հետը: Քանի մի հաւատափոխ վրացիք, որք մեր բանակումն էին, յառաջ եկին, երկրպագութիւն տուին Շահին ու ասացին. էս մօտիկ տեղումն վերեն, այգեստանը որ երևում է, նորա մէջիցը աւելի ևս լավ հունկայ, ուր Կուրն երկու է բաժանվում, էն տեղաց առանց նեղութեան կարող է բեռնաբարձ գրաստն անգամ անց կենալ: Շահն գովելով հետևելոց

<sup>156</sup> Օ. Շինճաժե, «Ղա-Մահմեդ-խանի տեղեկութիւնները», Երևան, 1969, էջ 202:

<sup>157</sup> Ե. Զարգոսյան, «Շահն և իր ժամանակը», Երևան, 1968, էջ 142: Թարգմանությունները տողացի է. Հայերեն չափածո տալադիր թարգմանությունները իմաստային շեղումներ ունեն բնագրից, որի պատճառով չեն հղվում:

հաւատարմութիւնը և քաջասրտութիւնը մտրակեց ձին՝ հասանք հավատա-  
փոխ վրացոց ասած տեղը, ու շատ դիւրութեամբ անցկացանք հունովն»<sup>158</sup>:

Ինչպես տեսնում ենք, Նիկ. Բարաթաշվիլու հաղորդումը «յուրա-  
յին եղբարց» զոհելու մասին լիովին հաստատվում է Բեհբուդյանի տեղե-  
կությամբ, ուր դավաճանները «քանի մի» հավատափոխներ են:

Դավաճանութիւնը Հ. Արարատյանին վերագրելու առիթ է ծառա-  
յել հետևյալ դրվագը: Հ. Արարատյանը պատմում է, թե երբ ինքը Կա-  
խեթում էր, իրեն հրավիրում են թարգմանչի դեր կատարելու մի անձ-  
նավորութեան հարցաքննութեան ժամանակ, որին կասկածում էին լրտես  
լինելու մեջ: Երբ ինքը տեսնում է այդ «լրտեսին», ճանաչում է (Երևանի  
բնակիչներից էր, դարբնի որդի) և որպեսզի ազատի նրան հետագա տան-  
ջանքերից, կեղծ ցուցում է տալիս իբր նա Երևանի իշխաններից մեկի որ-  
դին է: Հ. Արարատյանի պատմելով, այդ «երախտամոռ» մարդը, որին  
ինքը փրկել էր ծեծից, նույն ձևով չի վարվում և Հ. Արարատյանի տան-  
տիրոջը հայտնում է նրա՝ Հ. Արարատյանի, աղքատ ընտանիքից լինելու  
մասին (փաստ, որը, ըստ երևույթին, ինչ-ինչ նկատառումով, ծածկել էր  
հեղինակը):

Պարզ է, սակայն, որ Արարատյանի «Կյանքում» եղած դրվագի  
«դարբնի որդին» չէր կարող Աղա-Մահմեդ խանի «դեսպանը» լինել, ոչ էլ  
Հ. Արարատյանը նրա «գողացողը» դիտվել:

Հ. Արարատյանի պատմած հենց այս դեպքը նկատի ունի Ալ. Ջամ-  
բակուր-Օրբելիանին, երբ մեղադրում է նրան «դեսպանին» (Հ. Արարատ-  
յանի մոտ՝ «լրտես») ազատելու մեջ: Որ Ալ. Ջամբակուր-Օրբելիանին  
իրոք կարդացել էր Հ. Արարատյանի «Կյանքը», երևում է հետևյալից.  
դավաճանութեան մասին խոսելիս նա գրում է. «Ահա այս Արտեմ Արա-  
րացկին՝ երկուշաբթի գիշերն այն դեսպանի գողացողը, ինքն իր ծախու  
հայ մարդկանցով առաջնորդեց դեսպանին և հակառակը՝ նույն գիշերն էլ  
Կոջորից ներքև ցածր լեռներով նրան թելեթ տարավ, որը (Արարատ-  
յանը—Պ. Չ.) իրոք որոշակիորեն լավ գիտեր այն տեղերը և հետո կըր-  
կին Թիֆլիս վերադարձավ»<sup>159</sup>:

Որտեղի՞ց գիտեր Ալ. Ջամբակուր-Օրբելիանին Հ. Արարատյանի՝  
տեղանքը լավ իմանալու մասին, եթե ոչ նրա իսկ «Կյանքի» համապա-  
տասխան մասի նկարագրութիւններից, որտեղ հեղինակը ամենայն ման-  
րամասնութեամբ ներկայացնում է իր անցած ուղին:

<sup>158</sup> Տե՛ս «Կոունկ Հայոց աշխարհին», 1863, № 11, էջ 839 (նաև «Արարատ» 1877, էջ  
299): Վրացերեն թարգմանութիւնը տե՛ս «ոցցոօ» 1885, № 2, էջ 100—101:

<sup>159</sup> Վժ. չամբակուր օրբելիանի, նշվ. աշխ., էջ 36 (ընդգծումը մերն է—Պ. Չ.):

Ինչպես նշեցինք, Հ. Արարատյանը 1795 թ. սեպտեմբերի 11-ին, երկուշաբթի օրը, Թիֆլիսում շի եղել. դրանից մի քանի օր առաջ նա արդեն տեղափոխվել էր Կախեթ<sup>160</sup>:

Եթե Հ. Արարատյանին վերաբերող նման մեղադրանք գոյություն ունենար մինչև 1820—30-ական թվականները, ապա այդ մասին որևէ հիշատակություն կամ ակնարկ պիտի ունենայինք Գ. Ավալիշվիլու մոտ, որի հետ նա բազմիցս հանդիպել է Մերձավոր Արևելք կատարած իր ճանապարհորդության ժամանակ (1819—1820 թթ.): Մինչդեռ Գ. Ավալիշվիլու «Ուղեգրության» մեջ արտակարգ մտերիմ ու միայն բարեկամական վերաբերմունք ենք տեսնում Հ. Արարատյանի նկատմամբ: Գ. Ավալիշվիլին «Ուղեգրությունը» շարադրել է 1819—1820 թթ. ճանապարհորդությունից հետո: Նա գոնե կզգուշանար և իր մտերմության մասին չէր պատմի: Իրականում մինչև 1830-ական թվականները Հ. Արարատյանի «դավաճանության» մասին պատմող զրույցներ չեն եղել:

Հ. Արարատյանի անվան շուրջ ստեղծված զրույցի հերյուրանք լինելն ապացուցող կռվաններից մեկն էլ նրա անսահման հայրենասիրության փաստն է, ամուր համողմունք դարձած ռուսական կողմնորոշումը: Նա իր հայրենիքում ճաշակել էր անձամբ պարսից բռնակալների հարստահարման ու ճնշումների ողջ դառնությունը, հենց այդ բռնակալության ճիրաններից Ռուսաստան փախչելու ճանապարհին է, որ ստիպված էր մի քանի ամիս մնալ Վրաստանում: Անկարելի է պատկերացնել, թե նա կարող էր որևէ աջակցություն ցույց տալ պարսից զորքերին: Հ. Արարատյանը լավ էր գիտակցում Անդրկովկասի ժողովուրդների ճակատագրի միասնական լինելը:

Հ. Արարատյանը XVIII դ. վերջերի և XIX դ. առաջին տասնամյակների հասարակական-քաղաքական ու մշակութային երևելի գործիչներից մեկն է: Նրա կյանքի ու գործունեության առավել հանգամանալից ուսումնասիրությունը կարող է ուշագրավ նոր էջեր բացահայտել հայ-ռուս վրացական պատմամշակութային փոխհարաբերությունների պատմությունից:

<sup>160</sup> Պրոֆ. Ի. Ցինցաձենի իրավացի կասկածով է վերաբերվում Ալ. Ջամբակուր-Օրբելիանի հաղորդմանը. «Նա (Օրբելիանին—Պ. Չ.) չի ջոկում մեղավորն ու արդարը: Բայց Հ. Արարատյանը արդյոք ուներ Աղա-Մահմեդ խանի դեսպանին ազատելու հարավերություն՝ այս դեռևս ապացուցելի է: Ընդհանրապես դեռևս ապացուցելի է պարսկական դեսպանի՝ սեպտեմբերի 11-ին առավոտյան իր տիրոջ մոտ գնալը» (Ռ. ՅոնՅոն, Օրդա-Մաճճադ-Կանոն տաջլանեմա Եթիբաթեյլեռնե, տձ., 1969, էջ 203):

## ԱՅԼ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերոբերյալ ուղեգրություններից բացի, վրաց մատենագրության մեջ պահպանվել են համեմատաբար նվազ հասարակական-քաղաքական հըն-  
չեղություն ու գիտական արժեք ունեցող և, ըստ այդմ էլ, հետազոտող-  
ների կողմից պակաս ուշադրության արժանացած այլ ուղեգրություններ  
ևս:

Ժամանակագրական կարգով նման ուղեգրություններից առաջինը  
Ս.-Ս. Օրբելիանիի եղբորորդու՝ Վախթանգ Օրբելիանիի<sup>1</sup>, «Պետերհոֆի  
նկարագրությունը» վերնագրով փոքրիկ ուղեգրությունն է<sup>2</sup>, որտեղ հեղի-  
նակը նկարագրում է իր շրջագայությունները Պետերբուրգում՝ 1736 թ.  
օգոստոսին, ներկայացնում ճարտարապետական նշանավոր կառույցնե-  
րի, դբոսայգիների, շատրվանների ու քաղաքի տեսարժան այլ վայրերի  
գեղարվեստական պատկերը: Մեզ վերադեցնող հարցերի առումով, սա-  
կայն, ուղեգրությունը որևէ հաղորդում չի բովանդակում:

XIX դարի I քառորդը, ինչպես Անդրկովկասի մյուս բոլոր ժողովուրդների,  
այնպես էլ վրաց ժողովրդի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցող,  
ալեկոծ ու բազմաթիվ տեղաշարժերով հարուստ մի շրջան էր:

1801 թ. Վրաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու պատմական  
փաստից ու վրաց թագավորության բարձումից հետո ցարական կառա-

<sup>1</sup> Վախթանգ Օրբելիանիի կյանքի ու գործունեության մասին եղած վկայությունները  
շատ սակավ ու կցկտուր են: Բավական է ասել, որ նրան մինչև վերջերս էլ համարում էին  
Ս. -Ս. Օրբելիանիի եղբայրը (տե՛ս Սախարովի «Իստորիա Նարկեզեզի», IV, տժ., 1973,  
էջ 512): Պահպանված որոշ վկայություններից պարզվում է, որ նա եղել է  
լազմակողմանի զարգացած անձնավորություն և ունեցել հասարակական-քաղաքական  
լայն գործունեություն, հարել է կաթոլիկությանը և դարձել այդ դավանանքի ակտիվ քա-  
րոզողներից մեկը Վրաստանում (տե՛ս Վալդիմիր Ժոնովից, «Կատոլիկური ժողովուրդի  
տնօրինում XI—XVIII, տժ., 1977, էջ 72—77):

<sup>2</sup> Բնագրի հրատարակությունը տե՛ս Լավրովի «Պատմություն Վրաստանի», ժողովրդական  
տժ., 1958, էջ 323—341:

վարության հրահանգով վրաց թագավորական գահի բոլոր հավակնորդները և վրաց արքունիքի շնորհամենքը հրավիրվում էին Պետերբուրգ, որտեղ նրանց կալվածքներ, պետական թոշակներ և զանազան պաշտոններ էին տրամադրվում: Վրացական երկու ուղեգրություն իրենց ծնունդով պարտական են վրաց արքայազների վրաստանից Պետերբուրգ ճանապարհորդելու փաստին:

Պավել I կայսեր հրահանգով 1801 թ. հունվարին Պետերբուրգ են հրավիրվում վրաց վերջին թագավոր Գիորգի XII-ի որդիները: 1801 թ. մարտի 9-ին Պետերբուրգ են ճանապարհվում Հովհան (Օռանջ), Բագրատ և Միխեիլ արքայազները: Այդ ճանապարհորդության նկարագրությունը Հովհան արքայազնին ուղեկցող Նիկոլոզ Օնիկաշվիլու գրչին է պատկանում, որի գործածական վերնագիրն է «მოგზაურობა თბილისიდან პეტერბურგამდე» («Ճանապարհորդություն թիֆլիսից մինչև Պետերբուրգ»)<sup>3</sup>: Ն. Օնիկաշվիլին հանգամանորեն նկարագրում է իրենց երթուղին, իջևանած բնակավայրերը, հանդիպումները զանազան անձնավորությունների հետ և այլն: Մոզդոկում նրանք իջևանում են, ինչպես ինքն է գրում՝ «Ստեփան Աուստրովի տանը, որը ազգությամբ հայ է, ծագմամբ՝ թիֆլիսեցի և դեպքերի բերումով ապրում է այստեղ, և մնացինք այնտեղ երեք օր, և հյուրընկալում էր նա քաղցրությամբ ու բարությամբ»<sup>4</sup>: Հեղինակը բավականին տեղ է հատկացնում Մոզդոկի, Վորոնեժի, Տուլայի և հատկապես Մոսկվայի և Պետերբուրգի նկարագրությանը:

Ն. Օնիկաշվիլու ուղեգրության հրատարակիչ Լ. Մեփարիշվիլու բնորոշմամբ «Մոսկվայի ու Պետերբուրգի նկարագրությունը ուղեգրության մեջ մեծ տեղ է գրավում: Երկու քաղաքների նկարագրությունների ժամանակ նա մանրամասնորեն խոսում է վաճառականության ու առևտրի շենքերի ճարտարապետական ձևավորման, տեսարժան վայրերի ու շինությունների, եկեղեցիների, պալատների, թանգարանների մասին: ...Այս ամենն այնքան ընդարձակ է ներկայացված, որ Մոսկվայի ու Պետերբուրգի ութհարյուրական թվականների նկարագիրը գրեթե կենդանանում է մարդու աչքերի առաջ»<sup>5</sup>.

<sup>3</sup> Բնագիրը հրատարակել է Լ. Մեփարիշվիլին: Տե՛ս Վ. Մեջարիշვილი, რუს და ქართველ ხალხთა კულტურული ურთიერთობის ისტორიიდან, ნ. ონიკაშვილის მოგზაურობა თბილისიდან პეტერბურგამდე, „საისტორიო მოამბე“, 25—26, თბ., 1971, էջ 183—236: Բնագիրը՝ էջ 192—236: Լրիվ վերնագիրն է. „აღწერა მოსკოვისა, პეტერბურლისა და მას შინა მყოფთა ხილვად საუცხოთა და ხსოვნისა ღირსთა რაიმეთა ნივთთა ანუ ხელოვნებათა“.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 195:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 189:

XVIII դարի վերջին կամ XIX դարի սկզբներին պետք է հորինված լինի վրացալեզու ևս մի ուղեգրատիպ նկարագրություն, որը շարադրված է չափածո<sup>6</sup>: Այն առայժմ վրաց ուղեգրական մատենագրությամբ զբաղվող մասնագետների ուշադրությանը չի արժանացել: Չափածո այդ շարադրանքը վերնագրված է երրորդ դեմքով<sup>7</sup>, որը մատնացուցում է, թե ձեռագիրը կարող է սկզբնագիր լինել, թեև նկարագրողի բնութագրմամբ այն ինքնագիր է<sup>8</sup>:

Հեղինակը՝ ոմն Մոսիկ (Մովսես), որ ազգությամբ հայ է, նկարագրում է իր ճանապարհորդությունը Քարթլիից Իմերեթ ու Օդիշ և այնուհետև Պետերբուրգ, ձողկելով թե՛ իրեն և թե՛ իր զբաղմունքն ու իր թըշվառությունը:

XIX դարասկզբից հայտնի է նաև մի այլ անանուն փոքրիկ ուղեգրություն, հրատարակված Ն. Բերձենիշվիլու կողմից, որը և համողիչ կերպով ճշգրտում է նրա ժամանակը՝ 1806 թ.<sup>9</sup>: Անհայտ հեղինակն իր ճանապարհորդությունն սկսում է Իկոթից, 1806 թ. հունվարի 7-ին: Նա այցելում է Մճադիս-շվարի, Մուխրան և ապա Թիֆլիս, որտեղ նա մնում է 4 օր: Ելնելով այն բանից, որ նա մինչև Թիֆլիս հասնելը գրում է եղակի թվով (ելա, հասա, Մուխրան հասա, Մուխրանից ելա), իսկ այնուհետև հոգնակի թվով է շարունակում նկարագրությունը (քաղաքից սկսեցինք ճանապարհորդությունը, հասանք, կանգ առանք և այլն), ենթադրելի է, թե նա Թիֆլիսից ուղեկիցներ է ունեցել իր հետ: Այստեղից հասնում են Կումիս, այնուհետև շարունակելով ճանապարհը՝ լինում են Շիխլիում, Չազամում (Չեզամ) և Գանձակում, որտեղ մնում են 18 օր: Գանձակից նրանք հասնում են Քուրադբասան, իսկ այստեղից Քուռ գետն անցնելով, հասնում են Քանդակ հայկական գյուղը<sup>10</sup>: Հունվարի 21-ին լինում են Գանա գյուղում և ապա դնում Նուխի, որտեղ իջևանում են խանի պալատում: Ուղեկիցներին տեղավորում են գյուղում, իսկ ինքը մնում է խանի պալատում: Այդ ժամանակ, սակայն, խանը Նուխիում չէր, և հեղինակը սուրհանդակի միջոցով իր ժամանման մասին հաղորդում է նրան: Հինգե-

<sup>6</sup> Государственная Публичная библиотека им. М. Е. Салтыкова-Щедрина, Отдел рукописей, груз. рук., собр. цар. Иоанна, № 352.

<sup>7</sup> „მოსიკსგან თქმული შაირი მისსავე თავზედ...“

<sup>8</sup> «Автограф. Автор армянин, пишет красивым почерком, но плохо знает грузинский язык, это ироническое описание в стихотворной форме собственных душевных переживаний мелкого торговца, впервые попавшего в Петербург».

<sup>9</sup> „მასალები საქართველოს ეკონომიური ისტორიისათვის“, წიგნი II, მასალები შეარჩინა და გამოსაცემად მოამზადა ნ. ბერძენიშვილმა, თბ., 1953, էջ 304—307.

<sup>10</sup> „სომხის სოფელს ქანდაკს ღავდევით“ (ნოქნ ახელია, էջ 305):



րորդ օրը, ինչպես նկարագրում է անհայտ հեղինակը, Սելիմ-խանը վերադառնում է և լավ ընդունում նրան: Այստեղից խանի կողմից ուղեկիցներ ու Շամախիի խանին՝ Մուստաֆային, հասցեագրված նամակ վերցնելով, նա ճանապարհվում է հունվարի 30-ին և գիշերում Քունջուխ գյուղում: Հաջորդ օրը՝ հունվարի 31-ին, նա հասնում է Խաչմազ և իջևանում աղա Շիրին-բեգի պալատում: Փետրվարի 1-ին հասնում է Կուրթկաշ (Կուրտկաշեն—Պ. Չ.)՝ Ահմադ-սուլթանի մոտ: Այնուհետև նա լինում է Թուփչի գյուղում, որտեղից փետրվարի 3-ին, շաբաթ օրը, ինչպես ինքն է գրում, գնում են հայկական Թոբուշեն գյուղը և իջևանում այնտեղ<sup>11</sup>: Հաջորդ օրը նրանք իջևանում են Սուլուխում և ապա անցնում Սաղխան: Ուղեգրության այս հատվածում անանուն հեղինակը գրում է.

«Յ սալիանս սոմնիս սոփեղ-  
Մի լազլեգիտ. յ՞ ցրտի ցկլեսիա  
ուս սոմնիս, ցարցատ նա՞մենի,  
տլիլիս յ՞ցիս. Նալիտա շնիտ,  
մագրամ այ ար ուս, Նանս ցիսե՞մի  
Մալլեան, որիտ յ՞երտերա ուս,  
ցարցա միջվիլո. չեր յի Մե՞մինդեն,  
ամիտոմ ըոմ Նանի ցցի՞սյենսո. Դե-  
րե, Մինամիլոլի ըոմ Նախես, մից-  
վիլես, մագրամ սատանիտ յի արա  
մոցցիլդես ըա, ամիտոմ ըոմ Նանի  
չարիմաս Մալլեարտմեցսո. մելի՞-չիմ-  
Միլիս յա՞ց<ս> լախվե՞լոլ  
<ցն>, Մեյլլեարեմինատ լա Նանս  
ամիսատցիս չարիմա Մալլեարտմիա»<sup>12</sup>.

«[փետրվարի] 6-ին իջևանեցինք  
հայկական Սաղխան գյուղում:  
Այնտեղ հայկական մի եկեղեցի  
կար, լավ կառուցված, սրբատաշ  
քարով: Խալիֆ ունեն, սակայն  
այնտեղ չէր, խանը բանտ էր տա-  
րել նրան: Երկու տերտեր կար,  
լավ ընդունեց[ին] մեզ: Նախ  
սարսափեցին, որովհետև [զգու-  
շանում էին թե՛] խանը մեզ վրա  
կզայրանա: Հետո, երբ տեսան  
[մեր] առաջնորդոլին, մեզ ըն-  
դունեցին, սակայն ըստ արժան-  
վույն մեզ չգնահատեցին, որով-  
հետև «խանը կարող է մեզ տու-  
գանել» — խորհում էին նրանք: Մե-  
լիք-Ջիմշիդի մարդուն դիմավո-  
րել էին, հյուրասիրել, և խանը դը-  
րա համար տուգանք էր վերցրել  
նրանցից»:

Սաղխանից նրանք գնում են Շամախու Աղսու քաղաքը, որտեղ «ոչ  
տուն կար՝ բոլորը ավերված էին, ոչ ժողովուրդ, և ոչ էլ պարեն (բառացի՝  
խմելիք-ուտելիք) էր ճարվում»<sup>13</sup>: Այդտեղ նրանք, ըստ պայմանադրու-

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 305:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 306:

թյան, հանդիպում են ունենում Մուստաֆա խանի հետ, որի մոտ, հեղինակի իսկ ժամանման պահին, հավաքվել էին շրջակա խանությունների ներկայացուցիչները: Փետրվարի 11-ին, Շամախուց դուրս գալով, նրանք այցելում են Քուրթմալի ադրբեջանական գյուղը, լինում Ղաբալա, Մուխաս, Նուխա բնակավայրերում: Նուխայում իջևանում են հայերի մոտ, փետրվարի 15-ին տեսակցություն ունենում խանի հետ և մեկ շաբաթ հետո ճանապարհվում Վրաստան: Անցնում են Դանա, Մինգիչաուր, Քուրազբար բնակավայրերով և փետրվարի 24-ին հասնում Գանձակ: Այստեղ ավարտվում է նկարագրությունը:

Ամենայն հավանականությամբ հեղինակը բարձրաստիճան անձնավորություն է, որի ճանապարհորդությունը հետապնդել է դիվանագիտական նպատակներ, իսկ հիշյալ նկարագրությունը նրա մանրամասն հաշվետվություն-ղեկուցագիրն է վերադաս ինչ-որ մի պաշտոնյայի:

Վրաց արքայազն Թեյմուրազ Բագրատիոնիի գրչին է պատկանում երկու ուղեգրություն, որոնցում նա շարադրել է իր՝ Թիֆլիսից Պետերբուրգ 1810—1811 թթ. և Պետերբուրգից Եվրոպա 1836 թ. կատարած ճանապարհորդությունների տպավորություններն ու երթուղու մանրամասն նկարագրությունը:

Թեյմուրազ Բագրատիոնին (1782—1846) Գիորգի XII-ի որդին էր: Աշակերտել էր Պետրե կարաձեին և Թելավի սեմինարիայի ռեկտոր Դավիթ Ալեքսի-Մեսխիշվիլուն: Հոր մահվանից և Արևելյան Վրաստանը Ռուսաստանին միանալուց հետո նա չի հաշտվել կատարված պատմական իրադարձության հետ և իր հորեղբոր՝ Ալեքսանդրի, հետ 1803 թ. փախել էր Պարսկաստան ու պայքարում էր ռուսների դեմ<sup>14</sup>: Աբաս Միրզայի ժամանակ՝ 1810 թ. Թեյմուրազը ղեկավարում էր պարսկական հրետանին, սակայն շուտով իր կամքով ներկայացավ գեներալ Տորմասովին, որը և նրան ճանապարհեց Պետերբուրգ<sup>15</sup>:

Թեյմուրազ արքայազնի առաջին ուղեգրությունը, ինչպես նշվեց, գրավել է Թիֆլիս—Պետերբուրգ ճանապարհին: 1810 թ. հոկտեմբերի 16-ին դուրս են եկել Թիֆլիսից և հաջորդ օրը գնացել Անանուրի և ապա հասնելով Փասանաուրի ու հոկտեմբերի 21-ին անցնելով Կովկասյան լեռ-

<sup>14</sup> თეიმურაზ ბაგრატიონი, მოგზაურობა ჩემი ევროპისა სხვათა და სხვათა აღვილთა, სოლ. იორდანისვილის რედაქციით, წერილითა და შენიშვნებით, თბ., 1944, էջ 3—4.

<sup>15</sup> Այստեղ նա սովորեց հունարեն և լատիներեն լեզուները և ձեռնամուխ եղավ վրաց մատենագրության ուսումնասիրմանը: Նա ունեցել է բեղմնավոր գրական ու գիտական գործունեություն: Թեյմուրազին իր ուսուցիչն էր համարում ակադ. Մ. Յ. Բրոսեն: Նույն տեղում, էջ 3: Հմմտ. Д. Бакрадзе. Статьи по истории и древности Грузии, СПб., 1887, էջ 9:

ნაჯღაშან, հոկտեմբերի 24-ին հասել են վլադիկավკაզ: Նոյեմբերի 1-ին նրանք արդեն Մոզդուկում էին: Ինչպես Հովհան, Բագրատ և Միխեիլ արքայազները 1801 թ., Թեյմուրազ Բագրատիոնին ևս Մոզդուկում իջևանում է հայազգի Հարությունի տանը:

„Նոյեմբրիս 1. მოვედით მოს-  
დოვს და ჩამოვხედით სომხის სა-  
სახლესა შინა, გარնა წესსა მუნ-  
ებურსა ზედა ფრიად შემკობილსა  
სასახელთა. ამას სახლსა შინა მც-  
ხოვრებნი არიან: ირიცფუხანნი და  
სახლის უფალი არუთინა“<sup>16</sup>.

«Նոյեմբերի 1: Եկանք Մոզդուկ  
և իջևանեցինք հայի պալատում,  
[որը], սակայն, զարդարված էր  
այնտեղի՝ սովորության համա-  
ձայն: Այս տանը ապրողներն են՝  
երեսփոխաններն ու տանտեր Հա-  
րությունը»:

Մոզդուկում մի քանի օր մնալուց հետո, շարունակում են ճանապարհը և նոյեմբերի 16-ին հասնում Ստավրոպոլ, իսկ հետո, անցնելով Վորո-  
նես, Տուլա քաղաքները, դեկտեմբերի 21-ին հասնում են Մոսկվա:  
Այնտեղ մնում են 10 օր և ապա ճանապարհվում Պետերբուրգ: Անցնելով  
Տվեր և Յարսկոյե Սելո, 1811 թ. հունվարի 12-ին հասնում են Պետեր-  
բուրգ: Դրանով էլ ավարտվում է ուղեգրությունը, որի վերջում հեղինակի  
իսկ ձեռքով կատարված է մի փոքրիկ նշում, որտեղից հայտնի է դառնում  
նաև, որ նույն թվականի հունվարի 22-ին, կիրակի օրը, նրանք ներկա-  
յացել են կայսրին:

Թեյմուրազ Բագրատիոնիի երկրորդ ուղեգրության մեջ շարադրված  
են 1836 թ. բուժման նպատակով Եվրոպա կատարած նրա ճանապար-  
հորդության տպավորությունները: Գրառումները սկսվում են 1836 թ.  
մայիսի 26-ին և ավարտվում նույն թվականի նոյեմբերի վերջին, հեղի-  
նակի վերադարձի նշումով:

Այժմ անդրադառնանք ևս մեկ ուշագրավ ուղեգրության, որը դեռևս  
անտիպ է և պահվում է վրաստանի գրականության թանգարանի ձեռա-  
գրերի բաժնում՝ 12962b համարի տակ (նրա տպագիր միակ հիշատակու-  
թյունը հիշյալ թանգարանի ձեռագրերի նկարագրությունն է)<sup>17</sup>: Հայազգի  
Բաղրբեգ Բաստամովի գրչին պատկանող այդ ուղեգրությունը բավական

<sup>16</sup> Թեյմուրազ Բագրատիոնիի ճամփային օրագրերը, Ե. Բրոսեսալով, Երևան, 1964, էջ 94: Ուղեգրությունը այստեղ հրատարակված է հավելվածի տես-  
քով, տե՛ս էջ 93--101.

<sup>17</sup> Տե՛ս «Լիտերատուրის მატიანე», წიგნი 5, ნაკვეთი მეორე, ხელნაწერთა აღწერილობა, I, შედგენილი ივ. ლოლაშვილის მიერ, თბ., 1949, էջ 75--77:

ընդարձակ է՝ բաղկացած է 68 մեծադիր ու մանրատառ էջից և պահպանվել է ինքնագրով<sup>18</sup>: Ուղեգրության լեզուն անհարթ է, սխալաշատ և աչքի է ընկնում ուսերեն բառերի առատությամբ:

Հիշյալ թանգարանում են պահվում նաև ուղեգրության հեղինակի այլ գործեր, բոլորն էլ վրացերեն (այդ թվում՝ նամակ ուղղված ոմն Սոնայի, ոտանավորներ և մի գրություն՝ «Իմ եղբոր՝ Ստեփան Տագորիչի մահվան հանգամանքները» վերնագրով)<sup>19</sup>:

Բ. Բաստամովը ծնվել է 1806 թ., ժամանակին ոչ անհայտ մի անձնավորության Գիորգի (Եգոր) Բաստամովի, ընտանիքում: Հայրը՝ Գ. Բաստամովը, որ Թիֆլիսի ունևոր բնակիչներից էր, կատարում էր ուսական-իշխանությունների դիվանագիտական հանձնարարությունները և իր՝ Պարսկաստան կատարած ուղևորությունների ժամանակ եռանդ չի խնայել այնտեղ գտնվող Ալեքսանդր արքայազնին համոզելու՝ կամովին ուսահայատակություն ընդունելու<sup>20</sup>: Շարունակելով հոր գործունեությունը, Բ. Բաստամովը մտել է ուսական գինվորական ծառայության մեջ ու մասնակցել ուս-պարսկական (1826—1828) պատերազմին և պարսկահայերի վերաբնակեցման կազմակերպմանը: Այդ փաստերի հիշատակությամբ էլ սկսում է իր շարադրանքը. «1827 թ. հոկտեմբերի 13-ին ուսական զորքը գրավեց Թավրիզը, և երբ Թուրքմենչայի հաշտությունը

<sup>18</sup> Ուղեգրությունը բնագրում վերնագրված չէ: Առաջին պարբերության վերջում նշվում է. «Թե ուղեգրությունը շարադրվում է «իմ գլխով անցածները իմ սիրելի ընթերցողներին հայտնելու համար»: Այս արտահայտության հիման վրա էլ ձեռագրի նկարագրության ժամանակ Իվ. Լոլաշվիլին իրավացիորեն այն վերնագրել է «*ჩემი თავგადასავალი*» («Իմ գլխով անցածները»):

<sup>19</sup> Ներկայիս համարակալումով՝ №№ 12964—12978, 12979—12991 (նախկին № 101—104): «Ստեփան Տագորիչը», XIX դ. կեսերի նշանավոր հայ գրական-մշակութային և հասարակական գործիչ, բժիշկ Ստեփան Եգորի Բաստամյանն է (1815—1872 թթ.), որ *Եռավելապես հայտնի է «Ընթերցողի» հայերեն իր թարգմանությամբ: Աշխատակցել է «Կովկաս» հայերեն օրաթերթին, «Կոունկ Հայոց աշխարհի», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականների: «Բացի գեղարվեստական գործերից,—նրա մասին գրում է Ս. Ավչյանը,—նա ուշագրավ բժշկական հոգվածներ է գետեղել մամուլում և մեծապես նպաստել հասարակության ինքնագիտակցության արթնացմանն ու զարգացմանը: Ստեփան Բաստամյանն ուներ «Կոլլեժսկի սովետնիկի» աստիճան և պարգևատրված էր 2-րդ աստիճանի «Ս. Ստանիսլավյան» շքանշանով»: Տե՛ս Ս. Գ. Ավչյան, Ստեփան Բաստամյանը «Վագրենավորի» առաջին թարգմանիչ (թարգմանության 100-ամյակի առթիվ), ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 1, էջ 88:*

<sup>20</sup> Գ. Բաստամովի գործունեության շուրջ մեզ են հասել բազմաթիվ վավերագրեր: Նրանց մի մասի հրատարակությունը տե՛ս АКАК, III, էջ 69—71, VII, էջ 282—286, 291, 294, 298—300 և այլն: Նրա մասին տե՛ս նաև О. Маркова, Восстание в Кахетии 1812 г., էջ 228 և այլուր:

տեղի ունեցավ, այն ժամանակ հայերին գաղթեցրինք Պարսկաստանից՝ քաղաք Թավրիզից, Մարաղայից, Սալմաստից, Խոյից, Ուրումից (Ուրմիայից) և այլ [վայրերից], որոնք [ժամանակավորապես] Ռուսաստանին էին անցել, և տեղավորեցինք մի քանի հազար ծուխ Երևանում, Ղարաբաղում, Նախիջևանում՝ բնակության համար»<sup>21</sup> :

1829 թ. Բ. Բաստամովին կովկասյան ռազմաճակատից տեղափոխում են Լեհաստան: Ուղեգրությունը՝ Թիֆլիսից Մոսկվա և ապա Լեհաստան՝ զինվորական նշանակման վայրը հասնելու համար նրա կատարած ճանապարհորդության նկարագրությունն է: Իր ուղևորությունը նա սկսում է Թիֆլիսից՝ 1829 թ. մայիսի 28-ին: Մեկ ամիս հետո, հունիսի 28-ին նա հասնում է Լադիկավկազ (Վլադիկավկազ), որտեղ երեք օր մնալուց հետո ճանապարհը շարունակում է և, անցնելով Եկատերինոգրադ, Ռյազան, Տամբով, Վորոնեժ և մի շարք այլ քաղաքներ, նույն թվականի օգոստոսի 17-ին հասնում Մոսկվա: Այստեղ մեկ տարի մնալուց հետո, նա գնում է Պետերբուրգ և ապա անցնելով Ռիգա, Վիլնո և Գրոդնո քաղաքները, հասնում է Բելոստոկ: Ծառայության բերումով նա լինում է Վարշավայում և Լեհաստանի այլևայլ քաղաքներում:

1832 թ. աշնանը Բ. Բաստամովը Անդրկովկաս փոխադրվելու թույլտվություն է ստանում: Դուրս է գալիս Վելիկոմիրից ու Վիլնո, Մինսկ, Սմոլենսկ, Վյաչմա, Մոժայսկ երթուղով վերադառնում Մոսկվա, ուր և շարադրում է իր ուղեգրությունը (1832 թ. նոյեմբեր): Ապա Վորոնեժ, Ստավրոպոլ, Անանուր, Թուշեթ ուղեգծով վերադառնում է Թիֆլիս:

Մոսկվայից հետո կատարած ճանապարհորդության գրառումները մի ամբողջություն են կազմում և դրված են այլ թանաքով, որը ապացույց է այն բանի, թե հեղինակն այդ հատվածը շարադրել է Թիֆլիս հասնելուց հետո: Այլ թանաքով և հետո է կատարված մի ուրիշ գրառում ևս, որից պարզվում է, որ նա 1841 թ. ծառայել է Նուխու շրջանում և մասնակցել Դաղստանում մղվող պատերազմներին: Բ. Բաստամովը 1841 թ. դեկտեմբերին դիմել է հրամանատարությանը՝ Երուսաղեմ ճանապարհորդելու թույլտվություն ստանալու նպատակով: Մի վերջին գրառումից պարզվում է նաև, որ զինվորական ծառայությունը թողնելով, 1845 թ. սեպտեմբերի 30-ին Բ. Բաստամովը Թիֆլիսից ճանապարհվել է Երուսաղեմ

<sup>21</sup> Պարսկահայերի վերաբնակեցման ու տեղավորման կազմակերպման մասին հանգամանորեն տե՛ս Բ. Ա. Մելիք-Տարկուսյան, Переселение армян из Персии в Восточную Армению в 1828—1829 годах. «Բանբեր Երևանի համալսարանի», 1979. № 2, 42—55:

ու Եգիպտոս և առանձին շարադրել նաև այդ ուղևորության նկարագրու-  
թյունը, որը, սակայն, դեռևս հայտնաբերված չէ:

Բ. Բաստամովը բավական հանգամանորեն է ներկայացնում ճանա-  
պարհորդական իր դիտարկումները: Նա վստահ է միաժամանակ, որ  
դրանով ինքը իր հայրենակիցների համար օգտակար աշխատանք է կա-  
տարում՝ ծանոթացնելով նրանց հեռավոր վայրերի կյանքի այլևայլ դր-  
վագներ: Ուղևորության մեջ նա բավական տեղ է հատկացնում կազար-  
յան ճեմարանի նկարագրությանը, ներկայացնելով ուսանողների առօր-  
յան, ուսումնական ծրագրերը, հայ ժողովրդի լուսավորության գործում  
ճեմարանի դերն ու նշանակությունը և այլն: Հատկապես մանրամասն են  
նրա հաղորդումները ճեմարանի ներքին կյանքի՝ ննջարանների, ճաշա-  
րանի, դասասենյակների, դասաժամերի տևողության ու ընթացքի, սնման  
ռեժիմի նկարագրությունների ժամանակ:

Բ. Բաստամովի դիտարկումները արժեքավոր են նաև հայ առանձին  
գործիչների մասին հաղորդումների առումով: Նա նկարագրում է իր  
հանդիպումները գեներալ-մայոր իշխան Դավիթ Սիմոնի Աբամելիքովի,  
Ղազար Հովակիմի կազարյանի հետ, պարսից արքայազն Խոսրով Միրզա-  
յի այցելության արարողությունը կազարյանների մոտ և ճեմարանում,  
իշխան Աբգար Աբամելիքովի հետ Պետերբուրգից Գրոդնո կատարած  
ուղևորությունը, Պետերբուրգում իր այցելությունը՝ վրաց արքայազն  
Թեյմուրազ Բագրատիոնիին և այլն: Հետաքրքրությամբ են ընթերցում  
Մոսկվային, Պետերբուրգին, Վարշավային և մի շարք այլ քաղաքների  
նկարագրությանը նվիրված նրա էջերը: Հեղինակը գովեստով է խոսում  
եվրոպական գրագիտության ու լուսավորության, ռադմունակության ու  
հայրենասիրության մասին և միաժամանակ ցավով նշում իր հայրենա-  
կիցների մեջ լուսավորության պակասի մասին: Նա հուսով է, սակայն,  
որ «...կազարենների ինստիտուտից հայ ազգը կլուսավորվի, և խնդրում  
եմ նաև իմ գրքի բոլոր ընթերցողներիդ, որպեսզի պարտք չմնաք այն-  
կողմնայինին և ձեր որդիներին ուսումնարան տաք»<sup>22</sup>: Այդ գիտակցու-  
թյամբ էլ նա խնդրում է կազարյաններին՝ ճեմարան ընդունել նաև իր  
կրտսեր եղբորը՝ 13-ամյա Ստեփանին, և, ստանալով նրանց համաձայ-  
նությունը, եղբորը Թիֆլիսից Մոսկվա է հրավիրում և տեղավորում կա-  
զարյան ճեմարանում:

<sup>22</sup> Վրաստանի պետական գրականության թանգարան, ձեռ. 12963 Ե, էջ 25ա:

## ՀԱՎԵԼՎԱԾ

Ներկա աշխատության բնույթից ելնելով, կարելի էր ստորև՝ «Հավելված» բաժնում, ներկայացնել վրացական ուղեգրություններում հայերի և Հայաստանի մասին եղած բոլոր կարևորագույն հաղորդումների հայերեն թարգմանությունները: Սակայն աշխատության մեջ այդ հաղորդումների քննության ժամանակ դրանք ըստ մեծի մասի մեջ են բերվել, ուստի այստեղ վերստին կրկնելը նպատակահարմար չգտանք:

Ստորև հրապարակվում են ներկա աշխատության հետ սերտ կապ ունեցող մի քանի վավերագրեր, որոնց մասին խոսվում է ուսումնասիրության բաժնում: Դրանց թվում է նաև մինչև այժմ մաս-մաս հրապարակված Շահամիր Շահամիրյանի 1787 թ. հոկտեմբերի 15-ի Հերակլ II վրաց թագավորին հասցեագրած ծրագրային նամակը՝ ամբողջական տեսքով: Այդ նամակի առաջին մասը հրատարակել է Սրբուհի Երիցյանը<sup>1</sup>, իսկ երկրորդ մասը՝ Ռ. Աբրահամյանը (ըստ Մաշտոցի անվան մատենադարանի № 2949 ձեռագրի)<sup>2</sup>, թեև ձեռագրում այն ամբողջական է: Հիշյալ նամակի նման երկատումն էլ խոչընդոտել է նրա ամբողջական ընկալմանն ու ուսումնասիրությանը: Այդ նամակով Շ. Շահամիրյանը իր երախտագիտությունն է հայտնում Հերակլ II-ին՝ 1786 թ. մարտի 22-ի հրովարտակով իրեն իշխանական տիտղոս շնորհելու համար և միաժամանակ հորդորում է նրան Վրաստանում իրագործելու մի շարք ռեֆորմներ, որոնք, ըստ Շ. Շահամիրյանի, հնարավոր կը դարձնեին Վրաստանի հետագա արագ հզորացումը, և Վրաստանի օգնությունամբ ու Ռուսաստանի օժանդակությամբ կիրականանար հայ ժողովրդի

<sup>1</sup> Տե՛ս «Փորձ», 1881, № 2, էջ 24—32: Այն վերատպել է Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, նշվ. աշխ., էջ 90—99:

<sup>2</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969 թ., № 3, էջ 133—137:

აღათაგრძელა გორდრ: *Տեսնելով Հերակլի «բարեպէս ձգտումն»՝ սովա-  
րացնելու Վրաստանի բնակչութիւնը, այստեղ խորհուրդ է տալիս աշ-  
խարհասփյուռ հայութեանն ուղղելու մի «նամակ շնորհաց և պահպա-  
նութեան»՝ նրան ուղարկելով առ այդ կազմված «Օրինակ նամակի պահ-  
պանութեան»: Շ. Շահամիրյանն առաջարկում է խմբագրումից հետո այն  
հաստատել և վերադարձնել իրեն՝ տպագրելու «հարիւրաւոր և հազարա-  
ւոր և ցրուեցից ի յերեսս երկրի, զի սովաւ փառավորեսցեն ամենայն պան-  
դրխտացեալք»: Հերակլ II-ն իրոք, որոշ խմբագրումից հետո, ստորագրել  
ու հաստատել է այն (1790 թ. դեկտեմբերի 4) և ուղարկել Մադրաս:  
Ուղերձը տպագրվել է 1792 թ. Հարութիւն Շմավոնյանի տպարանում,  
1000 օրինակ տպաքանակով: Պահպանվել է այդ ուղերձի հայերեն տպա-  
գիր օրինակից վրացերեն թարգմանութեան 1819 թ. արտագրութիւնը<sup>3</sup>:*

Շ. Շահամիրյանի հիշյալ նամակից պարզվում է, որ բացի Հերակլի  
հրովարտակից Հովսեփ Դինիբեկյանը Հնդկաստան էր տարել նաև Ան-  
տոն և Միրիան արքայազների շնորհավորանքները՝ իշխանական տիտ-  
ղոս շնորհելու առթիւ: Ստորև հրատարակվում է Շ. Շահամիրյանի պա-  
տասխան նամակը Անտոնին:

Շ. Շահամիրյանի և վրաց արքունիքի առնչութիւնների պատմու-  
թեան համար որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում Շահամիրյանի  
ստորև բերվող նամակը Մանուշար Թումանյանին: Նամակի հայերեն  
բնագիրը չի պահպանվել (կամ գոնէ հայտնաբերված չէ): Մ. Թումանյա-  
նի կողմից (հավանաբար Գիորգի XII-ին ներկայացնելու նպատակով) այն  
թարգմանվել է վրացերենի: Նամակը հրատարակվում է վրացերենից մեր  
կատարած թարգմանութեամբ:

Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում գրտ-  
նրվող օրինակի հրատարակվում է Գիորգի XII-ի 1796 թ. մայիսի 10-ի  
նամակը Շահամիր Շահամիրյանին:

Տ. Գաբաշվիլու գործունեութեան ուսումնասիրութեան համար կա-  
րևոր նշանակութիւն ունի Ճանապարհորդութեան ժամանակ քաղաքական  
անցքերի շուրջ իր դիտարկումների շարադրանքը: Նախապես կատարած  
մեր հրատարակումը (*ՊԲՀ*, 1977, № 4, էջ 232—235) անհրաժեշտ հա-  
մարեցինք այստեղ կրկնել, որովհետև նախորդը օժտված չէր պահանջվե-  
լիք ծանոթագրութիւններով ու մեկնաբանութիւններով:

<sup>3</sup> Հրատարակութիւնը տե՛ս Լ. Գրիգորյան, Փարտլ-ճանաչման սամբոսի շրտիցր-  
տոձա յաճասնոնսա ըձա մանլոձեղոն ալմոսաճղեոնիս հալնեձեձա մե—18 հաճկոնիս մեձորեճ նանե-  
ճարձոն, «հաճարտճեղոն ճեղոձալորոն հաննիս նսգորոնիս հաճոնեձեձոն», II, տձ., 1972, էջ 98—99:



*Բնագրերը հրատարակվում են անփոփոխ, միայն ակնհայտ ուղղագրական սխալների շտկումով:*

ՏԻՄՈԹԵՆՍ ԳԱՐԱՇՎԻՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
(ПЕРЕВОД С ГРУЗИНСКОГО НА РОССИЙСКОЙ ДИАЛЕКТ)

1752 года я, смиренный митрополит Тимофей, поехал во святой град Иерусалим, и что на дороге я видел и слышал, о том ниже явствует.

Во-первых, приехал я во град Трапезон и оттуда поехал до града Кукусула Армянскаго, который от турок ныне презывается Тохад и в нем гроб святого Иоанна Златоустаго.

Христиане меня спрашивали о Российском самодержавств[в]е как благополучно и услыша от меня славу Российскую, которым то известие приятно стало. И велми радуются и о том вкупе и молебствие со слезами учинили.

От[т]уда поехал во град Змирну, которой турки называется Измира, оттуда поехал ко святой горе Афонской. Тамо прожил год един. Тамо о Российском благополучном самодержавстве всегда благодарные молебны богу посылаются, и оттуда поехал морем ко святому граду Иерусалиму к называемому месту—Иопе, которой турки называют Иапа и тамо по противному ветру во Аравийскую Землю в город Триполи занесло. И есть тамо на горах Ливанских кедр, которой царь Соломон [с]рубил для здания Иерусалимской церкви. Тамошня живущия христиане слышали о мене и вышли навстретение и тайно спрашивали меня о Российском самодержавстве как благополучно, и я им ответствовал, что много европейскими также и азиатскими городами владеется и по божией руке всегда Российскаго царства рог возвышает. И слыша, тамошней христианской народ молебное Господу благодарение со слезами учинили.

Паки оттуда поехал до города Аравийского Бирбта, где Иопу прорека кита из чрева выбросил и оным местом Турки не владеют, а владеют Ливанских гор языцы и называют Турзи и они Турзи [т. е. друзья—П. Ч.] владеют, а владетель их хан у себя войска имеет довольное, туркам неподсудное. А оттуда поехал во Тирну и Сидонну, куда благополучно и прибыл. И оттуда поехал морем до Б[и]олеманта, которое турки называют Акния и там есть владетель великой беки, и тот беки турецкому салтану изменил и взял себе крепости. В той крепости иенгичерага, то есть поставленного от салтана владетеля и войско все побили и притом пушек больших взял шездесят и тот беки с материею совокупился. А оттуда поехал и прибыл в Иерусалим Иопу и Ари mateю и тамо прожил я один год и там один паша приехал Дамаской, имя его Чатажи, без салтанского указа и во Иерусалиме самовластно начал властвовать стал и со всех христиан взыскал триста шездесят тысяч рублей гостинцу.

И того же времени сорок тысяч татар хаджи поехали к Меке для богомолия, при чем была Турецкаго салтана сестра родная для тогож моления. Они же тех собравшихся арапы и христиане совокупясь со степными арапа-

ми побили в том же числе и салтанскую сестру и все что при них было пожитков себе взяли.

А от [И]ерусалима поехал я в Кипр, а оттуда в город Мирликийский приехал морем и тамое есть гроб святого отца Николая Чудотворца. И в то время салтан Турецкой приказал Анъглинскому послу, что ежели где по оному морю увидят Француских кораблей, то поймать. И я сам видел, что один большой Француской корабль и много малых поймано.

Мальтизия Турецкого салтана много обижает, так что уже исчислить никак не возможно: много в плен берут и побивают турок, а на Белом море в 1758-м году шесть больших кораблей с казною нагруженные от турка в Египте, который называет Мисир, малтизы взяли.

От Прускаго короля в Царь-град приехал посол и Турецкой салтан явно с честью взят в Царь-град. Токмо большей везир и доховной персона Шихислам советовали, что прежде наше время прошло и не надобно другим государствам досаждать, а надобно де самим себя беретчи. Явно взят онаго посла не надобно, а взят ево тайно, котораго тайно и взят. А я слышал, что оной посол для занятия казны приехал.

В 1759-м году приехал в Никомидию паша Абдураман и с ним великое войско было и хотел Турецкаго салтана с своего престола долой ссадить, которой убоявшись показанному паше дал немалую мзду и великой чин ему учинил, с чем вышеписанной паша и от'ехал.

В Царь-град приехало Лезгинских хаджей немалое число и хотели ехать в Капа, то есть в свое богомолие, но Турецкий салтан не пропустил и сказал им: вы де наши неприятели и наших де поданных раззоряете, и оные хаджи подали салтану от всего их Лезгинскаго народа доношение, которое от оных лезгинцев с показанными хаджами послано было и в том доношении прописано, как де мы лезгинцы так и вы турки все одной веры и как де к вам наше неприятство будет, токмо де промеж нами Мелитинский царь Соломон и Кахетинский хан Ираклий гаур (что есть без[з]аконники) и где ты не раззоряешь, а они наши неприятели и ежели оных приведете в нашу веру и посадите своих пашей, то де и мы вам аманатчиков дадим, что вашего владения ни волоса у нас пропасть не может.

Сколько от лезгинцев раззорено в Турецкой земли атменно.

Карс три части раззорена, а четвертая осталась.

Ахалцихи две части раззорена, одна часть к Черному морю осталась.

Арз[р]ума третья часть раззорена.

Царь-градский патриарх Серафим весь свой собор призвал в день святого апостола Андрея и тот праздник с величием и нам служил и великое казание притом и молебствование было, и как Рим Петра апостола, так и сей Царь-град Андрея Первозванного и при том посол Российской для слушания литоргеи и молебнаго богу приношения был. И по отшествовании литоргеи и молебнаго пения Российскаго посла патриарх поздравил с оным праздником, о

чем уведомился Турецкий салтан, оному патриарху за соединение греков с Россиею хотел смертью казнить.

Град Иерусалим гроб Христов и Вифлием и Гетимания, где гроб пресвятыя Богородицы, Французские и Гишпанские духовные персоны владетели, но в самой тот день, как мне служить случилось в Вифлиеме, салтан Турецкой отнял у них и отдал греком для уверения, что греки ему были верны: а французов и гишпанцев для того отнял, что соединились они христианским цесарем, а находящиеся тамо Французские и Гишпанские послы просили главного визира, чтоб им обратно отдал и главной визир сказал, что де оное не ваше было государство, а было де оное государство наше, за то де и грекам отдано, и притом, оной везир гневался для некоторой прежде бывшей причины и в тож время у Французскаго посла переводчику голову отсек, а оный переводчик был французскаго короля.

Назад тому четвертой год к Мелетинской границе живущие паши для христианства царь Мелетик тому Соломону Александровичу по некоторой причине неприятели, и один паша с немалым войском и с артилериею на онаго царя Мелетинскаго напал и хотел ево убить, тою Мелетию разорить, а у царя Мелетинскаго войска в то время при нем в сборе не было, а токмо случилось придворных 500 человек и несмотря на то, что еще оный Мелетинский царь в несовершенных летах был, малым числом взяв тех своих придворных 500 человек и в руку свою крест и саблю и вспоможение призвав себе Бога, у него, паши, 12 тысяч войска побил и самого его поймал и за такое злое ево намерение на другой день голову ему отсек.

О чем спознался Турецкой салтан и то ему противно оказалось и он более послать войска для отмщения не смел и оное все я сам своими очми видел.

А теперь ниже сего объявляю, что я слышал.

В Царь-граде известие получили, что христианин Арапской царь, называемой Хаваша, приступил к Кабе, то есть к татарским молениям, куда татары на богомолье ездят и около той Кебы многие местечки разорил. Си арапы жительство имеют близ Красного (Хокхяна) моря, которые имеют особливаго царя и туркам неподсудны. Их царь для возобновления заблудшей у них православной веры взял от Алек[с]андри[й]скаго греческаго патриарха архиереев и иных духовных персон. И той арабы от вышеописанной Кабы разстоянием сухопутно 30 дней езды, где татарской пророк Магомет погребен и где святой Про(...?) и был по гречески называется Кентополия.

Я приехал в Аттиннский и Ареопагию и тамо известия получил, что имеющаяся во оных городах Французские, Цесарские и Гишпанские консулы и купцы как скоро получают из отечества их известия, то тот час не ожидая ничего ехать во отечества дано; после того известия продолжится много вам будет невозможно.

Назад тому третей год в Корпосе и Кепалонии и в Венеции убирание и великое приготовление было для своей предосторожности, а от которой стороны, неизвестно

А морские и арапские басурманы, которые прежде были под Венецкою протекциею, Турецкому салтану изменили и казны Турецкой много себе взяли и великое между ними бунтовство было учинено и после этого салтан басурманам ни в чем не стал верить и даже во всех показанных басурманских местах и начальников поставил христиан.

ՍՍՀՄ վ. Ի. Լենինի անվան Պետական գրադարան,  
ձեռագրերի բաժին, ֆ. 203, թղթ. 251, վավ. 4:

ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՎՐԱՅ ԱՆՏՈՆ ԱՐՔԱՅԱԶՆԻՆ

Երանելի եւ երջանիկ սրբակրոն Տեառն Անտոն արքեպիսկոպոս նաևս  
արքիափայլ թագավորազն վրաց

Յնծուծիւն է յիս յանդիպել ի յայսմ ժամանակի որում փառավորութիւնն քոյ ուրախ առնէ զյոգի զմարմին իմ վասն որոյ խրախճանութեամբ շնորհ[հ]աւորեմ քեզ աստիճանն փառաց, յորում պսակեցար անթառամելի պսակօք ի կարգ եպիսկոպոսութեան իշխանութեան որում ունիս յամանման ամենայն պարագայիւք արժանավորութիւն նոյն փառաց եթէ ի մաքրութենէ արենէ, եթէ ի սերնդէ պետութենէ, եթէ ի արքիափայլ յասակէ և եթէ ի շնորհաց տեառնէ յորում կամք նորա առ ի յեղուլ շնորհիւր սուրբ ի վերայ պատվական յոգոյ և մարմնոյ քոյ ուրեմն ուրախ լեր և բերկրեայ, զի տէր ընթ քեզ և շնորհ ընթ ամենայն սերունդս նախնեաց քոց. և յատկապէս ցնծութիւն սրտից բարեկամաց ձերոց և այլն:

Եվ որպէս ոչ է հնար այժմոյս կատարել ցանկութիւն սրտի իմոյ առ ի յատկապէս յնազանդութիւնն իմ, որ առ քեզ, բայց ի յայսմանէ, զի եզի շրթունս իմ ի քարտէզիս, յորում յավատացեալ եմ, զի ժամանելոց է առ ի սրբազանագործ ձեռն քոյ, զի մատչի յամբոյր յնազանդութեան մերոյ առ ի սպաս սրբութեան քոյ մինչև տէր այց արասցէ՝ յասուցէ մեզ ի ժամանակն, յորում կարող լինիցիմք մեք ընդունել օրհնութիւն ի սրբութենէ քումմէ և սրբութիւնն քո խնամակալ լինել ի վերա յավադարմութեանց մերոց:

Եվ յուսամ ի տէր, զի պահեսցէ քեզ երկայն ամօք առողջութեամբ և մխիթար սրտիւ և յաջողեացէ զքեզ ընթ ամենայն գործս բարիս առ տէր խնդութեամբ: Յուժ խոնարհաբար (բնագ.՝ խոնհարաբար—Պ. Զ.) խնդրեմ ի քէն, զի շնորհ ընդ մեզ ունենալով, յինէն ողջունէ սիրելի եղբօրն քոյ և թագավորազնին իմոյ արքիափայլ տեառն իմոյ Միրիայնին և ամենայն

բարեկամաց ձերոց և ես կալով ըսպասիմ ձեզ ծառայելոյ զամենայն  
աւուրս կենաց իմոց:

Սրբակրօնիտ յնազանդ և յավագարիմ  
ըսպասավոր (ստորագրությունն անընթեռնելի)  
[ինքնագիր]

Մադրասումն յոգտեմբերի .....15

Յամի տեառն փրկչին մերոյ.....1787

Վրաց. ՍՍՀ ԳԱ ձեռագրերի ինստիտուտ, d. Arm. 58:

ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ՆԱՄԱԿՐ ՄԱՆՈՒԶԱՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

[Ծրարի վրա] «Պայծառագոյն Տեառն Մանուշար  
Գուջասպար Թումանեանն ի Թիֆլիս»

[Ծրարի վրա՝ Մանուշարի ձեռագրով] «Շամիր աղայի ինձ գրածն է,  
ինձ որ նվերներ ուղարկեց և Գիորգի թագավորը բռնագրավեց, պատաս-  
խանք գրեցի»<sup>1</sup>:

Պայծառափայլ տեր Մանուշար Գուջասպի Թումանով  
ի Թիֆլիս

Զեր 1794 թ. սեպտեմբերի 24-ին մեզ առաքած երեք պատվական  
նամակները ստացանք, [բայց] պատվական երեքն էլ միևնույն տեսքով:

Սակայն քաղցր է ինձ անգամ Զեր պայծառափայլությանը գրելը և  
իմ՝ Զեր նկատմամբ առաջվա սիրո ամրության [մասին] հայտնելը: Եւ  
երկրորդ, [հիշեցնելու ևս] Զեր ոչ ջերմագին սրտով ջանքը Թիֆլիսում  
[ունեցած] իմ գործի նկատմամբ: Երկարաբանելով շեմ ցավացնի Զեր  
գլուխը, այլ անմիջապես կպարզաբանեմ:

Սեպտեմբերի 24-ին Դուք գրեցիք ինձ, թե երբ նորին Պայծառա-  
փայլություն Գիորգի արքայազնը վերագառնա Քիսիկղից, կհայտնեմ նրան  
Զեր նամակների մասին և մանրամասնորեն կգրեմ պատասխանը և այս

<sup>1</sup> Գիորգի թագավորի հրամանով Մանուշար Թումանյանը բանտարկվել է 1799 թ.  
ապրիլի 7-ին: Մեզ են հասել նրա ունեցվածքի ինչպես բռնագրավված մասի, այնպես էլ  
բռնագրավումից հետո մնացած իրերի ցուցակները, կազմված իր իսկ կողմից: Տե՛ս

„მასალები საქართველოს ეკონომიური ისტორიისათვის: გვიანფეოდალური ხანა“, წიგ-  
ნი III (ალმუშენებლობა, სახელმწიფო ეკონომიკა, ქონება), მასალები შეარჩია და გამოსაცემად  
მოამზადა ნ. ბერძენიშვილმა, თბ., 1955, էջ 291—296, Մ. Թումանյանի կողմից նա-  
մակի վրա մակագրությունը կատարվել է 1799 թվականին կամ հետո, հավանաբար  
իր գրագրությունների դասավորման առիթով:

նամակը՝ ձեր երեք անձից՝ Տեր Դավիթի գիրն է, որին [դուք ևս գիտեիք, որ] պիտի սպասեի մեծ հույսերով և որն [ակնկալելու] համար համարձակություն է տալիս ինձ Ձեր՝ իմ նկատմամբ ունեցած բարեկամությունը: Ահա և իմ ձեռքին է նորին Պայծառափայլության նույն ժամանակ՝ 1794 թ. սեպտեմբերի 24-ին, Թիֆլիսից գրած կրկին Տեր Դավիթի կողմից ստորագրված ու նրա մեջ գրված նորին Պայծառափայլության [նամակը] ևս, որում հայտնվում է, թե ստացանք ձեր նամակը և մեծապես ուրախացանք, իսկ մնացածը Տեր Դավիթի նամակից պիմանաք: Տեր Դավիթի նույն թվակիր նամակը ևս ստացա, որը [սակայն] պատասխանի փոխարեն Բերոյի որդու՝ հանգուցյալ Նազարի գործի մասին է ինձ խնդրում: Այժմ եղեք մեծահոգի և անգիտորեն մի ավելացրեք անպատվությունը և մեր աչքերին ավազ մի փշեք: Մի բակեք այսպես բարեկամությունը, այսպիսիք ոչ են պատշաճ Ձեր նման պատվական անձին: Առավել ևս՝ այսպիսիք արգահատելի են և հակառակը՝ [այդ] լիովին կվարկաբեկի Ձեր անձի պատիվը:

Այս ևս հիշեցնեմ Ձեզ, որ Ձեր երեքի նամակին ի պատասխան նորին Բարձրությանն ու նորին Պայծառափայլությանն ուղղված և այլ նամակներ ևս կնքեցի մի ծրարի մեջ և [ծրարի] վրա գրեցի ձեր երեքի պատվական անունները: Այնուհետև, և՛ այս նամակը, և՛ որը որ անձամբ Տեր Դավիթին էր ուղղված, իրենց պատճեններով այլ ծրարի մեջ կնքեցի ու վրան գրեցի Տեր Դավիթի անունը և այս նամակները լրիվ կատարեցի երեք օրինակից: Մեկը տվեցի տանելու մեկիք Աբովի ուղարկած մարդուն՝ Մուրադի որդի Աբրահամին, իսկ երկուսն էլ ուղարկեցի Բասրա, որպեսզի Հովհաննես Բեթղեհեմովը և Վարդան Սարգսյանը մէկը ղասեղով (իմա՝ սուրհանդակ, լրաբեր—Պ. Չ.) և մյուսը՝ ճանապարհորդով ուղարկեն Թիֆլիս: Խնդրում եմ Ձեր ողորմածությունը, որ հեռացնեք այդ տեսակ սովերոտ բարեկամությունը և բացեք իմ նամակները (եթե աստուծո շնորհիվ կաք բոլորդ խաղաղությամբ ու համաձայն եք [մեր] նախորդ նամակներին և ունեք իմ նկատմամբ շնորհ) ու հանձնեք յուրաքանչյուրը իր տիրոջը և մեր փոխարեն պատշաճ ձևով խնդրեք նորին Բարձրությանն ու Պայծառափայլությանը, որը որ հայտնել եմ Ձեզ ու ինչ պատասխան որ ստանաք, բոլորն ինձ գրեք որը որ նամակով կարելի է ասել և որը՝ բերանացի ու այն կնքած ծրարը ուղարկեք Բասրա՝ վերոհիշյալներին, որպեսզի նրանցից հասնեն ինձ: Տեր Դավիթին ևս գրել եմ:

Ասեմ նաև այն, որ թեև գեղջուկ (կոպիտ) նամակ է, սակայն իրավունք ունի: Հուսով եմ, միշտ կլինեք Ձեր խոստմանը հաստատ և կգրեք ինձ, հենց որ ստանաք իմ նամակները:

Ձեր Պայծառափայլության խոնարհ և  
հաստատ բարեկամ, ծառա  
Շամիր Սուլթանում

30 նոյեմբերի 1795,

Մադրասումն

Վրաց. ՍՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտ, ՏՃ—1718ա, Բ:

ԳԻՈՐԳԻ ԱՐՔԱՅԱԶՆԻ ՆԱՄԱԿԸ ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻՆ  
(1796 թ. մայիսի 10)

Պայծառ իշխան Շամիր աղայ  
Մեր հավատարիմ բարեկամ

Յոյժ ծանրագոյն է ինձ պատմել զպատահմունսրն զայն, զորս ընկալաք ի յանքննելի դատաստանէն աստուծոյ, ի յանակնկալ ժամու պարսից իշխող Աղայ Մահմադ-խանն եկն, և բազմաց ցանկալի քաղաքս այս Տփխիս, որ էր պարծանք մերոյս Արքայութեան, նովիմք եղև աւերեալ, գերեցեալ և այրեցեալ, անկանելով ի փառաց իւրոց և եղեալ ընդ հովանի մրգապահաց, որք այսոքիկ համբաւք թէպետ ծանրագոյնքն են վասն մեր պատմեալ, սակայն, կարծիմ թէ, և վասն ձեր ևս ծանրագոյն իցէ ի լսել, վասն զի այսպէս գիտեմք զՁենչ, զի և սակս ձեր ցանկալի էր սա, որ և ցանկացիք փառացն սորին, քրիստոնէական հաւատոյ սորին, և եկեղեցեաց պայծառութեան սորին, և առ բնակիչս սորին, ի յԱրքայէ սորին մինչև ցհասարակութիւն բարեկամանալ, և որովհետև այսպէս է, ուրեմն պարտ է ինձ ասել զայս ըստ մարգարէին, թէ ոչ յաւիտեան բարկանայ մեզ տէր և ոչ յաւիտեան պահէ ռիս: Արդ, ձեռն այն, որ վիրաւորեաց զմեզ, նոյնն և ողորմեցաւ և սփռեաց ի վերայ մեր և ժողովրդեան յերկրիս այսորիկ, զի շարժեաց զլոյս սիրտ նորին կայսերական մեծութեան թագուհւոյն Ռուսաց և մեծաւ ողորմութեամբ և մարդասիրութեամբ բացեալ զժոց իւրոց պահպանութեան և ընկալաւ զմեզ իբրև Մայր գթառատ և առաքեաց առ մեզ ի յաղթող և յարի զինւորական դասուց իւրոց զզօրս և զօրապետս, համայն յարմարութեամբ Արտիլլերականօք և ոչ եթէ առ մեզ և ի կողմունս մեր, այլ և ծովաւ և ցամաքաւ և բացեալ զգանձս պատրաստեաց զմեծամեծ զօրս, և զգերազանց [գ]ենարալ ֆերթմա[ր]շալ զօրապետներս, որք պարտին զպարսից երկիրս ի ներքո ոտից կոխան առնել և զշար ներքինին այն կարծեցեալ իշխողն պարսից ըմբռնել խնա-

մօքն աստուծոյ և արբուսցեն նմա զմրուրն զայն դառնութեան, զորս  
կազմեաց նա մեզ, և երկրիս մերում և մեր ևս ի մեծի պատրաստու-  
թեան ենք, զոր որք նորա խորհրդակիցք էին նոյնոյ զքաղաքին և մեզ  
զրկիցք մերձաւորք, հատուցուք զհատու[ցու]մն եօթնապատիկ զոր նո-  
քա մեզ հատուցին, և ողորմութեամբ Աստուծոյ այն ոչ է տեւոց յերկար  
միշոցս, այլ յուսամք փոքր ժամանակաւ յայտնի լինիցի ամենեցուն:  
1բ || Թողցուք մեր զայս որով մեր հաւատարիմ գրագիր և թարգման Տէր  
Դաւիթ Տէր Յօհանեանն երկարապէս առչ առնելոց է և ի ներկայ ժամս,  
զայս հարկաւոր համարիմ, գրել քեզ և ասել, զի Տէր Դաւիթն արզ արար  
մեզ զղիտաւորութիւն ձեր, որ յաղագս Լօռոյ դաւառին, զոր շնորհեալ  
եմք պայծառութեան ձերում, ևս ի բոլոր սրտէ որպէս և զգրուածսն ի՞  
ունիք ի ձեռս ձեր շնորհեալ եմ, մ/ին/չ զի զայս ևս ասեմ եթէ Դու և կամ  
զմի ի յորդոց Քոյ և յորդոց որդիսն Քո գան առ մեզ, ևս բազում այս ևս  
ձեզավայել ողորմութիւնս և զսէրս ցուցանեմ: Եվ ընդ ամենայնի շահեցօղ  
լինիմք և ողորմած, նոյնպէս և բարձրագունեղութիւն նորին Արքայ հայրն  
մեր, և եղբարքն մեր, և որդիք մեր, և զդաւառն այն, որպէս և կամիք  
նոյնպէս պիտոյացուցանէք. բայց, զորս սակս Մելիք Ապօվին փոխա-  
նորդութիւնս էիք գրեալ և զպայմանագիրս առաքեալ, այն գրեանքն յոյժ  
անագան հասին մեզ, և մինչ ևհաս, իսկոյն՝ սոյն այս մեր և ձեր հաւա-  
տարիմ Տէր Դաւիթ որ է խոստովանահայր Մելիք Ապօվին, և ի քաղա-  
քացւոց մինն ի յառաջին անձանց, Մունթօյենց Յովսէփն, հանդերձ ի ձենշ  
առաքեցեալ պայմանագրովք և այլոր թղթովք, առաքեալ եմ առ Մելիք  
Ապօվ սիրելին Ձեր, և որպէս կամեցողութիւն Ձեր եղեալ է, յայտնեալ եմք  
նմա և հրաւիրեալ, և նա ոչ յանձն է առեալ և ոչ ընկալեալ, այլ ի յերկիրն  
իւր գնացեալ, զոր կարծիմ զայս ամենայն Տէր Դաւիթն գրեալ իցէ առ  
Ձեզ և բաց յայսմանէ զոր Մելիք Աւետիքին, Մանուշար դիւանին և Տէր  
Դաւիթին զոր ի կողմանէ քումմէ յաղագս Լօռոյ դաւառին փոխանորդ ևս  
կարգեալ ընդ այս ևս հաճեցայ, սակայն խղճալի Մելիք Աւետիքն, նախ  
քան զպատահմունս զայս վաղճանեցեալ էր և Մանուշար դիւանն տակա-  
ւին ի գեղօրայս շրջի և շև ևս է եկեալ ի քաղաքս, և այս Տէր Դաւիթս մին  
քահանայ է, բացի քահանայական գործոց իւրոց, այս բոլոր քաղաքս  
համարեա թէ սմա գրեցուցանեն հարկաւոր գրելիսն և ի յԱրքունի գրա-  
գրութիւնս և ի թարգմանութիւնս մեր սահմանեալ է և զբաղեալ ի սոյն  
գործ\*. զոր այս ամենայն ինքն գրելոց է պայծառութեանդ և եթէ զայլ  
որ կարգես փոխանորդ այն կամք քոյ են. սակայն այն այնպիսի դաւառ

\* բնագրում գոյծ:



է, որովհետև սահման է մերոյս երկրի. պարսից և օսմանցւոց, որք այժմս  
 շա կեամք և բնակիմք, զօրեղ Տէր|| և պահպանութիւն է պիտոյ և ի վերայ  
 խառնակութեան երկրիս մերոյ, թէ բնակիչք այնմ դաւառի և թէ այլք  
 սասանեցեալք են, և այժմ ողորմութեամբ աստուծոց այս նշանք որք երե-  
 վին, և մեծագունեղ Ռուստաց թագաւորն ի վերայ մեր և ի վերայ երկրիս  
 մերոց որ ողորմեցեալ է յուսամք բազմապատիկ քան զառաջինն մեծասցի  
 և ճոխասցի երկիր մեր, և թագաւորութիւն մեր, զի և քոյդ եհաս ժամա-  
 նակ, զի զորս ի վաղնջուց դիտմունք և խորհուրդք ունիցիս ի ներ սրտի  
 քո, զայն բողբոջեցուցես և ի լոյս ածցիս և փութասցիս ի բնիկ հայրենիս  
 քո, և գալ հրամայեցես, զի թուի ինձ թէ ոչ ունիցիս ինչ պատճառ գայ-  
 թակղութեան և արգելման, այդպիսի վայելուչ խորհրդոյ քո, այլ ողորմու-  
 թիւն աստուծոյ յամք յաջողեալ է և ի վերայ այսորիկ մի ինչ երկբայիր,  
 զի դու երբ զխո[ր]հուրդ քո կատարես, ոչ երբէք պակասի քեզ ի մէնջ,  
 պատիւ և սէր, այլ աւել մեծամեծ. զորս և կարեմք, ի մենջ ոչ խնայի ինչ  
 վասն քո: Ձեր խաղաղութեամբ դալոց համբան և զկամս սրտի ձերոց  
 գրեցես մեզ, որ եմ և լինելոց եմ առ պայծառութիւն Ձեր բարերար և  
 ի սրտէ բարեկամ վրաց և կախից ժառանգ և արքայ որդի:

(ձեռնագրեալ) Գիօրկին

1796 ի մայիսի 10

'ի խանդ[ա]րեալ Թիֆլիզում: Տ. Կ.

Սովաւ հաստատեմք զվերոյգրեալ պ[ատ]ճենն գրոյ, լինել հաւաստի  
 պատճենն նախատիպ գրոյն, նոյն այս օր զգուշեղաբար բաղդատեցաւ  
 ընդ նախագաղափարին. քաղաքս ի Մաղրաս ի յարևելեան հնդիկս այս  
 յեօթներորդ օր նոյեմբերի յամի Տեառն մի հազար ութ հարիւր և մետա-  
 սան.

Կնիաղ Աղաբեդ Մելիք Բէզլարեան  
 Յարութիւն Թրխանեան խօջ[ա]Մինասեան

En Seskinonium veritatis      Մաշտոցի անվ. Մատենադարան,  
 Notari public                      Արխիվ Ալ. Երիցյանի, թղթ. 156, վավ. 250:  
 Madras

ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՎՐԱՅ ՀԵՐԱԿԸ ԻԻ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Յօգոստափայլ Տեառն իմոյ երկրորդ Հերակլ Շնորհօֆն աստուծոյ թագա-  
 ւոր Կախէթու, Քարթլու եւ այլն, եւ այլն, եւ այլն:

Նամակ շնորհաց և յատկապէս սիրոյ Տեառն իմոյ ի թուէն 1786 յամսե-  
 անն մարտի 30, վեր ընկալայ ի ձեռանէ Յովսէփոս հինգ հարիւրապետ ծա-  
 ոայէ քումմէ, և ի լսել լուր առողջութեան պատուականութեան քոյ և դշխո-

յափայլ թագուհւոյն, և վարդափթիթ թագաւորազնեաց իմոց, հանդերձ աջո-  
ղութեամբն Աստուծոյ զօրութիւն բազկի քոյ, ևս յաղթանակայ արժան  
հաղթութիւն քոյ ընդդէմ թշնամաց՝ ցնծացոյց սիրտ մեր և ուրախ եղաք  
յոյժ: Նաևս ստացայ հրովարտակն ի բարձրութենէ քումմէ, որում բարձ-  
րացուցեր հասարակութիւնն մեր առ ի պատիվ և աստիճանս իշխանական  
ի պատճառս քոյին, յատկապէս սիրոյ ծանեալ երախտեաց նախնեաց և  
իմոց, զի նովաւ բացեր զգունն ողորմութեան քոյ ընդդէմ երեսաց մերոց:  
Պսակելով մեզ ըստ հաճոյից կամաց քոց, իբրև երախտագէտ, ուրեմն ի  
վերա այսպիսի երախտագիտութեան քոյ պարտ է մեզ հաւատալ հոգւով  
և մարմնով, ՚ի պատուականութիւն քոյ յատկապէս սիրէ մեզ և ողորմի  
յաւելի քան ՚ւարժանավորութիւնն մեր:

Վասնորոյ գոհանամ նախ ի Տեառնե Արարաչէն մերմէ, որ ունի  
սիրտ քոյ և ամենայն թաւալորաց ի ձեռին իւրում շարժելով առ ի դոյթ  
ողորմութեան քոյ առ մեզ, և շնորհընկալ եղաք ի քէն վասն այսքան սի-  
րոյ և բարերարութեան, և վերհամբառնալոյ հասարակութիւնն մեր, և  
խոնարհեցուցանելով ունկն քոյ բառնալով խտրութիւնն զանազանութե-  
ան, մեջ քոյին բարձրութեան և մերոց հասարակութեան, զիւ-  
րաւորելոյ համապատասխանութիւնս մեր ընդ միմեանց իբրև մեր-  
ձաւորի, և ի քէն պսակեալ արժանաւորի, և քոյին հաւատարիմ  
ժառայի, որովհետև ոչ պատուականութիւն քոյ, և ոչ բարձրութի-  
ան տերութեան քոյ երբէք ոչ ունելով հարկաւորութիւն իմոյս հա-  
սարակութենէ, և ոչ հասարակութիւն իմ փափակիւր ունիլ զամենայն՝  
զոր ինչ ի յերեսս երկրի վասն յատուկ անձին իմոյ: Ուրեմն այս երկոքեան  
անհամեմատ անձինս կարեմք հաւատալ զի այսքան անխղելի և հաւաստի  
սէր, որ ի անտեսչութենէ միմեանց ի Տեառնէ շնորհաց յեղաւ ի վերայ  
հոգւոց մերոց, ոչ թէ վասն փառաւոր առնելոյ զմեզ, եթէ ոչ վասն օգնա-  
կան լինելոյ հասարակ ժողովրդեան ըստ օրինօք իրաւամբ և արդարու-  
թեամբ, որ սա միայն գործս լինիցի փրկութիւն հոգւոյ և մարմնոյ մերոյ,  
և փառք պատիւ աստուածապահ տերութեան քոյ մինչև յաւիտեան:

Ի հնումն երկայն ժամանակաւ բոլոր եւրօպացիք վարեցին ժամա-  
նայն թաղաւորութեանց իւրեանց ինքնակալ անձամբ և ինքնակամ արար-  
մամբ յեղլով արին բազում, ճմլելով սիրտ ժողովրդեան, մնալով ինքե-  
անք յարաժամ ի կասկածանս այսպէս թէ՛ հովիւն և թէ խաշինքն ի անմխի-  
թար կեանս մինչև ի ժամանակն Հռոմ և էլոս երկու եղբարց որ մուծին  
զինքեանս ընդ լծոց օրինաց անխախտելոյ, և նովաւ երջանկացան մինչև  
ի պատիւ կայսերութեան:

Այլ կալ և մնալ և անկանիլն նոցա լուիցէ պատուականութիւն քոյ ի

պատմութիւնէ հոսմայեցւոց. այլ ի շառաւիղէ նոյն օրինաց հոսմայեցւոց պահեցին բազում թագաւորութիւնք քրիստոնէից, և երջանկացան մինչև ցայսօր, և միաբան յուսամք ի Տէր զի թագաւորութեան նոցա վախճան մի լինիցի, այլ ի միջի այս իրաւասէր թագաւորաց պատուականագոյն գտաւ Գէորք հինգերորդ թագաւորն ըսպանիացւոց, որում նոցա Կառլօ Կինթ, զի սա խոնարհացուցանելով բարձրագլխութիւն ինքնակամ արարմանց իւրոց, ժողովելով արք երկայնամիտք և ծանօթք թէ ազատութեան բանական հոգւոյ և թէ համեմատութեան բնական բնութեան մարդոյ, և թէ սովորութեան յատկապէս բերման աշխարհին իւրեանց: Եւ ինքն Կառլօ Կինթն կալով ի միջի նոցա համահաւասարապէս, և ըստ կամաց և ըստ հաճոյից իւր, և բոլորեցունց թէ իշխանաց և թէ ժողովրդոց իւրոց, սահմանեաց զօրէնս թէ զինուորութեան և թէ հասարակութեան ժողովրդոց և թէ զօրութիւնս թագաւորութեան իշխանութեան մինչև ի զօրութիւնս յետնորդ ռամիկ անձանց իւրաքանչիւր մանրամասնութեամբ և հրամայեաց արձանագրել իբրև անխախտելի, և ինքն նախապէս խոնարհեցոյց ինքնակալ պարոնացն իւր. և լծորդեցաւ ըստ օրինացն, և այսպէս հրամայեաց կատարիլ յօրէնս ի վերայ ամենայն իւրաքանչիւր գործոց ձեռաց իւրեանց: Սովաւ հանդարտեցաւ անձն իւր ի տարակուսութենէ, և ամփոփեցաւ ի մէջ կրծից հասարակ ժողովրդոց. սովաւ բարձաւ դաւաճանութիւն իշխանաց իւրոց, և սովաւ արդարացոյց դատաւորս աշխարհին իւրոյ և սովաւ ծաղկեցաւ աշխարհ, աճեցան և բազմացան ժողովուրդք և լցաւ երկիր հարստութեամբ մինչև ցայսօր, և ի նշաւակէ յայսմանէ բազումք սիրեցին առին, և արարին յօրէնս վասն իւրեանց, որում վայելեն մինչև ցայսօր: Եւ արդ յոյժ փափականօք ցանկամ քեզ Տէր, նոյն, որովհետև զի տերամբ պահպանութեամբ, և կամ թէ մի լինիցուք խտիր, եթէ ասիցուք ըստ խոստմանց Տեառն որ առ նախնին քոյ, զի թագաւորութեան ձերոյ վախճան մի լինիցի: Այսպէս պահելով Յուսուայ Դաւթեայ Սողոմօնէ մինչ մերոց ծանօթ Բակրատ և ի նմանէ նահապետութեան Բագրատունեաց մինչև պատուականութիւն քոյ: Եւ ևս տարբերութիւն ժամանակին որ ի ձէնջ իբրև քօղաւորեալ եմոյժ ի շարս վեցերորդ դաշնադրութեան քոյ ընդ դժխուհւոյն Ռուստաց, որում արձանագրեցաւ վարիլ թագաւորութիւն քոյ ըստ օրինաց քոց:

Ուրեմն կամք Տեառն այս զի ի ժամանակի թագաւորութեան քոյ կարգադրեսցի յօրէնս, և ի օրինաց քոց փրկեսցի ազգն հայոց և վրաց ի ծառայութենէ բռնաւորաց:

Ուրեմն մի դադարիր, լեր նման Գէորք հինգերորդ թագաւորի ըսպանիացւոց և նման Պետրոս Ալեքսէոպիշի կայսեր Ռուստաց:

Արա քեզ օրէնս և կարգադրեա վասն ամենայն ծննդոց հովանաւորութեան քոյ թեթևութիւն բեռանց և քաղցրութիւն լծոց և ջախջախեա լուծն ծառայական, զի մի երևեսցի ի վերայ պարանոցի ժողովրդեան քոյ և արա նոցա ծառայ միայն օրինաց իւրեանց և ազատեա նոցա ի ծառայութենէ որոք բնութեան մարդոյ. յատկապէս ինքնակալ տեառնէ և ինքնակամ հրամայողէ: Տարածեա մարդասիրական միտք քոյ առ ի անկարութիւն իբրև անմեղ գառանց քեզ յուսացելոց հասարակ ժողովրդոց: Մինչ դեռ ժամանակն ի ձեռս քոյ է, փակեա, լծորդեա, կալանաւորեա ըստ անխախտելի օրինօք ամենայն ինքնակամ շարժմունս և ներգործութիւնս քոյ, և ի քէն ապագալացողի տեառն, և արձանագրեա անխախտելեօք յօրէնս վասն կառավարելոյ գահն և աշխարհն և ժողովուրդն տէրութեան քոյ, միևնոյն օրինօք, որում դու և իշխանք և գաւառապետք աշխարհի քոյ և հասարակ ժողովուրդք այսօր հաւանիք, և հաճեսցի կամաց ամենեցուն և հրամայեա ընթանալ ի գործ, զի սովաւ կացցէ և մնացցէ իբրև անմահ Աստուածապահ անձն քոյ, մաքրազարդ սերնդօք փառօք և պատուօք այժմ և միշտ յաւիտեան:

Բարիոր ծանեայ ձգտումն մտաց պատուականութեան քոյ, որ ասացիր թէ ժամանակք են թագաւոր և այլն, այլ բարիոր գիտէ պատուականութիւն քոյ, զի բառն և անունն ժամու և ժամանակաց յատկութիւն և բացատրութիւն անցաւորութիւն, քանզի ոչ ոք ժամանակ ոչ կարէ կալ և մնալ ի մի տեղի ըրպէ մի, այլ հիմունք անխախտելի սահմանաց կալով մնալոյ հաստատուն ի միջի ամենայն ժամանակաց մինչև յաւիտեան, որպես տեսանես, զի մեք ունիմք ժամանակ գարնան յեղեղ ջրոց ամառան տափն և կիզումն արեգական և աշնան խոռովութեան հօտոց և ձմեռան սառնութիւն ձեանց և հնչումն փքոց, սոքա շորից ժամանակքս ամենայն դօրութենէ յարեանց կլանեն յեղեղմամբ, կիզանեն խոշտանկութեամբ, մանրեն և կոտորեն հնչմամբ, սասանեցուցանեն սառուցմամբ, այլ անխախտելի սահմանն ամենակարօղ արարչի մեք ոյ եղև այնքան բարի, զի երկիր ընդ ոսկերօք իւրով լերամբ, անտառք ընդ բնակչօք անասնոց, քաղաքք ընդ բնութեան մարդոյ բնակութեամբ, ի պատճառէ հաստատութեան սահմանի, փոխանակ յեղձուցմանէ, կիզմանէ, խորտակմանէ և սառնամանէ՝ ճաշակին քաղցրութեան, այսինքն լուացմամբ սրբի աղտս երկրի և եռացմամբ արեան ծաղկի ամենայն կենդանի, ջերմութեամբ քաղցրանայ ողորմութիւն պտղոց, և պտղաբերէ ամենայն բուսոց և շարժմամբ խորտակիլ գօսացեալս, թափիլ հնացեալս վասն նորոգութեան իւրեանց, և սառանմամբ թմրութիւն քնոյ, հանդարտութիւն տարերաց և մոռացումն անցելոց ժամանակաց, զի վերստին նորոգեսցի և ծնեսցի մանուկ նոր ի յորովայնէ

չորից տարրերաց յանճառելի սահմանէ արարչէ մերմէ: Ուրեմն մի հաւա-  
տար զօրութեան բազկաց, որում ժամանակն խոստանայցէ, այլ հաստա-  
տուն լեր ի միտ և ի հաւատս զի զօրութիւն անխախտելի սահմանաց զօ-  
րաւոր է, քան զամենայն բազուկ հզոր, զորաւոր է քան զամենայն յեղեղս  
ջրոց և այլն:

Տարբերութիւն ժամանակին և զօրութիւն բազկի Աբաս անուամբ  
առն, անուանակոչութեամբ միայն թագաւորն պարսից, հաւաքեաց դառ-  
նանման մանկունս քոյ ի Կալոյ թաղն և կալսեաց նոցա, մանրեաց,  
փշրեաց իբրև ցորեան, և ծնօղքն նոցա իբրև յարդ՝ ի հնչմանէ քաշօղաց  
ցրուեաց ի յերեսս երկրի, ոչ ի ժամանակս վաղնջոց և կամ դարս բազու-  
մըս անցելոց, եթէ ոչ ի միջոց իբրև 180 ամ ժամանակաւ յառաջ քան  
զայսօր: Ուրեմն տես սնտիութիւն զօրութեան ժամանակին, ո՞ւր է այսօր  
նա Աբասն և կամ սերունդն նորա և այլ բազումք այսպիսի նշաւակք, որ  
պատուականութիւն քոյ ոչ ունի հարկաւորութիւն յինէն լսելոյ, բայց յոյժ  
բարի լինիցի, զի պատուականութիւն քոյ զինուորեսցէ և գօտի ընդ մէջ  
կալեալ սուրն զօրութեան բանական հոգւոյ ի ձեռս առցէ, հաստատեսցի  
յօրէնս կարգադրութեան անխախտելի սահմանաւ, զի դա լինիցի արմա-  
տըն հաստատութեան սրբազան սերնդոց քոց, և պատուականութիւնն քոյ  
մնասցէ անմահ ի նահապետութենէ ըստ խոստման արարչին մերոյ, զի  
թագաւորութեան նախնոյն և քոյ սերնդոց քոց վախճան մի լինիցի:

Նաև հնազանդելով բանի բերանոյ քոյ խրախճանութեամբ ասեմ,  
որպէս հաւատացեալ եմ ի ցուցմանէ տարբերութեան ժամանակին, զի  
ահա եկն և եհաս ժամանակն որում սպասեաց պատուականութիւնն քոյ,  
և հաստատութիւն բանիս ցուցանէ մեզ անշափելի հեզութիւն քոյ, որ ի  
բարձրութենէ քումմէ հաճեցար ընդունիլ ի ծառայէ քումմէ մասունք կար-  
գադրութեան սահմանաց, և հրամայեցէր շարել և ընծայել ի սպաս բարձ-  
րութեան քոյ, թէպէտ բարիոք գիտեմ, զի պատուականութիւնն քոյ քաջ  
գիտէ, զի գործ շարելոյ սահմանս վասն կառավարելոյ ազդ և աշխարհ մի  
բազմամարդի ոչ է հնար, ումեմն միայնակ յառնէ. նաև պատուելի է  
ինձ իշխանք գահոյ տեառն իմոյ, զի ոչ ունին պակասութիւն ի յերկայ-  
նամտութենէ վասն այսպիսի գործոց, և ես խոստովանիմ առաջի քոյ և պա-  
տուելի իշխանաց իմոց, զի երբէք ես ոչ կրթեցայ ի հրահանգչէ, և ոչ  
ունիմ ուսում արհեստին ընթերցմունս ըստ համեմատութեան հրահանգ-  
չաց և իմաստնացելոց, այլ միմեայն սիրեցի բարեպէս վարուք կառավա-  
րութիւնս քրիստոնէից, նովաւ ծանեայ զայն, որ ասացի ի վեր, այլ որպէս  
ցանկալի էր ինձ հասանիլ ի այս ժամանակ որում հաճեցաւ Տէրն իմ լսել  
յինէն: Վասն որոյ այն, որ գտաւ այժմոյս ի միջի մերում տեսրակն ա-

նուանեալ «Որոգայթ փառաց», շարադրեալ վասն ազատութեան ազգին հայոց, ցնծութեամբ ընծայեցի ի սպաս, որում ինքն ցուցանէ կացութիւնն օրինաց իւրոց, բոլորովին ըստ համեմատութեան բնական բնութեան մարդոյ, և ըստ արժանաւորութեան բանական հոգւոյ, այլ հարկաւոր է իմ ասել, զի տետրակն այն ես ոչ իշխեցի տպել վասն բազում պատճառի, նախ, որ ունի սղալանս բազումս, ի պատճառն մերոց ոամկորէն բառից, երկրորդ՝ ի պատճառն ծայրագոյն բանիս, նախ հարկաւոր է լսել քեզ և լսելի առնել սրբազանից հայրապետաց հայոց և վրաց, և լսելի առնել պատուելի իշխանաց և գաւառապետաց բարձրութեան քոյ, յայնժամ կամ հաւանիլ և հաւանացուցանել ամենեցուն, կամ յաւելացուցանել և կամ պակասեցուցանել զամենայն, զոր ինչ հաճեսցի կամացն հասարակաց սրբագրել և ապա ի հրամանաւ բարձրութենէ քումմէ տպել և ցրուել ի յերեսս երկրի, զի ելցէ առ ի գործ, վասն որոյ ձեռագիր երիս օրինակօք միայն ելանելոց է ի մէնջ, մի՛ վասն տեսչութեանն Տեառն իմոյ, և մի՛ վասն տեսչութեան Սրբազան Տեառն 'Կուկաս հայրապետին Հայոց, և միւսն՝ վասն տեսչութեան սրբակրօն Տեառն Յովսէփ արքեպիսկոպոսին, որ ի Երկրորդ Իջևան, զի այր խելամուտ է և հանճար: Եւ սկիզբ, մէջ և վերջաբանութիւնն շարադրանաց տետրակին գտանելոց ես աննախանձաբար ընդ ամենայն կողմնակալութենէ, այլ եթէ գուցէ զի խոտան երևեսցի ի միտս տեառն իմոյ և հասարակաց, ունիս ի ձեռին քոյ ի բաց ընկենուլ, և ներել համարձակութիւնն մեր, քանզի մեք ոչ յաւելի եմք, քան թէ մարդ սղալական, այլ եթէ հաճեսցի կամաց տեառն իմոյ, և եղբայրակից իշխանաց իմոց, խրախճան առնէ մեզ յոյժ:

Նաևս մի համարեսցես զիս իբրև հարևանցի ի յաստուածապահ տերութենէ քումմէ և յազգէն վրաց, որպէս երևի ի շարս տետրակին «Որոգայթ փառաց» բոլորովին վասն ազգին հայոց, քանզի պատուականութիւնն քոյ քաջ գիտէ բնական բնութիւնս մարդոյ, զի ոչ հաւատայ ոչ ոք առն յայնմիկ, որ ցուցանէ զինքն իբրև կողմնակալ: Վասն որոյ ես պահեցի անձն իմ անարատ՝ ի որոք կողմնակալութենէ, զի կարօղ լինիցիմ շահել և հաւաքել սիրտ հասարակաց առ ի հնազանդութիւն բառնալոյ ի վերայ պարանոցի յուրեանց լուծն քաղցր օրինաց: Ուրեմն թոյլ տուր, զի այսպէս վայել է մեզ այսօր բանալ և ոահն երջանկութեան և միաբանութեան երկուց ազգաց:

Պատուականութիւն քոյ քաջ գիտէ, զի պատգամն աստուծոյ ի ձեռանէ Մովսիսէ մեզ աւանդեցեալ է, ի սկզբանն արարածոց ոչ եղև յաւելի, քան թէ միմեայն մին հատուկ յօրէնս, այսինքն շուտել ի պտղոյ գիտութեան բարւոյ և շարի, յերկրորդում յօրէնս ոչ եղև յաւելի, քան թէ տասն

հատոր, որում հինգ ի նման է հանձնառականսն և հինգն հրաժարական, և արդ նայեա ի յերեսս երկրի անհամարելի հատորք յօրինաց, եթէ ի էկլէզիաստիկաց, եթէ զինուորաց, և թէ հասարակ ժողովրդոց: Ուրեմն ոչ յինէն և ոչ յումեքէ ոչ է հնար շարել յօրէնս անպակաս վասն կառավարութեան եթէ ոչ յօրէնս մեր պիտոյ է ընդունիլ ժամանակ ընդ ժամանակս որում հարկաւորութիւնն որ տարբերութիւնն ընծայէ: Յայնժամ վասն այնպիսի իրաց առնել նոր հատոր օրէնս ըստ հաճոյից հասարակաց և բարութեանց: Այսպես տետրակն «Որոգայթ փառաց» ոչ կարէ ունիլ մի մասն ի հազարք հազարաց մասանց բուն օրինաց, եթէ ոչ մասնաւոր ազդեցութիւնն հիշեցուցանելոյ ի միտս պատուականութեան քոյ և իշխանաց, և ընտրել ի համանս այն, որ ախորժեսցի ի կամս հասարակաց, և նա ունի ի միջի իւրում խոստումնս ընդ ամենայն առն ուշիմագոյն, զի ժամանակ ընդ ժամանակս ով ոք ելցէ և ցուցցէ յօրէնս բարի և շահաւետութիւնն հասարակաց, նա գտցէ պարգև ի գահէն Տեառնէ մերմէ, և բարին ընդունեսցի ի շարս օրինաց մերոց այսպէս սպասել մեզ արժան է լսել զամենայն, զոր ինչ բարի վասն հասարակաց և մուծանել ի յօրէնս: Յաւել քան զայս ոչ կամիմ զըզուացուցանել պատուական ունկն քոյ, բայց ի սմանէ հարկաւոր է տետրակն «Որոգայթ փառաց» հրամայես թարգմանել ի տառս և ի բարբառս վրաց անսղալապէս և ընթեռնուս հանդարտութեամբ և առնես, զոր ինչ պատուական սիրտ քոյ կամեսցի մի միայն հարկաւոր համարիցի ձգտումն մտաց իմոց վկայութիւն դնել ի սմա, զի կարելի է ժամանակ ընդ ժամանակս յիշեսցի, այսինքն կառավարութիւնն Աստուածապահ թագաւորութեան քոյ, ըստ անխախտելի օրինօք և ի խորհրդարանէ ծերակուտաց վարելով հասուցանելոց է, և սրբազան սերունդն քոյ ի նախահութիւն, ոչ միայն փառացն Բագրատունեաց, որ ի վերայ ազգին հայոց և վրաց, նաևս ըստ նմանութեան փառաց Դաւթեայ Սողոմոնի նախնոց քոյ, որ ի վերայ բոլոր Իսրայելի, այսքան յիշատակն իմ արձանագրէ ի հիշատակս վասն ապագայ ժամանակին յիշելոյ: Եւ որպէս սովորութիւն է ի պատճառէ բարեպէս օրինօք կառավարութեան հաւաքեսցի ժողովուրդք և ի բազմութենէ ժողովրդեան առատանայ հարստութիւն գանձարանի, այսպէս լինելոյ ակն ունիմք ի Տեառնէ արարչէ մերմէ վասն քոյ, թէպէտ մասն աշխարհին ժառանգութեան քոյ այժմոյս բռնաւորեալ ունին պարսի[կ]ք, որ յիրավի ամօթանք է ի յայսմ ժամանակի հնազանդութիւն քրիստոնէից ընդ աշխարհասէր և փափկասնունդ մահմեդականաց, որ յաւելի քան զայս դեռևս ունիս պատճառն տիրելոյ, հովանաւորելոյ աշխարհին պարսից, ընդ օրինաց նոցա, քանզի ի յօրէնս նահապետութեան սերնդոց Սէֆիֆէ արձանագրեալ ունին նոքա, զի ի պակասիլ սերնդոց

Սէֆիֆէ ժառանգ թագաւորութեան պարսից սլարտ է մտանիլ ժառանգորդ լինել մի ի սերնդոց երիս վալուս՝ ալսինքն՝ Յաւիզու կամ Սիստանայ և կամ Գուռջստանայ, և պսակիլ թագաւորական պսակաւ ի վերայ տանն պարսից և այլն:

Եւ այժմ, որ եկն և էհաս ժամանակն, որում Սէֆիֆայիք պակասեցան ի ժառանգէ, ուրեմն ունիս իրաւունս ընդ օրինօք նոցա ժառանգել, յաջորդել ի տեղի նորա և գահաւորիլ թագաւորութեամբ, այլ ոչ է արժան, զի փոխանակ այժմոյս հնազանդելոյ նոցա քեզ, անդրադարձն նոքա տիրապետեսցեն սեպհական ժառանգութեան քոյ յատկապէս ի յայսմ ժամանակի, զի ամենայն կարգադրութիւն բարձեալ է ի նոցանէ, ելն և իջանելն նոցա ունին նմանութիւն ալեաց բոլորովին անկարգութեամբ. ոչ է դժուարին տիրելն նոցա, եթէ խոստանաս նոցա ազատութիւն օրինաց քոց և թոյլ տաս նոցա պաշտել զԱստուած վստ սովորութեանց իւրեանց, և լինել տէր ի ստացուածոց իւրեանց և այլ ամենայն պարագայիք հնազանդիլ օրինաց քոց: Եւ վասն միւս մասին աշխարհ ժառանգութեան քոյ, որ բռնաւորեալ ունին արեւմտեանք, բարիոք լինի, եթէ հրաման տայցես պատուելի իշխանաց քոց, զի քօղաւորեալ պահեսցեն սէր և բարեկամութիւնս իւրեանց ընդ արեւմտեան կողմ Հայաստանեայց աշխարհի բնակչաց նշանաւոր արանց քրիստոնէից ընդ հովանաւորութեամբ օսմանցւոց, և լսելի արասցեն նոցա քաղցրութիւն յօրինաց քոց, և ազատութեան քոյին հովանաւորութեան աշխարհի բնակչաց, զի սովաւ գրաւեսցի սիրտ նոցա առ ի հնազանդութիւն պատուական տերութեան քոյ. զի մի գուցէ ի պատահէ ժամանակի մնասցեն նոքա իբրև անծանօթ ի քաղցրութենէ քումմէ, և պատուականութիւնն քոյ երկմիտ ի հնազանդութենէ նոցա, մինչև Տէր այց արասցէ և հասուցցէ պատուականութիւնն քոյ ի յայնմ վայելուչ ժամանակի: Կատար հասուցանել հարկաւոր է այսքան երկարախոսութիւն իմ, զի բարիոք գիտեմ երկայնութիւն խօսից կորուսանէ զիրաւունս, այլ հաւաքելով ամենայն թէ ասացածն և թէ այն, որ ունիմ ի մտի դեռևս ասելոյ, ճմլելով ընդ միմեանց և հանելով ի նոցանէ միմիայն կաթ մի նիւթ ամենայն բանից, ալսինքն կարգադրելով բարեգոյն յօրէնս, և կնքելով նմա իբրև կնիք դրոշմի անխախտանօք, և պսակելով նմա թագաւոր ի վերայ բնութեան մարդոյ առ հասարակ, և քոյին ղեկաւարութեամբ ժառանգաւորութեամբ կառավարելով ըստ օրինոք, զի մի գտցի ոչ ոք, զի կարօղ լինիցի ինքնակամ կամաւ հրամայել ի վերայ ումեք արտաքոյ յօրինաց քոց, այս միմիայն գործ անվախճան առնէ տէրութիւն քոյ և լցուցանէ աշխարհ քոյ ամենայն բարութեամբ, և ի նոյն ժամու ունիմ ի միտըս իմ, զի ես մարդ եմ սղալական,



Եթէ ես սղալեցայ ի միտս իմ ի այս խորհրդի, ուրեմն ակն ունիմ ի քէն  
զի ներեսցես մեզս սղալանաց իմոց, քանզի սղալանքն իմ եղև աննախան-  
ձաբար:

Այլ այն, որ ասացեր, եթէ տացէ Տէր ազգին իմոյ զայն տրամադրու-  
թիւն, որոցն վասն ես խորհիմ, ես ևս յարածամ ցանկամ նոյն վասն  
նշանաւոր արանց, այլ վասն հասարակ ժողովրդոց հարկ է մեզ, զի մեք  
խորհեսցուք վասն նոցա, քանզի ամենայն ծայրագոյն ձգտումն մտաց և  
բարութեան վասն հասարակաց ոչ գտանի ի միտս հասարակ ժողովրդոց,  
և զամենայն, զոր ինչ խորհուրդ որում կարէ օգնական լինիլ ի այս բանիս,  
է միայնակ քաղցրութիւն յօրինաց անխախտելեաց, քանզի բնականապէս  
